Գիրքը լուսապատճենահանվել է
"Համահայկական Էլ. Գրադարան"
կայքի՝ www.freebooks.do.am
կողմից եւ ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"

Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...
For more info: www.freebooks.do.am

ԴՈՒՔ ԼՈՒՍԱԼՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՔ ՁԵՐ ԼԵՌՈՒՄՆ ՈՒՆԵՆԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՔՆԵՐԴ
ԷՈՒՄՈՊԱՏԵԼԱՀԱՆԵԼ ԳՐՔԵՐ:

ԹԿԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀԱՅԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ" ԿԱՅՔԻՆ՝

www.freebooks.do.am

ՀԱՐՀԱՎԱՆ ԵՆՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՐ ԿԱՅՔԻՑ:
ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ՀԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ:

ԳՐԵՔ ՄԵԶ՝ freebooks@rambler.ru

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՏՆՏԵՍԻՉՅԱՆ ՈՒՂԿԱՑՈՒՄԸ



ԱՄԵՐԻԿՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳԾԵՐԸ

ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Այս հատորի բնագիրը գրվել է 1981 թ Վաշինգտոնի Շ Կ , Կրթական ծառայությունների կենտրոնի այդ ժամանակվա նախագահ Ռոբերտ Լ Մակ-Քենի կողմից, գլուխների ներածությունների և խմբագրական աշխատանքի հեղինակն է Պիտսբուրգի համալսարանի տնտեսագիտության պրոֆեսոր Մարկ Պերլմանը

Տեքստն ամբողջությամբ վերաշարադրվել և արդիականացվել է 1984թ Հյուսիսային Կարոլինայի Բուիես Կրիկի Քեմփբելի համալսարանի Լանդի Ֆետերմանի բիզնեսի դպրոցի բիզնեսի փիլիսոփայության պրոֆեսոր Վիլյամ Հ Պետերսոնի կողմից Խմբագրական աշխատանքը կատարվել է Թենեսիի նահանգի Չատանագայի համալսարանի տնտեսագիտական կրթության կենտրոնի փոխտնօրեն Ջոն Լուսիեն Էլինգտոնի կողմից 1991 թ տեքստն ամբողջությամբ արդիականացվել է Միացյալ Նահանգների լրատվական գործակալության «Էկոնոմիկ իմպակտ» ամսագրի 1981-1990 թթ գլխավոր խմբագիր Ստյուարտ Ռամսեյի կողմից

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳԾԵՐԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍ I

Ներածություն 4

ՄԱՍ II

Ինչպես է գործում Միացյալ Նահանգների տնտեսությունը 10

ՄԱՍ III

Պատմական ակնարկ ամերիկյան տնտեսության մասին 24

ՄԱՍ IV

Մանր ձեռնարկությունից դեպի կորպորացիա 70

ՄԱՍ V

Արժեթղթեր, ապրանքներ և բորսաներ 90

ՄԱՍ VI

Կառավարության դերը տնտեսության մեջ 104

ՄԱՍ VII

Դրամահարկային քաղաքականությունը 142

ՄԱՍ VIII

Ամերիկյան գյուղատնտեսության փոփոխվող դեմքը 156

ՄԱՍ IX

Բանվորական շարժումն Ամերիկայում արհմիությունների դերը 170

ՄԱՍ X

Արտաքին առևտուրը և համընդհանուր տնտեսական քաղաքականությունը 186

ՄԱՍ XI

Վերջաբան 202

Համառոտ ընթերցացանկ ամերիկյան տնտեսության վերաբերյալ . 209



ԱՄԵՐԻԿՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՈՒՐՎԱԳԾԵՐԸ

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

I

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ամերիկյան տնտեսությունը շարժունակ, ապատ շուկայական համակարգ է, որը մշտապես կարգանում է այն միլիոնավոր քաղաքացիների ընտրության ու որոշումների հիման վրա, որոնք բազմապան, հաճախ իրար համադրվող դերեր են կատարում որպես ապառողներ, արտադրողներ, ներդրողներ և քվեարկողներ Սովորաբար Միացյալ Նահանգները բնութագրվում է որպես խառը տնտեսություն ունեցող երկիր, այսինքն՝ նույնիսկ այն դեպքում, երբ արտադրամիջոցների ճնշող մեծամասնությունը մասնավոր սեփականություն է, այնուամենայնիվ ֆեդերալ կառավարությունը կարևոր դեր է խաղում շուկայական հարաբերություններում

Ամերիկյան տնտեսությունը, կարգանալով 250 տարուց էլ պակաս, վիթխարի հաջողություն է ապրել ցանկացած չափանիշով Կազմելով աշխարհի բնակչության ավելի պակաս, քան 5 տոկոսը՝ Միացյալ Նահանգները 1990-ական թթ սկզբին տվել է համաշխարհային արտադրանքի մոտ 25 տոկոսը Ամերիկյան տնտեսությունը ավելի քան երկու անգամ մեծ է հաջորդ խոշորագույն, այն է՝ Ճապոնիայի տնտեսությունից Ընդունված չափանիշներով արդյունաբերական աշխարհում Միացյալ Նահանգները շարունակում է մնալ ամենաբարձր արտադրողականություն և կենսամակարդակ ունեցողների թվում, թեպետ ուրիշ երկրներ վերջին տասնամյակներում ունեցել են աճի ավելի բարձր տեմպեր

Չնայած տարիների ընթացքում ամերիկյան տնտեսությունը կերպարանափոխվել է, որոշ վիճելի հարցեր շարունակում են գոյատևել հանրապետության խանձարուրից Դրանցից մեկը շարունակվող վիճաբանությունն է կառավարության ճիշտ դերի վերաբերյալ մի տնտեսությունում, որն, ըստ էության, շուկայական է Այն տնտեսության համար, որի հիմքում ընկած է ապատ ձեռներեցությունը, սովորաբար հատկանշական են մասնավոր սեփականությունը և անձնական նախաձեռնությունը՝ կառավարության միջամտության հարաբերական բացակայությամբ Այնուամենայնիվ, ժամանակ առ ժամանակ կառավարության միջամտությունը անհրաժեշտ է համարվել՝ ապահովելու տնտեսական հնարավորությունների արդարացիությունը և մատչելիությունը մարդկանց համար,

կանխելու աղաղակող չարաշահումները, նվազեցնելու դրամի արժեզրկումը և խթանելու աճը

Կառավարությունը դեռ գաղութատիրության ժամանակներից ինչ-որ չափով ներգրավվել է տնտեսական որոշումների կայացման մեջ Ինչպես օրինակ՝ ֆեդերալ կառավարությունը հսկայական ներդրումներ է արել ենթակառույցների բնագավառում՝ սկսած ջրանցքներից և փոստային ճանապարհներից 19-րդ դարում, մինչև միջպետական մայրուղիները և Երկրի ուղեծիր դուրս բերվող արբանյակները 20-րդ դարում Կառավարությունը ձեռնամուխ է եղել սոցիալական բարեկեցության ծրագրերի իրականացմանը, որը մասնավոր սեկտորը անկարող էր կամ չէր ցանկանում իրականացնել Տասնամյակներ շարունակ այն բազում ձևերով նյութապես օժանդակել և նպաստել է գյուղատնտեսության զարգացմանը

1930-ական թթ «Նոր կուրս» ծրագրերը մեծապես ընդլայնեցին կառավարության դերը Տնտեսական գործունեությունը կարգավորող նոր օրենքներ ընդունվեցին՝ սկսած բաժնետոմսերի վաճառքից մինչև աշխատավորների՝ արհմիություններ ստեղծելու իրավունքը Դեռ ավելին, կառավարությունը ձեռնամուխ եղավ աշխատավորների ծերության տնտեսական ապահովագրության միջոցառումների իրականացմանը 1935 թ ընդունված սոցիալական ապահովագրության ծրագիրը տակավին ապահովում է թոշակառուներին ամսական կանոնավոր եկամտով Տարիների ընթացքում այն ընդլայնվել է՝ օգնելու նրանց հոգալ բժշկական ծախսերը

Բայց ճոճանակը շարժվել է նաև հակառակ ուղղությամբ 1970-ական և 1980-ական թթ՝ վարկերի կայուն բարձրացման և Միացյալ Նահանգների տնտեսության լճացման ժամանակ, երկրի նոր ղեկավարները գլխավորեցին գրոհը՝ կրճատելու կառավարության ծախսերն ու վարկավորման չափերը և այլ ձևերով նվազեցնելու կառավարության ազդեցությունը մասնավոր սեկտորի վրա Նրանց նպատակն էր խթանել ապատ շուկայի շարժիչ ուժերը՝ մասնավոր սեփականատերերի նախաձեռնությունն ու ներդրումները

Պարբերաբար քննարկվող թեմա է նաև նոր ստեղծվող տեխնոլոգիաների շնորհիվ Միացյալ Նահանգների տնտեսության կերպարանափոխությունը Երբեմնի ագարակագործների երկիրը՝ Միացյալ Նահանգները, ապշեցնելու չափ փոխվեց՝ հարմարվելով արդյունաբերական հեղափոխության մեքենայացված սարքավորումներին և արտադրության տեխնոլոգիական պրոցեսներին, ապա նորից կերպարանափոխվեց, եթե կարելի է այդպես ասել՝ արդյունաբերական «երկրորդ» հեղափոխությամբ

1870 թ սկսած շուրջ մեկ դար է, ինչ Միացյալ Նահանգները

դարձել է աշխարհի խոշորագույն արդյունաբերողը, աշխարհի առաջատարը՝ պողպատի, ավտոմեքենաների ու այլ ապրանքների արտադրության ասպարեզում 1960 ական թթ ից ի վեր մեկ այլ կերպարանափոխություն է տեղի ունենում քանի որ սպասարկման ոլորտի և տեղեկություններ մշակող արդյունաբերության նորելուկ ճյուղերը աստիճանաբար փոխարինում են ավանդական արդյունաբերության հիմնասյուներին 1990-ական թթ շեմին այնպիսի բնագավառների նվաճումները, ինչպիսիք են քիմիան էլեկտրոնիկան, կենսատեխնոլոգիան, հնարավորություն ընձեռեցին արտադրելու ծառայությունների և ապրանքների մի ամբողջ շարք՝ սկսած կիսահաղորդչային սխեմաներից, վերջացրած լազերային վիրաբուժությամբ Նույն ձևով ագարակագործության նոր տեխնոլոգիան փոխակերպեց Ամերիկայի գյուղատնտեսական սեկտորը՝ հնարավորություն տալով արտադրելու ավելի շատ սննդամթերք և անասնակեր՝ ագարակագործների թվի անընդհատ կրճատվելու պայմաններում

Շարունակվող բանավեճերի մի երրորդ թեմա է առևտրի միջազգային քաղաքականությունը և դրան սերտորեն առնչվող՝ Միացյալ Նահանգների ընդգրկման աստիճանը համաշխարհային տնտեսության մեջ առևտուրը շատ առումներով գաղութատիրական համակարգի բուլիքն էր՝ ամերիկյան ապրանքների արտահանումը հնարավորություն էր տալիս ներմուծել արտադրության ընդլայնման համար անհրաժեշտ կապիտալ և մեքենաներ Բայց հաճախ ուժեղ աջակցություն են ստացել հովանավորող այնպիսի միջոցառումները, ինչպիսիք առաջ է քաշել Ալեքսանդր Համիլտոնը (ամերիկյան հեղափոխությանն անմիջապես հաջորդած տարիների պետական գործիչ) Մինչ համաշխարհային II պատերազմի ավարտը Միացյալ Նահանգները միջազգային առևտուրը վարում էր բարձր կամ չափավորված սակացույցների հովանու ներքո Բայց հովանավորությունը նպաստեց 1930-ական թթ Մեծ ճգնաժամին, և համաշխարհային II պատերազմից հետո Միացյալ Նահանգները դարձավ ավելի ազատ առևտրի կողմնակից Չնայած, ընդհանուր առմամբ, առևտրի ազգային քաղաքականությունը եղել է ազատամետ, սակայն 1970-ական և 1980-ական թթ շեմին Միացյալ Նահանգների մշակող արդյունաբերության շատ ճյուղեր գտնվում էին օտարերկրյա նոր հզոր մրցակիցների սաստկացող ճնշման տակ Ավելին, քանի որ Միացյալ Նահանգների առևտրի պակասորդը աճում էր, մեծանում էր նաև մտավախությունը, թե ուրիշ երկրներ տարվել են անազնիվ առևտրական գործունեությամբ

Այդ թեմաներից յուրաքանչյուրը թերագնահատում է ամերիկյան տնտեսությունը բնութագրող որոշակի էական

առանձնահատկություններ Նախ՝ տնտեսությունը անընդհատ փոփոխվում է, քանի որ քաղաքացիները ուղղակիորեն ապատ արտահայտում են իրենց տնտեսական նախապատվությունները շուկայում և անուղղակիորեն՝ քվեարկման ցցիկում Միևնույն ժամանակ, տարիներ ի վեր գոյատևող այդ թեմաները ամերիկյան տնտեսության անընդմեջ կարգացման կապի վկայությունն են

Այսպես թե այնպես, ամերիկացիները հաճախ բնութագրվում են որպես գործնական ապգ Գործնականության փորձաքարն այն է, որ ամեն ինչից բացի ընդունելի տեսությունը պետք է իրականում աշխատի Ամերիկյան ժողովրդի գործնականության հավատի վկայությունը նրա գործողությունների մեջ է՝ ստեղծել և պահպանել մի տնտեսություն, որն ամուր հիմնված է ապատ ձեռներեցության սկզբունքի վրա Միևնույն ժամանակ՝ ամերիկացիները ընդունում են, որ կառավարությունը կարևոր դեր ունի մի այնպիսի միջավայր ստեղծելու հարցում, որն ամենալայն հնարավորությունները կընձեռի թե՛ անհատի, թե՛ տնտեսության աճի և առաջընթացի համար


HOME
HURRICANE CLUB
STORE



ԱՄԵՐԻԿՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳԾԵՐԸ

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

II

ԻՆՉՊԵՍ Է ԳՈՐԾՈՒՄ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

ԱԿՆԱՐԿ

Միացյալ Նահանգների և ապատ ձեռներեցության ամուսնության դաշինքը չափազանց հաջող էր, բայց ոչ պրոբլեմներից կերծ Դեռևս վաղ անցյալի պետական գործիչ Ալեքսանդր Համիլտոնի ժամանակներից ի վեր լուրջ տարաձայնություններ են եղել տնտեսության մեջ կառավարության ճիշտ դերի վերաբերյալ տարբեր ժամանակներում կառավարությունը միջամտել է խթանելու արդյունաբերության որոշակի ճյուղերի աճը, վերահսկելու գործարարությունը սկիզբ առնող չարաշահումներից, հարկերի միջոցով ապահովելու ներմուծումների հետևանքով տուժող արդյունաբերության ճյուղերի հովանավորումը և երբեմն վերաբաշխելու հարստությունը Կառավարության դերը փոքրացել և մեծացել է ժամանակի պահանջին համապատասխան

Միացյալ Նահանգների տնտեսությունը սովորաբար բնութագրվում է որպես կապիտալիստական Բայց «կապիտալիզմ» տերմինը հորինվել է Կարլ Մարքսի կողմից և վերաբերում է տնտեսության կարևորագույն բնագավառների վերահսկողության կենտրոնացմանը կապիտալիստների մի փոքր խմբի ձեռքում Հակառակ դրան՝ ամերիկացիների մեծ մասը կապիտալիզմն ընկալում է որպես «ապատ ձեռներեցություն»՝ մի համակարգ, որը շահութաբեր է միլիոնների և ոչ թե մի քանիսի համար Ապատ ձեռներեցությունը, որպես գաղափար, պարզապես կարելի է նկարագրել, բայց կարևորն այն է, թե որքանով է այդ գաղափարը կիրառելի իրական կյանքում Այս գլխում պատմական վկայությունների հիման վրա փորձ է արվում նկարագրել, թե ինչպես է ապատ ձեռներեցությունը գործում Միացյալ Նահանգներում

ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍԵՐԸ

Յուրաքանչյուր տնտեսական համակարգ ծառայությունների ու ապրանքների արտադրության և բաշխման միջոցով փորձում է կանխատեսել, իսկ այնուհետև բավարարել մարդկանց կարիքները Տնտեսական համակարգն այն կառուցվածքն է, որ ի մի է բերում բնական պաշարները, աշխատուժի պահանջարկը, տեխնոլոգիան և ձեռնարկատիրության ու կառավարման համար անհրաժեշտ տաղանդը Չնայած ամեն մի ազգի որդեգրած տնտեսական համակարգի ձևը քաղաքական պատկանելիության արգասիք է, սակայն այն միաժամանակ, և նույնիսկ առավել չափով, պատմական կենսափորձի հետևանք է, որը ժամանակի ընթացքում դառնում է ազգային մշակույթ

Տնտեսական համակարգի առաջին բաղկացուցիչ մասը բնական պաշարներն են, որոնցից ապրանք են արտադրում Միացյալ Նահանգները մի երկիր է, որը հարուստ է հանքային

պաշարներով, գյուղատնտեսական բերրի հողատարածություններով՝ կուգորդված բարեխառն կլիմայի հետ

Երկրորդ՝ առկա աշխատուժի քանակը նպաստում է որոշելու տնտեսության առողջական վիճակը Ընդհանրապես Միացյալ Նահանգները, բարեբախտաբար, բավարար թվաքանակով մարդ է ունեցել՝ ապահովելու մշտապես ընդլայնվող տնտեսությունը Համաշխարհային I պատերազմից ոչ շատ անց այդ բանվորների մեծ մասը կամ Եվրոպայից Ամերիկա եկած վերաբնակիչներ էին (կամ նրանց անմիջական հետնորդները), կամ աֆրիկյան ամերիկացիներ, որոնց նախնիներն Ամերիկա էին բերվել որպես ստրուկներ Երբ շատ մեծ թվով աշխատող ձեռքեր էին ժամանում Արևելյան ափ, նրանք մշտապես կարող էին շարժվել դեպի խորքն ընկած գյուղատնտեսական հողատարածությունները և արդյունավետ կերպով ընդգրկվել արդյունաբերության այդ ճյուղում

XX դարի առաջին տարիներին մեծ թվով ասիացիներ (չինացիներ, ճապոնացիներ և ֆիլիպինցիներ) ներգաղթեցին Միացյալ Նահանգներ, մինչդեռ մեծ թվով լատինաամերիկացիներ ներգաղթեցին ավելի ուշ XX դարի առաջին կեսին տնտեսական հնարավորությունները դեպի Հյուսիսի քաղաքները ձգեցին նաև Հարավի ագարակների սևամորթ ամերիկացիներին

Չնայած Միացյալ Նահանգները երբեմն ապրել է բարձր գործազրկության տարիներ, կամ ընդհակառակը՝ աշխատուժի սուր պահանջի ժամանակներ, ընդհանուր առմամբ ներգաղթողները եկել են այն ժամանակ, երբ աշխատուժի պահանջարկը մեծ է եղել Ընդհանրապես Միացյալ Նահանգների տնտեսությունը բավական արագ էր աճում, որպեսզի նորեկներին կլանի, եթե նրանք պատրաստ էին · արդյունավետ աշխատել, փոքր-ինչ պակաս վարձատրությամբ, քան ավելի վաղ եկած վերաբնակիչները Բոլոր ներգաղթողները բարգավաճում էին՝ վաստակելով շատ ավելի, քան իրենց հայրենիքում ամերիկյան տնտեսությունը նույնպես բարգավաճում էր

Ցանկացած տնտեսական համակարգում մեկ այլ գործոն է առկա աշխատուժի որակը, այն է՝ ինչ ջանադիր աշխատանքի են նրանք պատրաստ և որքան հմուտ են Միացյալ Նահանգներում խոպանը քրտնաջան աշխատանք էր պահանջում, իսկ բողոքականության աշխատանքային բարոյականության նորմերը պաշտպանում էին այդ պահանջը Կրթությանը տրվող հատուկ նշանակությունը, ներառյալ տեխնիկական և մասնագիտական կրթությունը, ևս նպաստում էր Ամերիկայի տնտեսական հաջողությանը Նմանապես՝ փորձարկելու, փոխելու և տեխնիկայում ներդնելու

պատրաստակամությունը էական էր մի երկրում, որը հպարտանում էր ապատության իր նոր փորձով

Բայց հարուստ բնական պաշարները և հմուտ ու պատրաստակամ աշխատուժը պայմանավորում են տնտեսական կառուցվածքի միայն մի մասը Պաշարները պետք է հնարավորին չափ արդյունավետ կերպով ուղղվեն դեպի այն բնագավառները, որտեղ դրանք ամենաարդյունավետ կերպով կօգտագործվեն Ամերիկյան տնտեսությունում ձեռնարկությունների կառավարիչներն են կատարում այդ պարտականությունը՝ պատասխանելով շուկայից եկող ազդանշաններին

Հիմնական ներդրումների համար անհրաժեշտ են պաշարների խոշոր ծավալներ Ամերիկայում ձեռնարկատերերը դրամ են կուտակում և ապա ներդնում նախագծերում՝ հումք գնում, բանվոր վարձում և արտադրանք վաճառում դրանք այն նախագծերն են, որոնք թվում է թե ամենայն հավանականությամբ, բարձր եկամուտ կտան սկզբնական ներդրման դիմաց Դա որոշվում է ծառայություններ ու ապրանքներ գնողների ցանկությունների և կարիքների գնահատման հիման վրա մի բան, որը հայտնի է որպես սպառողի պահանջարկ

Միացյալ Նահանգներում կորպորացիան դարձել է ներդրման համար դրամագլուխ կուտակելու արդյունավետ միջոց Դա այն սեփականատերերի կամավոր միությունն է որոնք կոչվում են բաժնետերեր և կազմում են սահմանափակ պատասխանատվությամբ լիազորված գործարարական ձեռնարկություն

Ձեռնարկատերերի կապիտալի նախնական ներդրումից անմիջապես հետո հարկավոր է վարձել ինչ-որ մեկին այդ նոր ձեռնարկությունը, գործարանը կամ որևէ այլ նախաձեռնություն կառավարելու համար Ժամանակակից Ամերիկան ստեղծել է կառավարման համակարգի մի շղթա՝ սկսած նավահանգստի բեռնակիրների ավագից մինչև վարչության նախագահը, որի աշխատանքն է գործի անխափան և արդյունավետ ընթացքին հետևելը Լավ կառավարիչները հաճախ կարողանում են տարբերել հաջող գործարքը անհաջողից Ընդունված է ասել, որ 20 րդ դարի սկզբին կառավարումը Ամերիկայում խստագույնս հիմնված էր համակարգային վերլուծության վրա, «գիտական կառավարումը» իսկապես շարժում էր դարձել Բայց հետագայում կառավարման վերաբերյալ տեսակետները դարձան ավելի բազմազան

ԽԱՌԸ ԿԱՊԱԼՍՈՒԹՅՈՒՆ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Միացյալ Նահանգների տնտեսական համակարգը առավելապես մասնավոր սեփականատիրական է Այս համակարգին, որը հաճախ անվանում են «ազատ ձեռներեցության համակարգ», կարելի է հակադրել սոցիալիստական տնտեսական համակարգը, որը հիմնված է արտադրական միջոցների հանրային սեփականության և կառավարության պլանավորման վրա

Այնուամենայնիվ, կառավարությունը միշտ էլ որոշ չափով ընդգրկված է եղել Միացյալ Նահանգների տնտեսությունը վերահսկելու և ղեկավարելու մեջ Միևնույն ժամանակ Միացյալ Նահանգների քաղաքացիները միշտ էլ ազատություն են ունեցել ընտրելու՝ ում համար աշխատել և ինչ գնել Ամենակարևորն այն է, որ ամերիկացիներն ընտրում են այն պաշտոնյաներին, որոնք որոշում են տնտեսական քաղաքականությունը

Միացյալ Նահանգների տնտեսական համակարգում սպառողները, արտադրողները և կառավարությունը օրածին որոշումներ են կայացնում գլխավորապես գների համակարգի միջոցով Այս երեք խմբերի շարժունակ փոխազդեցությունը գործի է դնում տնտեսությունը Սակայն շուկայի գլխավոր ուժը արտադրողների և սպառողների փոխներգործությունն է դա վերլուծողներին մղել է Միացյալ Նահանգների տնտեսության համակարգը որակելու որպես «շուկայական տնտեսություն».

Որպես կանոն, սպառողները որոնում են իրենց գնելիք ապրանքների լավագույն արժեքը, մինչդեռ արտադրողները ձգտում են ստանալ իրենց վաճառելիք ապրանքների լավագույն գինն ու շահույթը Կառավարությունը, լինի այն ֆեդերալ, նահանգային թե տեղական մակարդակի, ջանում է բարձրացնել հասարակության ապահովությունը՝ երաշխավորելու ակնիվ մրցակցությունը և ապահովելու ծառայությունների մի այնպիսի շարք, որոնք, ամենայն հավանականությամբ, ավելի լավ են իրականացվում պետական և ոչ թե մասնավոր ձեռնարկությունների կողմից Այդ պետական ծառայությունների թվին է պատկանում արդարադատության, կրթության (չնայած շատ մասնավոր դպրոցներ և ուսումնական կենտրոններ կան), փոստային (բայց ոչ հեռախոսային) ծառայության, ճանապարհների համակարգի, սոցիալական վիճակագրական տեղեկատվության և, իհարկե, ազգային պաշտպանության կառավարումը

Այդ համակարգում, երբ տնտեսական ուժերը ձերբազատված են կապանքներից, պահանջարկն ու առաջարկն են սահմանում ապրանքների և ծառայությունների գները Ձեռնարկատերերն ազատ են ընդլայնելու իրենց գործը Տեսականորեն, եթե նրանք չապահովեն ապրանքների և ծառայությունների մրցակցության համար անհրաժեշտ

որակն ու գինը, դուրս կմղվեն շուկայից, այնպես որ միայն ամենաարդյունավետ և հասարակությանը լավագույն կերպով ծառայողները կմնան ասպարեզում Գործնականում կառավարության վերահսկողությունը կարող է խոչընդոտել ապատ մրցակցությանը, որպեսզի իրագործի ազգային քաղաքականության այլ նպատակներ, ինչպիսիք են գների և եկամտի կայունությունը, տարածաշրջանի զարգացումն ու միջավայրի պաշտպանությունը Նույն ձևով գործարար շրջանները կարող են միջամտել ապատ մրցակցությանը գները սահմանելու միջոցով կամ այլ մենաշնորհատիրական գործելակերպով, որպեսզի առավելագույնի հասցվի շահույթը

Միացյալ Նահանգներում մարդկանց մեծ մասը միաժամանակ և՛ սպառողներ են, և՛ արտադրողներ նրանք նաև քվեարկողներ են, որոնք օգնում են ազդելու կառավարության որոշումների վրա Սպառողների, արտադրողների և կառավարության անդամների հարաբերակցությունը մշտապես փոխվում է, դրա արդյունքը լինում է ավելի շուտ շարժուն, քան թե անփոփոխ տնտեսությունը Վերջին տարիներս սպառողներն ի լուր ամենքի հրապարակել են իրենց մտավախությունները, և կառավարությունն արձագանքել է դրանց ու ստեղծել գործակալություններ՝ պաշտպանելու սպառողների շահերն ու նպաստելու ամբողջ հասարակության բարեկեցությանը

Միացյալ Նահանգների տնտեսությունը այլ առումներով նույնպես փոխվել է Անհանգստացնող է դարձել բնակչության և աշխատուժի տեղաշարժը ագարակներից դեպի քաղաքներ, դաշտերից դեպի գործարաններ, իսկ ամենաշատը՝ դեպի սպասարկման ոլորտի արդյունաբերություն Այսօրվա տնտեսության մեջ մասնավոր և պետական սպասարկումն ապահովողների թիվը շատ ավելի է գերազանցում գյուղատնտեսական և արդյունաբերական ապրանք արտադրողների թվից Վիճակագրությունը նույնպես ցնցող տեղաշարժ է բացահայտել՝ սեփական գործից դեպի ծառայություն ուրիշների համար

Ընդհանրապես ձեռնարկատիրության երեք ձև կա՝ մենատնտեսություն, բաժնետիրություն և կորպորացիա Առաջին երկուսը կարևոր են, սակայն վերջին կառուցվածքն է, որ թույլ է տալիս մեծ քանակությամբ դրամ կուտակել՝ միացնելով բազմաթիվ մարդկանց ներդրումները, որոնք, որպես բաժնետերեր, ցանկացած պահի ապատ շուկայում կարող են գնել կամ վաճառել իրենց բաժնետոմսերը Կորպորացիաները հնարավոր են դարձնում մեծ մասշտաբի ձեռնարկատիրությունը

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ինչդեռ ակնհայտ է, որ սպառողներն ու արտադրողներն են կայացնում տնտեսությունը ձևավորող որոշումների մեծ մասը, կառավարությունն առնվազն չորս կորեղ ձև ունի ներգործելու Միացյալ Նահանգների տնտեսության վրա

- ՈՒՂՂԱԿԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ *Կառավարության ամեն մի մակարդակ ապահովում է ուղղակի ծառայություններ Փոստային համակարգն, օրինակ, ֆեդերալ ծառայություն է, որն սպասարկում է ամբողջ ազգին, ինչպես ռազմական խոշոր համակարգը Ի հակադրություն դրանց, գլխավոր մայրուղիների մեծ մասի կառուցումն ու պահպանությունը առանձին նահանգների կառավարությունների պատասխանատվության տակ է Կրթության պետական համակարգը հիմնականում վարձատրվում է նահանգային, օկրուգային կամ քաղաքային իշխանությունների կողմից Ոստիկանությունն ու հրշեջ պաշտպանությունն ընդհանրապես տեղական իշխանության պատասխանատվության տակ են*
- ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ *Կառավարությունը կարգավորում և վերահսկում է մասնավոր ձեռնարկատիրությունը բազում ձևերով, որպեսզի այն, ընդհանուր առմամբ, լավագույն ձևով ծառայի մարդկանց շահերին Սովորաբար կարգավորումն անհրաժեշտ է լինում այն բնագավառներում, որտեղ մասնավոր ձեռնարկատիրությունը մենաշնորհ է տրվել, ասենք՝ էլեկտրական կամ տեղային հեռախոսային ծառայությունում կամ այլ բնագավառներում, որտեղ մրցակցությունը սահմանափակ է, ինչպես ասենք՝ երկաթուղիներում Պետական քաղաքականությունը հնարավորություն է տալիս այդպիսի ընկերություններին ազնիվ շահույթ ստանալ, սակայն սահմանափակում է գները «անազնիվ» ձևով բարձրացնելու նրանց կարողությունը (ինչպես այն բնորոշում են կարգավորողները), որովհետև ժողովուրդը կախման մեջ է նրանց ծառայություններից Վերահսկողությունը հաճախ իրականացվում է ժողովրդին պաշտպանելու նպատակով, օրինակ՝ երբ սննդամթերքի և դեղորայքի սանիտարական վերահսկողության վարչությունն արգելում է վնասակար դեղերը, կամ սննդի որակի անհրաժեշտ չափանիշ պահանջում Արդյունաբերության այլ ճյուղերում կառավարությունը ղեկավար հրահանգներ է սահմանում, որպեսզի ապահովի ազնիվ մրցակցությունը՝ առանց ուղղակի վերահսկողություն կիրառելու*

1970, 1980-ական թթ ամերիկացիներն ավելի ու ավելի էին տարաձայնում տնտեսության կարգավորման մեջ կառավարության մասնակցության հարցում Դրա կողմնակիցները փաստարկում էին, թե այդ վերահսկողությունն անհրաժեշտ է պաշտպանելու սպառողներին, աշխատավորներին և միջավայրը ընդդիմախոսները պնդում

էին, թե վերահսկողությունը խոչընդոտում է ապատ ձեռներեցությանը, ավելացնում առևտրական ձեռնարկության շահագործման ծախսերը և դրանով նպաստում դրամի արժեզրկմանը Այդ գործոնները, տեխնոլոգիական սրընթաց փոփոխություններին զուգընթաց, դրդեցին նախագահ Ջիմի Քարտերին նվազեցնել փոխադրամիջոցների և հաղորդակցության արդյունաբերությունների կարգավորումը 1970-ական թթ.. Նույն այդ ժամանակ էլ ֆեդերալ գործակալություններին խրախուսեցին ավելի ճկուն լինել կարգավորումների հարցում

1980-ականներին, նախագահ Ռոնալդ Ռեյգանի օրենսդրության օրակարգում, որը մեծապես հիմնված էր նրա այն համոզմունքի վրա, թե կապանքներից ձերբազատված մասնավոր սեկտորը կապահովի տնտեսության բարգավաճումն ու զարգացումը, էՀ ավելի զարկ տվեցին ազատարգավորող ջանքերին Աշխատավորներին, սպառողներին և միջավայրը պաշտպանելու համար նախատեսված հրահանգների կրճատվեցին Բացի այդ, Ռեյգանի վարչակարգի ժամանակ կամայական մոտեցում էր ցուցաբերվում որոշ կարգավորումների նկատմամբ Սպառողական ապրանքի ապահովության վերահսկողության կոմիտեն կամայական վիջողական մի ծրագիր ընդունեց, որը թույլ էր տալիս առանձին ընկերություններին իրենց սեփական միջոցները մշակել թիրախ ծրագրերի դեմ

1990-ական թթ սկզբին այդքան լայնածավալ համընդհանուր կարգավորման դեմ ուղղված ուժերի պայքար մղելը կարծես թե թուլացավ Չնայած ազատարգավորման կողմնակիցները շարունակում էին շեշտել դրա առավելությունները սակայն դրանից բխող իրական արդյունքների քննադատությունն աճում էր Օրինակ՝ վերահսկողության թուլացումը օդային փոխադրամիջոցների նկատմամբ սկզբում խթանեց աճող մրցակցությունը, որն իջեցրեց թռիչքների արժեքը Սակայն մի քանի տարում ավիաընկերությունների քանակը նվազեց համաձուլման և միավորման ալիքի շնորհիվ և ընդդիմախոսներն սկսեցին առարկել, թե վերահսկողության թուլացման առավելությունները կա՛մ անհետացել են, կա՛մ աննշան դարձել Մյուս կողմից՝ հեռահաղորդակցության մեջ այն ակնկալաբար աշխուժացրեց մրցակցությունը հեռախոսային ծառայությունների արդյունաբերության որոշ ճյուղերում

Միևնույն ժամանակ, 1990-ական թթ շեմին ֆեդերալ կառավարությունում կարգավորիչ գործունեությամբ զբաղվող ծառայողների թիվը նորից աճեց 1980-ական թթ տեղի ունեցած կրճատումներից հետո Կարգավորիչ գործունեությամբ զբաղվող հաստատությունների անձնակազմի վերաբերյալ Ամերիկյան ձեռնարկատիրության ուսումնասիրության կենտրոնի վերլուծության համաձայն 1992 թ ֆեդերալ կառավարության

համապատասխան ծառայողների թիվը ենթադրաբար պետք է լիներ շուրջ 122 000, որը գերազանցում էր 1980 թ սահմանված նախկին ռեկորդը Ուսումնասիրությունը, մասնավորապես, ի հայտ բերեց անձնակազմի աճ այնպիսի գործակալություններում, որոնց գործունեությունը առնչվում էր միջավայրի պաշտպանության և ֆինանսական սեկտորի վերահսկողության հետ Սրանք այն բնագավառներն էին, որտեղ անհանգստացնող իրադարձությունները կամ նրանց ընթացքը, կարծես թե, գնալով էՀ ավելի շատ ամերիկացիների էին մտահոգում

■ ԿԱՅՈՒՆԱՑՈՒՄ ԵՎ ԱՃ *Իշխանությունները, ներառյալ Կոնգրեսը և այնպիսի իրավաբանական անձինք, ինչպիսին է Ֆեդերալ ռեզերվային համակարգը, փորձում են վերահսկել գների սրընթաց աճի ու անկման, դրամի արժեզրկման, լճացման ծայրահեղ դրսևորումները՝ կարգավորելով հարկերի չափը, դրամի քանակը և վարկերի օգտագործումը Նրանք կարող են ազդել տնտեսության վրա՝ փոխելով նաև հասարակության կարիքների համար հենց կառավարության հատկացումների ծավալը Սովորաբար նպատակը հավասարակշռված ֆեդերալ բյուջեն է Սակայն 1960 թ ի վեր բացառությամբ 1969 թ , բոլոր տարիներին ֆեդերալ հաշիվներում պակասորդը գերակշռել է և ընդհանրապես մեծացել է 1980-ական թթ կեսերին՝ հասնելով 200 000 միլիոն դոլլարի՝ մինչ նորից նվազելը*

■ ՈՒՂՂԱԿԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ *Կառավարությունը բազմապիսի օգնություն է նախատեսում ձեռնարկությունների և անհատների համար Այսպես օրինակ՝ հարկացույցները հնարավորություն են տալիս, որ որոշ արտադրատեսակներ հարաբերականորեն ազատ մնան օտարերկրյա մրցակցությունից Ներմուծվող ապրանքների վրա հարկ են դնում, կամ ծավալը սահմանափակում, այնպես որ ամերիկյան ապրանքները կարողանան ավելի լավ մրցակցել օտարերկրյա ապրանքների հետ Կառավարությունը լրավճար է նախատեսում նաև ազարակագործներին, որը նրանք ստանում են իրենց բերքի համար*

Իր գործունեության միանգամայն այլ ոլորտում կառավարությունը պաշտպանում է այն անհատներին, որոնք չեն կարող պատշաճ կենսամակարդակ ապահովել նպաստ է տալիս ցածր եկամուտ ունեցող այն ծնողներին, որոնք իրենց խնամքի տակ երեխաներ ունեն, տարեց մարդկանց և կարիքավորներին ապահովում բժշկական օգնությամբ, ինչպես նաև սոցիալական ապահովագրության ծրագրերով օգնում գործազուրկներին և թոշակառուներին Կառավարությունը նպաստ է տալիս նաև չքավորներին և օգնում անաշխատունակներին

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ

Ակգային տնտեսության ամբողջ արտադրանքի գրեթե երկու երրորդը կազմում են այն ապրանքներն ու ծառայությունները, որոնք գնում են անձնական օգտագործման համար· Մնացած մեկ երրորդը գնում են կառավարությունն ու գործարար շրջանները Այս հարաբերակցության պատճառով երկիրը երբեմն բնութագրվում է որպես «սպառողական տնտեսություն»

Ակնհայտ է, իհարկե, որ սպառողը կչանա միջոցներ գտնել ազդելու շուկայական տնտեսության վրա Բնական է որ սպառողների մեծ մասը չափավոր արժեք է որոնում ինչ որ բան գնելիս, ինչպես նաև փնտրում է արտադրանքի հուսալիություն և ապահովություն Եթե որևէ մեքենա արտադրող, լինի դա հայրենական թե օտարերկրյա ավելի լավ մեքենա է արտադրում և ավելի էժան գնով, շուկայում փոփոխություններ կսկսվեն, քանի որ այդ ավտոմեքենան ավելի շատ գնորդներ կունենա, քան նրա մրցակիցները Տեսականորեն այս երևույթը հատուցում է այն հմուտ արտադրողներին, որոնք կարողանում են ցածր գնով բարձր որակ տալ և դուրս մղել անմրցունակ հակառակորդներին

Ծառայություն և ապրանք արտադրողների թվին են պատկանում սեփականատերերը, կառավարողներն ու բանվորները Սեփականատերերը և կառավարողները որոշումներ են կայացնում, թե ինչ և ինչպես արտադրել՝ հենվելով իրենց ենթադրությունների վրա, թե հասարակությունը ինչ կուզենա գնել, միաժամանակ շահույթ ակնկալելով իրենց գործարքներից

Ակգային համախառն արդյունքով (ԱՀԱ) է որոշվում ծառայությունների և ապրանքների ընդհանուր քանակը տվյալ տարում Տեղին կլիներ այստեղ նախապգուշական խոսք ասել ԱՀԱ-ն կամ նմանօրինակ այլ չափանիշ, ասենք՝ համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ), որպես ապգի բարեկեցության չափանիշ օգտագործելիս Միջավայրի պաշտպաններն ու հասարակական մեկնաբաններն ուշադրություն են հրավիրում այն բանի վրա, որ ոչ ԱՀԱ-ն և ոչ էլ ՀՆԱ-ն ապգի բարեկեցությանը համարժեք չափանիշ չեն, քանի որ դրանք միայն արտահայտում են ծառայությունների ու ապրանքների շուկայական արժեքը Հակառակ դրան, տնտեսական աճը կարող է նպաստել միջավայրի աղտոտմանը և էլ ավելի սրել մաքուր և առողջանպաստ միջավայրի պահպանման բարդ խնդիրը

Միացյալ Նահանգների ԱՀԱ-ն շարունակ աճել է՝ 1983 թ ավելի քան 3 400 միլիարդ դոլլարից 1990 թ հասնելով մոտավորապես 5 500 միլիարդ դոլլարի

ՀՔԱՎՈՐՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Տարիներ շարունակ ամերիկացիներին անհանգստացրել է չքավորության առկայությունը իրենց երկրի առանձին հատվածներում, հակառակ այն արմատախիլ անելու ֆեդերալ կառավարության և այլոց վիթխարի ջանքերին Աշխատանքի նախարարության միջոցով ֆեդերալ կառավարությունը սահմանել է 4 հոգուց բաղկացած ընտանիքի կենսապահովման համար անհրաժեշտ եկամտի նվազագույն չափը Այն կարող է տատանվել՝ կախված դրամի արժեզրկումից, ապրանքների արժեքից և ընտանիքի բնակության վայրից 1990 թ 13 360 դոլլարից ցածր տարեկան եկամուտ ունեցող 4 հոգուց բաղկացած ընտանիքը դասվում էր աղքատների շարքը

Գրեթե 2 տասնամյակ աղքատության եզրին դասակարգվածների տոկոսը շարունակ ընկնում էր՝ 1959 թ-ից, երբ այն կազմում էր 22,4 տոկոս մինչև 1978 թվականը, երբ այն կազմում էր 11,4 տոկոս Այն փոքր-ինչ բարձրացավ 1979-1983 թթ, իսկ հետո վերսկսեց անկումը 1989 թ աղքատության եզրին կանգնածների տոկոսը կազմում էր 12,8

Որոշ վերլուծողներ ենթադրում են, թե աղքատության մեջ ապրող մարդիկ ավելի քիչ են, քան Աշխատանքի նախարարության վիճակագրությունը արձանագրում է, քանի որ վերջինս հիմնված է միայն դրամական եկամտի վրա Այն չի արտահայտում կառավարության ողջ դրամական փոխադրումները, ինչպես օրինակ՝ պարենամթերքի կտրոնները, բժշկական օգնությունը կամ կոմունալ բնակարանով ապահովելը Սակայն ուրիշները մատնանշում են, որ այդ կարգի փոխադրումները հազիվ թե ծածկեն ընտանիքի սննդի կամ բժշկական օգնության պահանջները, բացի այդ, կոմունալ բնակարանների խիստ պակաս կա Ոմանք փաստարկում են, թե նույնիսկ այն ընտանիքները, որոնց եկամուտը կազմում է աղքատության եզրին կանգնածների եկամտի 185 տոկոսը, երբեմն սովի են մատնված տնտեսում են սննդամթերքի վրա, որպեսզի վճարեն բնակարանի, բժշկական օգնության և հագուստի համար Տակավին մի այլ խումբ մատնացույց է անում, որ աղքատության եզրին գտնվող մարդիկ երբեմն դրամական եկամուտ են ստանում պատահական աշխատանքից կամ «ստվերային» տնտեսությունից, որը երբեք չի արձանագրվում պաշտոնական վիճակագրությունում

ԿՈՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՃԸ

XX դարի առաջընթացին զուգահեռ՝ հասարակությունն սկսել է ավելի մեծ ծառայություններ ակնկալել կառավարությունից, քան անցած որևէ դարաշրջանում Պետք է ավելացնել, որ ծառայությունների մի մեծ խումբ տնտեսական առումով շահութաբեր է դառնում

կառավարության համար, երբ մեծ թվով մարդիկ կուտակվում են քաղաքներում Օրինակ՝ աղբի կապմակերպված հավաքումը գյուղական վայրերում անթույլատրելի չափով թանկ կարժենար ստիպված բնակչության պատճառով, սակայն այն գործնական է և անհրաժեշտ մեծ քաղաքներում

Կառավարության աճի տեմպերն ավելի մեծ են եղել նահանգային և տեղական, քան թե ֆեդերալ մակարդակներում 1960-1990 թթ նահանգային և տեղական իշխանությունները իրենց ծառայողների թիվը 6 4 միլիոնից հասցրել է 15.2 միլիոնի, մինչդեռ ֆեդերալ կառավարության ծառայողների թիվը 2 4 միլիոնից աճել է ընդամենը 3 միլիոնի

Մասամբ այս աճի և դրա համար վճարելիք հարկերի աճի պատճառով XX դարի վերջերին մտահոգված շատ դիտորդներ հարց էին տալիս, թե արդյո՞ք կառավարությունը պետք է լինի անհրաժեշտ ծառայությունների ամենաարդյունավետ ապահովողը Իրականում մի նոր բառ, այն է՝ «սեփականաշնորհում» բառը հորինվեց և աշխարհով մեկ ընդունելություն գտավ՝ բնութագրելու համար կառավարության գործելակերպը իր գործառնությունների մի մասը մասնավոր սեկտորին հանձնելու գործում Միացյալ Նահանգներում դա գլխավորապես վերաբերում էր մունիցիպալիտետների և շրջանային ինքնավարության մակարդակներին քանի որ տնտեսական այնքան քիչ գործունեություն է ուղղակիորեն դրված ֆեդերալ կառավարության վերահսկողության տակ 1991 թ շեմին այնպիսի խոշոր քաղաքներ, ինչպիսիք են Նյու Յորքը, Լոս Անջելեսը (Կալիֆորնիա), Ֆիլադելֆիան (Փենսիլվանիա), Դալլասը (Տեքսաս), Ֆենիքսը (Արիզոնա) մասնավոր ընկերություններն ու ոչ շահութաբեր կազմակերպություններն աշխատեցնում էին՝ ծավալելու շատ բազմազան գործունեություն, որը նախկինում ի կատար էր ածվում հենց իրենց՝ մունիցիպալիտետների կողմից սկսած փողոցային լույսերի վերանորոգումից մինչև կոշտ թափոնների տեղափոխումը տեղեկությունների մշակումից մինչև գոլֆի տեղական դասընթացների կազմակերպումը Նյու Յորքը՝ Միացյալ Նահանգների խոշորագույն քաղաքը 1991 թ նախատեսված 3 5 միլիարդ դոլլար բյուջետային պակասորդով հատկապես խիստ էր զգում սեփականաշնորհման անհրաժեշտությունը այն արդեն մոտ 5 միլիարդ դոլլարի քաղաքային ծառայություններ դարձրել էր պայմանագրային և լրջորեն քննարկում էր այդ թիվն էլ ավելի մեծացնելու հնարավորությունը

Իրականում որոշ ամերիկյան պետական գործիչներ և վերլուծողներ պնդում էին, որ ֆեդերալ կառավարությունը պետք է սեփականաշնորհի այնպիսի հիմնական բնագավառներ, ինչպիսին է Միացյալ Նահանգների փոստային ծառայությունը

Բայց և այնպես 1990-ական թթ հասարակական ծառայությունների բնագավառի սեփականաշնորհումը շարունակում էր խիստ բանավեճեր հարուցել Մինչ դրա կողմնակիցները պնդում են, թե սեփականաշնորհումը նվազեցնում է ծախսերը և ավելացնում հասարակական սեկտորի արտադրողականությունը, մյուսներն ապացուցում են հակառակը՝ թե մասնավոր կապալառուներին հարկավոր է շահույթ ստանալ և այդ իսկ պատճառով այդ ծառայություններն ավելի թանկ են, բայց ոչ անպայման ավելի արդյունավետ Որևէ արդեն սեփականաշնորհված հասարակական ծառայության արդյունավետության չափումը բարդ խնդիր է Եթե որևէ հասարակական ծառայության համար միայն 1 կապալառու է հայտ ներկայացնում, այդ դեպքում հնարավոր է, որ ծախսերի ոչ մի խնայողություն էլ չլինի Զարմանալի չէ, որ հասարակական սեկտորի արհմիությունները շատ դեպքերում համառորեն դեմ են սեփականաշնորհմանը Նրանք նշում են, որ կապալառուները որոշ դեպքերում պայմանագրեր ձեռք բերելու միտումով ցածր արժողության հայտեր են ներկայացնում, սակայն գները հետագայում կգալիորեն բարձրանում են

Սեփականաշնորհման հարցում վճռորոշն այն չէ, թե ով է իրականացնում ծառայությունը, այլ այն, թե արդյոք առկա՞ է մրցակցության տարրը Իսկ սեփականաշնորհման դեպքում դա սովորաբար նշանակում է, որ հայտ ներկայացնողների թիվը մեկից ավելի պետք է լինի մինչ պայմանագրի ստորագրումը Իսկ սպառնացող սեփականաշնորհումը երբեմն կարող է խթան հանդիսանալ տեղական իշխանությունների ծառայողների համար, որպեսզի ավելի արդյունավետ կատարեն իրենց աշխատանքը և պահպանեն իրենց աշխատատեղերը

Որոշակիորեն, անկախության նվաճումից ավելի քան 200 տարի անց, Միացյալ Նահանգների տնտեսության մեջ կառավարության պատշաճ դերի հարցը մնացել է սուր վիճաբանությունների առարկա

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՈՒՐՎԱԳԾԵՐԸ

ՄԱՍ ԵՐՐՈՐԴ

III

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

IRA STOUT
REAL ESTATE

Ամերիկյան տնտեսության զարգացման պատմական արմատները սկիզբ են առնում 16,17,18-րդ դարերում եվրոպացի նորաբնակների տնտեսական շահերի որոնումներից Մինչ այդ Հյուսիսային Ամերիկայի բնակիչները բնիկ ամերիկացիներն էին, ցեղեր, որոնք, ենթադրաբար, եկել էին Ամերիկա մոտ 20 000 տարի առաջ՝ Ասիան Ամերիկային կապող ցամաքային կամրջով, ուր այսօր Բերինգյան նեղուցն է

Ամերիկայի առաջին «հայտնագործումը» եվրոպացիների կողմից, հանձինս վիկինգների, կատարվեց 1000 թ Սակայն այդ իրադարձությունը միանգամայն աննկատ մնաց այդ ժամանակ եվրոպական հասարակությունը մեծ մասամբ դեռևս ամուր հիմնված էր գյուղատնտեսության և հողի մասնավոր սեփականատիրության վրա Առևտուրը դեռևս այնպիսի կարևոր բնույթ չէր ստացել, որ կարողանար խթան հանդիսանալ Հյուսիսային Ամերիկայի հետագա հետազոտության և այնտեղ բնակություն հաստատելու համար

1492 թ Քրիստափոր Կոլումբոսը իտալական առագաստանավով, իսպանական դրոշի ներքո ուղևորվեց հայտնագործելու դեպի Ասիա տանող հարավ- արևմտյան ճանապարհը և հայտնագործեց մի «Նոր աշխարհ» Հաջորդ 100 տարվա ընթացքում անգլիացի, իսպանացի, պորտուգալացի, հոլանդացի և ֆրանսիացի հետազոտողները նավարկության դուրս եկան՝ որոնելու Նոր աշխարհը, ոսկի և հարստություն գտնելու, փառք ու պատիվ ձեռք բերելու ակնկալությամբ

Սակայն Հյուսիսային Ամերիկայի անապատները շատ քիչ ոսկի ու ավելի պակաս փառք բերեցին վաղ հետազոտողներին, և մեծամասնությունը չհաստատվեց այնտեղ Բնակություն հաստատողները եկան ավելի ուշ նրանք կա՛մ տնտեսական շահ էին որոնում, կա՛մ փախուստի դիմում կրոնական անհանդուրժողականությունից, քաղաքական բռնակալությունից 1607 թ անգլիացիների մի խիզախ խումբ իր մշտական գաղութը հիմնեց այն վայրում, որը պետք է դառնար Միացյալ Նահանգներ Այն կոչվեց Ջեյմսթաուն և տեղավորված էր ներկայիս Վիրջինիա նահանգում

ԳԱՂՈՒԹԱՑՈՒՄ

Բազում պատճառներով նրանք, ովքեր եկել էին հիմնադրելու առաջին գաղութները, նոր հայրենիք էին որոնում Պուրիտաններն, օրինակ, մի քանի գաղութ հիմնադրեցին Մասաչուսետսում Անգլիացի այս վերաբնակիչները կրոնապաշտ, կարգապահ մարդիկ էին, որոնք ուզում էին փախչել կրոնական հետապնդումից Նրանք ստեղծեցին մի համայնք, որը հիմնված էր նրանց նեղ կրոնական իդեալների վրա

Սակայն վերաբնակիչները Նոր աշխարհ եկան ոչ միայն բացառապես կրոնական շարժառիթներով 17-րդ դարում շատ գաղութներ հիմնադրվեցին հիմնականում որպես գործարարական նախաձեռնություն Ավելին, բարեպաշտությունն ու շահույթը միշտ չէ, որ անհամատեղելի էին Փլիմութում պուրիտանների հիմնադրած գաղութը, թեև կպմավորված էր առանց շահույթի միտումի, չանտեսեց և իսկապես չէր կարող անտեսել տնտեսական նկատառումները

Եվրոպական երկրներից Անգլիան ամենահաջողակն էր գաղութացնելու այն, ինչը պետք է դառնար Միացյալ Նահանգներ, և նրա հաջողությունը, Ջեյմսթաունից սկսած, մեծապես պայմանավորված էր արտոնված ընկերությունների մասնակցությամբ Արտոնված ընկերությունները կազմված էին բաժնետերերից՝ սովորաբար առևտրականներից և հարուստ հողատերերից, որոնք տնտեսական շահույթի հույս ունեին և հավանաբար ցանկանում էին առաջ տանել ազգային նպատակները Մինչ մասնավոր սեկտորը իր ձեռքում էր պահում ֆինանսավորումը, թագավորական իշխանությունը յուրաքանչյուր նախագիծ ապահովում էր արտոնագրով կամ տնտեսական իրավունք ինչպես նաև քաղաքական ու իրավական լիազորություն շնորհող ընծայագրով

Սակայն նյութական շահույթ ստանալու սկզբնական փորձերը գաղութներում մեծ մասամբ ձախողվեցին, համենայն դեպս, անգլիացի առաջին ներդրողների փորձերը Ոսկի քիչ կար, և հանույթը ձեռնտու չէր Արևելյան ափին Ագարակագործության համար անհրաժեշտ հողերը պետք է մաքրվեին, և նույնիսկ եթե բերքը լավ էր, գները համեստ էին, որովհետև դրամ քիչ կար Աշխատանքի պահանջարկը մեծ էր, և իրական աշխատավարձը շատ ավելի բարձր էր, քան Անգլիայում Պայմանները դաժան էին, իսկ շահույթը ցածր լինելու միտում ուներ

Անգլիացի առաջին ներդրողները Ջեյմսթաունի և Փլիմութի գաղութները շտապեցին հանձնել նորաբնակներին Դրա քաղաքական նշանակությունը վիթխարի էր, թեև այդ պահին՝ չգիտակցված Վերաբնակները թողնված էին իրենց կամքին՝ կառուցելու իրենց սեփական համայնքը, սեփական կյանքը և սեփական տնտեսությունը, ըստ էության՝ սկիզբ դնելու նոր երկրի նախահիմքերին, եթե կարող էին

ԱՐՏՈՒԹԱՏԻՐԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գաղութատիրության ամենավաղ շրջանում բարգավաճումը, ինչպիսին էլ այն լիներ, արդյունք էր մուշտակավոր կենդանիների որսի և նրանց մորթու վաճառքի Ավելացնենք, որ ձկնարդյունաբերությունը հարստության հիմնական աղբյուրն էր Մասաչուսետսում Բայց բոլոր գաղութներում էլ մարդիկ վստահում էին գյուղացիական մանր

տնտեսություններին և սեփական ուժերին Տնայնագործական տնտեսություններն արտադրում էին սեփական մոմն ու օճառը, սննդամթերքի պահածոներն ու գարեջուրը, շատ դեպքերում մշակում սեփական մանածաթելը՝ կտավ գործելու համար Փոքրաթիվ մանր քաղաքներում և Հյուսիսային ու Հարավային Կարոլինայի ու Վիրջինիայի համեմատաբար խոշոր գաղութներում որոշ անհրաժեշտ ապրանքներ և պերճանքի փաստորեն բոլոր առարկաները ներմուծվում էին ծխախոտի, բրնձի և ինդիգոյի արտահանության դիմաց որոնք մեծ շահույթ էին բերում Անգլիայում՝ Լոնդոնի, Բրիստոլի և Լիվերպուլի շուկաներում Այս շրջաններում առևտուրն ու վարկը տնտեսական կյանքի հիմնական մասն էին կազմում

Արդյունաբերության ճյուղերն աճում էին գաղութների կարգացմանը զուգընթաց Սկսեցին հայտնվել բազմաթիվ մասնագիտացված արտադրություններ, ինչպիսիք են սղոցարաններն ու ալրաղացները Բացվեցին նավաշինարաններ՝ ձկնորսական նավատորմ ստեղծելու և ժամանակի ընթացքում ստեղծելու հիմնական առևտրական նավատորմը կաղնին, որն Անգլիայում համեմատաբար քչացել էր, կարելի էր հեշտությամբ ձեռք բերել Նոր Անգլիայում Երկաթի արտադրությունը նույնպես սկսեց աստիճանաբար կարգանալ գաղութատիրության դարաշրջանում

XVIII դարի շեմին կարգացման տարածքային սխեման դարձել էր հստակ ու բավական կայուն Նոր Անգլիայի գաղութները տալիս էին մեծ քանակությամբ նավաշինարարներ և օպերատորներ Մերիլենդի, Վիրջինիայի և Հյուսիսային ու Հարավային Կարոլինայի պլանտացիաները հիմնականում աճեցնում էին այնպիսի գյուղատնտեսական կուլտուրաներ, ինչպիսիք են ծխախոտը, բրինձը և ինդիգոն, իսկ միջին մասում ընկած Նյու Յորքի (Փենսիլվանիա), Նյու Ջերսիի ու Դելավերի գաղութները, ընդհանրապես, գյուղատնտեսական կուլտուրաների և մորթու բեռնառաքիչներն էին Բոլոր երեք տարածաշրջաններում էլ կենսամակարդակը շատ բարձր էր ավելի բարձր էր, քան բուն Անգլիայի բանվորներինը Բայց քանի որ գաղութները դանդաղում էին շահույթ տալ, կապիտալ ներդնող շատ անգլիացիներ եւ քաշվեցին՝ ասպարեզը թողնելով գաղութաբնակ ձեռնարկատերերին

Որպես հետևանք, 1770 թ շեմին Հյուսիսային Ամերիկայի քաղաքները տնտեսապես և քաղաքականապես պատրաստ էին դառնալ ծայր առած ինքնակառավարման շարժման մի մասը, որը տիրապետող է եղել Անգլիայի քաղաքականության մեջ՝ սկսած Ջեյմս I-ի ժամանակաշրջանից (1603-1625) Վիճաբանություններ ծավալվեցին գաղութներից հարկերի գանձման և այլ հարցերի շուրջ Այնուամենայնիվ, քիչ թվով ամերիկացիներ էին կարծում, որ սաստկացող վիճաբանությունը անգլիական կառավարության հետ կտանի դեպի գաղութների

անկախությունը Ավելի շուտ նրանք հույս ունեին, որ անգլիացիները փոփոխություն կմտցնեն հարկային համակարգում և կարգավորումները կանեն այնպես, որ գոհացնեն ավելի մեծ չափի ինքնակառավարման իրենց պահանջը 17-րդ և 18-րդ դարերի անգլիական քաղաքական ընդվզումների նման, ամերիկյան հեղափոխության դրդապատճառները և՛ քաղաքական էին, և՛ տնտեսական այն ղեկավարվում էր նոր ձևավորվող միջին դասի կողմից, որը ոգեշնչված էր մարդկանց «ապատության, մասնավոր սեփականության և ապրելու նրանց անկապտելի իրավունքի» մասին կոչերով՝ արտահայտություն, որ ակնհայտորեն փոխ էր առնված անգլիացի փիլիսոփա Ջոն Լոկի «Քաղաքացիական կառավարման մասին» գրքի երկրորդ տրակտատից (1690) Սակայն 1775 թ ապրիլին տեղի ունեցավ մի իրադարձություն, որը քաղաքական լիակատար խզման էր հանգեցնելու Բրիտանացի զինվորները, մտադրվելով գրավել Կոնկորդի (Մասաչուսետս) գաղութային զինապահեստը և կանխել ապստամբությունը, բախվեցին գաղութի աշխարհազորային բանակի հետ, և ինչ-որ մեկը (ոչ ոք չգիտի, թե ով) կրակեց՝ սկիզբ դնելով ամերիկացիների Անկախության պատերազմին Պատերազմը շարունակվեց մինչև խաղաղության դաշնագրի ստորագրումը 1783 թ , որը հռչակեց նոր պետության՝ Միացյալ Նահանգների անկախությունը

ՆՈՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Միացյալ Նահանգների սահմանադրությունը, որն ընդունվել է 1787 թ և գործում է մինչև օրս, շատ առումներով ստեղծագործական հանճարի արգասիք էր Որպես տնտեսական ծրագիր, այն հաստատում էր, որ ամբողջ երկիրը, որը տարածված էր Մեյնից մինչև Ջորջիա, Ատլանտյան օվկիանոսից մինչև Միսսիսիպիի հովիտը, մի ամբողջական կամ «ընդհանուր» շուկա էր Սակացույցներ և հարկեր չպետք է լինեին միջնահանգային առևտրում Սահմանադրությունը նախատեսում էր, որ ֆեդերալ կառավարությունը կարող է կարգավորել առևտուրն օտար երկրների հետ և նահանգների միջև հաստատել սնանկացման միասնական օրենքներ, դրամ հատել և կարգավորել նրա արժեքը, սահմանել ծանրության և չափի միավորները, հիմնադրել փոստատներն ու փոստային ճանապարհները և սահմանել արտոնագրերի հեղինակային իրավունքի կարգը Հիշատակված վերջին կետը «մտավոր աշխատանքի սեփականության» կարևորության վաղ ճանաչումն էր, հարց, որը մեծ կարևորություն էր ստացել 20-րդ դարի վերջի առևտրական բանակցություններում

Ալեքսանդր Համիլտոնը՝ պետության «հիմնահայրերից» մեկը և Ջորջ Վաշինգտոնի ֆինանսների նախարարը,

պաշտպանեց տնտեսական կարգացման այն միջոցառումները, որոնցով ֆեդերալ կառավարությունը կարգացնելու էր նորելուկ ճյուղերը՝ բացահայտ լրավճարով և հովանավորող սակացույցներով Նա նույնպես պնդում էր, որ ֆեդերալ կառավարությունն ստեղծի պետական բանկ և իր վրա վերցնի պետական այն պարտքերը, որ գաղութներն արել էին հեղափոխության ժամանակ Նոր կառավարությունը հապաղում էր գործնականություն դրսևորել Համիլտոնի որոշ առաջարկների հանդեպ, սակայն, վերջ ի վերջո, սակացույցները դարձան Ամերիկայի արտաքին քաղաքականության էական մասը՝ մի դիքորոշում, որը շարունակվեց մինչև 20-րդ դարի գրեթե կեսերը

Չնայած վաղ շրջանի ամերիկյան ագարակագործները երկյուղ ունեին, որ պետական բանկը կծառայի հարուստներին՝ ի հաշիվ աղքատների, Միացյալ Նահանգների առաջին Պետական բանկի հիմնադրումը վավերացվեց 1791 թ այն շարունակեց գոյություն ունենալ մինչև 1811թ Համիլտոնը համոզված էր, որ Միացյալ Նահանգները հետամուտ կլինի տնտեսական կարգացման՝ առաքման կանապան ձևերի արտադրության ու բանկերի միջոցով Համիլտոնի քաղաքական ախոյան Թոմաս Ջեֆերսոնը իր փիլիսոփայությունը հիմնում էր հասարակ մարդուն քաղաքական ու տնտեսական բոնակալությունից պաշտպանելու վրա Նա մասնավորապես գովերգում էր մանր ագարակագործներին՝ որպես «ամենաարժեքավոր քաղաքացիների»·

1801 թ Ջեֆերսոնը նախագահ դարձավ և սկսեց օժանդակել ավելի ապակենտրոնացված ագրարային ժողովրդավարությանը

ՇԱՐԺՈՒՄ ԴԵՊԻ ՀԱՐԱՎ ԵՎ ԱՐԵՎՄՈՒՏՔ

1793 թ Էլի Ուիտնիի բամբակապտիչ մեքենայի գյուտից հետո, մեքենա, որը կատում էր բամբակի հումքը սերմերից և այլ թափոններից, բամբակի շուկան բարգավաճեց Հարավի խոշոր հողատերերը հող էին գնում մանր ագարակագործներից, որոնք հաճախ տեղաշարժվում էին դեպի Արևմուտքի խորքը Շուտով խոշոր պլանտացիաները որոնք ապահովված էին ստրկական աշխատուժով մեծապես հարստացրին որոշ ընտանիքների Շատ ամերիկացիների համար արշավը դեպի Արևմուտք լուսաբանում է անհատապաշտության ժառանգման ավանդույթը որն ամրապնդվում էր կենսամակարդակի հաստատուն բարձրացումով և բնութագրվում ապագայի հանդեպ ունեցած լավատեսական աշխարհայեցողությամբ

Գաղթը բաղկացած էր նորաբնակների երեք ալիքից Նախ եկան ամենավաղ անհատապաշտ ռահվիրաները, որոնց

ապրուստի միջոցը որսորդությունը և ձկնորսությունն էին Նրանց գյուղատնտեսական հմտությունները սահմանափակ էին, և ագարակների անասունները, որ նրանք պահում էին, ոչ ավելի էին, քան մի ձի, մի կով, մի քանի խոզ ու երբեմն՝ հավ Դրան ի հետևանք՝ նրանց կենսամակարդակը ցածր էր

Նորաբնակների հաջորդ խումբը հող գնեց, դաշտերը մաքրեց անտառներից, ընդարձակեց ճանապարհները և մշտական բնակություն հաստատեց Նրանց ագարակները մեծ մասամբ, բայց ոչ լիովին, անկախ էին տնտեսական առումով

Եվրափակիչ ալիքով եկան նույնպիսի կամ ավելի խոշոր ձեռնարկատերեր, քան նախորդներն էին, որոնք հարուստ էին բաժնետիրական կապիտալով Նրանք ստեղծում էին սեփականատիրական արժեքներ և օգտվում դրանց աճից՝ մտածելով շահութաբեր ձեռնարկման տեսանկյունից Նրանց ագարակները գրեթե ամբողջությամբ կողմնորոշված էին դեպի շուկա Նրանք կառուցում էին կիսագյուղական համայնքներ, որոնք մարդկանց ապահովում էին այնպիսի կենսամակարդակով, որը նախկինում երբեք չէին պատկերացնի

ԱՆԿԱՅՈՒՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ 1820-1860

1820-ական թթ Ամերիկայի բնակչությունը ավելի ու ավելի էր խորանում դեպի Արևմուտք՝ հաջողության և բարենպաստ հնարավորությունների որոնումով Այդ մարդիկ երբեմն նկարագրվում են որպես կատաղի անկախականներ և խիստ հակադիր կառավարության ցանկացած վերահսկողության ու միջամտության Սակայն իրականում նրանք կառավարությունից մեծ օգնություն էին ստանում՝ ուղղակի և անուղղակի Կառավարության կառուցած պետական ճանապարհները, ինչպիսիք են Քամբերլենդ Փայկը (1818) և Էրիի ջրանցքը (1825), օգնում էին ագարակագործների արտադրանքը շուկա փոխադրելուն Ֆեդերալ կառավարությունը բազմաթիվ քոլեջներ էր հիմնել՝ շնորհված հողակտորներով, որպեսզի երիտասարդները հմտանան գյուղատնտեսության բնագավառում, ինչպես նաև հիմնել էր գյուղատնտեսական փորձակայաններ և սպասարկող գործակալությունների մի ամբողջ շարք, բոլորն էլ՝ նախատեսված անկախ ագարակագործի հետագա կրթության ու բարեկեցության համար

Այդ դարաշրջանի ամերիկացիներն ունեին մի ընդհանուր բաղձանք՝ բարելավել պայմանները՝ տնտեսության մեջ իրենց մասնակցությամբ Նրանք, ովքեր տարակարծիք էին, թե ինչպես հասնել այդ նույն նպատակին, քաղաքական ու տնտեսական բազմաթիվ կոիվներ մղեցին 19-րդ դարում Այդ կոիվների արդյունքները թերագնահատում էին և՛

անհատապաշտության, և՛ կառավարության միջամտության աստիճանը

Երբ 1829 թ Անդրյու Ջեկսոնը դարձավ նախագահ բոլոր աղքատներն ու նորելուկ հարուստներն իդեալականացնում էին նրան որպես անհատապաշտի, որը նման էր իրենց, քանզի նա իր կյանքն սկսել էր գաղթականների սահմանագծում գտնվող փայտաշեն մի խրճիթում Նախագահ Ջեկսոնը հակադրվեց 1816 թ Միացյալ Նահանգներում հիմնադրված նոր ֆեդերալ բանկին նա հավատում էր որ այն աջակցում է Արևելքի ապահովության շահերին՝ ընդդեմ Արևմուտքի Երբ Ջեկսոնը վերընտրվեց երկրորդ ժամկետի համար, նա հրաժարվեց վավերացնել բանկի գործունեության նորոգման ժամկետը, որը լրանում էր 1836 թ 1833 թ Կոնգրեսը նրան պաշտպանեց՝ արդյունավետ կերպով խափանելով Պետական երկրորդ բանկի ստեղծումը Ջեկսոնը գերադասեց, որ Միացյալ Նահանգների կառավարությունը իր ներդրումներն անի նահանգների բանկերում, որոնք վերահսկում էին նրա քաղաքական դաշնակիցները

Ջեկսոնի գործողություններն օգնեցին արագացնելու գործարար շրջանների 1834 և 1837 թթ սուր խուճապները Արևելքը, հատկապես նրա արդյունաբերական սեկտորը որը տառապում էր դրամի սուր պակասից, ի վերջո խեղանդամ եղավ մինչ այդ Արևմուտքում ֆեդերալ ներդրումները նահանգային բանկերում դրամի առատություն էին ստեղծում գյուղական վայրերում և նպաստում հողի չարաշահումներին ու գների թռիչքին Նույն հողակտորը հաճախ վերավաճառում էին և ամեն անգամ՝ նոր շահույթով հողի վերավաճառքից Միացյալ Նահանգների գանձարանի եկամուտը 1834 թ 5 միլիոն դոլլարից 1836 թ հասավ 20 միլիոն դոլլարի Սակայն այդ սրընթաց աճի մեջ գաղտնաբար առկա էին տնտեսական աղետի սերմերը

Առաջին նշանները երևացին 1835 թ, երբ վատ բերքի պատճառով ստիպված էին հացահատիկ ներմուծել Եվրոպայից Որոշ ներմուծողներ վախենում էին տնտեսական լճացումից և հրաժարվում էին երկարաձգել գնորդների վարկերի ժամկետները 1836 թ, երբ շրջանառության մեջ գտնվող դրամի քանակը շատ քիչ էր, ֆինանսների նախարարությունը հրաման արձակեց, որ դրանից հետո կառավարությունից գնված հողերի համար պետք է վճարել ոսկով կամ արծաթով Սակայն այդ թանկարժեք մետաղների պաշարը մեծ չէր, քանի որ ուղարկել էին արտասահման՝ վճարելու ներմուծումների համար Պետության ֆինանսական համակարգի հանդեպ ունեցած հավատը երերաց, նույնիսկ խորտակվեց, և արևմտյան բանկերը սկսեցին փակվել

Այդ ժամանակամիջոցում անգլիացի առևտրականները չէին կարողանում գանձել Ամերիկայում վաճառված ապրանքների

արժեքը, և նրանցից շատերը սնանկացան Անգլիայի մանածագործարանները փակվեցին, և Ամերիկայի խոշոր հողատերերը կորցրին իրենց շուկաները 1837 թ ամռան շեմին ձեռնարկատիրությունը խեղանդամվել էր, և միայն 1840-ական թթ սկզբին էր, որ նրա նկատմամբ հավատ հիշեցնող մի բան վերականգնվեց

Սակայն պարբերական տնտեսական խափանումները, ինչպիսին «1837 թ խուճապն» էր, չկասեցրին Միացյալ Նահանգների տնտեսական արագ աճը 19-րդ դարի ընթացքում Ջեկսոնից հետո եկած նախագահները նույնպես սերում էին Արևմուտքից, կամ դաշնակցում էին նրանց, ովքեր արտացոլում էին գյուղացիների զգացմունքները և բաժանում կենտրոնական իշխանության հանդեպ Ջեկսոնի ունեցած անվստահությունը

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ, ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՇՈՒԿԱՆԵՐ

Միացյալ Նահանգների վրա մեծապես ազդեց 18-րդ և 19-րդ դարերում Եվրոպայում տեղի ունեցած Արդյունաբերական հեղափոխությունը Նոր գյուտերն ու կապիտալ ներդրումները հանգեցրին արդյունաբերության նոր ճյուղերի ստեղծման և տնտեսության համատարած կարգացման Մեծածավալ առևտուրն, օրինակ, հնարավոր դարձավ փոխադրամիջոցների բնագավառի կատարելագործման շնորհիվ

Սկսած 1825 թ Էրիի ջրանցքի ավարտից, որը Նյու Յորքը կապեց Մեծ լճերի շրջանին, կանալան նահանգային իշխանություններ սկսեցին ակտիվ դեր խաղալ փոխադրամիջոցների ներքին համակարգի կառուցումը խթանելու մեջ Նահանգային իշխանությունների լրավճարներն ու ջրանցքների և մեծ ճանապարհների կառուցման համար ձեռնարկատերերին հատկացված փոխառությունները սովորական երևույթ դարձան 1830 թ մինչև 1860 թ ընկած ժամանակամիջոցում Այդ վաղ ջանքերի համար հաճախ բնորոշ էին քայքայումն ու տնտեսական աղետը, այնուամենայնիվ, դրանք ավելի շատ պսակվում էին հաջողությամբ, քան ձախողվում էին

Գետային երթևեկությունը նույնպես բարելավվեց, երբ շոգեշարժիչը հարմարեցվեց նավակներին Շոգենավակը կարող էր շարժվել գետն ի վեր, հոսանքին հակառակ՝ նկատելիորեն նվազեցնելով այն ժամանակը, որը ծախսվում էր ապրանքները շուկա փոխադրելու վրա

Վաղ շրջանում, ջրանցքների և մեծ ճանապարհների նման երկաթուղիները նույնպես մեծ չափով օգնություն ստացան կառավարությունից Այնուամենայնիվ, ի տարբերություն այլ փոխադրամիջոցների, երկաթուղիները գայթակղիչ էին հայրենական և եվրոպական խոշոր մասնավոր ներդրումների համար

Երկաթուղիների շինարարությունը վիթխարի գումար է պահանջում, և երկար ժամանակ է պետք, մինչև որևէ շահույթ իրականացվի Չնայած դրան, գյուղական շրջանների պահպանողականները հսկայական խանդավառություն էին ապրում՝ գնելու երկաթուղու իրենց հասանելիք բաժնետոմսերը՝ հաճախ դրա համար գրավ դնելով իրենց ագարակները կամ ձեռնարկությունները Գայթակղված շահույթի և ավելի լավ պետություն կառուցելու մեջ դեր ունենալու մարմաջով՝ նրանք քվեարկում էին նահանգային և տեղային հարկերի օգտին՝ կորավիգ լինելու երկաթուղիների կառուցմանը Հետագայում, որպես քաղաքացիական պատերազմից մնացած ժառանգության մի մաս, ֆեդերալ կառավարությունը ընդարձակ հողատարածություններ էր տալիս նրանց, ովքեր խոսք էին տալիս կառուցել երկաթուղիների պետական համակարգի պակասող հատվածը 53 միլիոն հեկտար ընդհանուր հողատարածություն ի վերջո տրվեց երկաթուղու կառուցողներին՝ որպես կարմանալի մի պարգև «Նորդերն Պասիֆիկը» ստացավ 17 մլն հեկտար, «Սադերն Պասիֆիկը» 10 մլն հա, իսկ «Յունիոն Պասիֆիկը»՝ 8 մլն հա Այսպիսով, Ամերիկան ստացավ «ծովից մինչև ճաճանչափայլ ծով» կապը

Եվրոպան նույնպես շահագրգռություն հանդես բերեց ներդրումներ կատարելու ամերիկյան երկաթուղում Մի ժամանակ օտարերկրյա ավանդատուները վեց գլխավոր երկաթուղիների հիմնական բաժնետերերն էին 1849 թ ոսկու հայտնագործությամբ Միացյալ Նահանգները ավելի կարող դարձավ՝ ֆինանսավորելու երկաթուղիների սարքավորումների և այլ նյութերի լրացուցիչ ներմուծումը

Երկաթուղիներ կառուցելու ոգևորությունը նաև չարաշահումներ էր ծնում Հաճախ ոչ կասկածամիտ գնորդները ծայր աստիճան բարձր գներ էին վճարում երկաթուղային բաժնետոմսերի համար, կամ էլ նրանց խաբում էին արհեստականորեն արժեզրկված բաժնետոմսերով «Արագ հարստացիր» տիպի դեղատոմսերը լայնորեն տարածված էին, և շատերը կորցնում էին իրենց խնայողությունները Ֆինանսական ձեռնածուները օր ու գիշեր հարստություն էին կուտակում

Այնուամենայնիվ, շահույթի մարմաջի և օտարերկրյա ներդրումների համատեղման, ոսկու հայտնագործման Ամերիկայի հանրային ու մասնավոր հարստության հայրենանվեր ներդրումների շնորհիվ պետությունը կարողացավ կարգացնել երկաթուղիների լայնածավալ համակարգը՝ հիմք ապահովելով գալիք արդյունաբերացման համար

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՃԸ

1860թ շեմին, երբ Աբրահամ Լինկոլնը նախագահ ընտրվեց, ազգաբնակչության 16 տոկոսն ապրում էր քաղաքային վայրերում, և պետության եկամտի մեկ երրորդը տալիս էր արդյունաբերությունը Դրամական միջոցները հոսում էին դեպի խոշոր արդյունաբերության կարգացում և երկաթուղիներ Քաղաքաշեն արդյունաբերությունը սահմանափակված էր հիմնականում հյուսիս արևելքով Բամբակյա գործվածքների արտադրությունը արդյունաբերության առաջատար ճյուղն էր, իսկ կոշիկի, բրդյա գործվածքների և սարքավորումների արտադրությունը նույնպես ընդարձակվում էր

Քաղաքաշինության համար հավասարապես կարևոր էր, որ երկրի ազգաբնակչությունն ավելանում էր 1845-1855 թթ ընկած ժամանակահատվածում եվրոպացի ներգաղթողների թիվը տարեկան 300 000 էր կազմում Մեծամասնությունն աղքատ էր և հիմնավորվում էր արևելյան քաղաքներում, հաճախ հենց ժամանած նավահանգիստներում

Հակառակ դրան, Հարավը մնում էր որպես գյուղական շրջան և կապիտալի ու արտադրված ապրանքների առումով կախման մեջ էր Հյուսիսից Հարավի տնտեսական շահերը, ներառյալ ստրկատիրությունը, կարող էին պաշտպանել միայն քաղաքական ուժով այնքան ժամանակ, քանի դեռ Հարավը վերահսկում էր ֆեդերալ կառավարությանը

Նոր կազմակերպված հանրապետական կուսակցությունն արտահայտում էր արդյունաբերացման շահերը, որը թափ էր առնում Հյուսիսում 1860 թ հանրապետականները և նախագահության նրանց թեկնածու Լինկոլնը անվճռաբար էին խոսում ստրկատիրության, բայց պարզորոշ՝ տնտեսական քաղաքականության մասին 1861-ին հովանավորական սակացույց ընդունեցին 1862-ին վարկավորեցին Պասիֆիկի առաջին երկաթուղին 1863 և 1864 թթ կազմեցին պետական բանկի օրենսգրքի նախագիծը Հյուսիսի հաղթանակը քաղաքացիական պատերազմում (1861-1865) և հանրապետականների հաղթանակները ընտրություններում հավաստիացրին, որ ապագա տնտեսական քաղաքականությունը որոշելու են ավելի շուտ Հյուսիսի արդյունաբերողները, քան Հարավի խոշոր հողատերերը

ԳՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՃԸ

19-րդ դարի երկրորդ կեսը նոր հայտնագործությունների և գյուտերի այնպիսի մի հորձանք առաջացրեց, որ ամերիկացի նշանավոր պատմաբանների՝ Բիրդ ընտանիքի կարծիքով դա հավասարապոր էր «արդյունաբերական երկրորդ հեղափոխություն» ավետելուն Նրանք առանձնահատուկ կարևորություն են տալիս հետևյալ փաստերին

- 1859 թ – Նավթի հայտնաբերումը Արևմտյան Փենսիլվանիայում

- *1868 թ – Գ Լ Շոլեսի գրամեքենան պատրաստ է արտադրության*
- *1875 թ – Գ Ֆ Սվիֆտի երկաթուղային վագոն սառնարանը օգտագործման մեջ է*
- *1876 թ – Ալեքսանդր Գ Բելը ուղարկում է առաջին հեռախոսագիրը*
- *1877 թ – Թոմաս Ա Էդիսոնը նվագարկում է առաջին ձայնագիրը*
- *1879 թ – Ջորջ Սելդենի «բենզակառքի» արտոնագիրը շնորհված է*
- *1882 թ – Էդիսոնի էլեկտրականը սկսում է գործել Նյու Յորքում*
- *1903 թ – Ռայթ եղբայրները ավարտին են հասցնում ինքնաթիռի թռիչքը*

Հանքագործությունը կարևորվեց 1850-ական թթ ից հետո, երբ երկաթի հանքեր բացվեցին Միջին արևմուտքից վեր ընկած Սուպերիոր լճի շրջանում Դա օգնեց խթանելու Մեծ լճերի ափին տեղավորված երկաթաձուլական և պողպատաձուլական գործարանների արագ զարգացմանը Նավթի առաջին հայտնաբերումից հետո, իր ձեռքում կենտրոնացնելով նրա արդյունահանումն ու սպառումը, Ռոկֆելլերին հաջողվեց տեր դառնալ նրանց ընձեռած հարստությանն ու իշխանությանը

Շուտով պղնձի ու արծաթի հանքեր բացվեցին որոնց հաջորդեցին կապարի հանքերը և ցեմենտի գործարանները 1893 թ Համաշխարհային ցուցահանդեսում ցուցադրվեց դինամոմեքենան Շուտով այդպիսի մեխանիզմներ ներդրվեցին ամբարտակներում՝ մեծ քանակությամբ էլեկտրականություն ստանալու համար Հեռագրի և հեռախոսի հայտնվելով ապգը դյուրհաղորդակից դարձավ, որը հեշտացրեց կանապան խոշոր գործարքները Երկաթուղու և կատարելագործված սարքավորումների կիրառումը նպաստեց ծանր արդյունաբերության այնպիսի ճյուղերի աճին ու զարգացմանը, ինչպիսիք են պողպատի, ածխի, նավթի և էլեկտրաէներգիայի բնագավառները

Չնայած ներգաղթի հոսքը չէր դադարում, արհեստավորների թվաքանակը սակավ էր, և, բնականաբար, արդյունաբերությունում արտադրության կանգվածային եղանակների ստեղծման պահանջ կար Ֆրեդերիկ Վ Թեյլորը առաջինն էր գիտական կառավարման բնագավառում նա մանրակրկիտ կերպով վերլուծեց տարբեր բանվորների պարտականությունները և ապա նրանց համար մշակեց պարտականությունների կատարման նոր, ավելի արդյունավետ եղանակներ Բուն կանգվածային արտադրությունը Հենրի Ֆորդի ներշնչման կավակն էր 1913 թ մեքենաների արտադրությունում նա ներմուծեց հոսքային հավաքման գիծը, որտեղ յուրաքանչյուր բանվոր իր մեկ պարզ գործողությունն էր կատարում Պարզվեց, որ Ֆորդը արտակարգ

հեռատեսորեն վարվեց, երբ իր բանվորներին առաջարկեց շատ բարձր աշխատավարձ՝ օրական 5 դոլլար, որը նրանց հնարավորություն էր տալիս դառնալ իրենց արտադրած ավտոմեքենաների գնորդները

ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՄԱԳՆԱՏՆԵՐ

Ամերիկան մի ժամանակ իդեալականացնում էր ձեռնարկատիրոջը, որն իր ձեռքում կենտրոնացնում էր անսահման ֆինանսական իշխանություն ձեռնարկատիրության «մագնատին», որը ոչ թե խոշոր, այլ շատ խոշոր կապիտալ էր ստեղծում Նրա և հապարավոր ավելի մանր ձեռնարկատերերի դարաշրջանը 19-րդ դարի երկրորդ կեսն էր Այն սկսվեց երկաթուղային ցանցի ընդարձակումով 1850-ական թթ և ընդգրկեց Հյուսիսի արդյունաբերության 1860-ական թթ աճն ու 1870-ական թթ բանկային ներդրումների թռիչքը Այդ ամբողջ ժամանակաշրջանում գործարար շրջանների շահերը մեծ ազդեցություն էին գործում կառավարության վրա

Մեծ մագնատները կատաղի մրցակիցներ էին, ֆինանսական հաջողությունների և իշխանության նպատակամետ հետապնդողներ Ռահվիրաների թվում էին Ջեյ Գուլդը, Ջ Պ Մորգանը, Անդրյու Կառնեգին, Ջոն Դ Ռոկֆելլերը և Հենրի Ֆորդը Նրանցից ոմանք ակնիվ էին գործարարության այդօրյա չափանիշներով մյուսները հարստություն և իշխանություն ձեռք բերելու համար դիմում էին ուժի, կաշառակերության և նենգության

Գործարարության ոգին տեղածին երևույթ չէր Միացյալ Նահանգների համար ավելի շուտ այն եվրոպական կապիտալիզմի ծնունդ էր Սակայն արդյունաբերական խոշոր ձեռնարկությունները, ինչպիսիք երկաթուղիներն են, իրենց ընդարձակ կառավարչական հիերարխիաներով ավելի գերակշռող ու հզոր էին դառնում Միացյալ Նահանգներում, քան որևէ այլ տեղ Հակառակ շատ այլ երկրների, Միացյալ Նահանգներում արդյունաբերական բյուրոկրատիան, մասնավորապես երկաթուղիներինը, ավելի արագ էր աճում ու ծավալվում, քան հենց կառավարական բյուրոկրատիան 1890-ին մեկ տասնյակ երկաթուղիներում 100 000-ից ավելի մարդ էր ծառայում, մինչդեռ ԱՄՆ պետական ծառայողների թիվը Վաշինգտոնում 20 000-ից փոքր-ինչ ավելի էր

Ջ Պիերպոնտ (Ջ Պ) Մորգանը՝ ձեռնարկատերերի մեջ, թերևս, ամենավառ դեմքը, գործում էր՝ բռնված վեհության մոլուցքով Թե՛ անձնական կյանքում, թե՛ աշխատանքում նա բոլորին ի ցույց էր դնում իր հարստությունն ու հզորությունը Նա և իր գործընկերները մոլեխաղով էին զբաղվում, յախտաներով նավարկում, ճոխ երեկոներ կազմակերպում, շքեղ տներ կառուցում ու եվրոպական արվեստի գոհարներ գնում

Ի հակադրություն նրանց, այնպիսի մարդիկ, ինչպիսիք էին Դ Ռոկֆելլերը և Հենրի Ֆորդը գուցաբերում էին պուրիտանական հատկություններ Նրանք հավատարիմ էին իրենց գավառական արժեքներին ու ապրելակերպին Լինելով աստվածավախ՝ նրանք իրենց պատասխանատու էին զգում ուրիշների հանդեպ, ապացուցում էին որ անձնական արժանիքները կարող են հաջողության գրավական լինել Նրանք աշխատանքի և խնայողության քարոզիչներ էին Հետագայում նրանց ժառանգները հիմնադրելու են Ամերիկայի խոշորագույն բարեգործական հաստատությունները

Մինչ եվրոպական մտավորականության վերին խավը սովորաբար արհամարհանքով էր վերաբերվում առևտրին ամերիկացիների մեծամասնությունը, ապրելով ավելի շարժունակ դասակարգային կառուցվածք ունեցող հասարակությունում, խանդավառությամբ ընդունեց հարստանալու գաղափարը Նրանք հուզվում և հաճույք էին ստանում որևէ գործնական նախաձեռնության խիզախելիս, ինչպես նաև ակնկալում կենսամակարդակի բարձրացում և հաջողության պարգևած իշխանություն ու լիակատար հատուցում

Ինչևիցե, 1930-ական թթ Մեծ ճգնաժամի շեմին, ձեռնարկատիրոջ կերպարի՝ ամերիկյան իդեալի փայլը բավական խամրեց Վճռական փոփոխություններ բերեց կորպորացիաների հանդես գալը, նախ երկաթուղային ապա՝ մյուս Գործարար մագնատներից քչերը մնացին Նրանց փոխարինեցին «տեխնոկրատները», որ գլխավորեցին կորպորացիաները Այդ ղեկավարները, լինելով ընկերության գործունեության յուրաքանչյուր փուլի գիտակ, դարձան արդյունաբերական մեքենայի անհրաժեշտ պտուտակները Բարձր վարձատրվող կառավարիչները փոխարինեցին գործարար մագնատներին Բաժնետիրական ընկերությունների առաջացումը, իր հերթին, կարկ տվեց կազմակերպված բանվորական շարժման առաջացմանը՝ ի հակակշիռ գործարար շրջանների իշխանության և ազդեցության

Այսօր խոշոր կապիտալի առաջնորդները հաճախ ընդգրկված են հասարակական կյանքի շատ բնագավառներում Նրանք ոչ միայն վճռում են կորպորացիաների բախտը, այլև իրենց համայնքների վարչությունների անդամներ են և համալսարանների խնամակալներ Ընկերությունների այս նոր տիպի առաջնորդները թռչում են Վաշինգտոն՝ ազգային քաղաքականության շուրջ պետական պաշտոնյաների հետ խորհրդակցելու Նրանց մտահոգում են ազգային տնտեսության վիճակն ու Ամերիկայի փոխհարաբերությունները ուրիշ պետությունների հետ Նրանք ազդում են ԱՄՆ-ի

կառավարության վրա, բայց ոչ բացահայտ, ոչ էլ վարագույրի ետևում չեն վերահսկում այն

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Ավանդաբար ԱՄՆ ի կառավարության ղեկավարների մեծ մասը դեմ է եղել մասնավոր սեկտորում ֆեդերալ կառավարության լայն մասնակցությանը, բացառությամբ փոխադրամիջոցների բնագավառից Սովորաբար ֆեդերալ կառավարության դերը որոշվել է «չմիջամտելու» սկզբունքի համաձայն, տեսություն, որն ընդունում է տնտեսության մեջ կառավարության միջամտությունն այնքանով, որքանով դա անհրաժեշտ է իրավակարգի պահպանման համար Այդ մոտեցումն սկսեցին վերանայել 19-րդ դարի վերջերին, երբ փոքր ձեռնարկատերերը, ագարակագործները և բանվորական շարժման մասնակիցները սկսեցին դիմել կառավարությանը՝ միջնորդության համար

Դարասկզբին հանդես եկավ մի միջին դաս, որը կասկածամտությամբ էր վերաբերվում թե՛ գործարար մարդկանց վերնախավին, թե՛ Արևմուտքի ու Միջին արևմուտքի բանվորների և ագարակագործների ինչ որ չափով վճռական քաղաքական ընդվզումներին Որպես «առաջադիմականներ» ճանաչված այդ մարդիկ նախապատվություն էին տալիս այն կառավարությանը, որը եռանդագին մասնակցում էր գործարար շրջանների գործունեության կարգավորման մեջ՝ ապահովելու մրցակցությունը և ապատ ձեռներեցությունը

1887 թ հաստատվեց երկաթուղիների գործունեությունը կարգավորող մի օրենք (միջնահանգային փոխադրամիջոցների օրենք), իսկ 1890 թ՝ մեկ ուրիշը, որը խոչընդոտում էր մեծ ֆիրմաների վերահսկողությանը արդյունաբերության որևէ եղակի ճյուղի նկատմամբ (Շերմանի հակամենաշնորհատիրական օրենքը) Սակայն այդ օրենքները խստիվ չէին կիրարկվում մինչև 1900 1920 թթ ընկած ժամանակահատվածը, երբ իշխանության եկան մարդիկ, որոնք համակրում էին առաջադիմականների հայացքները Այդ ժամանակ ստեղծվեցին այսօրվա վերահսկիչ գործունեությամբ զբաղվող գործակալություններից շատերը, ներառյալ Միջնահանգային առևտրի և փոխադրամիջոցների հանձնաժողովը, Սննդամթերքի և դեղորայքի որակի սանիտարական վերահսկողության վարչությունը և Առևտրի ֆեդերալ հանձնաժողովը

Չնայած առաջադիմականների շարժումը գագաթնակետին հասավ 1901-1920 թթ, սակայն կառավարության մասնակցությունը տնտեսության մեջ ավելի զգալի էր 1930-ական թթ, որը «Նոր կուրս» ծրագրի արդյունքն էր 1929 թ ֆոնդային բորսայի սնանկացումը պետության պատմության

մեջ առաջացրեց տնտեսական ամենալուրջ խափանումը՝ Մեծ ճգնաժամը (1929-1940) «Նոր կուրսը» նախագահ Ֆրանկլին Դ Ռուզվելտի փորձն էր մեղմելու ծանր վիճակը «Նոր կուրսի» օրենսդրական կողմը ֆեդերալ իշխանությունների մասնակցությունը՝ տարածեց բոլոր բնագավառների, հատկապես բանկային, գյուղատնտեսական, սոցիալական ապահովության և հասարակական բարեկեցության բնագավառների վրա Այն անմիջական ուշադրության տակ առավ բանվորական շարժման խնդիրները՝ սահմանելով նվազագույն աշխատավարձի, աշխատանքային ժամերի, նպաստի և ապահովագրության չափանիշները և դարձավ արհմիությունների ընդարձակման կատալիզատոր արդյունաբերության այնպիսի ճյուղերում, ինչպիսիք են պողպատինը, մեքենաշինությանը, կաուչուկինը

Ամերիկան ստիպված եղավ դեմ առ դեմ կանգնել նման խնդիրներին ճիշտ այն ժամանակ, երբ կարգացնում էր արտադրության ու ֆինանսական պաշարների համակարգերը, ներառյալ խոշոր արդյունաբերության, բանկային, ֆոնդային բորսաների ապահովագրության և վարկային համակարգերը Այդ ամենի ծավալմանը զուգորդեց գյուղատնտեսության ժամանակակից համակարգի և կազմակերպված զորեղ բանվորական շարժման առաջացումը

Համաշխարհային II պատերազմի ժամանակ ԱՄՆ-ի կառավարության միջամտությունը տնտեսության մեջ այնքան ծավալուն էր, ինչպես երբեք՝ նախկինում Ստեղծվեց Ռազմական արտադրանքի վարչություն՝ ապահովելու արտադրական հզորությունների այնպիսի հարաբերակցություն, որը կնպաստեր ռազմական առաջնահերթ պահանջների բավարարմանը Լայն սպառման արտադրանք տվող գործարանները վերակառուցվեցին՝ կատարելու ռազմական շատ պատվերներ Օրինակ՝ ավտոմեքենաշինական գործարանները հրասայլեր և ինքնաթիռներ էին արտադրում վերածելով ԱՄՆ-ն «ժողովրդավարության զինանոցի» Ջանալով սահմանափակել դրամի արժեզրկումը, որը հետևանք էր ազգային եկամտի աճի ու լայն սպառման ապրանքների պակասի, Գների կարգավորման նորաստեղծ վարչությունը վերահսկում էր որոշ բնակարանների վարձավճարը, կբաղվում լայն սպառման ապրանքների՝ շաքարից մինչև բենզին, օրաբաժնի բաշխման հարցերով և այլ ձևերով փորձում կսպել գների աճը

ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ 1945-1960 ԹԹ

Շատ ամերիկացիներ երկյուղ ունեին, որ հսկայական ռազմական ծախսերի վերացումը հնարավոր է, որ ետ բերի Մեծ ճգնաժամի ժամանակները Սակայն բավարարելով սպառողների գաղտնի պահանջարկը՝ ԱՄՆ-ի

հետպատերազմյան տնտեսությունը կարգացավ բացառիկ թափով Սկզբային համախառն արդյունքը 1940 թ 200 միլիարդ դոլլարից աճեց և 1950 թ հասավ 300 միլիարդ դոլլարի, իսկ 1960 թ դարձավ 500 միլիարդից էլ ավելի Միևնույն ժամանակ հետպատերազմյան ծնելիության աճի թռիչքը, որը հայտնի է որպես «նորածինների բում», ավելացրեց սպառողների թիվը Ավելի ու ավելի շատ ամերիկացիներ էին համալրում միջին դասի շարքերը

Սոկա էին կարգացման բակում աղբյուրներ Նախկինում հրասայլեր և ռմբակոծիչներ արտադրող ավտոմոբիլային արդյունաբերությունը հաջողությամբ վերակառուցվեց՝ նորից ծառայելու խաղաղ նպատակների, և արդյունաբերության այնպիսի նոր ճյուղեր, ինչպիսիք են ավիացիան ու էլեկտրոնիկան, սրընթաց կարգացում ապրեցին Դրան գումարվեց բնակարանային հատկացումներում տեղ գտած եռուկեռը, որին մասամբ նպաստեց կորացրված կինծառայողներին հեշտությամբ տրվող գրավաթուղթը Նույնը վերաբերում է պաշտպանական ծախսերի աճին, որը հետագայում տեղի ունեցավ սառը պատերազմի թեժացումից Ձեռնարկատիրությունը թևակոխեց այն փուլը, որին բնորոշ էր միավորումը Ֆիրմաները միաձուլվում էին՝ ստեղծելու խոշոր բազմապան «կոնգլոմերատներ» այսպես օրինակ՝ Հեռախոսային և հեռագրական միջազգային ընկերությունը գնեց Շերատոնի հյուրանոցները, Կոնտինենտալ բեյկինգ, Հարթֆորդ Ֆայր Ինշուրընս, Ավիս-Ռենթ-ը-Քար և այլ ընկերություններ

Ամերիկայի աշխատուժը նույնպես փոփոխվում էր 1950-ական թթ սպասարկման ոլորտի ծառայողների թիվը հավասարվեց, իսկ այնուհետև գերազանցեց ապրանք արտադրողների թվից Իսկ 1956 թ շեմին Միացյալ Նահանգների աշխատող ձեռքերն ընդգրկված էին ավելի շատ մաքուր, քան սև աշխատանքում Միաժամանակ այդ միությունները ձեռք բերեցին երկարաժամկետ պայմանագրեր և այլ արտոնություններ՝ իրենց անդամների համար

Մյուս կողմից, ագարակագործները ծանր ժամանակներ ապրեցին Արտադրողականության բարձրացումից առաջացած շահույթը հանգեցրեց գերարտադրության, քանի որ ագարակագործությունը մենաշնորհատիրական ձեռնարկություն էր դարձել Մանրընտանեկան ագարակագործներն օրավուր ավելի դժվար էին մրցակցում, և շատ-շատերը լքեցին հողը

Մյուս ամերիկացիները նույնպես տեղաշարժվեցին Մեկ ընտանիքին հատկացվող տների աճող պահանջը և ավտոմեքենաների համատարած սեփականացումը կարկ տվեցին ամերիկացիների տեղաշարժին՝ կենտրոնական քաղաքներից դեպի ծայրամասերը Տեխնոլոգիական

նորարարությունների հետ մեկտեղ, ինչպիսին, օրինակ, օդառրակավորիչների գյուտն էր, տեղաշարժը խթանեց «Արևային գոտու» այնպիսի քաղաքների կարգացումը, ինչպիսիք են Հյուստոնը՝ Տեքսաս, Ատլանտան՝ Ջորջիա, Մայամին՝ Ֆլորիդա և Ֆենիկսը՝ Արիզոնա

Քանի որ պետական լրավճարով կառուցված նոր մայրուղիները ստեղծեցին ծայրամասերը գնալու ավելի մեծ հնարավորություն, գործարար պատկերը սկսեց փոխվել Առևտրական կենտրոնները բազմապատկվեցին՝ համաշխարհային II պատերազմի վերջում եղած 8 ից ավելանալով և 1960 թ հասնելով 3 840-ի Արդյունաբերության շատ ճյուղեր նույնպես տեղաշարժվեցին, և քաղաքները դարձան ավելի նոսր բնակեցված

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԻՆԵՐ 1960-ԱԿԱՆ, 1970-ԱԿԱՆ ԹԹ

1950-ական թթ-ը Ամերիկայում հաճախ բնութագրում են որպես բարեհոգության տարիներ Ի հակադրություն այդ տարիների՝ նախագահ Ջոն Ֆ Քենեդին իշխանության եկավ ավելի գործունյա տասնամյակում, երբ 1960 թ նախագահական արշավում ասաց, թե ինքը խնդրում է ամերիկացիներին ընդունել իր նետած «Նոր սահմանագիծ» մարտահրավերը Քենեդիի ավելի հեռուն գնացող տնտեսական առաջարկություններից շատերը չիրականացվեցին, սակայն դրանցից մեկը հիմք դրեց «խաղաղության կորպուսին», որն ամերիկացի կամավորներ է ուղարկում անդրօվկիանոսյան երկրներ՝ օգնելու նրանց հոգալու սեփական կարիքները

Քենեդիի նպատակներից մեկն էլ կապված էր Միացյալ Նահանգների տիեզերական հետազոտությունների ծրագիրն արագացնելու հետ, այն հաշվով, որ գերազանցեին խորհրդային նվաճումներից Պետական ծախսերի աճը, ի հաշիվ տիեզերական ընդլայնված ծրագրի, Վիետնամի սաստկացող պատերազմում Ամերիկայի դերի աստիճանական աճի և մի շարք այլ նոր կամ ընդլայնված պետական ծրագրերի, նպաստեց երկրի բարգավաճմանը գրեթե ողջ տասնամյակում

Սոցիալական բարգավաճման նոր ծրագրեր ստեղծվեցին Քենեդիի հետնորդի՝ նախագահ Լինդոն Բ Ջոնսոնի վարչակարգի ժամանակ Նա պատերազմ հայտարարեց աղքատությանը նրան հաջողվեց ծրագրեր ստեղծել չքավորներին ու ծերերին բժշկական օգնություն ցույց տալու նպատակով, ինչպես նաև այլ նախաձեռնություններ հեղինակել

1960-ական թթ-ը մի ժամանակաշրջան էր, երբ Ամերիկայի ժողովուրդն սկսեց օրավուր աճող մտահոգություն դրսևորել բնական միջավայրի մասին՝ սկսած հողատարածությունները պահպանելու կարիքից, վերջացրած օդն ու ջուրը աղտոտելու վտանգով Ֆեդերալ կառավարությունը բազմաթիվ հրահանգներ ընդունեց՝ պահպանելու կյանքի մակարդակը

Սակայն 1960-ական թթ վերջերին տնական արժեկրկումը քայքայում էր տնտեսական բարգավաճումը 1973-1974 թթ արաբական նավթի բեռնարգելքը սրընթաց կերպով բարձրացրեց գները և նավթամթերքի պակաս առաջացրեց ամբողջ Միացյալ Նահանգներում Նույնիսկ բեռնարգելքի ավարտից հետո գները մնում էին բարձր, պարարտ հող ստեղծում արժեկրկման համար և, վերջիվերջո, հանգեցնում գործակրկության տեմպերի աճին Տասնամյակի մնացած մասը բնութագրվում է պարուրաձև արժեկրկումով, պետական բյուջեի պակասորդի աճով, արտասահմանյան մրցակցության սաստկացումով, բարձր գործակրկությամբ և լճացած պահանջարկով

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ 1980-ԱԿԱՆ ԵՎ 1990-ԱԿԱՆ ԹԹ

1980թ Ամերիկայի ժողովուրդն արտահայտեց իր դժգոհությունը ֆեդերալ կառավարության 1970-ական թթ քաղաքականությունից՝ նախագահ ընտրելով Ռոնալդ Ռեյգանին Վերջինս իր տնտեսական ծրագիրը հիմնեց առաջարկամետ տնտեսության տեսության վրա, որն իրավունք տվեց իջեցնել առավելագույն շահութահարկերի չափը, քաջալերելու մարդկանց՝ աշխատել ավելի ջանասիրաբար և ավելի երկար Սա հաջորդաբար տանում է նախ դեպի առավել մեծ խնայողություն, ապա՝ ներդրում և հանգում ավելի ծավալուն արտադրության՝ խթանելով տնտեսությունն ամբողջությամբ՝ առաջարկամետ տնտեսության տեսության համաձայն

Ռեյգանի ակգային ծրագրի կենտրոնական թեման, այնուամենայնիվ, նրա այն հավատն էր, որ ֆեդերալ կառավարությունը շատ է ուռճացել և ձանձրացնում է իր միջամտությամբ 1980-ականների սկզբին Ռեյգանի վարչակարգը դժվարությամբ անցկացրեց հարկերի կրճատման մի ամբողջ շարք՝ միաժամանակ կրճատելով սոցիալական ծրագրերին հատկացվող ծախսերը Պաշտոնավարության ամբողջ ընթացքում Ռեյգանը արշավ էր ձեռնարկել նվազեցնելու կամ վերացնելու կառավարության այն կարգավորումները, որոնք դիպչում էին սպառողին, նրա աշխատանքի տեղին և միջավայրին

Ամբողջ 1982 թ ընթացքում ակգը խոր անկում էր ապրում գործարարության բնագավառում Ձեռնարկատերերի սնանկացումները նախորդ տարվա համեմատությամբ ավելացան 50 տոկոսով Հատկապես ծանր հարված ստացան ագարակագործները, քանի որ գյուղատնտեսական արտադրանքի արտահանումը նվազեց, ստացված բերքի գներն ընկան և տոկոսադրույքները բարձրացան

Սակայն այդ ամենը, նավթի գների իջեցման և Ֆեդերալ ռեզերվների համակարգի կողմից դրամի ու վարկի խիստ

վերահսկողության հետ մեկտեղ, օգնեցին սանձելու արընթաց աճող արժեկրկումը 1983 թ շեմին տնտեսությունը նորից վերելք ապրեց, և Միացյալ Նահանգները թևակոխեցին տնտեսական կարգացման ամենաերկարատև փուլերից մեկը Համաշխարհային II պատերազմից ի վեր Արժեկրկման տարեկան տոկոսը պահպանվում էր 5-ից ցածր՝ 1983 թ-1987 թ ներառյալ

Տակավին լուրջ խնդիրներ էին մնում Ագարակագործների պրոբլեմները շարունակվում էին, և նրանց տառապանքը սաստկացավ 1986 և 1988 թթ ծանր երաշտից Ֆեդերալ պակասորդը վեր ու վեր էր սլանում ամբողջ 1980-ական թթ ընթացքում Ֆեդերալ բյուջեի պակասորդը 1980 թ 74 միլիարդից 1986 թ հասավ 221 միլիարդի, իսկ 1987 թ նվաստեց և հասավ 150 միլիարդի Միացյալ Նահանգների առևտրի պակասորդը նույն թվականին ռեկորդ սահմանեց՝ հասնելով 152 միլիարդի 1987 թ աշնանը արժեթղթերի բորսայի սնանկացումը շատերին մղեց կասկածի տակ դնելու տնտեսության կայունության հարցը

Իրականում Միացյալ Նահանգների տնտեսությունը իսկապես դանդաղեցրեց ընթացքը և ավելի խոր սուզվեց իր անկման մեջ 1991 թ, իսկ 1992 թ սկսեց դանդաղ վերականգնվել Տնտեսության կարգացման դանդաղ ընթացքի և այլ գործոնների հետևանքով ֆեդերալ բյուջեի պակասորդը դարձյալ վերընթաց շարժում ապրեց Արժեթղթերի բորսան վերականգնվեց, սակայն ֆինանսական բնագավառը մասնավորապես տառապում էր կանապան պրոբլեմներից բազմաթիվ խնայողական հաստատություններ, ինչպես նաև որոշ բանկեր և ապահովագրական ընկերություններ կա՛մ կործանվում էին, կա՛մ այնպիսի անհուսալի վիճակի մեջ ընկնում, որ ֆեդերալ կառավարությունն ստիպված էր իր ձեռքը վերցնել դրանք Մինչև 1990-ական թթ ներառյալ վարկային շուկայի և այլ խնդիրներ դեռ հապաղում էին լուծվել Ի հակադրություն դրանց, տնտեսության այլ ոլորտներ, ինչպես օրինակ՝ համակարգիչների, տիեզերագնացության և արտահանվող ապրանքների արտադրության բնագավառները, անընդհատ կարգացման նշաններ էին դրսևորում

Հացահատիկի բերքը հավաքելիս, IX դար (ներքևում) Ագարակագործները օգտագործում էին օրորոցաձև գերանդիներ մինչև 1831 թ. երբ Սայրուս Մակ Կորմիկը ստեղծեց հնձիչ մեքենան

Ագարակագործության բնագավառում Միացյալ Նահանգների արտադրողականությունը ավելի ու ավելի բարձրացավ տեխնիկայի կիրառման ու գյուղատնտեսական կուլտուրաների բարելավման պարարտանյութերի, ոռոգման եղանակների ու վնասատու մակաբույծների դեմ տարվող պայքարի շնորհիվ. Հաջորդ էջում՝ Կալիֆորնիայի ագարակներից մեկի ելակի պլանտացիաներում միջատակուլ որն իրենից ներկայացնում է տրակտորին կցված, վնասակար միջատներին կլանող հսկայական մի փոշեկուլ

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳԾԵՐԸ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՈՒՄԸ

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ՝ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ

1990-ական թթ. շեմին ԱՄՆ-ի տնտեսության ակգային համախառն արդյունքը 5 միլիոն միլիոն դոլլարից բարձր էր. ԱՄՆ-ի տնտեսության կարգացման շարադրանքը տնտեսական ապատություն վայելող Ամերիկայի ժողովրդի պատմությունն է. Տնտեսական ապատությունը նրան հնարավորություն էր տալիս նոր հողեր հետապոտել, նոր նախաձեռնությունների խիկախել, մշակել բնության պաշարները, նոր գյուտեր անել, ներդրումներ անել նոր սարքավորումների ու արտադրության եղանակների կարգացման բնագավառներում. Այս մասում ամբողջ 19-րդ դարի և 20-րդ դարի առաջին կեսի գյուղատնտեսության ու արդյունաբերության պատկերները հակադրվում են 20-րդ դարի երկրորդ կեսի պատկերներին·



Միացյալ Նահանգներում կանոնավոր չվացուցակով առաջին շոգեքարշային ծառայությունը սկսեց գործել 1831 թ Հարավային Կալիֆորնիայում Դրանից հետո երկաթուղային շինարարությունը (վերևում) արագ տարածվեց երկրով մեկ Աշխարհի առաջին անդրցամաքային երկաթգիծը գցվեց Միացյալ Նահանգներում 1869 թ

Միացյալ Նահանգներում օգտակար հանածոների արդյունաբերական ապրանքների քիմիկատների հացահատիկի և այլ ապրանքների հսկայական քանակներ տեղափոխվում են գնացքով Օրինակ՝ 1989 թ Ամերիկայում գրեթե 6 միլիոն վագոն քարածխի բեռ է տեղափոխվել: Աջից երկաթուղային վագոնները բեռնվում են քարածխով Նորֆոլկի Հարավային Կորպորացիայի բեռնման կայանում Նորֆոլկ (Վիրջինիա)


SOUTHERN
SOUTHERN
SOUTHERN
SOUTHERN
N&W
N&W
N&W
N&W
SOUTHERN
SOUTHERN
SOUTHERN
SOUTHERN
N&W
NW
SOUTHERN
SOUTHERN
SOUTHERN



Ամեն տարի ԱՄՆ ի ձկնաբուծարանները արտադրում են մոտ 180 000 մետրիկ տոննա ձուկ խեցեմորթ ու ջրային բույսեր: Ջրային մշակութաբույսերի բուծումը նվազեցնում է օվկիանոսի որոշ տեսակի պաշարների սպառման վտանգը Միացյալ Նահանգների ձկնաբուծական ագարակներում բուծվող խեցեմորթների հիմնական տեսակը ոստրեն է որը ցուցադրված է վերևում Հավայան ձեռնարկություններից մեկում

1900-ական թթ սկիզբը Նյու Յորք, Լոնգ Այլենդ ուտրեն կեղևահանողները կանգնած են՝ մինչև ծնկները խրված կեղևի մեջ (ձախից)



19-րդ դարի սկզբից ընդհուպ մինչև կեսերը նահանգային իշխանությունները ֆինանսավորում էին ջրանցքների ու մեծ ճանապարհների կառուցումը՝ դրանով ապահովելով ներքին առևտրին: Վերևում՝ 1910 թ ձին կբոնում է ափին՝ Էրիի ջրանցքով կենտանավ քարշ տալուց հետո Դուրհամվիլ (Նյու Յորք)



1980 ական թթ տարեկան մեկ միլիարդ տոննայից ավելի ապրանք էին փոխադրում երկրի գետերով, Մեծ լճերով ջրանցքներով ու այլ ջրատար ուղիներով· Վերևում նավաքարշ շոգենավ «Դալլասը» հրում է բեռնատար նավերը Թեն-Թոմ ներքին ջրային ուղու երեք հատվածներից մեկի միջով 377 կիլոմետր երկարությամբ ջրուղիով որի կառուցումն ավարտվել է 1984 թ-ին: Թեն Թոմը կապում է Թենեսի և Թոմբիգբի գետերը Միացյալ Նահանգների հարավ-արևելյան մասում և հնարավորություն է տալիս բեռնատար նավերին երթևեկել մինչև Մեքսիկական ծոց



Վերևում Չիկագոյում (Իլինոյս) մարտենյան վառարանում թուջե ձուլածողը հալվում վերածվում է պողպատի 1950 թ սկսած Միացյալ Նահանգներում պողպատի արտադրման հիմնական մարտենյան եղանակը հետզհետե անկում ապրեց այն օգտագործում էր չափազանց շատ հեղուկ վառելանյութ ու տալիս մեծ քանակությամբ բանեցրած գազեր

1980 ական թթ ը ԱՄՆ ի պողպատի արդյունաբերության համար դժվար տարիներ էին քանի որ աճել էր մրցակցությունը օտար երկրների հետ և ԱՄՆ ի շատ գործարաններ փակվել էին Պահպանվում էին այն ընկերությունները որոնք հարմարվում էին շուկայի պայմաններին նորամուծությունների մասնագիտացման ու ծախսերը կրճատելու շնորհիվ Աջից պողպատի հատուկ տեսականիով Վորթինգտոն ինդաստրիզ գործարանում պողպատե թերթը մեքենայացված ձևով բաժանվում է տարբեր լայնության շերտակտորների: Աշխատավարձից բացի Վորթինգտոն ինդաստրիզը իր բոլոր բանվորներին ապահովում է գործարանի եկամտից տրվող հաստությով


monarch
Stamco
CAUTION

Վերևում՝ Հայլանդ Պարկ քաղ. Միչիգան. հավաքման հոսքային եղանակով գործող աշխարհի առաջին արտադրամասերից մեկը. բանվորները կայծհարույցները կպցնում են 1913 թ. թողարկման «Ֆորդ» մակնիշի ավտոմեքենաների թափանիվներին

Համակարգիչներն ու մեքենայացումը արագացնում են հոսքային եղանակով գործող արտադրամասերի աշխատանքը այնպիսի բարդ սարքավորումներ թողարկելիս. ինչպիսիք են ինքնաթիռներն ու ավտոմեքենաները: Նախորդ էջում՝ Բելվիդերի (Իլինոյս) ավտոմեքենաների գործարաններից մեկում արդյունաբերական ռոբոտները ձուլում են «Կրայսլեր» մակնիշի ավտոմեքենաների թափքերը

Միացյալ Նահանգներում մանածագործական արդյունաբերության առաջին կենտրոնը Նյու Ինգլանդում էր. Սակայն 20 րդ դարի սկզբին գործարանների մեծ մասը տեղափոխվեց հարավային նահանգներ՝ ավելի մոտ բամբակի մատակարարմանը Վերևում՝ երիտասարդ աղջիկը աշխատում է Հյուսիսային Կարոլինայի մանածագործական գործարանում 1912 թ


YOU



ԱՄՆ ի մանածագործական ֆիրմաները պետք է կրճատեին ծախսերը և շեշտը դնեին որակի վրա որպեսզի կարողանային մրցունակ մնալ համաշխարհային շուկայում. Զախից Հարավային Կարոլինայի մանածագործական ֆաբրիկայի բանվորի գլխավերևի ցուցանակը հիշեցնում է որ նրանցից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել արտադրամասի աշխատանքը՝ գործվածքի վրա որևէ թերություն նկատելու դեպքում

Քարածխի համաշխարհային պաշարների մոտ մեկ քառորդը գտնվում է Միացյալ Նահանգներում Աջից ամբարձիչ կռունկը քարածուխ է հանում Գիլեռի (Վյոմինգ) Կորդերո հանքից Միացյալ Նահանգների արևմտյան մասում քարածուխը մեծ մասամբ ստանում են բաց կամ մակերեսային հանքահորերից

երքևում 1895 թ Փենսիլվանիայի հանքափորները աշխատում են գետնի ուակ 4.8 կիլոմետր խորության վրա Մինչ մեքենայացումը հանքափորները ի ու քլունգ էին օգտագործում ածուխը մանրացնելու ու ջորիներ լծած այլերը բեռնելու համար



Վերևում Չարլզ Ա Լինդբերգը ստուգում է «Սուրբ Լուիսի Ոգին» ինքնաթիռի շարժիչը: 1927 թ մայիսին նա դրանով միայնակ կատարել է առաջին անվայրէջք թռիչքը Ատլանտյան օվկիանոսի վրայով Հետագայում Լինդբերգը հետախուզեց շատ օդային երթուղիներ ամբողջ ափսարիով մեկ



ԱՄՆ ի ճարտարագետները նախագծել են առաջին առևտրական ռեակտիվ ինքնաթիռը Առևտրական ռեակտիվ ինքնաթիռների վերջին սերնդի ներկայացուցիչը Բոյինգ 767-ը (վերևում) կարող է թռչել 925 կմ/ժ-ից ավելի մեծ արագությամբ և 3 200 կմ կամ ավելի երկար անվայրէջք թռիչք կատարել



Միացյալ Նահանգները աշխարհում նավթի խոշորագույն արտադրողն ու կտողն է
Վերևում Թուլսայի (Օկլահոմա) Լոֆֆլանդ եղբայրներ ընկերությունը աշխարհի հորատման խոշորագույն ֆիրմաներից մեկը հորատման սարքավորում է կանգնեցնում Հարավային Լուիզիանայում

---

19 րդ և 20 րդ դարերի սահմանագծին Կալիֆորնիան ու Օկլահոման Տեքսասի հետ միասին դարձան ԱՄՆ-ի նավթ արտադրող հիմնական նահանգները
Աջից՝ Հարնելի N1 նավթահորը, որը Յունիոն Օյլ ընկերության հորատող բանվորները անվանում են «Պառավ Մոդ» նավթ է հորդում վերնակից
«Պառավ Մոդից» խոշորագույն նավթային շատրվանից այդ ժամանակ 2 տարուց ավելի նավթ էր հորդում առանց պոմպերի օգնության

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳԾԵՐԸ

ՄԱՍ ՉՈՐՐՈՐԴ

IV

ՄԱՆՐ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԵՊԻ ԿՈՐՊՈՐԱՑԻԱ

ԱԶԱՏ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ամերիկայի պատմության մեջ անհատի տնտեսական հնարավորության կարևորությունը տիրապետող թեմա է 17-րդ և 18-րդ դարերում դա ընդհանուր հիացմունքի բնույթ էր կրում այն ռահվիրաների հանդեպ, որոնք միայնակ կամ ընտանիքով հաղթահարում էին բոլոր դժվարությունները և ամայությունից բնօրրան կերտում Մարմնավորելով տոկուն հողատիրոջ բարոյական բոլոր հատկանիշները՝ ռահվիրան իսկապես վայելում էր Կենտրոնական Ամերիկայի խորքերում հայտնաբերված լայնարձակ անդաստանները Ասում են, թե Դանիել Բունը՝ Ամերիկայի առասպելական առաջին նորաբնակներից մեկը, պնդում էր, որ երբ տեսնում է հարևանի տնից վեր բարձրացող ծուխը, հասկանում է, որ ժամանակն է ավելի հեռուն շարժվել՝ դեպի Արևմուտք

19-րդ և 20-րդ դարերի Ամերիկայում մենատնտեսապաշտին պատկերացնում են որպես գյուղական միջավայրում ընծայագրով իր հողակտորը ստացած ագարակագործ, քաղաքաբնակին՝ որպես մանր առևտրական, անկախ արհեստավոր կամ իր ուժերին ապավինող մասնագետ

Բայց իսկապես՝ ի՞նչ է նշանակում ձեռնարկատիրությունը, այսինքն՝ անկախ ձեռնարկատիրական գործունեության կազմակերպումը Միացյալ Նահանգներում

Ամերիկացի նորաբնակը փայփայում էր այն միտքը, որ «յուրաքանչյուր ոք ձեռնարկատեր է», կամ էլ՝ որ «ամեն մեկն իրավունք ունի իր բախտը փորձելու» Գյուղական վայրերում գերդաստանները կարող էին սեփականացնել իրենց հողակտորը՝ ստանալ այն պարզապես «նորաբնակի» իրավունքով, կամ գնել վարկով և վարկը մարել տարիների ընթացքում Միացյալ Նահանգների լայն տարածքը երկրին հնարավորություն էր ընձեռում դառնալ գյուղատնտեսական ձեռնարկատերերի պետություն «Մենատնտես լինելու» բաղձանքը փոփոխություն կրեց, երբ ժողովուրդը գյուղից փոխադրվեց քաղաք, ագարակագործությունից անցավ ձեռնարկատիրության այլ ձևերի

Շատերի համար ձեռնարկատիրությունը պահպանում է այն նշանակությունը, որ 19-րդ և 20-րդ դարերի ամերիկացիները տալիս էին «իմանութ, արհեստ կամ բժշկական պրակտիկա ունենալուն» Դոնեդուռ ընկնող մանրավաճառների հաջողակ վաճառական դառնալու պատմությունները սովորական են Միացյալ Նահանգների շատ գերդաստաններում

Օտարերկրացի շատ այցելուներ զարմանում են՝ տեսնելով, որ Միացյալ Նահանգների տնտեսությունը ամենևին էլ այնպիսին չէ, ուր գերակշռում են խոշոր կորպորացիաները Հարկերի գանձման վարչությունը՝ ֆինանսների նախարարության հարկահավաք գործակալությունը, հաղորդում էր, որ 1989 թ ԱՄՆ ում կային 13 5 միլիոն

ագարակապուրկ մենատնտեսներ, 1 8 միլիոն ընկերակցություններ և 4 2 միլիոն կորպորացիաներ՝ 19 5 միլիոն ֆիրմա միասին վերցրած Դրանց հսկայական մեծամասնությունը մանր ֆիրմաներ էին, որոնց ձեռնարկատիրական եկամուտը տարեկան 100 000 դոլլարից ցածր էր

Մանր և միջին ձեռնարկությունը բնորոշելու բազում եղանակներ կան, սակայն Միացյալ Նահանգների Մանր ձեռնարկատերերի շահերի պաշտպանության վարչության (ՄՁՇՊՎ) տվյալների համաձայն, եթե մանր է համարվում այն ձեռնարկությունը, որտեղ 500-ից պակաս ծառայող կա, ապա կոպիտ հաշվարկներով Միացյալ Նահանգների մանր ձեռնարկություններում մոտավորապես նույնքան մարդ է ծառայում, որքան խոշորներում (Եթե մանր ձեռնարկությունը ավելի նեղ բնութագրվի՝ որպես թե 100-ից պակաս ծառայող ունեցող, ապա բոլոր ծառայողների 36 տոկոսն ընդգրկված է մանր ձեռնարկություններում) Ավելին, ՄՁՇՊՎ-ի տվյալների համաձայն, մանր ձեռնարկությունների (որոնք 500-ից պակաս ծառայող ունեն) 60 տոկոսի շնորհիվ են գործում այն բոլոր նոր ծառայությունները, որոնք ստեղծվել են 1976 ից 1988 թթ ընկած ժամանակահատվածում 1980-ական թթ ձեռնարկությունները 7 միլիոնի կուտ աճ տվեցին Միացյալ Նահանգներում, որի գրեթե կեսը մենատնտեսություններ էին Այդպիսի ձեռնարկությունները ճանաչում են ստացել, քանի որ օժտված են պահանջարկի փոփոխություններին անհապաղ արձագանքելու կարողությամբ օրինակ՝ ՄՁՇՊՎ ն մատնանշում է, որ կողմնակի աշխատանք ունեցող մենատնտես ձեռնարկատերերի թիվը «հրթիռի նման վեր սլացավ» 1970-ականներին, մասամբ էներգետիկ ճգնաժամի հետևանքով, որն ստիպեց մեծ թվով ամերիկացիների ընդգրկվելու այնպիսի կողմնակի գործունեության մեջ, ինչպես գյուղական վայրերում ծառեր հատելը և քաղաքներում որպես վառելափայտ վաճառելն էր

Վերջին տարիներս նկատվող միտումը մանր ձեռնարկատիրական գործունեության մեջ կանանց թվի աճն է ՄՁՇՊՎ-ի տվյալների համաձայն մենատնտես կանանց թիվը 1977-1988 թթ ժամանակամիջոցում ավելի քան կրկնապատկվել է՝ 1 9 միլիոնից հասել 4 4 միլիոնի

ՄԵՆԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շատ ձեռնարկություններ մենատնտեսների սեփականությունն են ֆիրմա, որը պատկանում է նրան և կառավարվում նրա կողմից Երբ որևէ մեկը որոշում է անկախ ձեռնարկություն բացել, լիովին պատասխանատու է նրա հաջողության կամ ձախողման համար Ցանկացած շահույթ պատկանում է տիրոջը ցանկացած կորստի համար

նույնպես ինքն է պատասխանատու Եթե պարզվում է, որ կորուստներն ավելի մեծ են, քան ներդրումները, անհատը պարտավոր է վճարել դրա համար, նույնիսկ սնանկանալու գնով

Մենատնտեսության առավելություններից մեկն այն է, որ սեփականատերը կարող է արագ և վճռական լինել որոշումներ կայացնելիս, առանց ուրիշների հետ խորհրդակցելու Անհատ սեփականատերը, ըստ օրենքի, ավելի քիչ հարկ է վճարում և ավելի ցածր սակացույցներով, քան կորպորացիան

Սակայն ձեռնարկատիրության այդ ձևն ունի նաև թերի կողմեր Մենատնտեսությունն ավարտվում է կա՛մ տիրոջ անիրավունակությամբ, կա՛մ մահով Գույքը կարող է ժառանգել որևէ մեկը, որ կարող է ղեկավար դառնալ, բայց իրավական տեսակետից այդ ձեռնարկությունը մեռնում է տիրոջ հետ Բացի այդ, մենատնտեսությունը կախման մեջ է դրամի այն քանակից, որը նրա տերը խնայել է, կամ կարող է պարտք վերցնել սովորաբար այն չի մեծանում և դառնում խոշոր մասշտաբի ձեռնարկություն

Չնայած սահմանափակումներին, մենատնտեսությունը մանր ձեռնարկության հարմար ձև է և համապատասխանում է շատերի խառնվածքին, նրանց, ով սիրում է նախաձեռնություն ցուցաբերել և ինքն իր գլխի տերը լինել Մանր ձեռնարկության տնտեսական առավելություններն են

- *Մանր ձեռնարկությունը հաճախ ելակետ է որևէ նոր արտադրանքի կամ ծառայության զարգացման համար Ինչ-որ մեկը փորձարկում է որևէ գաղափար Այն հաջող է՝ ձեռնարկությունն աճում է, կամ արտադրանքը կարող է գնվել ավելի խոշոր ֆիրմայի կողմից*
- *Մանր ձեռնարկությունը կարող է հնարավորություն ընձեռել անհատին փորձ ձեռք բերել, որը նա հետագայում կարող է օգտագործել ավելի խոշոր մասշտաբով*
- *Մանր ձեռնարկություններն առանձնապես հարմար են տեղական կարիքները հոգալու համար*
- *Արհեստավորները կարող են անհատական արտադրանք մատակարարել այն գնորդներին, որոնք ձանձրացել են զանգվածային արտադրության ապրանքներից*
- *Մանր ձեռնարկություններն այնպիսի ծառայություն են մատակարարում, որի ժամանակ շատ կարևոր է գնորդին ճանաչելը*

Մենատնտեսները վստահություն են ներշնչում գնորդներին նրանք հավատում են, որ եթե անհատը պատասխանատու է, ուրեմն լավ գործ կանի

Մանր ձեռնարկությունները հաճախ աճում, դառնում են խոշոր՝ մեծացնելով երկրի տնտեսական կենսունակությունը Մանր ձեռնարկությունները հաստատում են այն տեսակետը,

թե ամերիկյան տեխնիկական նորարարությունների 55 տոկոսը մանր և միջին ձեռնարկությունների ծնունդ է Ամերիկյան համակարգիչների արդյունաբերության մեջ շատ ստեղծագործ նորարարներ, ներառյալ նրանց, ովքեր ընկերությունների հիմքը դրեցին այն վայրում, որն այժմ հայտնի է որպես Սիլիկոն Վալի (Կալիֆորնիա), իսկապես սկսել են որպես «արհեստավորներ»՝ սեփական ձեռքերով հավաքելով մեքենաները իրենց ավտոտնակներում Նրանք դարձել են ձեռնարկատիրության բնագավառի մի մասը Ցանկացած չափանիշներով՝ մանր ձեռնարկությունները դարձել են ստեղծագործական մակարդի և մրցակցության մի կարևոր մասը, որը նոր ուժ է տալիս Ամերիկայի տնտեսությանը

Իհարկե, ճշմարիտ է, որ մանր ձեռնարկատիրությունը հաճախ ձախողվում է Սակայն Միացյալ Նահանգներում փոքր գործարարական խիկախումների «ձախողումը» ձեռնարկատիրոջ վրա խայտառակության ու ամոթի դրոշմ չի դնում, ինչպես որոշ երկրներում Հաճախ փոքր գործարարական խիկախումների ձախողումը ձեռնարկատիրոջ համար արժեքավոր, ուսանելի փորձ է դառնում, և նա կարող է ավելի հաջողակ լինել երկրորդ կամ երրորդ անգամ Ձեռնարկում սկսելու անհաջող փորձերը, ըստ մանր ձեռնարկատիրության փորձագետների, շուկայի ձևավորման և այն ավելի արդյունավետ դարձնելու խոշոր գործընթացի մի մասն են դառնում

ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Երբ սեփականատերը ցանկանում է ընդլայնել ձեռնարկությունը, դրա իրականացման ձևերից մեկը ընկերակցություն կազմելն է, ձեռնարկություն, որը ձևավորվում է երկու կամ ավելի համատերերով շահույթ ստանալու նպատակով Ընկերակցության իրավունքներն ու պարտականությունները կարգավորվում են այն նահանգի օրենքներով, որտեղ այն ձևավորվել է, և համատերերի ընդունած իրավական համաձայնագրով Սովորաբար համաձայնագիրը մատնանշում է դրամի այն քանակը, որը յուրաքանչյուրը ներդնում է, և այն պարտականությունները, որոնք յուրաքանչյուրը ստանձնում է Ընկերակցության համաձայնագիրը նաև նախատեսում է «անհայտ համատիրոջ» մասնակցությունը, որը ղեկավարմանը չի մասնակցում, բայց դրամ է ներդնում գործի մեջ

Ընկերակցությունը կառավարման տաղանդները միավորելու կարողություն ունի Համատերերից մեկը կարող է հմուտ լինել արտադրության մեջ, մյուսը՝ վաճառահանման Ընկերակցությունը մենատնտեսության նման ապատ է այն հաշվետվությունների մեծ մասից, որը կառավարությունը պահանջում է կորպորացիաներից Ավելին՝ այն նպաստավոր

հարկային վիճակի մեջ է կորպորացիաների հետ համեմատած Համատերերը պետական վարկերը վճարում են առանձին առանձին՝ վաստակի իրենց բաժնից, դրանից դուրս ձեռնարկությունից հարկ չի գանձվում

Ընկերակցության գլխավոր թերությունն այն է, որ յուրաքանչյուր անդամ պարտավորված է ընկերակցության բոլոր պարտքերի համար, ցանկացած համատիրոջ գործողությունը իրավականորեն տարածվում է մյուս բոլորի վրա Եթե նրանցից մեկը խոշոր քանակի դրամ է վերցնում ձեռնարկությունից և վատնում այն, մյուսները պետք է վճարեն պարտքը Ընկերակցությունները տառապում են մեկ այլ հիմնական թերությամբ որոշումների կայացումը միաձնական է Եթե համատերերը անընդհատ լուրջ անհամաձայնության մեջ են, ձեռնարկությունը դատապարտված է ձախողման

Այնուամենայնիվ, ընկերակցությունը մնում է ձեռնարկատիրական ողջ տնտեսության մի էական մասը Հարկերի գանձման վարչության հաղորդման համաձայն 1970 և 1982 թթ միջև ընկած ժամանակամիջոցում գոյություն ունեին կիսով չափ պակաս ձեռնարկատիրական ընկերակցություններ, քան կորպորացիաներ

ՄԱՆՐ ՁԵՌՆԱՐԿԱՏԻ-ՐՈՒԹՅՈՒՆ

Մանր ձեռնարկատիրության վերլուծությունը հաստատում է, որ որոշ տնտեսական գործոններ միտում ունեն խոչընդոտել ձեռնարկատիրության այս ձևին Այդ գործոնները հավասարակշռելու համար օրենսդրությունը սահմանեց ստեղծել Մանր ձեռնարկատերերի շահերի պաշտպանության վարչություն՝ անկախ ֆեդերալ գործակալություն Վաշինգտոնում (Շ Կ) և երկրով մեկ տարածված շրջանային գրասենյակներում հմուտ մասնագետները ֆինանսական և մասնագիտական փորձաքննությամբ օգնություն են ցույց տալիս նրանց, ովքեր ցանկանում են ստեղծել մանր ձեռնարկություններ, կամ ովքեր արդեն վարում են այն

Բնութագրական է, որ մեկ տարվա ընթացքում ՄՁՇՊՎ-ն մոտավորապես 35 միլիարդ բանկային վարկ է տրամադրում մանր ձեռնարկություններին Այդ վարկերը սովորաբար սարքավորումներ, հանդերձանք և գույք գնելու համար են

ՄՁՇՊՎ-ի առանձնահատկություններից է կառավարման գործում ցույց տրվող օգնությունը, որն առաջարկվում է նոր կամ դժվար կացության մեջ գտնվող ձեռնարկություններին Կա մի հատուկ ծրագիր, ըստ որի հաջողակ, բայց արդեն պաշտոնաթող ձեռնարկատերերը կամավոր օգնում են մյուսներին Աշխատելով նահանգային անհատական գործակալությունների և համալսարանների հետ համատեղ՝ ՄՁՇՊՎ-ն ղեկավարում է մանր ձեռնարկությունների խնդիրներով զբաղվող 700 կենտրոնները, որոնք ինչպես տեխնիկական օգնություն են ցույց

տալիս նոր և արդեն գոյություն ունեցող մանր ձեռնարկություններին, այնպես էլ նրանց օգնում են կառավարման աշխատանքում

ՄՁՇՊՎ ն լուրջ ջանք է թափում փոքրամասնությունների ծրագրերի ֆինանսավորման վրա, հատկապես աֆրիկյան, ասիական, իսպանական ամերիկացիների համար Գործակալությունը նաև եռանդուն կերպով իրականացնում է մի ծրագիր՝ ճանաչելու միջազգային շուկաները և համատեղ ձեռնարկությունների հնարավորությունները այն մանր ձեռնարկությունների համար, որոնք արտահանման ներուժ ունեն

Ավելացնենք նաև, որ ՄՁՇՊՎ-ն հայտնի է աղետի հետևանքները վերացնելուն ուղղված իր ծրագրով Ի սկզբանե ՄՁՇՊՎ-ն օգնություն է առաջարկել և շարունակում է առաջարկել այն ձեռնարկատերերին ու ֆիրմաներին, որոնք տուժել են հեղեղի, մրրիկի, ուժեղ փոթորկի և այլ բնական աղետների հետևանքով կրած ֆիզիկական վնասից

ԱՌԵՎՏՈՒՐ ԱՐՏՈՆԱԳՐՈՎ ԵՎ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՐԻ ԽԱՆՈՒԹՆԵՐԻ ՑԱՆՑԸ

Արտոնագրերի շնորհումը, մի բան, որ ձեռնտու է մանր ձեռնարկություններին, լայն տարածում է գտել վերջին տարիներին Սովորական երևույթ լինելով ռեստորանային գործում՝ արտոնագրումը համատեղում է խոշոր կորպորացիաների տնտեսական արդյունավետությունը և տեղի սեփականատիրոջ շահը Այդ գործարքում խոշոր ընկերությունը թույլ է տալիս անհատին կամ ձեռնարկատերերի փոքր խմբին օգտագործելու իր անունը (հաճախ որպես ակնհայտ գովազդային առավելություն) և երբեմն արտադրանքը՝ շահույթի տոկոսի դիմաց Ձեռնարկատերը, որը սովորաբար ծնող ընկերության ծառայող չէ, պատասխանատու է ավելի ծավալուն շղթայի մեկ կամ մի քանի միավորների կառավարման և աշխատանքի համար Մենատնտեսը կամ ձեռնարկատերը պետք է նաև իր վրա վերցնի նախաձեռնության հետ կապված վտանգների մեծ մասը

Արտոնաշնորհումը տնտեսության վրա ծախս է նստում, բայց նաև օգուտ է բերում Մանրածախ առևտրի խանութների ցանցի ստեղծումը կասեցնում է մենատնտեսության և ընկերակցության կարգացումը Մանրածախ առևտրի խանութների ցանցը կիրառում է կանգվածային մեթոդներ՝ գնում մեծ քանակներով, վաճառում խոշոր ծավալներով և շեշտը դնում ինքնասպասարկման վրա դա հնարավորություն է ընձեռում ապրանքների վաճառքն իրականացնել ավելի ցածր գներով, քան մանր մենատնտեսի կրպակները Հանրախանութների ցանցը, օրինակ, ավելի ցածր գների շնորհիվ գրավելով հաճախորդներին, դուրս է մղել շատ անկախ մանր նպարավաճառների

Այնուամենայնիվ, բազմաթիվ անկախ մենատնտեսներ գոյությունը պահպանում են Ոմանք ուժերը միացնում են ուրիշներին և կազմում անկախ մենատնտեսների ու համագործակիցների ցանց Նրանք միավորում են իրենց գնողունակությունը կամ դառնում անկախ արտոնաշնորհ առևտրականներ և հաճախ սպասարկում նեղ մասնագիտացված կամ «որմնախորշային» շուկաները

ԽՈՇՈՐ ԿՈՐՊՈՐԱՑԻԱՆԵՐ

Չնայած գոյություն ունեն մանր և միջին չափի կորպորացիաներ, սակայն ավելի խոշոր ձեռնարկատիրական միավորումներն անհրաժեշտ են Ամերիկայի լայնածավալ տնտեսության մեջ որոշակի ծառայություններ իրականացնելու համար Խոշոր կորպորացիաները կարող են ապրանք ու ծառայություն մատուցել ավելի մեծ թվով մարդկանց և աշխարհագրական ավելի լայն տարածքում, քան մանր ձեռնարկությունները Նրանք կարող են վերից վար սպասարկել ինչպես սեփական ժողովրդին, այնպես էլ աշխարհին Կորպորացիաների արտադրանքները ավելի մեծ ծավալների և վաճառվող առանձին միավորների ցածր վերադիր արժեքների շնորհիվ ավելի ցածր արժենալու միտում ունեն Ավելին, սպառողներն օգուտ են քաղում կորպորացիաների «մակնիշների» առկայությունից, որը նրանք գնահատում են որպես որակի հավաստի երաշխիք, որտեղ էլ այն գնեն

Խոշոր կորպորացիաները նաև ֆինանսական հզորություն ունեն ուսումնասիրելու, կարգացնելու և արտադրելու նոր ապրանքներ Նրանց գիտատար տեխնոլոգիան, նորարարությունն ու տեխնիկական հնարավորությունները վճռորոշ են օժանդակելու պետության մրցունակությանն ու արտադրողականությանը

Միացյալ Նահանգներում կորպորացիան մարդկանց և ռեսուրսների առանձնահատուկ իրավական ձև է, որը հիմնադրվում է 50 նահանգներից մեկի կողմից՝ ձեռնարկությունը ղեկավարելու նպատակով Երբ մարդիկ ու ռեսուրսները ի մի են բերվում կորպորացիա հիմնելու համար, վերջիվերջո օրենքի աչքում այն դառնում է մի անձ (Իսկապես լատիներեն «corpus» բառը նշանակում է «մարմին» կամ «անձ») Կորպորացիան Միացյալ Նահանգներում, որքան էլ որ տարբեր է մարդ արարածից, կարող է դատական գործ հարուցել և դատվել, ինչպես նաև համաձայնագրեր կնքել Այդ իսկ պատճառով կորպորացիան իդեալական միջոց է ինչպես մանր, այնպես էլ ավելի խոշոր ձեռնարկությունների գործունեության համար

Մոտավորապես 500 մեծ կորպորացիաները կարևոր դեր են խաղում ամերիկյան ձեռնարկատիրության մեջ, չնայած որոշ

առումով այն անկում է ապրել 1978-1990 թթ այդ 500 ֆիրմաների շահույթը միասին վերցրած 61 5 միլիարդ դոլլարից բարձրացել է 93 3 միլիարդ դոլլարի, և կապիտալը 898 5 միլիարդից աճել է 2 298 6 միլիարդ դոլլարի 1990 թ մոտավորապես 12 4 միլիոն մարդ էր ծառայում այդ ֆիրմաներում, 1 միլիոնով պակաս, քան 1986 թ

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԿՈՐՊՈՐԱՑԻԱՆԵՐԸ ԿԱՊԻՏԱԼ ԿՈՒՏԱԿՈՒՄ

Խոշոր կորպորացիան իր ներկա չափին է հասել մասամբ այն պատճառով, որ հետագա ընդլայնման համար նոր կապիտալ կուտակելու նորարարական եղանակներ է գտել Նոր կապիտալ կուտակելու կորպորացիաների կիրառած հինգ գլխավոր մեթոդներն են

■ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԹՈՂԱՐԿՈՒՄ *Փոխառությունը գրավոր խոստում է որոշակի դրամաքանակ ապառնի կոնկրետ ամսաթվով կամ փոխառության ամբողջ ընթացքում պարբերաբար վճարելու մասին Այդ ընթացքում կորպորացիան որոշակի տոկոս է վճարում փոխառության տիրոջը՝ ընդունված տոկոսադրույքով, նշանակված ժամկետներում Եթե փոխառության տերը ցանկանա դրամը ետ վերցնել մինչև պայմանավորված ժամկետը, փոխառությունը կարող է վաճառվել մեկ ուրիշին Երբ փոխառությունը հասնում է «հասունության», ընկերությունը խոստանում է ետ վճարել հիմնական կապիտալը իր նախնական արժեքով*

Փոխառությունները ցանկալի են ընկերության համար, որովհետև տոկոսադրույքն ավելի ցածր է, քան պարտք վերցնելու մյուս ձևերի մեծ մասում Միաժամանակ փոխառությունների դիմաց վճարվող տոկոսը կորպորացիայի ծախսերի այն մասն է, որից ավելի ցածր հարկ է գանձվում Թերի կողմն այն է, որ փոխառությունների տոկոսի վճարումները սովորաբար կատարվում են նույնիսկ այն դեպքում, երբ շահույթ չի ստացվում Այդ իսկ պատճառով ավելի մանր կորպորացիաները հակվադեպ են կապիտալ կուտակում փոխառությունների թողարկման հաշվին

■ ՍՈՎՈՐԱԿԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՎԱՃԱՌՔ *Փոխառությունների տերերը ընկերությանը դրամ են պարտք տալիս, բայց ձայն չունեն նրա գործերում և ոչ էլ կիսում են շահույթը կամ վնասը ճիշտ հակառակը ճշմարիտ է նրանց համար, ովքեր հայտնի են որպես «փայ» ներդրողներ, և որոնք գնում են սովորական բաժնետոմսեր Կորպորացիայում նրանք բաժնետերեր են և ունեն օրինական իրավունքներ, ներառյալ ընկերությունը իրականում ղեկավարող տնօրենների վարչություն ընտրելու իրավունքը Սակայն նրանք ոչ մի շահութաբաժին չեն ստանում, մինչև որ թողարկված փոխառությունների տոկոսային վճարումները չարվեն*

Եթե ընկերության ֆինանսական վիճակը լավ է, և նրա

ակտիվը՝ բավարար, նա կարող է կապիտալ ստեղծել՝ քվե տալով հանուն սովորական բաժնետոմսերի լրացուցիչ թողարկման Խոշոր ընկերության համար ներդնող բանկիրը համաձայնվում է երաշխավորել նոր թողարկվող բաժնետոմսերի գնումը նախօրոք սահմանված գներով Եթե շուկան մերժում է թողարկվածը նվազագույն արժեքով գնել, բանկիրը պետք է դրանք վերցնի և կրի վնասը Թղթադրամի տպագրության նման, շատ մեծ քանակությամբ բաժնետոմսերի թողարկումը գցում է յուրաքանչյուր փայաբաժնի հիմնական արժեքը

■ ԱՐՏՈՆՅԱԼ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՈՒՄ *Այս բաժնետոմսերի դիմաց «արտոնյալ» շահութաբաժին են վճարում Այն է՝ եթե շահույթը սահմանափակ է արտոնյալ բաժնետոմսերի տերերին վճարելու են նախքան սովորական բաժնետոմսերի տերերին վճարելը Ըստ օրենքի՝ այդ բաժնետոմսերի տերերին վճարում են փոխառություն ունեցողներից անմիջապես հետո Ընկերությունը կարող է որոշել արտոնյալ նոր բաժնետոմսեր թողարկել, երբ լրացուցիչ կապիտալի պահանջ կա*

■ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆ *Ընկերությունները կարող են նաև կարճաժամկետ կապիտալ կուտակել (դա սովորաբար նյութական պաշարների ֆինանսավորման շրջանառու կապիտալն է) բաղում եղանակներով, ինչպես օրինակ՝ փոխ առնելով պարտք տվող հաստատություններից, հիմնականում բանկերից, ապահովագրական ընկերություններից, խնայողությունների-և- փոխառությունների հաստատություններից Պարտք վերցնողը պետք է տոկոս վճարի տվողին շուկայական մրցակցող ուժերի կողմից սահմանված դրույքով Պարտատիրոջ որոշած տոկոսադրույքի վրա ազդեցություն է գործում պարտքի համար առկա ընդհանուր դրամաքանակում եղած արժեթղթերի քանակը Եթե դրամը սակավ է, տոկոսադրույքները բարձրանալու միտում ունեն, որովհետև նրանք, ովքեր փորձում են պարտք վերցնել, մրցակցելու են հանուն արժեթղթերի Եթե մեծ քանակությամբ դրամ է առկա պարտք տալու համար, տոկոսը իջնելու միտում ունի*

Եթե պարտք վերցնող ընկերությունը գտնում է, որ անհրաժեշտ է լրացուցիչ դրամ կուտակել, կարող է վերաֆինանսավորել գոյություն ունեցող փոխառությունը Այդ գործարքում պարտք տվողը էականորեն ավելի շատ դրամ է տալիս պարտապանին Բայց եթե տոկոսադրույքը բարձրացել է սկզբնական փոխառությունը ձեռք բերելուց հետո ընկած ժամանակամիջոցում, պարտք վերցնողն ավելի բարձր տոկոս է վճարում լրացուցիչ արժեթղթեր ունենալու համար Եթե նույնիսկ տոկոսն իջել է, պարտք տվողը շահում է՝ ավելացնելով իր նախնական փոխառության չափը ավելի ցածր տոկոսադրույքով

■ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ *Որոշ կորպորացիաներ իրենց եկամուտների մեծ մասը շահութաբաժնի ձևով վճարում են բաժնետերերին Ներդրողները գնում են ընկերության բաժնետոմսերը, որովհետև ցանկանում են կանոնավոր բարձր եկամուտ ունենալ Սակայն մյուս կորպորացիաները, որոնց սովորաբար անվանում են «ներունակ ընկերություններ», գերադասում են վերցնել իրենց եկամուտների մեծ մասը և դրանք նորից ներդնել հետազոտության և ընդլայնման մեջ Այդպիսի բաժնետոմսեր ունեցող անձինք գոհ են լինում ցածր շահութաբաժին ունենալու կամ ամենևին ոչինչ չունենալու դեպքում, եթե արագ աճի հետևանքով բաժնետոմսերի արժեքը բարձրանում է Այդ անձինք գերադասում են համարձակություն հանդես բերել՝ վտանգելով իրենց կայուն շահութաբաժինը հանուն «կապիտալի աճից ստացվող եկամտի», կամ բաժնետոմսերի գնի աճի*

Սովորաբար կորպորացիան աշխատում է հավասարակշռություն պահպանել ընդարձակման համար դրամ կուտակելու այս մեթոդների մեջ հաճախ վաստակի կեսը ետ ներդնելով ձեռնարկության մեջ, իսկ մյուս կեսը վճարելով որպես շահութաբաժին Եթե որոշ շահութաբաժին չվճարվի, ներդրողները կարող են հետաքրքրությունը կորցնել ընկերության հանդեպ

ԿՈՐՊՈՐԱՑԻԱՆԵՐԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ձեռնարկատիրության կորպորատիվ ձևը ավելի ճկուն գործիք է մեծածավալ տնտեսական գործունեության համար, քան մենատնտեսությունը կամ ընկերակցությունը

Նախ այն պատճառով, որ կորպորացիան ինքը իրավական կարգավիճակ ունի, այն պաշտպանում է տերերին՝ ազատելով նրանց անձնական իրավական պատասխանատվությունից, երբ նրանք գործում են որպես ձեռնարկության գործակալներ

Երկրորդ՝ բաժնետոմսերի տերերը սահմանափակ իրավասություն ունեն նրանք պատասխանատու չեն կորպորացիայի պարտքերի համար Եթե բաժնետերը վճարել է 100 դոլլար 10 բաժնետոմսի համար, և կորպորացիան սնանկացել է, նա կարող է կորցնել միայն իր ներդրած 100 դոլլարը

Երրորդ՝ կորպորացիայի բաժնետիրական կապիտալը փոխանցելի է Այդպիսով կորպորացիան չի վնասվում, մասնավորապես, այս կամ այն անձի մահվան կամ հետաքրքրությունը կորցնելու դեպքում Բաժնետերը կարող է ցանկացած պահի վաճառել իր արժեթղթերը կամ փոխանցել ժառանգներին

Այնուամենայնիվ, ձեռնարկատիրության կորպորացիոն կառուցվածքը, առավելություններից բացի նաև թերություններ ունի

Թերություններից մեկը կապված է հարկերի գանձման հետ Որպես առանձին իրավաբանական անձ՝ կորպորացիան պետք է հարկ վճարի Ի տարբերություն փոխառություններից ստացվող շահույթի, բաժնետերերին վճարվող շահութաբաժինը կորպորացիայի ծախսերի այն մասը չէ, որից ավելի ցածր հարկ է գանձվում Երբ կորպորացիան շահույթը բաշխում է անհատներին շահութաբաժնի ձևով, դրանից նրանք նորից հարկ են վճարում Դա հայտնի է որպես «կրկնակի հարկագանձում»

Մեկ այլ ծախս հետևանք է այն բանի, որ սեփականատերերը տարանջատվում են կառավարողներից Հնարած դա հեշտացնում է կառավարումը, սակայն որոշ կառավարիչներ գայթակղվում են գործել՝ ելնելով ավելի շատ իրենց սեփական, քան թե բաժնետերերի շահերից

ԼԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ՏԱՐԱՆՋԱՏՈՒՄԸ ԼԵՌԱՀՍԿՈՂՆԵՐԻՑ

Հավանաբար խոշոր կորպորացիաների ամենաակնհայտ առանձնահատկությունը բաժնետերերի մեծ թիվն է (ըստ էության՝ տերերի) Մեկ խոշոր ընկերության տեր կարող են լինել մեկ միլիոն և ավելի մարդ, որոնցից շատերը կարող են ունենալ 100 բաժնետոմսից պակաս Բնորոշ է, որ կորպորացիայի տնօրենները և կառավարիչներն ունեն սովորական արժեթղթերի 5 տոկոսից պակաս Բաժնետոմսերի փաթեթները հաճախ տնօրինում կամ վերահսկում են անհատները, բանկերը, պաշտոնաթողության ֆոնդերը, սակայն այդ արժեթղթերը կազմում են ընդհանուրի միայն մի մասը 1980-ական թթ կեսերին ավելի քան 40 միլիոն մարդ սովորական բաժնետոմսեր ուներ Միացյալ Նահանգներում

Ամբողջ երկրով մեկ ապրող բաժնետերեր ունենալու պարագայում նրանց համար անհնար է իրենց ձեռնարկության մասին բոլոր մանրամասնություններն իմանալ և խելամտորեն կառավարել Այդպիսի իրադրության պայմաններում արդյունավետ ուղղակի վերահսկողությունը գտնվում է կորպորացիայի տնօրենների վարչության ձեռքում Գործունեության ծրագիր մշակելուց բացի, վարչությունը աշխատանքային վերահսկողությունը դնում է Վարչության գլխավոր տնօրենի վրա (ՎԳՏ) Այս մարդը, որը կարող է տնօրեն կամ նախագահ լինել, սովորաբար վերահսկում է բազմաթիվ փոխնախագահներին, որոնք կառավարում են կորպորացիայի տարբեր բնագավառներ և զեկուցում ՎԳՏ-ին Վարչության նախագահը հաճախ փորձառու կառավարիչ է, որը նրա հանձնաժողովի հետ մեկտեղ խորհուրդ և հավանություն է տալիս նախագահին և բազմաթիվ փոխնախագահներին Այնքան ժամանակ, քանի դեռ ՎԳՏ-ն հավատ է ներշնչում տնօրենների վարչությանը, նրան մեծ ազատություն է տրվում ընկերության գործունեության մեջ

Տնօրենների վարչության կառուցվածքն ու դերը փոփոխվում է ընկերությունից ընկերություն Հիմնականում վարչության անդամների միայն փոքրամասնությունն է կորպորացիայի ներքին ծառայող Որոշ տնօրենների ընտրում են վարչության վարկի, մյուսներին՝ որոշակի հմտությունների կամ պարտք տրամադրող հաստատությունները ներկայացնելու համար Արտասովոր չէ, որ նույն անձը համատեղությամբ ծառայի մի քանի տարբեր կորպորացիաների վարչությունում

Վարչությունը ամիսը կամ եռամսյակը մեկ անգամ հավաքվում է՝ քննարկելու աշխատանքային որոշումներ կայացնելու հետ առնչվող ծրագրերը և ստուգելու կատարողականը Տարեկան հանդիպումների ժամանակ նոր տնօրեններ են ավելացնում, եթե պահանջվում է, և գործունեության գլխավոր ծրագրի շուրջ որոշումներ կայացնում Մինչև վերջին տարիներս միայն շատ քչերն էին կանոնավոր մասնակցում կորպորացիայի տարեկան հավաքին Նրանք կարող էին մասնակցել տնօրենների և որոշ հույժ կարևոր այլ հարցերի ընտրությանը «փոխանորդների» միջոցով, այն է՝ հարցաթերթը լրացնել և փոստով ուղարկել Սակայն ներկայումս տարօրինակ չէ, երբ մի քանի հարյուր մարդ է մասնակցում Հաճախ նրանք վարչությանը խորամուտ հարցեր են առաջադրում Վերջին տարիներս Արժեթղթերի և բորսաների հանձնաժողովը (ԱԲՀ) կարգ է սահմանել, որ յուրաքանչյուր կորպորացիա պետք է բոլոր բաժնետերերին գրավոր ծանուցում ուղարկի տարեկան հավաքի մասին Միաժամանակ այն խմբերին, որոնք թերահավատ են ղեկավարության հանդեպ, պետք է հնարավորություն տրվի փոստով ծանոթանալու ընկերության արժեթղթերի ցանկին, այնպես որ բոլոր կողմերը կարողանան ներկայացնել իրենց տեսակետները

Համաձայնեցված գործելիս անհատ և ընկերություններում գործող բաժնետերերը վիթխարի ազդեցություն են ունենում կորպորացիայի ղեկավարության վրա, երբ վաճառում կամ գնում են բաժնետոմսերը՝ իջեցնելով կամ բարձրացնելով դրանց գինը Երբեմն նեցուկ լինելով այլախոհներին՝ նրանք կարող են ստիպել փոխելու ղեկավարությունը

ՄԵՆԱՇՆՈՐՀԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ

19-րդ դարի վերջերին կորպորացիան շատերի կողմից դիտվում էր որպես մենաշնորհի հիմնական գործիք Սովորաբար փաստարկում էին, որ խոշոր քանակությամբ կապիտալ կուտակելուց հետո կորպորացիաները կարող են միավորվել կամ գաղտնի համաձայնության գալ մրցակիցների հետ՝ վերահսկելու գները և արգելակելու իսկական մրցակցությունը

Մենաշնորհը տեսականորեն գոյություն ունի, երբ մի ֆիրմա վերահսկում է որևէ ապրանքի ընդհանուր քանակի արտադրությունն ու վաճառքը Գործնականում, սակայն, օգտագործվում է մի սահմանում, որը հիմնված է ընդհանուր առևտրի որոշված տոկոսի (հաճախ 33 տոկոս) վերահսկողության վրա

Երկու դեպքում էլ, թե՛ տեսականորեն, թե՛ գործնականում, խոշոր ընկերությունները կարող են մենաշնորհ դառնալ և կլանել մանրերին՝ ապատ շուկայում արժեթղթեր գնելով Հսկաներն այդ ժամանակ բարձրացնում են գները՝ ստիպելով այն մարդկանց, որոնք իրենց արտադրանքի կարիքն ունեն, վճարել ավելի շատ, քան առաջ

Միացյալ Նահանգների ընկերություններն ավելի են մեծանում (կորպորացիաների մոտավորապես 1 միլիարդ ակտիվ ունեցող հսկաների կողքին 19-րդ դարավերջի հսկաները թզուկներ են), սակայն չի կարելի ենթադրել, թե մենաշնորհների ստեղծմանը նպաստող պայմաններն ավելանում են

Հավաստիության համար ասենք, որ վերջին հարյուր տարվա ընթացքում շատերն են մտահոգվել այն բանով, ինչը դիտվում է որպես հայրենական մրցակցության անկում և մի քանի խոշոր կորպորացիաների կողմից արդյունաբերության հիմնական ճյուղերի վերահսկողություն Արդյունաբերության շատ հիմնական բնագավառներ, ինչպես օրինակ՝ ինքնագնացներինը, պողպատինը, ավանդաբար եղել են «խմբիշխան մենաշնորհներ», որոնց վրա իշխել են մի քանի խոշոր կորպորացիաներ

Միաժամանակ Միացյալ Նահանգների շատ խոշոր կորպորացիաներ վերջին տարիներս ապացուցել են, որ իրենք խոցելի են մրցակցության նոր ձևերում Միացյալ Նահանգների սպառողները կարող են ապրանք գնել օտարերկրյա արտադրողներից ինչ վերաբերում է ավտոմեքենաներին, նրանք կարող են գնել Հոնդայի, Տոյոտայի, Հյունդայի, Վոլվոյի և շատ ուրիշների արտադրանքը Շատ դեպքերում սպառողները կամ արտադրողները կարող են օգտվել փոխարինիչներից օրինակ՝ պողպատի փոխարեն նրանք կարող են օգտագործել ալյումին, ապակի, պլաստմասսա կամ բետոն Արդյունաբերության ավելի նոր ճյուղերում, ինչպիսին համակարգիչներինն է, փոքր ընկերություններն ապացուցել են, որ իրենք ընդունակ են ավելի արագ շարժվել նոր տեխնոլոգիաներ շահագործելու մեջ, քան խոշոր կորպորացիաները

Ոմանք պնդում են, թե տնտեսական հզորության կենտրոնացումը վտանգավոր է, որովհետև այն կարող է կառավարիչներին մղել վեր դասելու անձնական շահը կամ կորպորացիայի շահը հասարակության բարեկեցությունից

Միացյալ Նահանգների կառավարությունը փորձել է օգուտ քաղել լայնածավալ կառուցվածքների առավելություններից՝ նվազեցնելով վտանգը օրենսդիր ճանապարհով, ինչպես օրինակ՝ Միջնահանգային փոխադրամիջոցների օրենքով և Շերմանի հակամենաշնորհատիրական օրենքով Առևտրի ֆեդերալ հանձնաժողովին և Արդարադատության նախարարության հակամենաշնորհատիրական բաժնին հանձնարարված է հետամուտ լինել հնարավոր մենաշնորհներին և կանխել համաձուլումները, կամ քայլեր ձեռնարկել՝ ցրելու ընկերությունները, երբ մրցակցության պակասն ակնհայտորեն վնաս է հասցնում սպառողին

Հակամենաշնորհատիրական ջանքերին դեռ երկար ժամանակ չափանիշ է ծառայելու Արդարադատության նախարարության հաջողությունը, որը կործանեց Ամերիկայի Հեռախոսային և հեռագրական կորպորացիան (ԱՀՀ)՝ աշխարհի ամենախոշոր և ամենաբարգավաճ հեռահաղորդակցության ցանցը 1974 թ Արդարադատության նախարարությունը դատական գործ հարուցեց ԱՀՀ-ի դեմ՝ հեռախոսային արդյունաբերությունը մենաշնորհ դարձնելու համար 1982 թ համաձայնություն կայացվեց, որով ԱՀՀ-ն՝ հրաժարվեց տեղերում գործող իր 22 ընկերություններից և որը գործողության մեջ դրվեց 1984 թ հունվարի 1-ին ԱՀՀ-ին իրավունք տրվեց պահել Արևմտյան էլեկտրական ընկերությունը (նրա արտադրական մասնաճյուղը), Բելի հեռախոսային լաբորատորիաները (նրանց հետազոտական մասնաճյուղով) և նրա հեռահար հեռախոսային ձեռնարկությունը Բացի այդ, թույլ տրվեց ընդարձակվել նախկինում արգելված բնագավառներում, ներառյալ տվյալների մշակումը, հեռախոսային և համակարգչային սարքավորումների վաճառքը և համակարգչային հաղորդակցության սարքավորումները ԱՀՀ-ն արագ թափանցեց համակարգիչների բնագավառը Ընդհատվող և մեծ մասամբ անհաջող որոշ ջանքերից հետո 1991 թ այն իր ձեռքը վերցրեց ՆՍՌ կորպորացիան՝ համակարգիչների ամերիկյան գլխավոր ընկերություններից մեկը

Որպես ապացույց Միացյալ Նահանգների հակամենաշնորհատիրական օրենքների վճռական հարկադրանքի և մրցակցությունն ապահովելու ջանքի՝ ԱՀՀ-ի կպմալուծումը անառարկելի հաջողություն էր Հնայած վաղ 1990-ական թթ ԱՀՀ-ն շարունակում էր ձեռքում պահել հեռահար հեռախոսային շուկայի երկու երրորդը, սակայն այն այլևս մենաշնորհ չէր Զորեղ մրցակցությունը գալիս էր այնպիսի ախոյաններից, ինչպիսիք են ՄՍԻ կոմյունիկեյշնս և ԱՄՆ Սպրինտ կոմյունիկեյշնս կորպորացիաները, որոնցից ոչ մեկը գոյություն չուներ երկու տասնամյակ առաջ Այնուամենայնիվ, ԱՀՀ-ի կպմալուծումը վիճաբանության

առարկա էր մնում մինչև 1990-ական թթ կեսերը, երբ կորպորացիայի անջատված մասերը՝ այսպես կոչված «Բելլի Բելլ» ընկերությունները, փորձում էին մտնել նոր ձեռնարկությունների մեջ, և շատ բնակարանային ու աշխատանքային հեռախոս օգտագործողներ անհանգստացած էին գների բարձրացումից և, ինչպես ոմանք էին համարում, հեռախոսային ավելի պակաս վստահելի ծառայությունից Սակայն մյուսները եռանդագին ու գրկաբաց էին ընդունում ավանդական հեռախոսային համակարգի արագ տեխնոլոգիական փոփոխությունների օգուտը Այն հարցը, թե ինչ չափի կարգավորումն է ամենաբարենպաստը արտադրողի և սպառողի կարիքները հոգալու համար, տակավին կրքոտ կերպով վիճարկում էին 1990-ական թթ

ԽՈՇՈՐԱՑՈՒՄ, ՄԱՆՐԱՑՈՒՄ

1980-ական թթ Միացյալ Նահանգների արդյունաբերության մեջ վերակառուցման ալիք անցավ, քանի որ կորպորացիաները փորձեցին ավելի լավ մրցակցային դիրք գրավել Միավորվածները, կլանվածները, բոնի անջատվածները, համատեղ ձեռնարկությունները՝ ֆիրմաները, նեղվեցին օգտվելու այդ և ուրիշ գործընթացներից սովորաբար նրանք հրաժարվում էին չառնչվող արտադրամասերից, միավորում կամ ամբողջությամբ գնում մրցակիցներին և վերադասավորում ֆինանսները՝ ի պատասխան տնտեսության փոփոխվող պայմանների (ներառյալ նոր և ավելի ահարկու օտարերկրյա մրցակիցներին)՝ հուսալով վերականգնել կարգացումն ու բարգավաճումը

Վերակառուցման գործիքները կարող են օգտագործվել՝ բաժնային կամ միատեսակ արտադրանք տալու համար Միավորումը երկու կամ ավելի ընկերությունների միաձուլումն է մեկի մեջ, երբ երկու ընկերություններն էլ ուզում են միանալ, ի տարբերություն կլանման, որը տեղի է ունենում ընկերություններից մեկի կամքին հակառակ Բաժնայանություն մտցնելու մղումը, ըստ կառավարիչների տրամաբանական հիմնավորման, այն է, որ անխոհեմ է «բոլոր ձվերը մի զամբյուղում ունենալը» Եթե մի ապրանքի պահանջարկը պակասում է, արտադրության մյուս ճյուղը կարող է հավասարակշռություն ապահովել

Ֆիրման դառնում է կոնգլոմերատ, երբ այն խորանում է այն ապրանքների արտադրության և վաճառքի մեջ, որոնք միանգամայն տարբեր են սկզբնական արտադրանքից Կոնգլոմերատը ձեռնարկատիրական մի կազմակերպություն է, որն ընդհանրապես բաղկացած է գլխավոր բաժնետիրական ընկերությունից և բաժնային գործունեությամբ զբաղված մի խումբ օժանդակ ընկերություններից

Վերջին տարիներին բազմաթիվ կոնգլոմերատներ այն եզրակացության են եկել, որ իրենք ավելի քան ընդարձակվել են ֆինանսապես կամ ծավալվել այն բնագավառներում, որոնք իրենց իրավասությունից դուրս են Դրա հետևանքով նրանք ստիպված են հրաժարվել վնասաբեր ձեռքբերումներից

Այդ ընդհանուր գործունեությունը մեծ չափով պատասխան հանդիսացավ տեսականու ընդլայնման այն ընդհանուր միտումի, որ թափ էր առել Միացյալ Նահանգների կորպորացիաներում 1960-ականների վերջին և 1970-ականների սկզբին Այդ ժամանակ շատ փառասեր ընկերություններ ձեռք բերեցին իրենց գործին չառնչվող ձեռնարկություններ՝ գոնե մասամբ ի պատասխան մենաշնորհատիրական խիստ հարկադրական օրենքի, որը նպատակ ուներ դժվարացնել նույն բնագավառի ընկերությունների միավորումը Սակայն ժամանակի ընթացքում ձեռնարկության ղեկավարները հասկացան, որ այդքան բազմապան ձեռնարկությունների կառավարումը հաճախ դժվար է, պակաս արդյունավետ և պակաս շահութաբեր, քան այն ընկերություններինը, որոնք ավելի սահմանափակ արտադրանքի բնագավառներ են ընդգրկում

Վերջին ժամանակների միավորումները կենտրոնացած են արդյունաբերության որոշակի ճյուղերում, հատկապես մանրածախ առևտրում, ավիագծերում և հաղորդակցության մեջ Միայն 1986 թ Մեյի հանրախանութը ձեռք բերեց Գործվածքեղենի միավորված կորպորացիան, Ջեներալ էլեկտրիկ ընկերությունը գնեց ՌՍԱ կորպորացիան, և Բարոու կորպորացիան գնեց Սպերի կորպորացիան (միություն, որը վերանվանվեց Յունիսիսի)

Շատ ֆիրմաներ նույնպես ջանացել են բարելավել իրենց արտադրանքի մրցունակությունը՝ համատեղ ձեռնարկություն սկսելով մրցակիցների հետ Սիտոյանների համատեղ ձեռնարկությունը նրանց գործողությունների լիակատար միավորում չի նշանակում Քանի որ այդ ձեռնարկությունները վերացնում են մրցակցությունը ֆիրմաների միջև այն բնագավառներում, ուր որոշում են համագործակցել նրանց մտահոգում է այն նույն խնդիրների մի մասը, որ մտահոգում են խոշոր մենաշնորհներին Սակայն համատեղ ձեռնարկությունները նաև օգուտ են բերում Օրինակ՝ երբ Առևտրի ֆեդերալ հանձնաժողովը ձայների մեծամասնությամբ որոշել էր թույլատրել Ջեներալ մոտորսին (ՋՄ) և Տոյոտային համատեղ ձեռնարկություն հիմնադրել, նրանք իրենց պատճառաբանությունների մի մասը հիմնավորում էին նրանով, որ համատեղ ձեռնարկությունը ՋՄ-ին հնարավորություն կընձեռի ուսումնասիրել և յուրացնել ճապոնական արտադրական տեխնոլոգիան և դրանով առավել ուժեղ մրցակից դառնալ

Ավելացնենք, որ ամերիկյան շատ ընկերություններ միանում են համագործակցելու համատեղ հետազոտության և փորձարկումների համար Անցյալում համատեղ հետազոտությունը, որը վարում էին առևտրական կազմակերպությունները, կենտրոնացվում էր միջավայրի և առողջապահության պահանջների բավարարման եղանակների վրա Սակայն այժմ ուսումնասիրվում են արտադրանքի բարելավումը և արտադրական պրոցեսները Միացյալ Նահանգների շատ ֆիրմաներ սկսում են մտածել, որ չեն կարող ժամանակ և դրամ տրամադրել որպեսզի ամբողջ հետազոտությունը իրենք կատարեն հատկապես երբ այլ երկրների արտադրողներ համագործակցում են միմյանց հետ Հետազոտական հիմնական կոնսորցիումների թվին են պատկանում Սեմիկոնդակտոր ռիսըրչ կորպորեյշն (33 անդամ) և Սոֆտվեր փրոդակտիվիթի կոնսորցիումը (14 անդամ) Կատաղի մրցակիցների համագործակցության տպավորիչ օրինակ էր, երբ 1991 թ ԻԲՄ կորպորացիան՝ կարգավորիչների ամենախոշոր ընկերությունն աշխարհում, համաձայնեց աշխատել Էփլ կոմպյուտեր ինկ - ի՝ «անհատական» համակարգիչների առաջատար արտադրողներից մեկի հետ՝ ստեղծելու համակարգիչների ծրագրավորող համակարգ, որը կարող էին օգտագործել բազմաթիվ տարբեր համակարգիչներ

Անկախ բոլոր միավորումներից և համախմբումներից, որոնք տեղի են ունեցել Ամերիկայում վերջին տարիներին միջին կարգի ընկերության չափը նվազում է Պատճառը ամեն տարի ձևավորվող նոր ձեռնարկություններն են, հատկապես 20-ից պակաս ծառայող ունեցողները Շատերը ձախողվում են հատկապես անկման ժամանակներում, սակայն ուրիշները գրավում են նրանց տեղը

ՆԱԲԵ-ՐԹՅԱՆ ԱՆ ԵՎ ՎԱԿԱՆ ԻՐՈՂԵՐԻ ՑՈՒՄԸ

Ժամանակի ընթացքում ԱՄՆ ի տնտեսության մեջ ավելի ու ավելի մեծ տեղ է գրավում արդյունաբերության սպասարկման և ոչ թե ապրանքների արտադրության ճյուղը Արդյունաբերության սպասարկման ճյուղերը նյութական արտադրանք չեն տալիս, ինչպես օրինակ՝ ավտոմեքենաներ կամ սառնարաններ Ավելի շուտ նրանք ապահովում են սպասարկումը, ինչպես օրինակ՝ փոխադրամիջոցները, բանկային ծառայությունները, ապահովագրությունը, տուրիզմը, հաղորդակցությունը, կանգվածային կվարձությունները, տվյալների մշակումը և խորհրդատվությունը Փաստորեն շատ ծառայություններ, ինչպես օրինակ՝ համակարգիչների, ճարտարագիտության, իրավական, հաշվապահական և գովազդի ծառայությունները, օգտագործվում են ապրանքների արտադրության մեջ

1950-1990 թթ ընթացքում կբաղվածությունն աճել է 48 5 միլիոն ծառայողից 118 միլիոնի Աճի մեծ մասը բաժին է ընկնում սպասարկման ոլորտին 1980-ական թթ մեկ տասնամյակում միայն սպասարկող ճյուղերի բնագավառը 20 միլիոն աշխատատեղի կուտ աճ է ունեցել որը գերականցում էր ողջ տնտեսության կուտ աճը (19 միլիոն) Արդյունաբերության երկու ճյուղերը, որոնք ամենաշատ աշխատատեղեր են ավելացրել, ձեռնարկատիրությանն առնչվող ծառայություններն են, ներառյալ գովազդը, համակարգման և տվյալների մշակման բնագավառներն ու առողջապահական ծառայությունը 1980-ական թթ աշխատատեղերի կուտ աճի 27 տոկոսը բաժին էր ընկնում այդ երկու բնագավառներին Համակարգման և տվյալների մշակման բնագավառները մոտավորապես կես միլիոն աշխատատեղ ավելացրին 1980-ական թթ ընթացքում

Սպասարկման ոլորտի աշխատատեղերի աճը կլանեց այն աշխատանքային ռեսուրսները, որոնք արտադրությունից դուրս էին մնացել արտադրողականության աճի հետևանքով 1982-1990 թթ աշխատանքի արտադրողականությունն աճում էր 4 5 տոկոս միջին արագությամբ, որը հնարավորություն էր ընձեռում արտադրությանը մոտավորապես կայուն բաժին ունենալ ԱՄՆ-ի ակգային համախառն արդյունքի մեջ (20 տոկոսից փոքր-ինչ ավելի), չնայած 1981-1982 թ ծայրահեղ լճացման ընթացքում կորցրած 3 միլիոն արտադրատեղերի մոտավորապես միայն կեսը վերականգնվեց 1990 թվականի շեմին

Փորձագետների մեծ մասը այժմ իրենից վանում է ԱՄՆ-ի արդյունաբերության հիմքի արագ քայքայվելու գաղափարը Դրա փոխարեն նրանք հավաստում են, թե վիճակագրությունը ցույց է տալիս, որ ԱՄՆ-ի տնտեսության կառուցվածքային տեղաշարժը ապրանք արտադրող արդյունաբերությունից դեպի սպասարկման բնագավառը հարաբերական է և տեղի է ունեցել գերականցապես աշխատատեղերի բնագավառում Օրինակ՝ ապրանք արտադրող սեկտորի գործունեությամբ էր պայմանավորված ոչ ագարակագործական աշխատատեղերի 41 տոկոսը՝ 1946 թ , 28 տոկոսը՝ 1980 թ և միայն 23 տոկոսը՝ 1990 թ Իհարկե, սպասարկման ոլորտի շատ նոր աշխատատեղերի վարձատրությունն այնքան բարձր չէր, որքան արտադրական սեկտորինը, և ոչ էլ արտոնություններն էին նույնը Դա կրճատեց շատ ընտանիքների եկամուտը, և մեծ թվով կանանց ստիպեց աշխատանքի անցնել 1980-ական թթ. Այդ տենդենցը հավանաբար շարունակվում է



ԱՄԵՐԻԿՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳԾԵՐԸ

ՄԱՍ ՀԻՆԳԵՐՈՐԴ

V

ԱՐԺԵԹՂԹԵՐ, ԱՊՐԱՆՔՆԵՐ ԵՎ ԲՈՐՍԱՆԵՐ





NAL BUSINESS MACHINES CORPORATION

Incorporated under the laws of the State of New York

TRANSFERABLE IN NEW YORK, CHICAGO, SAN FRANCISCO TORONTO OR MONTREA

THURSTON JR-

CUSIP 459200 10 1

FIVE

Agent

Authorized Signature

Signature

ԱՄՆ-ի արժեթղթերի բորսայի արդյունավետությունը առասպելական է Պատմականորեն յուրաքանչյուր խոշոր քաղաք ինչ-որ ժամանակ փաստորեն ունեցել է արժեթղթերի իր բորսան, սակայն 1990-ական թթ շեմին միայն երեք խոշոր բորսա կար Նյու Յորքում (Նյու Յորք), Չիկագոյում (Իլինոյս), և Սան Ֆրանցիսկոյում (Կալիֆորնիա) Տեղական բորսաները պահպանվեցին այնպիսի քաղաքներում, ինչպիսիք են Բոստոնը (Մասաչուսետս) և Ֆիլադելֆիան (Փենսիլվանիա), սակայն առևտուրը սահմանափակ էր

Միացյալ Նահանգներում արժեթղթերի բորսաներն են մատակարարում այն դրամի մեծ մասը, որը կապիտալիզմի կենսաղբյուրն է, որպեսզի ֆինանսավորեն հապարավոր ֆաբրիկաների ու գործարանների, գիտահետազոտական լաբորատորիաների ու հիմնարկությունների շենքերի, ինքնաթիռների ու նավերի կառուցումը Տեղին է ասել, որ եթե արժեթղթերի բորսաները գոյություն չունենային Միացյալ Նահանգներում, նրանք անպայման պետք է հորինվեին Թեև վերջին տարիներին շատ կապիտալ է կուտակվել փոխառությունների բորսաների և այլ միջոցներով, սակայն պարզվել է, որ հաճախ արժեթղթերի բորսաները դրամի կուտակման օգտակար միջոց են պայքարի ելած նոր ընկերությունների համար

Ասում են, որ կապիտալի բորսաներն արդյունավետ են, եթե կարողանում են արագ արձագանքելով կարգավորել վաճառողների և գնորդների մեծ քանակությամբ արժեթղթերի առաջարկն ու պահանջարկը Մասամբ դա տեխնոլոգիայի հարց է Ժամանակակից բորսաները, հատկապես Նյու Յորքինը և Չիկագոյինը, մեծ հավատ են ընծայում համակարգմանը՝ ամեն օր միլիոնավոր գործարքների ընթացք տալու գործում Բայց դա նաև մասամբ ավանդույթի ու փորձի հարց է Արժեթղթերի բորսան մեծ չափով գործում է միջնորդների վստահության շնորհիվ Միջնորդներն իրենց հերթին կախված են այն հաճախորդների վստահությունից, որոնց ներկայացնում են Երբեմն այդ վստահությունը չարաշահում են Սակայն վերջին կես դարի ընթացքում ֆեդերալ կառավարությունը ավելի ու ավելի մեծ կարևորություն է տվել ակնիվ գործարքների և միանշանակ խոսքի հարցին՝ համառորեն պահանջելով դրանք

Այս գլխում փորձ է արվում բացատրելու, թե ինչպես է գործում արժեթղթերի բորսան Մեծ մասամբ այն գրված է մանր առևտրականի (արժեթղթերի մանրածավալ վաճառողների և գնորդների) տեսանկյունից Սակայն դժվար չէ տեսնել, թե ինչպես են նրանք փոխազդում՝ ապահովելու արագ արձագանքող բորսայի առկայությունը

Բորսայի գործունեության սկզբունքները համանման են մյուս բոլոր շուկաների սկզբունքներին Յուրաքանչյուր գնորդ

պետք է ունենա իր վաճառողը Երբ վաճառողների թիվը ավելի պակաս է, քան գնել ցանկացողներինը, ապա գները միտում ունեն աճելու Իսկ երբ վաճառողների թիվն ավելի է քան գնել ցանկացողներինը, ապա գները միտում ունեն ընկնելու

Արժեթղթերի պատկանելիությունն այնքան ակնհայտ է, որ բաժնետերերը կարող են հեշտությամբ հետևել շուկայի իրավիճակի օրածին կամ ժամածին կարգացմանը Ներդրողները կարող են տեղեկություն ստանալ բազում ձևերով Եթե նրանք ցանկանում են սպասել մինչև որ բորսան փակվի, կարող են պարզապես թերթել ամենօրյա ծավալուն լրագրերի՝ բորսաներին վերաբերող էջերը, որպեսզի պարզեն, թե ինչ է կատարվել նախորդ առևտրաշրջանում Կան բորսայի գործունեությունը բազմակողմանիորեն գնահատող կանոնական ցուցանիշներ, կա նաև անհատական արժեթղթերի ցանկ, որտեղից կարելի է պարզել վաճառված ու գնված բաժնետոմսերի քանակը, արժեթղթերի գինը բորսայի փակման պահին, տվյալ առևտրաշրջանի բարձրագույն և նվազագույն գները Գործարարությանը նվիրված որոշ հեռուստահաղորդումներ անմիջապես տեղեկացնում են բորսայի գների ելևէջների մասին Նրանց համար, ովքեր պահանջում են մանրակրկիտ տեղեկություններ անհատական արժեթղթերի գների տատանումների վերաբերյալ, համակարգչային ծառայությունները բավարարում են այդ պահանջը՝ հեռախոսային կապով տեղեկությունները նրանց տուն ուղարկելով գրեթե վայրկենապես

Ներդրողները հաճախ նաև բաժանորդագրվում են այն ամսագրերին և տեղեկագրերին, որոնք նվիրված են անհատական արժեթղթերի տատանումների և ընդհանրապես բորսաների վերլուծությանն ու խորհրդածում են ապագայի վերաբերյալ

Հենց որ ընկերությունը վաճառում է հասարակությանը իր սկզբնական դրամագլուխը, և այն ապատ առ ու ծախի է դրվում բորսայում, ապա նրա գինը այդ օրվա շուկայում շարունակաբար կորոշվի նրանով, թե գնորդները ինչ գնով են պատրաստ գնել, իսկ վաճառողները՝ ինչ գնով են պատրաստ վաճառել Սա պարզապես առաջարկի և պահանջարկի հարց է Այսպիսով, գինը արժեթղթերի բոլոր վաճառողների և գնորդների հավաքական կարծիքն է Մարդկանց վճարունակության վրա ազդող գործոնների թվին են պատկանում

- *Գործարարության բնագավառում ընդհանուր մթնոլորտը կամ ուղղությունը՝ կախված ազգային տնտեսության ընդհանուր վիճակից և հասարակության վստահությունից՝ նրա նկատմամբ*
- *Բաժնետոմսերը թողարկած ընկերության ստացած կամ*

ապասելիք շահույթի չափը, ինչպես նաև ընկերության ֆինանսական վիճակը
- *Ընկերության աճի կամ անկման արագությունը*
- *Ընկերության ունակությունը որոշ ժամանակահատվածում հաջողությամբ մրցակցելու իր ախոյան ընկերությունների հետ*
- *Ապրանքի կամ ծառայության հանրաճանաչությունը և այդ ապրանքի կամ ծառայության ապառման շուկայի ընդլայնվելը կամ նեղանալը*
- *Փոխառությունների ընդհանուր տոկոսադրույքը կամ գինը շուկայում*
- *Ընկերության առաջարկած հատութադրույքը՝ համեմատած այլ ներդրումներից ստացվող հատութադրույքի հետ*

ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԻ ԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես արդեն նշվել է մեկ այլ կոնտեքստում, երբ ընկերությունը դրամ է վաստակում, սովորաբար դրա մի մասը հատկացնում է իր բաժնետերերին՝ շահութաբաժնի ձևով Որպես կանոն՝ վճարումը կազմում է վաստակի 50 տոկոսը Այսպիսով, եթե ընկերությունը մեկ տարում վաստակել է 20 մլն դոլլար, որից 5 միլիոնը բաժնետերերի բաժնետոմսերն են, այդ ընկերությունը պետք է հայտարարի 10 միլիոնի շահութաբաժին՝ պահելով մյուս կեսը անմիջական գործառնությունների և/կամ ընդլայնման համար Ուրեմն, եթե ընկերությունն ունի 5 մլն բաժնետոմս, յուրաքանչյուր բաժնետեր կստանա 2 դոլլար ամեն մի բաժնետոմսի դիմաց Եթե որևէ մեկն ունի 100 բաժնետոմս, շահութաբաժինը կկազմի 200 դոլլար Եթե մի քայլ առաջ գնանք այս թվաբանության մեջ, կտեսնենք, որ եթե դրամագլուխը վաճառվել է 40 դոլլարով ամեն բաժնետոմսի համար և տվել 2 դոլլարի շահութաբաժին, ամեն բաժնետոմսի հատութադրույքը կկազմի 5 տոկոս

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ամեն տարի յուրաքանչյուր բաժնետեր ստանում է տարեկան հաշվետվություն այն ընկերության վերաբերյալ, որտեղ ներդրում է արել Վերջին 20 կամ 30 տարիների ընթացքում այդ տարեկան հաշվետվությունները շատ փոփոխություններ են կրել Նախկինում սովորական հաշվետվությունը պարունակում էր ընկերության ֆինանսական առողջության ընդհանուր նկարագիրը՝ առանց որևէ համեմատության նախորդ տարիների հետ Այժմ իրականում բոլոր խոշոր կորպորացիաները տալիս են շատ ավելի մանրամասն հաշվետվություն Սովորաբար այդտեղ կետեղված են լինում վերջին 10 տարիներն ընդգրկող մատչելի աղյուսակներ և ամփոփագրեր Որևէ հասարակական հաշվապահական վերստուգիչ ֆիրմա ստուգումից հետո հավաստիացնում է, որ ֆինանսների վերաբերյալ թվերը և

հայտարարությունները համապատասխանում են ընդհանրապես ընդունված հաշվապահական սկզբունքներին Ի լրումն այդ տեղեկությունների՝ ընկերության ղեկավարներից պահանջվում է բացահայտել իրենց բաժնետոմսերի քանակը տվյալ ընկերությունում Ամբողջ գործընթացը բծախնդրությամբ վերահսկվում է Արժեթղթերի ու բորսաների հանձնաժողովի կողմից (ԱԲՀ), որը հաճախ որակում են որպես ֆեդերալ կառավարության «պահապան շուն» գործակալություն

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԲՈՐՍԱՆԵՐ

Մինչ տառացիորեն հապարավոր արժեթղթեր կան, ամենաաշխույժ առ ու ծախի ենթարկվողները սովորաբար գրանցվում են Նյու Յորքի արժեթղթերի բորսայում Այս բորսայի ծնունդը վերաբերում է 1972 թ , երբ մի խումբ բորսային միջնորդներ հավաքվում էին Նյու Յորք քաղաքի Ուոլ-Ստրիտ փողոցի չինարի ծառի տակ, որպեսզի առ ու ծախի կանոններ մշակեն ՆՅԱԲ-ն դարձավ Միացյալ Նահանգների առաջատար բորսան, բայց նույն Ուոլ-Ստրիտի շրջանում գործում է նաև Ամերիկյան արժեթղթերի բորսան, ընդ որում՝ գրեթե նույն ձևով, բայց ավելի փոքր մասշտաբով

ՆՅԱԲ-ն տեղավորված է Ուոլ-Ստրիտի ընդարձակ շենքերից մեկում և իրականացնում է գրանցված արժեթղթերի առևտրի մեծ մասը Բորսայի հարթակում 2 200-ից ավելի սովորական և արտոնյալ բաժնետոմսերի առևտուր է արվում ՆՅԱԲ-ին անդամակցում է մոտ 1 600 մարդ, որոնց մեծ մասը ներկայացնում է առևտրով զբաղվող միջնորդ ֆիրմաներ Նրանք բորսայի իրենց «աթոռը» բավական թանկ են գնում Նրանց վարձատրում են և՛ գնորդները, և՛ նրանց պատվերը կատարող վաճառողները Մոտ կես միլիոն կիլոմետր երկարությամբ հեռախոսային և հեռագրական լարերը կապում են ՆՅԱԲ-ն միջնորդ գրասենյակների հետ ամբողջ երկրով և աշխարհով մեկ

Ամերիկայի գործարար շրջաններում ուղղակի բաժնետերերի թիվը կազմում է մոտ 42 մլն Բացի դրանից, կան 133 միլիոնից ավելի անուղղակի բաժնետերեր, որոնք ամերիկյան կորպորացիաների բաժնետերեր են հանդիսանում կամ իրենց նվիրատվությունների շնորհիվ, կամ թոշակառուների ֆոնդերի (պետական և մասնավոր), ապահովագրական ֆիրմաների, համատեղ ֆոնդերի, բանկերի, հիմնադրամների, քոլեջների և համալսարանների մասնակի ֆինանսավորմամբ

Ինչպե՞ս են արժեթղթերը գնում ու վաճառում Ենթադրենք, թե Կալիֆորնիայի մի ուսուցչուհի ուզում է նավարկության գնալ օվկիանոսով Իր ուղևորությունը ֆինանսավորելու համար նա որոշում է ծախել Ջեներալ մոտորսի արժեթղթերից

100 բաժնետոմս Ուսուցչուհին հեռաձայնում է իր միջնորդին և պատվիրում նրան վաճառել իր բաժնետոմսերը միանգամից ու լավագույն գնով Նույն օրը Ֆիլադելֆիայում մի ճարտարագետ որոշում է գործի դնել իր խնայողությունները և գնել Ջեներալ մոտորսի արժեթղթերից 100 բաժնետոմս Ճարտարագետը հեռաձայնում է իր միջնորդին ու բորսայական գներով 100 բաժնետոմսի համար հայտ ներկայացնում

Երկու միջնորդներն էլ հեռաձայնում են իրենց պատվերները Նյու Յորքի արժեթղթերի բորսայի հարթակ Այս երկու միջնորդները, որոնցից մեկը ներկայացնում է այրուն, մյուսը՝ ճարտարագետին, բանակցում են գործարքի շուրջ Մեկը հարցնում է «Ի՞նչ պետք է վճարեմ Ջեներալ մոտորսի արժեթղթերի 100 բաժնետոմսի համար» Ամենաբարձր հայտը եղել է 50 00 դոլլար, իսկ վաճառքի նվազագույն գինը՝ 52 00 դոլլար Երկուսն էլ իրենց տեսանկյունից ձգտում են լավագույն գնի, ուրեմն փոխզիջումների են գնում, և սակարկությունը կանգ է առնում 51 00 դոլլարի վրա

ՆՅԱԲ-ն ինքը չի կբաղվում արժեթղթերի առուծախով այն պարզապես ծառայում է որպես մեխանիզմ, որի միջոցով միջնորդներն իրականացնում են իրենց պատվիրատուների առուծախը Յուրաքանչյուր գործարք իրականացվում է հրապարակավ երկրի բոլոր միջնորդ գրասենյակներին տեղեկացնում են դրանց մասին էլեկտրոնային կապի միջոցով

ՀՀԱՐԹԱԿ ԲՈՐՍԱ

Տարբեր տեսակի արժեթղթերի և փոխառությունների առևտրով կբաղվող իրացման տեսանկյունից աշխարհի ամենախոշոր բորսան Անհարթակ բորսան է (ԱԲ) ԱԲ-ն որոշակիորեն և ոչ մի տեղ չի գտնվում դա գլխավորապես էլեկտրոնային հաղորդակցության ցանց է, որը կապում է արժեթղթերով և փոխառություններով կբաղվող առևտրականներին Այս բորսայի գործունեությունը վերահսկում է պաշտոնապես գրանցված Արժեթղթերի բորսայի միջնորդների ազգային ասոցիացիան, որը լիազորված է վտարելու այն ընկերությունները կամ առևտրականներին, որոնք անազնիվ լինելու միտում ունեն կամ անվճարունակ են Անհարթակ բորսան ձգտում է ձեռք բերել փոքր ֆիրմաների արժեթղթերը և 1990-ական թթ շեմին ճանաչված էր որպես մի բորսա, որտեղ արագ կարգացող «բարձր տեխնոլոգիաների» բնագավառների շատ արժեթղթեր կարող էին գնվել կամ վաճառվել Առևտրական գործունեության վերաբերյալ տեղեկությունները կարող են վերստին ստացվել լրագրերի, ամսագրերի կամ էլեկտրոնային կապի միջոցով Սովորաբար միջնորդ ֆիրման կբաղվում է այս արժեթղթերի առևտրով հիմնական բորսաների առևտրին զուգընթաց

Շատերը, ովքեր իրենց բավականաչափ գիտակ չեն համարում որոշելու, թե որ արժեթղթերը գնեն, և այնուամենայնիվ ցանկանում են մասնակցել արժեթղթերի առևտրին՝ հասույթ ստանալու հույսով, դիմում են անդամակցելու փոխադարձ ֆոնդերին Փոխադարձ ֆոնդը համակցում է իր բաժնետերերերի դրամագլուխները, որոնք գուցե և այնքան էլ շոշափելի չեն, և խոշոր դրամական ներդրումներ է անում արժեթղթերի տեսականիով հարուստ թղթապանակում՝ այսպիսով նվազեցնելով վտանգը, որը և բացատրում է, թե ինչու են մարդիկ գերադասում արժեթղթերի ներդրման այս ձևը

Համատեղ ֆոնդի անդամի համար մեկ այլ առավելությունն այն է, որ այս ֆոնդի ղեկավարները խորհուրդ են ստանում հասարակային վերլուծողի կողմից Նման ֆոնդը կարող է իրեն թույլ տալ վարձել այդպիսի աշխատակիցներ՝ մեծ մասշտաբի գործառնություններ կատարելու շնորհիվ Գոյություն ունեն տասնյակ ձևերի համատեղ ֆոնդեր Դրանց մի մասը նախատեսում է զբաղվել եկամտով, մյուս մասը՝ կապիտալի արժեքի բարձրացմամբ, իսկ մյուսները՝ վտանգավոր բորսային գործառնություններով՝ խոշոր եկամուտ ստանալու հույսով կամ դաժան կորուստներ կրելու վտանգով Դրանց մի մասն էլ զբաղվում է միայն հատուկ արդյունաբերության որոշակի ճյուղերի, կամ էլ օտարերկրյա ընկերությունների արժեթղթերով, և կամ այն ընկերությունների արժեթղթերով, որոնց գործունեությունը նպաստում է միջավայրի պաշտպանությանը Այդ ֆոնդերի քանակը և տեսականին մեծապես բազմացան 1980-ական թթ ընթացքում, երբ դրանց ընդհանուր թիվը մեկ տասնամյակում թռիչք կատարեց՝ 524-ից հասնելով 2 918-ի, ընդ որում, Միացյալ Նահանգների համատեղ ֆոնդերում բաժնետեր ընտանիքների քանակը 1979 թ 6 տոկոսից 1989 թ հասավ 25 տոկոսի

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԳՆՈՒՄ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Ամերիկացիները շատ բան են գնում վարկով, և արժեթղթերը բացառություն չեն կազմում Այն ներդրողները, որոնք համապատասխանում են ներկայացվող պահանջներին, առաջին կանխիկ վճարումը կարող են անել 50 տոկոսի չափով, իսկ մնացած մասի համար վարկ վերցնել Սա կոչվում է արժեթղթերի գնում 50 տոկոսի տարբերությամբ Մնացորդը տոկոսով պարտք է տալիս միջնորդ ֆիրման, իսկ արժեթղթերը գրավ են դրվում միջնորդի մոտ՝ որպես երաշխիք Ֆեդերալ ռեզերվների վարչությունը ճշտում է նվազագույն տարբերությունը՝ արժեքի այն մասը, որը պետք է մուծվի կանխիկ Նվազագույն տարբերության չափը փոփոխվում է՝ կախված այն բանից, թե ինչի կարիք է զգացվում՝ խթանելու շուկան, թե զսպելու նրա խաղերի տենդագին աշխուժությունը

Եթե ներդրողը վաճառում է տարբերությամբ գնված արժեթղթեր, որոնց գինը աճել է, ապա նա կարող է յուրացնել շահույթը և վճարել միջնորդին իր պարտքը, ինչպես նաև տոկոսները և հանձնուրդավարձը Եթե արժեթղթերի գինն ընկնում է, ապա միջնորդը կարող է «տարբերության կանչ» տալ, և ներդրողը պարտավոր է լրացուցիչ վճարել կանխիկ դրամով Անվճարունակության դեպքում արժեթղթերի մի մասը վաճառվում է՝ ի վնաս ներդրողի

Տարբերությամբ արժեթղթեր գնելը հնարավորություն է տալիս բորսային խաղամոլներին (այն առևտրականներին, որոնք սիրում են խաղալ առավել վտանգահարույց իրավիճակներում) ընդլայնելու իրենց գործառնությունների ծավալը Առկա կանխիկ դրամով նրանք ավելի շատ բաժնետոմսեր կգնեն, որը նրանց ավելի մեծ շահույթ ստանալու հնարավորություն կընձեռի՝ միաժամանակ ավելացնելով ավելի խոշոր կորուստներ կրելու վտանգը

Ժամանակ առ ժամանակ Ֆեդերալ ռեզերվների վարչությունը 100-տոկոսանոց տարբերության պահանջ է ներկայացնում դա նշանակում է, որ բոլոր արժեթղթերի համար լրիվ կանխիկ վճար պետք է տրվի Օրինակ՝ 1950-ական թթ տարբերությունը տատանվում էր ամենացածր 50%-ից մինչև ամենաբարձր 90 % Անշուշտ, ցածր տոկոսը խթանում է արժեթղթերի գնումը, մինչդեռ բարձրը խոչընդոտում է

Ներդրողների մեծամասնության առաջին մտահոգությունը գնումների ապահովությունն է Անհրաժեշտության դեպքում մեծ վտանգից խուսափելու համար նրանք հաճախ համաձայնում են փոքր շահութաբաժնի Հակառակ դրան՝ խաղամոլները հույս են տածում, որ իրենց արժեթղթերի գինը ամիսների կամ անգամ օրերի ընթացքում կաճի Նրանք գնելու պահին ավելի մեծ շահագրգռություն են ցուցաբերում արժեթղթերի ապագայի, քան նրանց եկամտաբերության հանդեպ Նրանք, ովքեր կարծում են, թե կարող են կանխատեսել բորսայական գների տատանումները, ջանում են գնել նախքան գների բարձրացումը և վաճառել նախքան գների իջեցումը

Կա նաև խաղամոլների մեկ այլ խումբ, որը հայտնի է «բորսային արջեր» անունով Սրանք դրամական ներդրումներ են անում, որովհետև ակնկալում են որոշակի արժեթղթերի արժեքի անկում Այս մարդիկ վաճառում են «փոխառյալ» արժեթղթեր՝ հուսալով հետագայում դրանք փոխարինել ապատ շուկայում ավելի ցածր գներով ձեռք բերված արժեթղթերով Սա բորսայական առևտրի ամենավտանգավոր ձևերից մեկն է, որովհետև բարեհաջող վաճառվող արժեթղթերի գինը կարող է տասնապատիկ կամ ավելի աճել, և այդ դեպքում «արջը» «քամվում» է մեծ վնասների հետևանքով Բորսայական

առևտրի այս տեսակը կարգավորում են որոշակի կանոններով որպեսզի կանխեն այն չարաշահումները, որոնք տեղ էին գտել Ուոլ-Ստրիտում ավելի վաղ ժամանակներում

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱՆԵՐ

Այնպիսի ապրանքների գները, ինչպիսիք են հացահատիկը անասուններն ու պղնձի, ոսկու, կապարի, անագի նման մետաղները, ժամանակ առ ժամանակ հակված են տատանվելու Ապրանքի առևտրով զբաղվողները բաժանվում են երկու խոշոր դասի՝ ինքնապահովագրողների ու խաղամոլների Ինքնապահովագրողներն այն ձեռնարկատիրական ֆիրմաներն են (կամ անհատները), որոնք ապրանքային պայմանագիր են կնքում՝ ապահովելու երաշխավորված գներով ապրանք ձեռք բերելու հնարավորությունը Ֆիրման ապահովագրում է անհրաժեշտ ապրանքը և այսպիսով պաշտպանվում գների տատանումներից Հակառակ դրան, հապարավոր անհատներ զբաղվում են ապրանքային առևտրով, որպես խաղամոլներ

Ապրանքային առևտրում խաղամոլների թվի աճի գլխավոր պատճառը խոշոր շահույթի գայթակղությունն է, որը կարելի է ստանալ փոքր կամ չնչին տարբերության հաշվին Առաջարկի և պահանջարկի վրա կարող են ազդել այնպիսի անկառավարելի ուժեր, ինչպիսիք են եղանակն ու պատերազմները՝ արագորեն բարձրացնելով և իջեցնելով ապրանքների գները՝ դրանով իսկ տեղի տալով խոշոր շահույթների և կորուստների

Շահարկումներն ապրանքային առևտրում գլխավորապես տեղ են գտնում ապրանքային բորսաներում, իսկ Միացյալ Նահանգներում տասնյակ նման բորսաներ կան Այդ բորսաները իրենցից ներկայացնում են կամավոր առևտրական ասոցիացիաներ, բայց կոչվում են կազմակերպված բորսաներ, որովհետև դրանց անդամներից պահանջվում է առևտրում հետևել որոշակի հաստատված կանոնների Այդ բորսաներից ամենահռչակավորը գտնվում է Չիկագոյում՝ Ամերիկայի ագարակագործության պատմական կենտրոնում

Ծավալի և գործառնությունների արժեքի առումով Չիկագոյի հացահատիկի բորսան աշխարհի խոշորագույն ապրանքային առևտրի կենտրոնն է Չիկագոյի մյուս առևտրական բորսան, որն ի սկզբանե զբաղվում էր հիմնականում գյուղատնտեսական ապրանքների առ ու ծախով, հետագայում վերածվեց արտասահմանյան տարադրամով ապրանքային առևտուր անող մասնաճյուղի

Ինչպե՞ս է գործում ապրանքային առևտրի համակարգը Ենթադրենք, թե ինչ-որ մեկը պայմանագրով գնել է 30 000 կիլոգրամ կակաո Այդ գնորդը կարող է վճարել ու դառնալ կակաոյի տերը Կամ էլ նա կարող է գնումն անելուց հետո

վերավաճառել այն մեկ ուրիշի Մարդկանց մեծամասնությունը այդքան կակաոյի պահանջ չունի, ոչ էլ այն պահեստավորելու համար տեղ ունի Այդ գնումը պարզապես թղթային գործարք է պայմանագիրը կնքվում է հետագայում այն որևէ մեկին վերավաճառելու միտումով

Ապրանքային առևտրի պայմանագրերը, ինչպես արժեթղթերինը, կարող են գնվել ու վաճառվել տարբերությամբ Բնորոշ տարբերությունը կայանում է նրանում, որ ապրանքների առևտրի տարբերությունը կազմում է պայմանագրային արժեքի 10-ից 20 տոկոսը, որը շահարկման ավելի լայն՝ (հետևաբար և ավելի խոշոր շահույթների ու վնասների) հնարավորություն է տալիս

Դրամ վաստակողները հաճախ հմուտ առևտրականներ են, որոնք քաջատեղյակ են բորսայի հնարավոր արձագանքների ձևերին Հաշվարկները ցույց են տալիս, որ այս շուկայում գործող մանր առևտրականների 85 %-ը վնաս է կրում Իսկապես, այս վիճակագրությունից կարելի է եզրակացնել, որ կան ոչ մեծ թվով խոշոր հաղթողներ ու բազում պարտվողներ Այստեղ թաքնված վտանգը շատ մեծ է, քանի որ գների չնչին փոփոխություններն անգամ որոշիչ են՝ կա՛մ մեծ շահույթ, կա՛մ մեծ վնաս

ՇՈՒԿԱՅԻ ՇԱՐԺՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Արժեթղթերի և ապրանքների բորսաները Ամերիկայի տնտեսական համակարգի կենսական մասն են կազմում Միլիոնավոր անհատներ զբաղվում են փոքր քանակությամբ արժեթղթերի ու ապրանքների առևտրով, մինչդեռ համատեղ ֆոնդերն ու տրեստները՝ մեծ Լավ ժամանակներում, երբ պարզվում է, որ գները բարձրանում են, խնայողություններից արվող այլ տեսակի դրամական ներդրումների առատ ներհոսք է տեղի ունենում դեպի այդ շուկաները Այդ պարագայում գներն է՛լ ավելի են բարձրանում Հաճախ դրան հաջորդում է շահարկումների շրջան, երբ «ցուլերը» նրանք, ովքեր խաղում են գների բարձրացման վրա, տիրում են շուկային Երբ շուկան այլևս չի կարողանում դիմադրել շահարկման տենդին, տեղ է գտնում պատասխան ռեակցիան, որն արտահայտվում է վաճառելու միտումի տարածումով գները սկսում են ընկնել Այդ պահին շահում են «արջերը»՝ նրանք, ովքեր խաղում են գների անկման վրա և այդպես դրամ վաստակում

Այդ ժամանակ Ֆեդերալ ռեզերվների վարչությունը փորձում է սանձել ծայրահեղ դրսևորումներն ու տարբերության բարձացման կամ իջեցման միջոցով խթանել կամ ճնշել շուկան Այս տեղատարափ առուծախը գայթակղություն է ստեղծում նաև «յուրայինների» համար (նրանց համար, ովքեր հաղորդակից են գաղտնիքներին), և նրանք փորձում են հմտորեն ղեկավարել այն Երբեմնի սովորական այս ապօրինի գործունեությունը այժմ

շատ ավելի հավվադեպ է՝ շնորհիվ ԱԲՀ-ի գործուն վերահսկողության

Շուկայում մի նոր էական գործոն է արտասահմանից ներդրվող դրամագլուխների ծավալը Միայն Միջին արևելքի նավթից եկող դրամը չէր, որ իր ուղին հարթեց դեպի ամերիկյան արժեթղթերի շուկա, այլև բազում եվրոպացիներ, ճապոնացիներ ու աշխարհի այլ երկրների բնակիչներ գտնում էին, որ իրենց հարստությունն ապահովագրելու լավագույն միջոցը այն ամերիկյան արժեթղթերի մեջ ներդնելն է Այն հանգամանքը, որ նախապատվություն էր տրվում ամերիկյան տնտեսությունում ներդրումներ կատարելուն, մասամբ բացատրում է 1980-ական թթ սկզբին ամերիկյան դոլլարի կայունությունը Անշուշտ, դարիս վերջին տասնամյակների ընթացքում դիտվող գների աստիճանական աճը բորսաներում նույնպես մասամբ դրա արդյունքն է

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՈՒ ԲՈՐՍԱՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

1933թ արժեթղթերի և 1934 թ արժեթղթերի ու բորսաների վերաբերյալ օրենքները նախատեսված էին աջակցելու ներդրողների շահերի պաշտպանությանը ոչ միայն խարդախություններից, այլ նաև այն պրոբլեմներից, որոնք հետևանք էին տվյալների թերի կամ հաղորդման անսովոր եղանակից բխող թյուրըմբռնման Այս և մյուս օրենքները, որոնք ընդունվել էին Մեծ ճգնաժամի տարիներին (1929-1940) ու ավելի ուշ, կիրառվում են Արժեթղթերի ու բորսաների հանձնաժողովի կողմից 1934 թ , նախքան այս հանձնաժողովի ստեղծումը, արժեթղթերի առևտուրը ենթարկվում էր առանձին նահանգներին Ֆեդերալ օրենքները ստեղծվեցին ոչ թե փոխարինելու, այլ լրացնելու նահանգների հաճախ թերի օրենքները ԱԲՀ-ն բաղկացած է հինգ անդամներից, որոնց նշանակում է նախագահը Նույն քաղաքական կուսակցությունը կարող է ներկայացվել երեքից ոչ ավելի անդամներով ամեն տարի լրանում է հանձնաժողովի անդամներից որևէ մեկի հնգամյա ժամկետը Հասարակության համար բաժնետոմսեր, փոխառություններ ու այլ արժեթղթեր թողարկող ընկերությունները ԱԲՀ-ին պետք է ներկայացնեն արժեթղթերի հաշվառման մանրամասն փաստաթղթեր, և ԱԲՀ-ն պետք է որոշի, թե այդ փաստաթղթերը որքանով են լրիվ ու ճշգրիտ Դրանով ապահովվում է առկա արժեթղթերի փաստացի և քաջատեղյակ գնահատումը գնորդների կողմից Բաժնետոմսերի բաշխումից հետո ԱԲՀ-ն վերահսկում է դրանց առևտուրը, ինչպես նաև բորսայում գնվող ու վաճառվող բաժնետոմսերի գների կառավարման կանխումը նախատեսող կարգավորումների կիրառումը Անհարթակ բորսաների միջնորդները, առևտրականներն ու հենց բորսաները պետք է գրանցվեն ԱԲՀ-ում

ԱԲՀ-ն կբաղվում է արժեթղթերի միջնահանգային առևտրի կարգավորումով և անապնիվ ու ապօրինի գործառնությունների դեմ ուղղված օրենքների կիրարկումով Այն նույնպես պահանջում է, որպեսզի ընկերությունները հասարակությանը իրապեկ դարձնեն իրենց անդամների գնած ու վաճառած արժեթղթերի քանակի մասին ԱԲՀ-ն կարծում է, որ քանի դեռ այդ մարդիկ հաղորդակից են ընկերության գաղտնիքներին, ինչը նրանց վերածում է «յուրայիններ» ապա նրանց առևտուրը կարող է ցույց տալ մյուս ներդրողներին ընկերության ապագայի նկատմամբ տածած հավատի աստիճանը Այս օրենքները ինչ որ չափով հաջողություն ունեցան բորսաներում գների կառավարմանն ուղղված խարդախություններն ու գաղտնի գործարքները կանխելու հարցում

ԱԲՀ-ն իր գոյության վերջին տարիներին ստանձնել է կորպորացիաների քաղաքականության վերահսկողության պատասխանատվությունը՝ մասնավորապես հաշվետվություն պահանջելով նրանցից այն ապօրինի վճարումների մասին, որ նրանք տալիս են քաղաքական գործիչներին կամ այլոց՝ գնելու վերջիններիս աջակցությունը Այն, ինչ շատ երկրներում հնարավոր է համարել սովորական գործարք, Ամերիկայում որոշ դեպքերում ապօրինի է Կոնգրեսը հանձնարարել է ԱԲՀ-ին հետամուտ լինել, որ ամերիկյան կորպորացիաները հետևեն գործարարության ամերիկյան բարոյական նորմերին, անգամ երբ նրանք իրականացնում են իրենց գործունեությունը մեկ այլ երկրում ԱԲՀ-ն այնպիսի գործակալության լավ օրինակ է, որն ստեղծվել է, որպեսզի ձեռնարկատիրության կարգավորման միջոցով պաշտպանի Ամերիկայի հասարակության շահերը

«ՍԵՎ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ»

1987թ հոկտեմբերի 17 ին, երկուշաբթի օրը, արժեթղթերի գինը սրընթաց ընկավ ամբողջ աշխարհի բորսաներում Դոու-Ջոունսի արդյունաբերական միջինը (որը Միացյալ Նահանգներում բորսաների գործունեության հիմնական չափանիշն է) ընկավ 508.32 նիշով և կանգ առավ 1 738 42-ի վրա 1914 թ ի վեր մեկ օրում այս 22 տոկոսով անկումը խոշորագույնն էր Նախագահական հանձնաժողով ստեղծվեց քննելու այս փլուզման պատճառները և երկուսն էլ՝ և՛ այդ հանձնաժողովը, և՛ ԱԲՀ-ն, հաշվետվություններ տվեցին

Դա մասամբ բացատրվեց ներդրողների մտավախություններով՝ ֆեդերալ բյուջեի ու միջազգային առևտրի պակասորդների հանդեպ ԱՄՆ-ի ֆինանսների նախարարի մեկնաբանությունները, հավանաբար, նույնպես նպաստեցին նա քննադատել էր տնտեսական արտաքին քաղաքականությունը և ակնարկել, որ Ռեյգանի վարչակարգը

Է՛լ ավելի կիջեցնի դոլլարի փոխանակային արժեքը մյուս տարադրամների համեմատությամբ Սակայն շատ վերլուծողների, ինչպես նաև նախագահական հանձնաժողովի կարծիքով գլխավոր գործոնը ծրագրավորված առևտուրն էր՝ Ուոլ-Ստրիտի մի վերջին նվաճումը, երբ համակարգիչները ծրագրավորում են որոշակի պարագաներում ավտոմատ պատվերներ տալը բաժնետոմսերի մեծածավալ առուծախի համար

Շուկան վերահսկելու լիապորությամբ օժտված հանձնաժողովը, որը հայտնի էր որպես Բրեդիի հանձնաժողով, նույնպես քննադատեց Նյու Յորքի արժեթղթերի բորսայի «մասնագետներին» Այդ դրամ վաստակողները, ասաց հանձնաժողովը, չեն կատարել իրենց պարտքը ու չեն դարձել վերջին հույս ու ապավեն գնորդներ, և «քմահաճ» վերաբերմունք են դրսևորել փոքր ներդրողի նկատմամբ ԱԲՀ-ն միացավ ծրագրավորված առևտրի ու բորսաների մասնագետների դեմ ուղղված մեղադրանքներին ու ներդրողի հոգեբանության մեջ տեղ գտած բացասական փոփոխությանը Երկուսն էլ՝ թե՛ Բրեդիի հանձնաժողովը, թե՛ ԱԲՀ-ն, կոչ արեցին կարգավորիչ գործունեության ընդլայնման

1988 թ փետրվարի 4-ին Նյու Յորքի արժեթղթերի բորսան ապահովության երաշխիքներ հաստատեց, որոնք արգելում էին իրեն էլեկտրոնային համակարգերի պատվերների կիրառումը ծրագրավորված առևտրում, երբ Դոու-Ջոունսի արդյունաբերական միջինը աճում էր կամ էլ ընկնում 50 նիշով մեկ օրվա ընթացքում

Այդ նույն միջոցին բորսան ապաքինվեց ու նորից սկսեց վերընթաց շարժումը 1990 թթ սկզբին Դոու-Ջոունսի արդյունաբերական միջինը աճեց հասավ 3 000-ի Սակայն բորսաները ծայր աստիճան անկայուն են, և ակնկալվում է, որ ժամանակի ընթացքում լայնածավալ տատանումները շարունակվելու են

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՈՒՐՎԱԳԾԵՐԸ

ՄԱՍ ՎԵՑԵՐՈՐԴ

VI

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ



Ո՞րն է ֆեդերալ կառավարության դերը ամերիկյան տնտեսության մեջ Ինչպիսի՞ն այն պետք է լինի Թեպետ Միացյալ Նահանգների տնտեսությունը հիմնված է առավելապես ապատ ձեռներեցության և ապատ մրցակցային շուկայի միջոցով տնտեսական գործունեության կազմակերպման հայեցակարգի վրա, սակայն կառավարությունը ավանդաբար միջամտել է յուրահատուկ տնտեսական նպատակներ իրագործելու միտումով, ներառյալ մենաշնորհի սահմանափակումը, սպառողի պաշտպանությունը, չքավորների, հաշմանդամների ու ծերերի ապահովումը և միջավայրի պաշտպանությունը

Կառավարության միջամտությունը Միացյալ Նահանգների տնտեսության մեջ սկսեց արընթաց աճել 1930-ական թթ Մեծ ճգնաժամից հետո, շարունակեց աճել ամբողջ 1960-ական թթ ընթացքում և նույնիսկ 1970-ական թթ Բայց սկսած 1970-ական թթ վերջերից մեծ թվով ամերիկացիներ սկսեցին հարցականի տակ դնել այն, ինչը դիտում էին որպես կառավարության ավելորդ վերահսկողություն 1980-ական թթ շեմին այս սաստկացող վիճաբանության հետևանքը եղավ կառավարության վերահսկողության մասնակի թուլացումը արդյունաբերության որոշ ճյուղերում, ներառյալ հեռուստահաղորդակցությունը, ավիագծերն ու երկաթուղիները Սակայն 1990-ական թթ սկզբներին արդյունաբերության այդ ճյուղերի վերահսկողության թուլացման ծախսերն ու օգուտները դեռ վեճի առարկա էին, մինչդեռ արդյունաբերության այլ ճյուղերի վերաբերյալ անհանգստություն կար՝ արդյո՞ք կարիք չկա խստացնել կառավարության վերահսկողությունը դրանց նկատմամբ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ Ի ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՉՄԻՋԱՄՏԵԼՈՒ ՍԿԶԲՈՒՆՔԻ

Արդեն 200 տարուց ավելի է, ինչ ձեռնարկատիրության հարցում Ամերիկայի կառավարության քաղաքականությունը տեսականորեն հիմնված է եղել չմիջամտելու (laissez-faire) սկզբունքի վրա Ֆրանսերենից դա թարգմանվում է որպես «թույլ տուր, որ անեն ինչպես ուզում են» այդ սկզբունքը տառացիորեն գործողությունների ապատություն է ընձեռում մասնավոր ձեռնարկատերերին 18-րդ դարի շոտլանդացի տնտեսագետ Ադամ Սմիթը խոր ազդեցություն ունեցավ այդ գաղափարի, ինչպես նաև անուղղակիորեն՝ կապիտալիզմի կարգացման վրա Ամերիկայում Նա պնդում էր, որ մասնավոր անձանց սեփական շահերից բխող գործողությունները, միասին վերցրած, գործում են հօգուտ հասարակության բարօրության, եթե շուկայում առկա է մրցակցությունը Թեպետ Սմիթը խրախուսում էր կառավարության միջամտության որոշ ձևեր, հիմնականում՝ մշակելու և հաստատելու ապատ

ձեռներեցության հիմնական սկզբունքները, բայց մերկանտիլիզմի տեսության քննադատությունն ու չմիջամտելու սկզբունքի պաշտպանությունն էր, որ նրան հանրաճանաչ դարձրեց Ամերիկայում

Սակայն նվիրվածությունը չմիջամտելու սկզբունքին չէր խանգարում մասնավոր ձեռնարկատերերին բակում առիթներով դիմելու Միացյալ Նահանգների կառավարության օժանդակությանը 19-րդ դարում երկաթուղային ընկերություններին շնորհեցին հող և լրավճարներ Արդյունաբերության այն ճյուղերը, որոնք ստիպված էին դիմադրել իրենց օտարերկրյա ուժեղ մրցակիցներին, դիմում էին կառավարությանը՝ պահանջելով ուժեղացնել հովանավորական քաղաքականությունն առնտրում Ամերիկայի գյուղատնտեսությունը, որը գրեթե բացառապես մասնավոր ձեռքերում է, բակմաթիվ ձևերով է օգտվել կառավարության օժանդակությունից Արտադրողները, արհմիությունները, բանկիրները և այլք ձգտել են ստանալ կառավարության օժանդակությունը բակում ձևերով՝ սկսած հարկերի կրճատումներից, վերջացրած ուղղակի լրավճարներով

Այլ կերպ ասած՝ չմիջամտելու տեսության և յուրահատուկ տնտեսական նպատակների իրականացման համար պահանջվող կառավարության որոշակի օգնության ձևերի միջև մշտապես փոխզիջումներ են արվել Այնուամենայնիվ, շատ գործարար մարդկանց կարծիքով կառավարությունը չափից ավելի է միջամտում Նրանց կարծիքով այն կանոնների մի մասը, որոնց իրենք պետք է հետևեն, ավելորդ է Բացի այդ նրանք ասում են, որ կառավարության պահանջները բավարարելու համար լրացվող բլանկները դրամ արժեն և նպաստում են ապրանքների ու ծառայությունների գնի բարձրացմանը Սակայն շատ ուրիշ ամերիկացիներ կարծում են, որ կառավարության խիստ վերահսկողությունը անհրաժեշտ է, որպեսզի կանխվեն շահույթն ավելացնելու նպատակով ձեռնարկատերերի կողմից աշխատողներին ու սպառողներին խաբելու կամ վնաս հասցնելու փորձերը Այս երկու կարծիքների կողմնակիցներին էլ հաճախ պիտակավորում են ժամանակակից Ամերիկայի քաղաքականության տեսանկյունից Այսինքն՝ նրանց, ովքեր ընդհանուր առմամբ ողջունում են մասնավոր նախաձեռնությունը և դժկամ են կառավարության միջամտության հարցում, որակում են որպես պահպանողականների, իսկ նրանց, ովքեր կողմ են մասնավոր նախաձեռնությանը, բայց ավելի բարյացակամ են և, թերևս, խանդավառությամբ են ընդունում կառավարության միջամտությունը, որակում են որպես ապատականների

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ԱՃԸ

Ամերիկյան տնտեսության մեջ միշտ չէ, որ պահպանվել է հավասարակշռությունը կառավարության միջամտելու և չմիջամտելու միջև Ավելի շուտ պետության կազմավորման վաղ շրջաններում կառավարության ղեկավարները գրեթե բացարձակապես հրաժարվում էին գործարար աշխարհը վերահսկելուց Եթե հաշվի չառնենք այն օժանդակությունը, որ կառավարությունը ցուցաբերել է գյուղատնտեսությունը կարգացնելու համար ու այն ֆինանսական լրավճարները, որ տրվել են երկաթուղային համակարգը կառուցող ընկերություններին 19 րդ դարի վերջերին, ապա կարելի է ասել, որ կառավարությունը չնչին դեր է խաղացել ձեռնարկատիրական գործունեության մեջ

Սակայն 20-րդ դար թևակոխելուց առաջ Միացյալ Նահանգների արդյունաբերության մեջ միավորման շնորհիվ տեղ գտած խորացող դասակարգումը խթանեց տնտեսական բարեփոխումները պաշտպանող քաղաքացիների համազգային շարժման աճը Այդ բարեփոխումների կողմնակիցներից շատերը սերում էին բուն գործարար շրջաններից, հատկապես մանր ձեռնարկատերերից Այս շարժումն իր հետ բերեց կառավարության միջամտության պահանջ՝ տնտեսությունը վերահսկելու նպատակով 1890 թ Կոնգրեսն ընդունեց Շերմանի հակամենաշնորհատիրական օրենքը այն ուղղված էր մրցակցությունն ու ազատ ձեռներեցությունը վերականգնելուն՝ խոշոր ձեռնարկատիրական միավորումները՝ մենաշնորհները, տրոհելու միջոցով 1906 թ օրենքներ ընդունվեցին, որոնք պետք է ապահովեին սննդի ու դեղորայքի ստույգ պիտակավորումը, ինչպես նաև մսի ստուգումը վաճառքից առաջ 1913 թ կառավարությունը հիմնադրեց ֆեդերալ բանկային մի նոր համակարգ՝ Ֆեդերալ ռեզերվային համակարգը, որը նպատակ ուներ կարգավորելու երկրի դրամի քանակն ու որոշ չափով վերահսկելու բանկային գործունեությունը

Կառավարության դերի մեջ տեղի ունեցած խոշորագույն փոփոխությունները նախագահ Ֆրանկլին Դ Ռուզվելտի «Նոր կուրս» ծրագրի մասն էին կազմում, որը նրա պատասխանն էր Մեծ ճգնաժամին Այդ ժամանակաշրջանում՝ 1930-ական թթ, Միացյալ Նահանգներն ապրեց վատթարագույն ճգնաժամը և ունեցավ գործազրկության ամենաբարձր մակարդակը երկրի պատմության մեջ Դժվարությունները մեղմացնելու համար նախագահ Ռուզվելտն ու Կոնգրեսը ընդունեցին շատ նոր օրենքներ, այդ թվում՝ արժեթղթերի վաճառքը կարգավորող, բանվորական արհմիություններ ստեղծելու իրավունքը ճանաչող և աշխատավարձի ու աշխատանքային օրը սահմանող սակացույցներ Բացի դրանից, ավելի խիստ վերահսկողություն սահմանվեց սննդամթերքի, դեղորայքի ու կոսմետիկայի արտադրության ու վաճառքի վրա

1930 թ. ի վեր ընդունված բազմաթիվ օրենքներն ու որոշումները կերպարանափոխեցին ամերիկյան տնտեսությունը. Փաստորեն Միացյալ Նահանգներում ոչ մի բան չի կարելի գնել, որ, այսպես թե այնպես, ենթարկված չլինի կառավարության վերահսկողությանը. Մենդամթերք արտադրողները պետք է ստույգ նշեն, թե ինչ է գտնվում պահածոյի տուփում, բանկայում կամ էլ փաթեթում. Ոչ մի դեղ չի կարելի վաճառել, մինչև որ որևէ ֆեդերալ գործակալություն մանրակրկիտ չստուգի ու թույլ չտա. Զեռնարկություններից շատերը պետք է ստուգվեն կառավարության կողմից՝ պարզելու համար, թե արդյոք համապատասխանու՞մ են առողջապահության ու տեխնիկական անվտանգության պահանջներին. Ավտոմեքենաները պետք է կառուցվեն անվտանգության պահանջներին համապատասխան ու պետք է ապահովված լինեն աղտոտման չափը վերահսկող սարքերով. Սպրանքների գները պետք է հատուկ նշված լինեն, և գովազդը պետք է ակնիվ բնույթ կրի. Սրանք ընդամենը այն միջոցներից մի քանիսն են, որոնցով կառավարությունը ներկայումս պաշտպանում է սպառողին.

Օրենքներն ու որոշումները բազում ձևերով պաշտպանում են նաև բանվորներին. Օրենքն արգելում է խտրականությունը աշխատանքի վարձելիս, ինչպես նաև թույլ չի տալիս մանկական աշխատուժի կիրառումը շատ բնագավառներում և կանոններ է սահմանում այն բնագավառների համար, որտեղ դա թույլատրելի է (օրինակ՝ դերասանական արվեստում). բացի դրանից, օրենքը պահանջում է պահպանել աշխատանքային նորմալ պայմաններ, պաշտպանում է վարձակալների հետ համաձայնության գալու նպատակով բանակցելու անկախ արհմիությունների իրավունքը, ինչպես նաև խաղաղ գործադուլներ անցկացնելու իրավունքը.

Ավելացնենք, որ 20-րդ դարում ֆեդերալ կառավարության միջամտությունը Ամերիկայի տնտեսության մեջ այնքան է ընդլայնվել, որ ընդգրկում է չքավորների, ծերերի ու անդամալույծների տնտեսական պահանջները բավարարելու, ինչպես նաև բնությունը պաշտպանելու կարևոր ծրագրեր.

ՖԵԴԵՐԱԼ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՋԱՆՔԵՐԸ ՄԵՆԱՇՆՈՐՀՆԵՐԸ ՎԵՐԱՀՍԿԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ

Տնտեսական չարաշահումներից մեկը, որը կառավարությունը, ելնելով հասարակության շահերից, փորձեց շտկել առաջին հերթին, ֆիրմաների չափազանց խոշորացումն էր. 19-րդ դարի վերջին, 20-րդ դարի սկզբին Միացյալ Նահանգներն ապրեց տնտեսության արագ խոշորացման շրջան, որին բնորոշ էր փոքր ֆիրմաների միաձուլումը՝ խոշորացման նպատակով. Բազմաթիվ մեծ ընկերություններ համաձայնության էին գալիս առաջարկը սահմանափակելու ու գները բարձրացնելու

վերաբերյալ, համաձայն նրանք գործից դուրս էին մղում թույլ ֆիրմաներին՝ շարունակ իջեցնելով գները, մինչև որ մրցակիցները սնանկանում էին, թեև այդ ընթացքում վնասներ էին կրում Հետո գոյատևած ֆիրմաները տեր էին դառնում նախկին մրցակիցների ունեցվածքին ու բարձրացնում գները

Ստիմանաբար է՛լ ավելի շատ ամերիկացիների սկսեց անհանգստացնել ֆիրմաների շարունակվող խոշորացումը, և նրանք սկսեցին պահանջել կառավարությունից, որ միջոցներ ձեռք առնի Վերջապես 1890 թ կառավարությունն արձագանքեց այդ պահանջներին՝ ընդունելով Շերմանի հակամենաշնորհատիրական օրենքը, որից հետո որևէ անձի կամ ֆիրմայի կողմից առևտրի, համաձայնագրերի մենաշնորհումը և կամ միանալը, գաղտնաբար համաձայնվելով առևտրի սահմանափակման վերաբերյալ, դարձավ ապօրինի

1900-ական թթ սկզբին կառավարությունը կիրարկեց այդ օրենքը՝ տրոհելու Ստանդարդ օյլ ընկերությունը և շատ ուրիշ խոշոր ֆիրմաներ, որոնք չարաշահել էին իրենց տնտեսական իշխանությունը Սակայն դատարանները այս օրենքի կիրարկման հարցում այնպիսի որոշումներ ընդունեցին, որ փաստորեն նեղացրին ապօրինության շրջանակները՝ հասցնելով այն մինչև առևտրի «չափից ավելի» սահմանափակումը Ընկերությունը կարող էր տիրել մի որևէ արդյունաբերական ճյուղի արտադրանքին կամ վերահսկել այն, բայց եթե դատարանը այդ գործողությունները չափավոր համարեր, ապա ընկերության տրոհման անհրաժեշտությունը վերանում էր Եվ բազմաթիվ ընկերություններ շարունակում էին աճել՝ ձուլվելով մրցակից ֆիրմաներին կամ գնելով դրանք

1914 թ Կոնգրեսը արձագանքեց տնտեսության շարունակվող խոշորացմանը՝ ընդունելով երկու օրենք, որոնք նախատեսված էին ամրապնդելու Շերմանի հակամենաշնորհատիրական օրենքը՝ Կլեյտոնի հակամենաշնորհատիրական և Առևտրի ֆեդերալ հանձնաժողովի օրենքները Կլեյտոնի հակամենաշնորհատիրական օրենքը փորձ էր ավելի ստույգ սահմանելու, թե ինչ է նշանակում առևտրի սահմանափակումը Այդ օրենքն ապօրինի է համարում գների այնպիսի սահմանումը, որը խտրական առավելություն է տալիս որոշ գնորդների մյուսների նկատմամբ արգելում է այնպիսի համաձայնագրեր կնքել, որոնցում արտադրողներն իրենց ապրանքը վաճառում են միայն այն առևտրականներին, որոնք համաձայն են չվաճառել ախոյան ֆիրմայի արտադրանքը արգելում է միավորման որոշ ձևեր և այլ գործողություններ, որոնք կարող են թուլացնել մրցակցությունը Առևտրի ֆեդերալ

հանձնաժողովի օրենքը ստեղծեց կառավարական հանձնաժողով, որի գործունեությունն ուղղված էր անապնիվ ու հակամրցակցային բնույթի գործողությունների դեմ ձեռնարկատիրության բնագավառում

1912 թ Յունայտիդ Ստեյտս ստիլ կորպորացիան, որը վերահսկում էր Միացյալ Նահանգների պողպատի ամբողջ արտադրանքի կեսից ավելին, մեղադրվեց պողպատի արդյունաբերությունում պողպատի գները սահմանելու մենաշնորհացման մեջ Սակայն այդ գործի դատավարությունը շարունակվում էր մինչև 1920 թ Միացյալ Նահանգների Գերագույն դատարանը այդ հարցի պատմության մեջ պատմական որոշում կայացրեց, որի համաձայն Յունայտիդ Ստեյտս ստիլ կորպորացիան մենաշնորհ չէր, քանի որ առևտրի «չափից ավելի» սահմանափակում տեղի չէր ունեցել Մանրակրկիտ ու նուրբ տարբերություն դրվեց ֆիրմայի խոշորության և մենաշնորհ հանդիսանալու միջև

Համաշխարհային II պատերազմից ի վեր կառավարությունը հակամենաշնորհատիրական եռանդուն պայքար է մղել՝ բազում մեղադրանքներ հարուցելով մենաշնորհատիրության դեմ Հետևյալ չորս կարևոր օրինակները կարող են պատկերացում տալ կառավարության գործադրած մեծ ջանքերի ծավալի մասին

1948 թ Պորտլանդի ցեմենտի գործի դատավարությունն ավարտվեց Գերագույն դատարանի որոշմամբ, որն արգելում էր որոշակի վայրում գտնվող տվյալ գործարանից գանձվելիք փոխադրավարձը «միջինով» մտցնել գնացուցակ՝ անկախ փոխադրման փաստացի արժեքից

1957 թ Գերագույն դատարանը որոշեց, որ Դյուպոն ընկերությունը՝ այդ հսկայական քիմիական կոնցեռնը, պետք է հրաժարվի իր Ջեներալ մոտորսի բաժնետոմսերի փայից, որովհետև Ջեներալ մոտորսում Դյուպոնի հիմնական բաժնետեր լինելը հանգեցրել է վերջինիս գերիշխանությանը

1961 թ էլեկտրասարքավորումների արդյունաբերությունը մեղավոր ճանաչվեց մրցակիցներին ճնշելու միտումով գներ հաստատելու մեջ Ընկերությունները համաձայնեցին սպառողներին հատուցել նրանց կրած խոշոր վնասները, և վարչակազմի անդամներից մի քանիսը բանտ նստեցին կանխամտածված ապօրինի գներ սահմանելու համար

1982 թ 13 տարի տևած դատավարությունը ընդդեմ Ամերիկյան հեռախոսային և հեռագրական ընկերության (ԱՀՀ) ավարտվեց, և Արդարադատության նախարարությունը պարտադրեց ԱՀՀ-ին հրաժարվել իր հեռախոսային համակարգի տեղական նշանակության 22 ընկերություններից Դրան ի հատուցումն, ԱՀՀ-ին թույլատրեցին ընդարձակվել դեպի նախկինում իրեն արգելված բնագավառները, ներառյալ տվյալների մշակումը, հեռախոսային ու համակարգչային

սարքավորումների վաճառքը, նաև համակարգչային հաղորդակցության սարքերը

ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Միայն վերջերս էր, որ ֆեդերալ կառավարությունը բազմաթիվ օրենքներ ընդունեց, որպեսզի հիմնավորի իր միջամտությունը տնտեսության մեջ՝ բնությունը պաշտպանելու նպատակով Չնայած Միացյալ Նահանգների միջավայրի պաշտպանությունը վերահսկող առաջին կարևոր օրենքն ընդունվել է 1899 թ, բայց այն գրեթե երբեք չի կիրարկվել Ըստ այդ օրենքի՝ ցանկացած հեղուկ թափոններ կոյուղու միջոցով պետք է լցվեն նավարկելի ջրերը, այլապես դատապարտելի կլինեն օրենքով Հաջորդ 60 տարիների ընթացքում միջավայրի աղտոտումը վերահսկող մի քանի օրենք ևս ընդունեցին

Սակայն 60-ական թթ սկսած, գնալով է՛լ ավելի մեծ թվով ամերիկացիներ էին արտահայտում իրենց մտահոգությունը աշխարհի ու իրենց ժողովրդի վրա արդյունաբերության աճի թողած հետևանքների վերաբերյալ Խոշոր քաղաքներում «սմոգի» առաջացման ու օդի աղտոտման այլ ձևերի համար սկսեցին մեղադրել ճանապարհներին երթևեկող օրավուր ավելացող մեքենաների շարժիչների արտանետումները Բնապաշտպաններից շատերը բացեիբաց առաջարկում էին որոշ չափով կոհաբերել տնտեսական աճը՝ հանուն միջավայրի պաշտպանության Շուտով միջավայրի աղտոտումը վերահսկող բազմաթիվ օրենքներ ընդունվեցին Ամենաառաջիններից էր 1963 թ ընդունված Մաքուր օդի օրենքը իր հետագա ուղղումներով, որոնք նպատակ ունեին համապատասխան միջոցառումների շնորհիվ նվազեցնել մեքենաների արտանետումների պատճառով առաջացած օդի աղտոտումը Միջավայրի աղտոտումը վերահսկելու նպատակով ընդունված մյուս գլխավոր օրենքների թվին են պատկանում 1972 թ Մաքուր ջրի և 1984 թ Ապահով խմելու ջրի օրենքները

1970 թ դեկտեմբերին բնապաշտպանները խոշոր հաջողության հասան ստեղծվեց Միացյալ Նահանգների միջավայրի պաշտպանության գործակալությունը (ՄՊԳ)՝ ի մի բերելով մեկ գործակալությունում միջավայրը պաշտպանելու բազում ֆեդերալ ծրագրերը Սրանով վերջ տրվեց հասարակության երկարամյա վեճերին, թե ինչպես կարելի է լավագույն ձևով պաշտպանել քաղաքացիների առողջությունն ու բարեկեցությունը արդյունաբերության վտանգավոր երկրորդային արտադրանքներից Մինչ այդ մեծ թվով ամերիկացիներ բողոքում էին միջավայրը աղտոտելու հարցում կառավարության վերահսկողության բացակայության դեմ, ինչպես օրինակ՝ արդյունաբերական ծխից, բաց աղբակույտերից, անմշակ կեղտաջրերից ու քիմիական

թափոններից օդը, ջուրն ու հողը անպաշտպան թողնելու դեմ

ՄՊԳ-ի պարտականությունն է վերահսկել ու միջոցներ ձեռնարկել նվազեցնելու ջրի ու օդի աղտոտումը, ինչպես նաև ապահովել հասարակության պաշտպանությունը պինդ թափոններից, պեստիցիդներից, աղմուկից ու ճառագայթումից Գործակալությունը լիազորված է օժանդակելու նահանգային ու տեղական իշխանություններին, մասնավոր ու հասարակական խմբավորումներին և ուսումնական հաստատություններին՝ հետազոտություններ վարել այդ բնագավառում, ինչպես նաև համաձայնեցնել նրանց ջանքերը աղտոտման դեմ մղած պայքարում Այն սահմանում ու պարտադրում է աղտոտման հանդուրժելի սահմանները և սահմանում ժամկետներ, որպեսզի աղտոտման համար պատասխանատուները կարողանան համապատասխանեցնել իրենց գործունեությունը պարտադիր չափանիշներին Իսկ քանի որ այդ չափանիշները այնքան էլ վաղուց չեն հաստատվել, արդյունաբերական ձեռնարկություններին բավականաչափ ժամանակ է տրվում, երբեմն տարիներ, այդ հարցերի կարգավորման համար ՄՊԳ տարածքային վարչությունները մշակում, առաջարկում ու կենսագործում են տվյալ տարածքում միջավայրի պաշտպանությունն ապահովող վավերացված համապարփակ ծրագրերը Տվյալների ստուգումները վկայում են իրավիճակի որոշ բարելավման մասին օրինակ՝ օդի ամեն կարգի աղտոտման նվազում է դիտվում տառացիորեն ամբողջ երկրով մեկ

Սակայն 1990 թ օդի աղտոտման դեմ պայքարում ավելի մեծ ջանքերի կարիք էր զգացվում, և Մաքուր օդի օրենքը Կոնգրեսը լրացրեց կարևոր ուղղումներով, որոնք ստորագրեց նախագահ Ջորջ Բուշը Այլ օրենքների շարքում օրենսդիր մարմինները հաստատեցին մի նոր, շուկայական հարաբերությունների վրա հիմնված համակարգ, որը նախատեսված էր ապահովելու ծծմբի երկօքսիդի արձակման նվազում, որը հայտնի «թթվային անձրևների» պատճառ է հանդիսանում Կարծում էին, որ այդ աղտոտումը լուրջ վնաս է հասցնում անտառներին ու լճերին, հատկապես Միացյալ Նահանգների արևելյան մասում, ինչպես նաև հարևան Կանադայում

ՎԵՐԱՀՍԿՈՂ՝ ՊԱՀԱՊԱՆ ՇՆԵՐ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1990-ական թթ շեմին Ամերիկայում Կոնգրեսի կողմից լիազորված ֆեդերալ վերահսկող գործակալությունների թիվը անցնում էր 100-ից Այդ բոլոր գործակալությունները մեկ ընդհանուր առանձնահատկություն ունեն՝ նրանք նախատեսված են հասարակության շահերը պաշտպանելու համար նրանց վերահսկիչ գործունեության ոլորտը շատ լայն է՝ առևտրից մինչև հաղորդակցություն,

միջուկային էներգիայից մինչև արտադրանքի ապահովություն և աշխատանքի հնարավորություն

Կառավարության գործադիր, օրենսդիր և դատական մարմինները ազդում են այդ գործակալությունների գործունեության վրա Դրանք ղեկավարվում են խորհրդարանական հանձնաժողովների կամ վարչությունների կողմից, որոնց կազմավորման պայմանն է երկու հիմնական քաղաքական կուսակցությունների հավասար ներկայացուցչությունը Խորհրդարանական հանձնաժողովների անդամներին նշանակում է նախագահը և հաստատում Սենատը որոշակի ժամանակաշրջանի համար՝ սովորաբար 5-7 տարի տևողությամբ Կոնգրեսը վերահսկում է, թե ինչպես են գործակալությունները ծախսում իրենց հատկացված գումարները, իսկ դատարանները քննում են վիճահարույց որոշումները Յուրաքանչյուր գործակալություն համախ 1000-ից ավելի հաստիքային ծառայող ունի

Կողմնակի դիտողին կարող է թվալ, թե այդ գործակալությունները դատարանի դեր են կատարում Գործակալությունները դատ հիշեցնող հրապարակային քննություններ են անցկացնում, երբ կորպորացիաների ծառայողները կամ այլ պաշտոնյաներ մեղադրվում են ֆեդերալ օրենքների կամ կանոնների խախտման մեջ Դատարանի նման մեղադրյալներին ներկայացնում են նրանց փաստաբանները Ֆեդերալ դատարանը կարող է վերանայել կամ չեղյալ հայտարարել գործակալության ցանկացած որոշում Ամեն տարի բոլոր գործակալությունները միասին 100 000-ից ավելի որոշումներ են կայացնում, շատ ավելի, քան բոլոր ֆեդերալ դատարանները միասին վերցրած Այդ որոշումների մեծ մասը ներգրավված կողմերը չեն վիճարկում

Օրենքը թույլ չի տալիս նախագահին ազդել գործակալությունների վրա, ինչպես նաև տեսականորեն գործակալություններին թույլ չի տալիս վարել կողմնակալ քաղաքականություն Սակայն վերահսկիչ գործակալությունների քննադատները հանդես են գալիս մեղադրանքներով, թե իբր Կոնգրեսի անդամները իրենց ընտրողների անունից երբեմն ճնշում են գործադրում խորհրդարանական հանձնաժողովի անդամների վրա, կամ որ նրանք պաշտպանում են այն ձեռնարկությունների շահերը, որոնց կոչված են վերահսկելու Դրան գումարվում է այն հանգամանքը, որ գործակալության պաշտոնյաները իրապես են դառնում այն բնագավառներին, որ իրենք վերահսկում են, և պարտականությունների կատարման ժամկետը լրանալուն պես նրանց բարձր վարձատրվող աշխատանքներ են առաջարկում այդ բնագավառներում Բացի այդ, ոմանք բողոքում են, որ ձեռնարկատիրության վերաբերյալ կառավարության հրահանգները արձակվելու պահին համախ

արդեն ուշացած են լինում, քանի որ ձեռնարկությունների պայմանները արագ են փոխվում

Ըստ երևույթին, այս գործոններից մի քանիսը իրենց դերը խաղացին Ամերիկայի խնայողությունների ու վարկերի (ԽՎ) համակարգի նախ անդամալուծմանը, ապա գրեթե ոչնչացմանը նպաստող դեպքերի շարքում Իսկ դա մի համակարգ էր, որ 1980-ական և 1990-ական թթ սկզբին Ամերիկայի «խնայողության» արդյունաբերության անբաժանելի տարրն էր կազմում Ավանդաբար ԽՎ-ն հավաքում էր խնայողությունների շնորհիվ մարդկանց ունեցած փոքր ավանդները և երկարաժամկետ գրավ դնում տուն գնելու համար Այդ երևույթը համատարած բնույթ ուներ գրեթե բոլոր ամերիկացիները ինչ-որ ժամանակ ֆինանսավորվել են ԽՎ-ի կողմից՝ տուն գնելու համար Տարիներ շարունակ ԽՎ համակարգում ներդրված ավանդներից ստացվող տոկոսադրույքը մնում էր ցածր, բայց միլիոնավոր ամերիկացիներ շարունակում էին իրենց դրամը ներդնել ԽՎ համակարգում, որովհետև այդ ներդրումները ամենաապահովն էին համարվում Խնայողությունների ու վարկերի ներդրման ֆեդերալ կորպորացիան (ԽՎՆՖԿ)՝ ԱՄՆ-ի պետական գործակալությունը, երաշխավորում էր մինչև 40 000 դոլլարի ավանդները, իսկ ԽՎ համակարգում արվող նման ներդրումները խստիվ վերահսկվում էին՝ հնարավոր վտանգից խուսափելու նպատակով

Սակայն 1960-ական թթ սկսած ընդհանուր առմամբ տոկոսադրույքները սկսեցին աճել և 1980-ական թթ այնքան բարձր էին, որ ԽՎ գործակալություններից շատերը ավանդների համար տարվող պայքարում դարձան անմրցունակ ու հայտնվեցին ծանրագույն ֆինանսական կացության մեջ Արձագանքելով դրանց առջև ծառացած խնդիրներին՝ 1980-ական թթ կառավարությունը սկսեց ԽՎ-ի (ինչպես նաև բանկերի) կողմից տրվող ամենաբարձր տոկոսադրույքների աստիճանական իջեցումը՝ միաժամանակ բարձրացնելով երաշխավորված ավանդների առավելագույն չափը մինչև 100 000 դոլլար Կառավարության այս քայլերի հետևանքը եղան համատարած խոշոր վնասները ԽՎ-ի գրավների թղթապանակում, քանի որ այստեղ տոկոսադրույքները մեծ մասամբ ավելի ցածր էին, քան ԽՎ համակարգը վճարում էր իր ավանդատուներին Նորից արձագանքելով դժգոհություններին՝ Կոնգրեսը պակասեցրեց սահմանափակումները՝ թույլ տալով ԽՎ-ի գործակալություններին զբաղվել անշարժ գույքի վարկավորումով սպառողական, ձեռնարկատիրական և առևտրական ոլորտներում Կառավարության որոշ հրահանգներ, որոնք նախատեսված էին ԽՎ գործակալությունների կապիտալին ներկայացվող անհրաժեշտ

պահանջների վերահսկողության համար, նույնպես մեղմացվեցին Գործից դուրս մնալու երկյուղից ԽՎ գործակալությունները այնպիսի ծայր աստիճան վտանգավոր գործառնություններ ծավալեցին, ինչպիսին է ավանդատուների դրամական ներդրումների շահարկումը անշարժ գույքի ոլորտում շատ դեպքերում՝ տնտեսական անբարենպաստ պայմանների ժամանակ, հատկապես Արևմուտքում, այդ գործառնությունները շահութաբեր չէին Բայց բյուջետային ծլատ ֆինանսավորումն ու վերահսկողության կարևորությունը պակասեցնելու համար գործադրվող քաղաքական ճնշումը միասին հանգեցրին այն բանին, որ վերահսկողության մարմիններն ու անձնակազմը իրենց սուղ հնարավորությունների պատճառով այլևս չէին հասցնում տիրապետել ծավալվող ճգնաժամին Եվ ահա այս թողտվության մթնոլորտում ԽՎ որոշ գործակալությունների տիրացան անբարո մարդիկ, ովքեր թալանում էին իրենց ու ընկերների համար

Տասնամյակի վերջում ԽՎ գործակալություններից շատերը խեղդվեցին սնանկության ճիրաններում 1970 թ գոյություն ունեցած ԽՎ գործակալությունների մոտ կեսը 1989 թ այլևս չկար ԽՎՆՖԿ-ն, որն ապահովագրում էր ավանդատուների դրամը, ինքը դարձավ անվճարունակ Մի քանի տարում ԽՎ համակարգի ճգնաժամը արագ աճեց ու Ամերիկայի պատմության մեջ մտավ որպես ակգային խոշորագույն ֆինանսական խայտառակություն 1989 թ Կոնգրեսն ու նախագահը համաձայնության եկան ու որոշեցին կիրառել հարկատուի կողմից ֆինանսապես երաշխավորվող միջոցառումը, որը հայտնի է որպես Ֆինանսական հաստատությունների բարեփոխումների, առողջացման ու հարկադրական միջոցառումների օրենք (ՖՀԲԱՀՄ) Այդ օրենքի ուժով կառավարությունը 50 միլիարդ դոլլար տրամադրեց փակելու ԽՎ սնանկացած գործակալությունների պարտքերը, ամբողջությամբ վերափոխեց խնայողական հաստատությունների վերահսկողության և օրենսդրական սահմանափակումների համակարգը Հիմնադրվեց կառավարական մի նոր գործակալություն՝ Վարկատու հաստատություններով կբաղվող կորպորացիա (ՎՀԶԿ) անունով, որը պետք է վերացներ անվճարունակ հաստատությունները՝ վճարելով նրանց պարտքերի մի մասը 1990 թ մարտ ամսին այդ նորաստեղծ գործակալությունը կլանեց ևս 78 միլիարդ դոլլար Սակայն ԽՎ բոլոր պարտքերը մարելու համար պահանջվող գումարը աճում էր՝ 1991 թ հասնելով 200 միլիարդ դոլլարի

ԽՎ համակարգի կործանմանը գումարվեցին նաև այն խնդիրները, որոնք բարձր տոկոսադրույքի հետևանքով առաջացել էին այլ ֆինանսական հաստատություններում,

ներառյալ բանկերն ու ապահովագրական ընկերությունները (դրանց մի մասը կամ գործից դուրս էր մնացել, կամ կանգնած էր սնանկանալու վտանգի առաջ) Չնայած ԽՎ համակարգի ճգնաժամի պատճառները բազմաթիվ էին, բայց դրանցից գլխավորը վերահսկողության բացակայությունն էր մասնավորապես՝ չափից ավելի քաղաքական ճնշումը խանգարում էր վերահսկողներին կատարելու իրենց գործը, և դա արվում էր այնպիսի մի ժամանակ, երբ օրենքների խստիվ կիրարկումը ակնհայտորեն կնպաստեր հասարակության շահերի պաշտպանությանը Զարմանալի չէր, որ ամերիկացիների մեծ մասը գալիս էր այն եզրակացության, որ, իհարկե, կառավարության ծանր ձեռքը վերահսկողության մեջ վատ է, բայց կարևոր հարցերի իրականացման մեջ անվճռականությունը, եթե ոչ ավելի, ապա նույնքան վատ է

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃՆ ՈՒ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ

1930-ական թթ, երբ ճգնաժամը ցնցում էր Միացյալ Նահանգները, կառավարությունը սկսեց գործուն կերպով նպաստել տնտեսական աճին ու կայունությանը Դրանում կարևոր դեր խաղաց Ջոն Մեյնարդ Կեյնիսը՝ անգլիացի մի տնտեսագետ, որը տնտեսական ճգնաժամերը վերլուծելու ու բացատրելու նոր եղանակ էր մշակել Նրա «Աշխատանքի, տոկոսի ու դրամի ընդհանուր տեսություն» աշխատությունը (1936) երևի թե հեղաշրջող ազդեցություն ունեցավ Ամերիկայի տնտեսական գաղափարների վրա Կեյնիսն ուսումնասիրել է եկամտի, խնայողությունների, սպառման, ներդրումների ու տոկոսադրույքի փոխհարաբերությունները Նրա կարծիքով տնտեսական համակարգի լճացումը կամ ընդլայնումը որոշվում է համակարգում մասնավոր ներդրումների ծավալով Կեյնիսը առաջիններից մեկն էր, որ պնդում էր, թե կառավարության հատուկ պարտականությունն է ակտիվորեն ազդել տնտեսության վրա դրամական քաղաքականության միջոցով Նա կառավարության քաղաքականությունը ծախսերի ու վարկերի կրճատման հարցում դիտում էր որպես հիմնական միջոց՝ իրականացնելու ընդլայնման ու կայունության երկակի նպատակ

Նախագահ Ֆրանկլին Դ Ռուզվելտի «Նոր կուրս» ծրագիրն ընդգրկում էր Կեյնիսի գաղափարներից շատերը Համաշխարհային II պատերազմից հետո և՛ Միացյալ Նահանգները, և՛ շատ ուրիշ երկրներ համընդհանուր կբաղվածության քաղաքականության կողմնակիցներ դարձան 1930-ական թթ Մեծ ճգնաժամի տարիներին Կեյնիսն ասաց, որ ժողովուրդները պետք է «միջոցներ հայթայթեն նորից բարգավաճելու համար» Նա հավատացած էր, որ գործարարներին պետք է աշխատանք տալ, և որ եկամուտը

պետք է վերաբաշխել այնպես, որ աղքատներն էլ ծախսելու դրամ ունենան
Այս տեսակետով կառավարությանը այնքան մեծ դեր էր վերագրվում տնտեսությունը կարգավորելու հարցում, որպիսին մինչ այդ ընդունելի չի եղել 1930-ական թթ սկսած Ամերիկայի տնտեսագետների պառակտման հիմքում ընկած է եղել կեյնսյան վերլուծության հիմնավորվածության գնահատականը 1970-ական, 1980-ական թթ կեյնսյան քաղաքականությունը սաստիկ քննադատվեց, որովհետև այդ քաղաքականությունը, իբրև թե, պատասխանատու էր «արժեզրկման» ժամանակաշրջանին նպաստելու համար, ժամանակաշրջան, որն իր մեջ համադրում էր առավել մեծ արժեզրկման ու դանդաղ աճի (լճացման) անցանկալի տարիները Սկզբնական կառավարության դեմ առաջացած պատասխան շարժման մեջ կեյնսիզմը չանհետացավ, այլ պարզապես սկսեց շատ ավելի փոքր դեր խաղալ տնտեսական քաղաքականության ձևավորման մեջ, հատկապես երբ իշխանության գլուխ էր գալիս պահպանողական վարչակարգ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

1946թ, երբ Կոնգրեսն ընդունեց Զբաղվածության օրենքը, այն հռչակեց, որ ֆեդերալ կառավարության քաղաքականությունը նպաստավոր է լինելու առավելագույն զբաղվածության, արտադրության ու գնողունակության ապահովման համար Կոնգրեսը լիազորեց նախագահին՝ ստեղծելու 3 անդամից բաղկացած Տնտեսական խորհրդատուների կոմիտե (ՏԽԿ), որը պետք է ուսումնասիրեր տնտեսական պայմանները և խորհուրդ տար նախագահին անհրաժեշտ քայլերի վերաբերյալ

Այս օրենքը հիմնական շեշտը դնում էր համընդհանուր զբաղվածության վրա, առանց նշելու նպատակին հասնելու ձևերը Ըստ այդ օրենքի՝ ապատությունն ու մրցակցությունը կարևոր և ուրույն նպատակներ էին Օրենքն ասում էր, որ երկրի հսկայական տնտեսության հիմքում պետք է ընկած լինի ապատ նախաձեռնությունը և ոչ թե կառավարության հրահանգները գործարարության վերաբերյալ

ՏԽԿ-ն խորհուրդներ է տալիս նախագահին տնտեսական խնդիրների շուրջ և օժանդակում կառավարությանը քաղաքականություն մշակել՝ որոշելով անհրաժեշտ քայլերը ՏԽԿ-ն լիազորված չէ ուղղակիորեն գործել, բայց մշտապես հետևում է եկամտի, արտադրանքի ու զբաղվածության ոլորտներում տեղի ունեցող փոփոխություններին· Այն տնտեսական քաղաքականություն է ներկայացնում նախագահին և օգնում Կոնգրեսի համար հաշվետվություններ պատրաստելիս

Ֆեդերալ կառավարությունում տնտեսական քաղաքականության համար գլխավոր պատասխանատու պաշտոնը ֆինանսների նախարարինն է Ֆինանսների նախարարությունը ստեղծվել է Կոնգրեսի կողմից 1789 թ Այն պարտավոր է ձևակերպել ու ներկայացնել տնտեսության ֆինանսական (ծախսերի) ու վարկային քաղաքականությունը, կարգավորել պետական պարտքը, իրագործել ֆեդերալ կառավարության վարկերի պարտադիր օրենքները, ծառայել որպես կառավարության ֆինանսական գործակալ, հավաքել ներմուծվող ապրանքների հարկերից ստացվող տարեկան եկամուտը և պարտադրել մաքսային օրենքները, ապահովել դրամն ու շրջանառությունը

ՖԵԴԵՐԱԼ ԲՅՈՒՋԵՆ

Տնտեսության մեջ Միացյալ Նահանգների կառավարության կարևոր պարտականություններից մեկը ֆեդերալ ծախսերի նախահաշիվը կազմելն է Ֆեդերալ բյուջեն ապահովում է սպասվելիք եկամտի և գալիք տարվա ծախսերի վերլուծությունը Այն պետք է հաստատվի օրենսդիր իշխանությունների կողմից, որպեսզի պետական ծախսերն ու գանձվելիք տարեկան եկամուտն օրինականացվեն

Բյուջեն պատրաստվում է նախագահի վերահսկողությամբ, ապա ներկայացվում Կոնգրեսին՝ ձևափոխումների ու հաստատման համար Ֆինանսների նախարարությունը հաստատում է նախահաշվարկային հաշիվներն ու ստուգում դրանք յուրաքանչյուր տարվա վերջում Բոլոր քաղաքացիները իրավունք ունեն ծանոթանալու ստուգումներին ու վերահսկելու հասարակության կարիքները հոգալու համար հատկացված ծախսերը, բացառությամբ ռազմական գաղտնիք հանդիսացող ազգային անվտանգության ոլորտի

Բյուջեի ձևավորման հաջորդական փուլերն են՝ նախապատրաստում, հաստատում, կատարում և ստուգում, որոնք կազմում են ֆինանսական նախահաշվի ցիկլը Բյուջեն նախատեսված է տարեկան եկամտի գլխավոր աղբյուրները ցույց տալու համար, ինչպես օրինակ՝ անձնական եկամտի հարկերը, շրջանառության հարկերն ու ձեռնարկատիրական հարկերը՝ ըստ արժեքի Կառավարության նախարարություններն ու գործակալությունները հաճախ կազմում են ծախսացանկերը լայն առումով, ինչպես ասենք՝ առողջապահության, ազգային անվտանգության կամ կրթության ծախսերը Այս փաստաթղթից երևում է նաև, թե յուրաքանչյուր ոլորտ որքան է պահանջել, և որքան է Կոնգրեսը իրականում հաստատել Այս թվերը տրվում են յուրաքանչյուր 3 տարվա համար, այնպես որ ցանկացած ընթերցող բյուջեից պատկերացում ստանա, թե այս կամ այն բնագավառի ծախսերը ինչ ուղղությամբ են ընթանում

Բյուջեի պատրաստումը քաղաքական բարդ գործընթաց է, որն ամեն անգամ սկսվում է մոտ մեկ տարի առաջ Կառավարության գրեթե բոլոր գործակալություններն իրենց կարիքների համար նպատակամետ հայտեր են ներկայացնում, որոնց հաճախ նեցուկ են որոշակի շահագրգռություն ունեցող խմբավորումներ Նախագահն է վերջնական որոշում կայացնում, թե Կոնգրեսից որքան պահանջել յուրաքանչյուր բնագավառի համար, և թե որքան է կպմելու ամբողջ գումարը

Նախագահի ներկայացրած բյուջեի վերաբերյալ Կոնգրեսի նախնական քննարկումները անց են կացվում Ներկայացուցիչների պալատի ֆինանսական հատկացումների հանձնաժողովի կողմից Բյուջեում ընդգրկված յուրաքանչյուր նախարարության ու գործակալության համար քննարկումներ են անցկացվում համապատասխան ենթակոմիտեներում Յուրաքանչյուր գործակալության պաշտոնյաներ պաշտպանում են իրենց դրամական պահանջները՝ բաց նիստերում Քննարկումները շատ մանրամասն են, հաճախ Կոնգրեսի անդամները բծախնդիր պատասխաններ են պահանջում դրամը ծախսող պաշտոնյաներից

Դրանից հետո հատկացումների հաշիվը ներկայացնում են ամբողջ Ներկայացուցիչների պալատին, որտեղ այն ընդունում և Սենատ են ուղարկում Սենատի ֆինանսական հատկացումների հանձնաժողովը իր սեփական քննությունն է անցկացնում և հետո իր հանձնարարականները ներկայացնում ամբողջ Սենատին Դրանից հետո յուրաքանչյուր հանձնաժողով հավաքվում է համաձայնության գալու տարաձայնությունների շուրջը՝ կետ առ կետ Վերջնահաշիվը հաստատվում է որպես օրենք և ներկայացվում նախագահին՝ իր ստորագրությամբ վավերացնելու այն Եթե նախագահը վետո է դնում հաշվի վրա, ապա այն վերադարձվում է Սենատ Բայց եթե յուրաքանչյուր պալատի 2/3-ը քվեարկում է հօգուտ հաշվի, այն համարվում է օրինականացված՝ անկախ նախագահի վետոյից Եթե ձայների անհրաժեշտ քանակությունը չի ապահովվում, մի նոր հաշիվ պետք է մշակվի փոխզիջումների հիման վրա ու հետո օրինականացվի քվեարկությամբ Ամբողջ բյուջեն բաղկացած է կառավարության մեջ մտնող 12-15 տարբեր գործակալություններն ու նախարարությունները ներկայացնող հաշիվներից

Նախագահի բյուջետային պահանջագիրը արտացոլում է տվյալ վարչակարգի նախապատվություններն ու նպատակները տնտեսական քաղաքականության մեջ Ընդհանրապես կառավարությունը ջանում է կայունացնել տնտեսությունը՝ տարվա ընթացքում ավելացնելով կամ կրճատելով ծախսերը Կայունություն ասելով սովորաբար

հասկանում են համընդհանուր կբաղվածությունը, դրամի արժեկրկման կամ արժեքի բարձրացման վերահսկողությունն ու ազգային տնտեսության աճը Մյուս նպատակների թվին են պատկանում երկրի տարբեր շրջաններին հավասարաչափ դրամ հատկացնելը, աղքատների պահանջները բավարարելը և հարաբերականորեն հավասարակշռված բյուջեի հասնելու ջանքերը Թվարկված վերջին նպատակի իրականացումը անհասանելի է թվում, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ դարիս վերջին 25 տարիներին, գուցե և ավելի, ֆեդերալ բյուջեն պակասորդով է եղել

1974 թ Կոնգրեսը ստեղծեց իր սեփական մարմինը՝ Կոնգրեսի բյուջետային վարչությունը (ԿԲՎ), որը պետք է խորհուրդ տա Կոնգրեսին տնտեսությունում տարբեր ծրագրերի ծախսերի հնարավոր հետևանքների վերաբերյալ ու տեղեկություններ տա առաջադրված ծրագրերի արժեքի մասին ԿԲՎ-ն նաև վերահսկում է տնտեսության վրա կառավարության ծախսերի ընդհանուր ազդեցությունը, ներառյալ ֆեդերալ բյուջեն Այս մարմնի աշխատանքը նպաստեց Կոնգրեսի կարգապահության բարձրացմանը Բյուջեն կազմելու այս ձևը հնարավորություն է տալիս Կոնգրեսին հաստատելու իր ուրույն ազգային նախապատվությունները, որոնց շուրջ հետո կարելի է բանակցել նախագահի հետ

Այսպիսով՝ Միացյալ Նահանգների բյուջեի կազմելը բարդ ու բազմակողմանի գործընթաց է Այն հնարավորություն է տալիս քաղաքացիներին շատ կարևոր հարցերում իրենց մասնակցությունն ունենալ և միշտ հանդիսանում է Ամերիկայի ժողովրդի տարբեր քաղաքական գաղափարների ու բազմապան շահերի փոխզիջումների արդյունքը

Citicard
Citicard



ԱՄԵՐԻԿՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՈՒՐՎԱԳԾԵՐԸ

ՄԱՍ ՅՈԹԵՐՈՐԴ

VII

ԴՐԱՄԱՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

20-րդ դարի կեսերից Միացյալ Նահանգների քաղաքականությունը կերտողները համընդհանուր կբաղվածության ու գների կայունության երկակի նպատակի իրականացմանը նպաստելու համար ջանացել են կիրառել դրամական ու հարկային խառը քաղաքականություն Դրամական քաղաքականությունը ընդգրկում է վարկային հնարավորությունների, դրամի քանակի ու շրջանառության արագության ոլորտները, մինչդեռ հարկային քաղաքականությունն ընդգրկում է կառավարության ծախսերի ու հարկերի ոլորտը 1960-ական թթ վերջերին տնտեսագետներն օգտագործում էին «փայլուն կարգավորում» տերմինը, որն, իրենց կարծիքով, ընդգծում էր, թե իրենք ինչ մակարդակի են հասել տնտեսությունը վերահսկելու հմտության մեջ՝ ազգային գլխավոր նպատակների իրագործմանն օժանդակելու համար Բայց պարզվեց, որ տնտեսությունը «փայլուն կարգավորելու» ընդունակությունը պատրանք էր 1970-ական թթ արժեզրկումը հասավ երկնիշ թվերի, և չնայած 1980-ական թթ սկզբին արժեզրկումը սկսեցին վերահսկել, բայց ֆեդերալ բյուջեի պակասորդը վեր էր սլանում Ուրեմն տեսնենք, թե ինչպես են իրականացնում դրամական ու հարկային քաղաքականությունը Միացյալ Նահանգներում

ԴՐԱՄԸ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Երկրի տնտեսական վիճակը բնորոշելու գլխավոր ցուցանիշը նրանում առկա դրամի քանակն է այն ազդում է գների, տնտեսական կարգացման տեմպերի, աշխատանքային կբաղվածության մակարդակների վրա Դրամը մարդկանց կողմից ընդունված ապրանքների ու ծառայությունների փոխանակման միջոց է և գների ու պարտքերի հաշվարկային միավոր Բացի դրանից, այն կարող է գործածվել սեփականության կամ թանկարժեք մետաղների նման՝ որպես հարստություն կուտակելու միջոց, որը մարդիկ ետ են գցում ապագա գնումների համար

Միացյալ Նահանգներում դրամը լինում է մետաղադրամի ու թղթադրամի ձևով Ֆեդերալ օրենքի համաձայն միայն Միացյալ Նահանգների ֆինանսների նախարարությունն ու Ֆեդերալ ռեզերվային համակարգն իրավունք ունեն դրամ թողարկել Ֆինանսների նախարարությունը մետաղադրամ է թողարկում, իսկ Ֆեդերալ ռեզերվներն ու Ֆինանսների նախարարությունը թողարկում են ամեն մեկը թղթադրամի իր տեսակը՝ Ֆեդերալ ռեզերվների թղթադրամ ու Միացյալ Նահանգների թղթադրամ Միացյալ Նահանգների բոլոր դրամատեսակները «Ապավինում ենք Աստծուն» պաշտոնական նշանաբանն են կրում

Դոլլարի արժեքի հիման վրա ստեղծվել են տարբեր արժեքի մետաղադրամի միավորներ պենսի՝ մեկ ցենտ կամ դոլլարի

մեկ հարյուրերորդականը, 5 ցենտ արժողությամբ մետաղադրամ կամ դոլլարի հինգ հարյուրերորդականը, 10 ցենտ արժողությամբ արծաթե մետաղադրամ կամ դոլլարի տաս հարյուրերորդականը, 25 ցենտ արժողությամբ մետաղադրամ կամ դոլլարի մեկ քառորդը, 50 ցենտ արժողությամբ մետաղադրամ կամ կես դոլլար և 1 դոլլար արժողությամբ մետաղադրամ

Ֆեդերալ ռեզերվային համակարգի 12 Ֆեդերալ ռեզերվային բանկերը թողարկում են Միացյալ Նահանգների գրեթե ամբողջ թղթադրամը Այդ միավորներն են՝ 1, 2, 5, 10, 20, 50 և 100 դոլլար արժողությամբ թղթադրամներ Մինչև 1969 թ Ֆեդերալ ռեզերվային բանկերը թողարկում էին նաև 500, 1 000, 5 000 և 10 000 դոլլար արժողությամբ թղթադրամ

Միացյալ Նահանգների Ֆինանսների նախարարության թողարկած միակ թղթադրամն այսօր 100 դոլլար արժողությամբ թղթադրամն է Ե՛վ Միացյալ Նահանգների, և՛ Ֆեդերալ ռեզերվների թղթադրամների վրա տպված են Միացյալ Նահանգների գանձապահի ու Ֆինանսների նախարարի ստորագրությունները

ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԴՐԱՄԻ ՔԱՆԱԿԸ

Երկրում դրամի քանակն ապահովվում է կա՛մ ապրանքի արտադրությամբ, կա՛մ կառավարության հրամանագրով Սովորաբար ապրանքային ապահովումը կատարվում է թանկարժեք մետաղների միջոցով՝ մասնավորապես ոսկու կամ արծաթի Երբ երկրում գործածում են ապրանքով ապահովված դրամ, դրա քանակը որոշվում է այդ ապրանքի արտադրության արժեքով ու արտադրողականությամբ 1800-ական թթ վերջերին և 1900-ական թթ սկզբին ԱՄՆ-ի դրամաշրջանառությունն ապահովվում էր ոսկու ստանդարտով, այսինքն՝ Միացյալ Նահանգները պարտավորվում էր դրամի դիմաց վճարել ոսկու որոշակի քանակություն

Մյուս կողմից՝ ապրանքով չապահովված դրամը իրական արժեք չունի, նրա արժեքը մարդիկ ընդունում են հոժարակամ Այսպիսով, չապահովված դրամն ավելի ընդունելի դարձնելու նպատակով կառավարությունը կարող է այն դարձնել օրինական վճարամիջոց Դա նշանակում է, որ օրենքը պարտադրում է մարդկանց ընդունելու այն անվանագնով Այսօր Միացյալ Նահանգներում գործում է ապրանքով չապահովված դրամական համակարգ, և կառավարությունը կենտրոնական բանկի՝ Ֆեդերալ ռեզերվային համակարգի միջոցով վերահսկում է դրամի քանակը երկրում ԱՄՆ-ի դրամը օրինական վճարամիջոց է

Սակայն Միացյալ Նահանգների դրամի քանակը միայն մետաղադրամն ու թղթադրամը չէ Ընթացիկ հաշիվների

ավանդները ևս դիտվում են որպես դրամի համարժեք, որովհետև դրանք կարելի է ծախսել հաշիվ դուրս գրելով Փաստորեն Միացյալ Նահանգների բոլոր վճարումների երեք քառորդը կատարվում է ընթացիկ հաշիվների միջոցով Ավանդատուների հաշիվներին վարկ ավելացնելու միջոցով առևտրային բանկերը կարող են դրամ ստեղծել՝ ընթացիկ հաշիվների ավանդների ձևով Ֆեդերալ ռեզերվային համակարգը իր հսկողության տակ է պահում այդ դրամի քանակը պահեստային ֆոնդի նկատմամբ ներկայացվող օրինական պահանջների միջոցով դրանց համաձայն՝ առևտրային բանկերը պարտավոր են կամ դրամ ունենալ իրենց չհրկիզվող գանձապահարաններում, կամ ավանդներ՝ Ֆեդերալ ռեզերվային համակարգի բանկերում այդ ավանդների քանակը պետք է կազմի իրենց ավանդային պարտավորությունների սահմանված նվազագույն մասը Վերահսկելով պահեստային ֆոնդում եղած դոլլարի քանակը՝ Ֆեդերալ ռեզերվները այդպիսով վերահսկում են դոլլարի քանակը բանկային վարկերում

Տնտեսագետները հաշվարկում են դրամի քանակը տարբեր եղանակներով՝ կախված հաշվարկներում ընդգրկած ակտիվի տեսակներից Օրինակ՝ հաշվարկման մի եղանակն ընդգրկում է տոկոսադրույքային բոլոր տեսակի հաշիվների ավանդները, որոնք կարող են օգտագործվել որպես ընթացիկ հաշիվներ Հաշվարկման մեկ այլ եղանակ ընդգրկում է ժամկետավոր հաշիվները, որոնք չեն կարող ինքնաբերաբար վերածվել գնումների համար վճարելու միջոցի Բանկերը կարող են նախնական ժանուցում պահանջել այդ հաշիվներից օգտվելու համար

Երբ դրամի քանակը շատանում է, մարդիկ ավելի շատ փող են ունենում ծախսելու համար, և ապրանքների ու ծառայությունների պահանջարկն աճում է Պահանջարկի աճի ժամանակ ձեռնարկատերերը լրացուցիչ աշխատուժ են վարձում՝ ավելացնելու արտադրանքի քանակը Սա տնտեսական աճի սցենարն է Բայց եթե արտադրանքի աճը համընթաց չէ պահանջարկին, գներն աճում են Երբ գները շարունակ աճում են, արդյունքը լինում է դրամի արժեզրկումը, որը բարդություններ է առաջացնում այն մարդկանց համար, ում եկամտի աճը համընթաց չէ դրամի արժեզրկմանը

ՖԵԴԵՐԱԼ ՌԵԶԵՐՎՆԵՐԸ

Ֆեդերալ ռեզերվների համակարգը, որը նույնպես հայտնի է որպես «Ֆեդ», ԱՄՆ-ի կառավարության անկախ գործակալությունն է Նրա ամենակարևոր պարտականությունը երկրի դրամաքանակի ու վարկի կառավարումն է

Ֆեդերալ ռեզերվային համակարգը բաղկացած է 12 շրջանային Ֆեդերալ ռեզերվային բանկերից և Ֆեդերալ

ռեկերվային բանկերի 25 մասնաճյուղերից Ըստ օրենքի, պետական արտոնագիր ունեցող բոլոր առևտրային բանկերը Ֆեդերալ ռեկերվային համակարգի պարտադիր անդամ են, իսկ նահանգային արտոնագիր ունեցող բանկերի անդամակցությունը կամավոր է Ընդհանրապես Ֆեդերալ ռեկերվային համակարգին անդամակցող բանկն օգտվում է իր շրջանային ռեկերվային բանկից, ինչպես որևէ անհատ օգտվում է իր համայնքի բանկից

Ֆեդերալ ռեկերվային համակարգը կառավարվում է Ֆեդերալ ռեկերվային վարչության կողմից, որը բաղկացած է Միացյալ Նահանգների նախագահի նշանակած յոթ անդամներից, որոնց 14-ամյա աշխատանքային ժամկետները մասնակիորեն են համընկնում Չնայած Ֆեդերալ ռեկերվային համակարգը պատասխանատու է անմիջապես Կոնգրեսին, սակայն վարչության անդամները օրենքով ապատ են թե՛ Կոնգրեսի, թե՛ նախագահի քաղաքական ճնշումից Բայց ենթադրվում է, որ վարչությունը համաձայնեցնում է իր քաղաքականությունը նախագահի վարչակարգի ու Կոնգրեսի քաղաքականության հետ Դեռ ավելին, Ռեկերվները չեն ապավինում Կոնգրեսին ֆինանսավորման համար շահագործման անհրաժեշտ ծախսերը նրանք ապահովում են ներդրումների եկամտից և ծառայությունների համար տրվող վարձից Սակայն, երբ Ֆեդի շահույթ ստանալու մղումն ու հասարակության շահերին ծառայելու ցանկությունը բախվում են, ապա Ֆեդից ակնկալում են նախընտրել վերջինը

Ժամանակի ընթացքում խոշոր իրադարձությունները պատասխան փոփոխություններ են առաջացրել Ֆեդի գործունեության մեջ Ֆեդերալ ռեկերվները հիմնադրվել են 1913 թ՝ նպատակ ունենալով ուժեղացնել բանկային համակարգի վերահսկողությունը և վերջ տալ նախորդ դարում պարբերաբար բռնկվող բանկային խուճապներին 1930-ական թթ Մեծ ճգնաժամի հետևանքով Կոնգրեսը լիակորեց Ֆեդը պահեստային ֆոնդի նկատմամբ ներկայացվող պահանջները փոփոխելու իշխանությամբ, ինչպես նաև արժեթղթերի բորսաների տարբերությունը կարգավորելու իրավունքով Հետագայում լրացուցիչ օրենքներ ընդունվեցին, որոնք ընդլայնեցին Ֆեդին վարկեր տրամադրելու հնարավորությունները՝ ֆինանսական աղետի հավանականության դեպքում

Համաշխարհային II պատերազմի ժամանակ Ֆեդերալ ռեկերվների գործունեությունը նպատակամղված էր ֆինանսների նախարարությանը ցածր տոկոսադրույքով վարկեր տրամադրելուն օգնելու խնդրին Երբ Կորեական կոնֆլիկտը ծավալվեց, և առևտրային բանկերն սկսեցին մեծ քանակով վաճառել Ֆինանսների նախարարության արժեթղթերը, Ֆեդը առատ գնումներ արեց, որպեսզի

արժեթղթերի գների անկում տեղի չունենա Սակայն 1951 թ Ֆեդը վերահաստատեց իր անկախությունը այն համաձայնության եկավ Ֆինանսների նախարարության հետ այն հարցում, որ Ֆեդերալ ռեզերվների քաղաքականությունը չպետք է կախված լինի նախարարության ֆինանսավորումից

1951 թ Ֆեդը ուշադրությունը կենտրոնացրեց տնտեսության կայունացման ներքին քաղաքականության վրա՝ նպատակ ունենալով ցածր տոկոսադրույք պահպանել անկման ժամանակաշրջաններում և տոկոսադրույքի բարձրացում թույլ տալ տնտեսական սրընթաց աճի ժամանակաշրջաններում 1950-ական թթ վերջերին Ֆեդը շեշտը դնում էր գների կայունացման ու դրամավարկային աճի սահմանափակման վրա, մինչդեռ 1960-ական թթ շեշտը դրվում էր համընդհանուր կբաղվածության և արտադրանքի աճի վրա

1970-ական թթ վարկային էքսպանսիան չափազանց սրընթաց էր, և դրամի աճող արժեկրկումը վնասեց տնտեսությանը 1979 թ Ֆեդերալ ռեզերվները նախընտրեց ոչ թե տոկոսադրույքը, այլ դրամի քանակը ավելի անմիջականորեն վերահսկելու քաղաքականությունը Այս քաղաքականությունը հաջող էր այն առումով, որ դանդաղեցրեց դրամի քանակի աճը, սահմանափակեց վարկային էքսպանսիան և նպաստեց դրամի արժեկրկման տեմպերի դանդաղեցմանը Բայց 1980-ական թթ սկզբին այդ քաղաքականությունը նպաստեց նաև տնտեսական անկմանը 1982 թ Ֆեդը նորից ուշադրությունը կենտրոնացրեց ոչ թե դրամի քանակի աճի, այլ տոկոսադրույքի վրա ու սկսեց աշխատել այն իջեցնելու ուղղությամբ

Ֆեդերալ ռեզերվային համակարգը տնտեսության մեջ ընդհանուր դրամի քանակը և վարկերը վերահսկելու 3 հիմնական միջոց ունի Առաջինը կեղչման տոկոսադրույքն է, կամ այն տոկոսադրույքը, որը առևտրային բանկերը վճարում են Ռեզերվային բանկին՝ դրամագլուխներ պարտք վերցնելիս Այդ կեղչման տոկոսադրույքի բարձրացման կամ իջեցման միջոցով Ֆեդը կարող է խրախուսել կամ ետ պահել պարտք վերցնելու հարցում և դրանով փոխել տարեկան եկամտի չափը, որը տրվում է բանկերին վարկերի համար

Երկրորդը պահեստային ֆոնդի նկատմամբ ներկայացվող պահանջներն են Սրանք Ֆեդերալ ռեզերվային համակարգի կողմից հաստատված ավանդների այն մասն են, որոնք առևտրային բանկերը պետք է առանձնացրած լինեն կա՛մ կանխիկ դրամի ձևով՝ իրենց չհրկիզվող գանձապահարանում, կա՛մ ավանդների ձևով՝ իրենց շրջանային ռեզերվային բանկերում Այս գումարները չեն կարող օգտագործվել վարկ տրամադրելու համար 1980 թ Ֆեդերալ ռեզերվները լիազորվեց պահեստային ֆոնդերի նկատմամբ պահանջներ սահմանելու իրավունքով բոլոր ավանդատու

հաստատությունների նկատմամբ

Երրորդ միջոցը, որը թերևս ամենակարևորն է, հայտնի է որպես ապատ շուկայական գործառնություններ Դա պետական արժեթղթերի առ ու ծախն է Երբ Ֆեդերալ ռեզերվների համակարգը բանկերից, այլ ձեռնարկություններից կամ անհատներից պետական արժեթղթեր է գնում, վճարում է դրանց համար՝ իր վրա հաշիվ դուրս գրելով (իր կողմից տպված դրամի մի նոր աղբյուր) Երբ այդ հաշիվը ներդրվում է որևէ բանկում, այն ստեղծում է նոր պահեստային միջոցներ, որոնց մի մասը կարող է փոխ տրվել կամ ներդրվել՝ սրանով շարունակելով ավելացնել դրամի քանակը

Այդ միջոցները հնարավորություն են տալիս Ֆեդերալ ռեզերվներին ավելացնել կամ կրճատել ԱՄՆ-ի տնտեսության մեջ եղած դրամի քանակն ու վարկերը Երբ պարտքով տալու դրամի ավելի շատ քանակ կա, վարկերը «սանձարձակ» են, տոկոսադրույքը անկման հակում ունի Ընդհանրապես ձեռնարկատիրական ու սպառողական ծախսերը հակված են աճելու, երբ տոկոսադրույքն ընկնում է Երբ ավելի քիչ դրամ կա պարտքով տալու, վարկերի «սանձերը ձգված» են, տոկոսադրույքը հակում ունի աճելու Սուղ դրամաքանակը համարվում է հատկապես ազդեցիկ միջոց դրամի արժեզրկման դեմ մղվող պայքարում

Սակայն որոշակի գործոններ խոչընդոտում են Ֆեդերալ ռեզերվներին՝ գործի դնելու իր կարողությունը դրամավարկային քաղաքականությամբ աջակցելու առանձնահատուկ նպատակների իրականացմանը Նախ և առաջ դժվար է ճշգրիտ կիրառել դրամավարկային քաղաքականությունը, որովհետև դրամաքանակի փոփոխությունը անմիջական փոփոխություններ չի առաջացնում տնտեսությունում Տնտեսության մեջ դրամաքանակի ավելանալը կամ պակասելը կարող է չանդրադառնալ տնտեսության վրա, քանի դեռ չեն փոխվել տնտեսական այլ գործոններ Նոր գործոնները, դրամի քանակի փոփոխության հետ միասին, հնարավոր է, որ առաջացնեն միանգամայն չկանխատեսված հետևանքներ Իրականում դրամավարկային քաղաքականության միջոցով գների կայունացման հասնելու ջանքերը երբեմն արգելք են հանդիսացել համընդհանուր կբաղվածությանն ուղղված ջանքերին, իսկ դրամավարկային քաղաքականության միջոցով գործակրկությունը կրճատելու ջանքերը երբեմն հանգեցրել են դրամի արժեզրկմանը Բացի այդ, դրամավարկային քաղաքականության խնդիրները բարդանում են նաև երկրի վճարային հաշվեկշռի առաջացրած դժվարություններով Այս հանգամանքների պատճառով Ֆեդերալ ռեզերվները ստիպված է շատ զգույշ լինել և դրամաքանակի փոփոխությունները կատարել աստիճանաբար

ԴՐԱՄԱ-ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱ-ՆՈՒԹՅՈՒՆ

Կառավարությունն իր ծախսերի ու հարկերի միջոցով նույնպես կարող է հասնել որոշակի նպատակների իրականացմանը Դա կոչվում է դրամահարկային քաղաքականություն Ավելացնելով կամ կրճատելով իր ծրագրերում նախատեսված ծախսերն ու հարկերը՝ ֆեդերալ կառավարությունը կարող է ավելացնել կամ պակասեցնել ապրանքների ու ծառայությունների պահանջարկը Եթե կառավարությունը կրճատում է իր սեփական ծախսերը, այն ավելի քիչ է գնում ձեռնարկություններից՝ կրճատելով ապրանքաշրջանառությունն ու շահույթը, և մարդիկ ավելի քիչ դրամ են ունենում ծախսելու համար Մարդիկ քիչ դրամ են ունենում ծախսելու նաև այն ժամանակ, երբ կառավարությունը ավելացնում է հարկերը Ավելին, ծախսերի և հարկերի քաղաքականությունները գործում են միասին՝ մեծացնելով կամ փոքրացնելով ընդհանուր պահանջարկը Օրինակ՝ եթե կառավարության հարկերը գերակշռում են նրա ծախսերը, դա հանգեցնում է մարդկանց ու ձեռնարկությունների կուտ եկամտի հոսքի կրճատմանը Ապրանքների ու ծառայությունների ընդհանուր պահանջարկի կրճատումը լավ միջոց է դրամի արժեկրկման դեմ պայքարելու համար

Դրամահարկային քաղաքականությունը բյուջեի պակասորդների ու ավելցուկների օգտագործման միջոցով օժանդակում է տնտեսության կայունացմանն ու աճին Միացյալ Նահանգներում դրամահարկային քաղաքականության որոշ միջոցներ գործում են ինքնաբերաբար, այսինքն՝ ո՛չ նախագահը, ո՛չ Կոնգրեսը ոչ մի քայլ չեն ձեռնարկում դրա համար Օրինակ՝ ընդհանրապես համարում են, որ առաջատվական եկամտահարկը ինքնաբերաբար նպաստում է կայունությանը Այն տանում է դեպի պետական տարեկան եկամտի կրճատում՝ անհատների ու ձեռնարկությունների եկամուտների անկման դեպքում և այդպիսով օգնում փոխհատուցել ծախսերի կրճատումները, ինչը սովորաբար տեղի է ունենում եկամուտների անկման ժամանակ Սակայն ձեռնարկատիրական գործունեության ոլորտի ընդլայնման ժամանակ ֆեդերալ հարկերը արագ գնում են դեպի բարձրացում և դրանով կսպում դրամի արժեկրկման ճնշումը Հետպատերազմյան շրջանում ձեռնարկատիրական գործունեության անկման ժամանակ Կոնգրեսը երբեմն օրենքներ է ընդունել արտակարգ իրավիճակներում ծախսերը ավելացնելու վերաբերյալ, ինչպես օրինակ՝ հասարակական աշխատանքներին հատկացվող ծախսերի ժամանակավոր ավելացումը, մասնավոր սեկտորին հատկացվող միջոցների կրճատումները փոխհատուցելու և գործակրկությունը կանխելու համար

Սակայն կան նաև խնդիրներ, որոնք առնչվում են դրամահարկային քաղաքականության իրականացման հետ Շատերը

դեմ են կառավարության ծախսերի կրճատմանը, որովհետև դա կնշանակի կրճատել կրթության, բժշկության և այլ ծառայությունների կարիքները հոգալու հատկացումները Բարձր հարկերը դժկամ են ընդունում թե՛ անհատները, թե՛ ձեռնարկությունները Բացի այդ, դրամահարկային քաղաքականության միջոցով պահանջարկը կտրականապես նվազեցնելը փոքր-ինչ հակասական բնույթ է կրում, քանի որ տանում է ոչ միայն դեպի դրամի արժեզրկման դանդաղեցում, այլ նաև դեպի գործազրկության աճ

ՀԱՐԿԵՐԻ ԳԱՆՁՈՒՄ

Միացյալ Նահանգներում ֆեդերալ, նահանգային ու տեղական իշխանությունները իրենց ծախսերը հիմնականում հոգում են հարկեր գանձելու միջոցով, ընդ որում, կառավարման յուրաքանչյուր մակարդակ հիմնականում մեկ կամ երկու ձևով է դա անում Ընդհանրապես, տեղական կառավարման մարմինների հարկային եկամտի մեծ մասը ստացվում է գույքահարկերից, մինչդեռ նահանգային կառավարման մարմինները ավանդաբար կախման մեջ են եղել շրջանառության ու բաժի հարկերից Սակայն համաշխարհային II պատերազմից սկսած նահանգային եկամտահարկերի կարևորությունը ավելի է աճել

Ֆեդերալ կառավարության եկամտի հիմնական աղբյուրը եղել է եկամտահարկը, որը վերջին տարիներին տվել է ամբողջ ֆեդերալ եկամտի մոտ երկու հինգերորդը Այլ ֆեդերալ հարկերի թվին են պատկանում կորպորացիաների եկամտահարկը և սոցիալական ապահովագրության հարկերը (Սոցիալական ապահովագրության վարչություն)

Ֆեդերալ եկամտահարկը գանձվում է Ամերիկայի աշխարհով մեկ տարածված քաղաքացիների և օտարերկրյա մշտական բնակիչների եկամտից, ինչպես նաև ոչ-մշտական բնակիչներից ԱՄՆ-ի ստացած եկամուտների որոշակի տեսակներից Եկամտահարկի մասին Միացյալ Նահանգների առաջին օրենքն ընդունվել է 1862 թ՝ քաղաքացիական պատերազմին օգնելու նպատակով Ժամանակակից եկամտահարկի նախակարապետը հիմնված էր գանձման առաջատվական սկզբունքի վրա Վերոհիշյալ օրենքի համաձայն հիմնադրվեց նաև ներքին եկամտի լիազորների վարչությունը, որն իրավասու էր սահմանել հարկի չափը, հարկ դնել ու գանձել, ինչպես նաև պարտադրել հարկային օրենքի պահպանումը՝ գույքի ու եկամտի վրա կալանք դնելով և դատական կարգով հետապնդելու միջոցով Վարչության անդամների իրավասություններն ու լիազորությունները հիմնականում նույնն են մնացել

1895 թ Գերագույն դատարանը եկամտահարկը հռչակեց ոչ սահմանադրական, որովհետև այն բաշխված չէր նահանգների

միջև ըստ սահմանադրության Եվ միայն 1913 թ, երբ ընդունվեց սահմանադրության 16-րդ ուղղումը, Կոնգրեսը լիապորվեց եկամտահարկ դնելու իրավունքով՝ առանց բաշխման 16-րդ ուղղումը հանգեցրեց եկամտի վերաբերյալ օրենքին, որի համաձայն հարկը գանձվելու էր թե՛ անհատի, թե՛ կորպորացիաների եկամուտներից սակայն մինչև 1930-ական թթ եկամտահարկը չէր հանդիսանում ֆեդերալ եկամտի գլխավոր աղբյուրը, բացառությամբ համաշխարհային I պատերազմի տարիների

1918 ֆինանսական տարում ներքին եկամտային գանձումների գումարը առաջին անգամ գերազանցեց մեկ միլիարդ դոլլարից Համաշխարհային II պատերազմի տարիներին ներմուծվեց ֆեդերալ եկամտահարկերի գանձման ժամանակակից համակարգը, եկամտահարկի դրույքները ծայր աստիճան բարձրացվեցին, և այդ հարկերը դարձան ֆեդերալ եկամտի հիմնական աղբյուրը Աշխատավարձից հարկ գանձելու ձևը ներմուծվեց 1943 թ, և դա կգալիորեն ավելացրեց հարկատուների թիվը՝ հասցնելով այն մինչև 60 միլիոնի, իսկ 1945 թ շեմին հարկային գանձումները հասան մինչև 43 միլիարդ դոլլարի

1986 թ հոկտեմբերին նախագահը ստորագրեց Հարկային բարեփոխումների 1986 թ օրենքը՝ եկամտահարկի ընդունման օրից ԱՄՆ-ի հարկային համակարգում թերևս ամենախոշոր բարեփոխումը Այդ օրենքով Կոնգրեսը խոստացավ անհատներին ու ձեռնարկություններին ավելի ցածր եկամտահարկի դրույքներ այն պայմանով, որ նրանք հրաժարվեն կամ ավելի քիչ օգտվեն հանրածանոթ հարկային շատ արտոնություններից

Հարկային բարեփոխումների օրենքը փոխարինեց նախկին օրենքի 15 կարգից բաղկացած հարկային համակարգը (որտեղ բարձրագույն հարկային դրույքը 50 տոկոս էր) մի այլ համակարգով, որտեղ ընդամենը 2 հարկային կարգ կար՝ 15 տոկոս և 28 տոկոս Անհատական եկամտի աճը՝ ի հաշիվ եկամտահարկի նվազեցման, կամ եկամտի այն քանակը, որն ավելանում է եկամտահարկի նվազեցման հաշվին՝ կախված հայտարարը լրացնողի խնամքի տակ գտնվող անձանց թվից, և արտոնություն չունեցողների սովորական եկամտահարկի իջեցումը նախատեսված էին վերացնելու ցածր եկամուտ ունեցող միլիոնավոր ամերիկացիների հարկերը Փաստորեն 20 000 դոլլարից պակաս եկամուտ ունեցողները շատ ավելի քիչ են հարկեր վճարում, ինչպես նաև այն բարձր եկամուտ ունեցողները, որոնց գործող հարկային դրույքը 31 տոկոս է՝ հարուստներին աստիճանաբար եկամտահարկից ազատելու (նույն օրենքի համաձայն) և նրանց եկամտի մի մասի վրա դրված 15 տոկոս հարկի շնորհիվ

Հարկային բարեփոխումների գլխավոր առանձնա-

հատկությունը կայանում է նրանում, որ նախկին օրենքով թույլատրված շատ արտոնություններ կրճատվեցին կամ վերացվեցին, ներառյալ շրջանառության հարկային արտոնություններն ու վարկային քարտերի տոկոսի դիմաց տրվող արտոնությունները, խանութի ընթացիկ հաշվի քարտերը, ապառիկ մարումով վարկերը և մեքենաների համար տրվող վարկերը Որպես հարկային արտոնություն՝ դեռևս թույլատրվում է մինչև 2 000 դոլլար փոխանցել անհատական կենսաթոշակի հաշվին նոր օրենքով այդ իրավունքը տարածվում է կենսաթոշակների գործող ծրագրերից դուրս մնացածների վրա, կամ անհատների համար՝ տարեկան 25 000 դոլլարից, ամուսնացած զույգերի համար՝ 40 000 դոլլարից պակաս եկամուտ ունեցող հարկատուների վրա Բացի դրանից, նվազագույն՝ 21 տոկոս հարկ կդրվի այն անձանց կամ ձեռնարկությունների վրա, որոնք կձգտեն չափազանց շատ օգտվել արտոնություններից՝ իրենց հարկային պարտավորությունները պակասեցնելու միտումով

1986 թ հարկային օրենքի կողմնակիցներն ասում են, որ այդ բարեփոխումների շարժառիթը ֆեդերալ եկամտահարկային համակարգը ավելի արդար դարձնելու ցանկությունն էր Չնայած այդ համակարգը Կոնգրեսն ստեղծել էր՝ ելնելով առաջատվության սկզբունքից, սակայն հարկերից ազատվողների թվի կտրուկ աճը, բացառություններն ու սողանցքներն այդ նպատակը դարձրեցին պատրանք և հնարավորություն տվեցին հարուստներից ու ձեռնարկություններից շատերին ավելի ցածր հարկեր վճարել, քան պակաս հարուստները Նոր օրենքը կտրուկ նվազեցնում է առաջատվությունը, բայց նպատակ ունի վերականգնելու հավատը համակարգի նկատմամբ՝ անարդարությունները վերացնելու միջոցով Նոր օրենքը վերստին շեշտում է արդարացի եկամտահարկ գանձելու նպատակը, և ավելի պակաս կարևորություն է տալիս հարկերը այլ սոցիալական կամ տնտեսական նպատակների իրականացման համար օգտագործելու գաղափարին

ԴՐԱՄԻ ԱՐԺԵՔՐԿՈՒՄ, ԽՈՒՍԱՓՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԲՅՈՒՋԵԻ ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տակառակ տնտեսագետների վստահությանը դրամավարկային քաղաքականության հանդեպ, արժեկրկումը վեր խոյացավ և 1970-ական թթ վերջին հասավ երկնիշ թվերի ու դարձավ Միացյալ Նահանգների տնտեսագետների մտահոգության հիմնական առարկան Սակայն հաջորդ տասնամյակի կեսերին դրամի արժեկրկման արագությունը կտրուկ ընկավ և հանգստացրեց սպառողի վրդովմունքը Ինչպե՞ս դա հաջողվեց

Դրամի արժեկրկման նվազումը վերագրում են մի քանի գործոնների ազդեցությանը Երկու շատ կարևոր նպաստող

գործոններ էին 1980 ու 1982 թթ սուր տնտեսական անկումները որոնք կգալիորեն նվազեցրին գների վեր խոյանքի ճնշումը Դրանք գործի դրվեցին Ֆեդերալ ռեզերվների կողմից՝ դրամի ու վարկի անսովոր խիստ վերահսկողության միջոցով Միևնույն ժամանակ ամբողջ աշխարհում սննդամթերքի ու վառելանյութի պակասը մեղմացավ Մասնավորապես նավթի համաշխարհային առաջարկի աճը շատ ավելի իջեցրեց էլեկտրաէներգիայի գները քան արտադրողները կցանկանային

Սակայն տնտեսական անկման ավարտը չվերացրեց ԱՄՆ-ի ֆեդերալ բյուջեի պակասորդը Ինչո՞վ էր պայմանավորված այդ տնտեսական իրավիճակը

Ընդհանուր առմամբ այն տնտեսական գործոնները, որոնք թաքնված էին ԱՄՆ-ի ֆեդերալ պակասորդի աճի ետևում, տասնամյակներ շարունակ գոյություն ունեին Ֆեդերալ պակասորդը հիմնականում աճում էր, որովհետև ֆեդերալ ծախսերը՝ որպես ազգային համախառն արդյունքի մի մաս (ԱՀԱ), 1960 թ ի վեր կգալիորեն աճել էին, մինչդեռ ֆեդերալ եկամուտը (գլխավորապես հարկերի գանձումը)՝ որպես ազգային համախառն արդյունքի մի մաս համեստ աճ էր տվել Ֆեդերալ ծախսերը 1960-ական թթ ԱՀԱ-ի 19 տոկոսից 1990 թ հասել էին մինչև 23 2 տոկոսի ֆեդերալ եկամուտը նույնպես աճել էր բայց ավելի քիչ՝ 1960 ական թթ ԱՀԱ-ի 18 2 տոկոսից 1990 թ հասել էր մինչև 19 1 տոկոսի

Սակայն ԱՄՆ-ի կառավարության հետպատերազմյան ծախսերը ընթացել են հիմնականում այսպես անկումների ժամանակ ֆեդերալ կառավարությունը տնտեսությունը խթանելու նպատակով գործում է բյուջեի պակասորդով Երբ սկսվում է տնտեսության աճը, ժամանակի ընթացքում այն հանգեցնում է, կամ պետք է հանգեցնի, հավասարակշռված ֆեդերալ բյուջեի Սակայն 1980 ական թթ և 1990-ական թթ սկզբին տնտեսության առողջացման ժամանակ ֆեդերալ կառավարությունը շարունակում էր գործել բյուջեի կգալի պակասորդով Շատ տնտեսագետներ ու քաղաքական գործիչներ հիմնականում դա վերագրում էին ազգային խնայողության անկմանը կամ սպառման մարմաջին Ներքին մասնավոր խնայողություններն անբավարար էին ֆինանսավորելու և՛ արտաքոց ֆեդերալ պակասորդը, և՛ խոշոր ներդրումների աճը Արտասահմանյան կապիտալի ներհոսքն օգտագործեցին որպես ԱՄՆ ի խնայողությունների ու ներդրումների միջև եղած ճեղքվածքը փակելու միջոց

1980-ական թթ Կոնգրեսի մտահոգությունը ֆեդերալ բյուջեի պակասորդի համար հանգեցրեց այսպես կոչված Գրամ-Ռուդման-Հոլինգս-ի պակասորդի կրճատման օրենքի ընդունմանը, որը պարտադրեց տարեկան պակասորդի փուլային կրճատումներ այն հաշվով, որ 1993 թ հասներ

գագաթնակետին՝ հավասարակշռված բյուջեի Սովորաբար այդ օրենքի ապդեցությանն են վերագրում 1986 թ ֆեդերալ բյուջեի 222 միլիարդ դոլլար ռեկորդային պակասորդի կրճատումը մինչև 149 միլիարդ դոլլար 1987 թ

Թեև կարող է թվալ , որ հարկերի ավելացումը պարպագույն միջոցն է ֆեդերալ ծախսերը փոխհատուցելու ֆեդերալ բյուջեի պակասորդը կրճատելու և այդպիսով նվազեցնելու խնայողությունների վատնումը, որը թաքնված է խնայողությունների ու ներդրումների անհամապատասխանության հետևում, կառավարությունն ու Կոնգրեսի շատ գործիչներ երկյուղ ունեին, որ հարկերի ավելացումն ու հարկային բարեփոխումների կասեցումը կթուլացնեն աշխատելու, ներդնելու ու արտադրելու մղումը, ինչը բացասաբար կազդի տնտեսության ապագա կարգացման վրա Ավելին, հարկերի ավելացումն առանց ծախսերի աճի արդյունավետ սահմանափակումների կարող է չբավարարել ֆեդերալ բյուջեի պակասորդի կրճատման համար, ինչպես դա եղավ 1960-1980-ական թթ ժամանակահատվածում

1990 ական թթ սկզբին ֆեդերալ բյուջեի պակասորդն աճում էր տարբեր պատճառներով Գրեթե միանշանակ պարզվեց որ Գրամ-Ռուդման-Հոլինգս-ի նպատակների իրականացումը պահանջում է ֆեդերալ ծախսերի խոշոր կրճատումներ, որի հետևանքով կկրճատվեն կամ կվերացվեն շատ կարևոր ծրագրեր, և հնարավոր է որ տնտեսությունը խոր անկում ապրի Այդ մտավախությունը կանխելու համար Կոնգրեսն ու Բուշի վարչակարգը հանգեցին բյուջեի ընդհանուր համաձայնեցման օրենքի ընդունմանը 1990 թ Այդ օրենքով 31 տոկոսի առավելագույն հարկ դրեցին ամենահարուստ հարկատուների վրա (ստեղծելով եկամտահարկի երեք կարգ), ինչպես նաև այլևայլ բնույթի հարկեր հաստատվեցին կառավարական ծախսերի նոր խիստ կանոններ՝ «ոտքերդ վերմակովդ մեկնիր» (այնպես որ որևէ նոր ծախս պետք է փոխհատուցվեր նոր եկամտով կամ ծախսերի կրճատումով) Այդ օրենքի նպատակն է կրճատել բյուջեի պակասորդը մոտավորապես 500 միլիարդ դոլլարով՝ համեմատած այն հնարավոր գումարի հետ որին այն կհասներ հինգ տարվա ընթացքում այլ պարագաներում, և այդպիսով ԱՀԱ-ի 5 տոկոսի պակասորդը իջեցնել մինչև 2 տոկոսից էլ ցածր

Բայց ոչինչ հաստատապես չի կարելի ասել երբ խոսքը վերաբերում է Միացյալ Նահանգների հարկային քաղաքականությանը 1990-ական թթ Բուշի վարչակարգը ջանում էր անցկացնել կապիտալի աճից ստացվող եկամտի երկարաժամկետ դրույքի կրճատում՝ պնդելով որ դա կնպաստի տնտեսության աճին, կիրթանի խնայողությունը կիջեցնի կապիտալի արժեքը և կիրախուսի ներդրումը Եվ քանի որ տնտեսությունն անկում էր ապրում, նորից լսվեցին

միջին խավի ամերիկացիների հարկերը կրճ
կողմնակիցների ձայները

Ներքևում հայրը երեխաների հետ Նյու Յորքի կինոթատրոններից մեկի առջևում մոտավորապես 1900 թ

Հաջորդ էջում Միկի Մաուսը հավանաբար ԱՄՆ ի կվարձությունների արդյունաբերության խորհրդանիշը ձեռքով է անում Կալիֆորնիայի Անահեյմ քաղաքի Դիսնեյլենդի կվարձությունների կբոսայգու փողոցներից մեկում դարագլուխ

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳԾԵՐԸ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈԽՈՒՄ

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ

ԱՄՆ-ի տնտեսության խորագույն փոփոխություններից մեկը վերջին տասնամյակներում եղել է տեղաշարժը ապրանք արտադրող արդյունաբերությունից դեպի ծառայությունների մատակարարումը Սպասարկման արդյունաբերության ոլորտին են պատկանում գովազդը, բանկային ծառայությունները, խորհրդատվությունը, տվյալների մշակումը, կանգվածային կվարձությունները, պետական ծառայությունները, տուրիզմը, փոխադրամիջոցները և այլն Ավելին, սպասարկումն ու արտադրությունը հետզհետե ավելի են կապվում միմյանց, ասենք, երբ համակարգիչները վաճառվում են օգտագործման և վերանորոգման ծառայությունների ապահովման պայմանագրերով, կամ երբ նավթի արտադրությունը իր հետ բերում է բենզակայանների մանր ձեռնարկատերերի առաջարկած ծառայությունների շղթան Բացի դրանից, ծանր արդյունաբերության շատ բնագավառներ անկում են ապրել և կամ դանդաղեցրել աճը, մինչդեռ այլ բարձր տեխնոլոգիաների բնագավառները, որոնք գիտական հետազոտության ու կարգացման բարձր գործակից են պահանջում, վերելք են ապրել

Բենզինի վաճառքը Միացյալ Նահանգներում սկիզբ է առել այն բենզակայաններից, որոնք առաջարկում էին բենզինի միայն մեկ տեսակ Այսօր ԱՄՆ ի բենզակայանների մանր ձեռնարկատերերը առաջարկում են մեքենայի մի խումբ տարբեր վառելիքներ՝ կապարով առանց կապարի, դիզելային, ավտոմեքենայի և մեքենաների մասեր հաճախ նաև ավտոմեխանիկների ծառայություններ Վերևում՝ Սան կոկո բենզակայանը, 1926 թ

Հաջորդ էջում՝ ժամանակակից Էկսոն բենզակայանը


Clearance
13'

EXXON



Միացյալ Նահանգներում համաշխարհային II պատերազմից հետո մանրածախ առևտրի խանութների ցանցը հիմնականում կենտրոնացված էր քաղաքների ծայրամասերում, իսկ ավելի ուշ՝ առևտրի ծածկված կենտրոններում Վերևում՝ առևտրի մի նոր կենտրոն Սանտ Լուիսում (Միսսուրի) Յունիոն կայարանում

Աջից Կոլինս դեղատան ներսույթը Լոնգ Այլենդում (Նյու Յորք) 20 րդ դարի վաղ շրջանի տեղական խանութի նմուշ է


Cafe Med



Վարորդը կրուցում է ավտոմեքենայի շարժական հեռախոսով: 1982 թ. ի վեր Միացյալ Նահանգներում խորխային ռադիոտեխնոլոգիան համատարած կիրառում ստացավ: Խորխային հեռախոսները հնարավորություն են տալիս այն մարդկանց որոնք երթևեկում են քաղաքի տարբեր շրջաններում խոսել միմյանց հետ հեռախոսով

համակարգիչները փոխանցում են կանչերը մեկ հաղորդիչ ընդունիչից (կամ «խորսիից») մյուսին առանց ընդհատումների

1876 թ Ալեքսանդր Գրահամ Բելի հեռախոսի գյուտը հիմնովին հեղաշրջեց հաղորդակցությունների բնագավառը: Վերևում 1892 թ հոկտեմբերի 18 առաջին հեռախոսային կրույցի ժամանակ Բելը բռնել է Նյու Յորքի լսափողը և խոսում է Չիկագոյի (Իլինոյս) հետ

Միացյալ Նահանգներում փոստային ծառայությունները ապահովում են Յու. Էս Փոստալ Սերվիսը ինչպես նաև մասնավոր փոստային ճեպընթացներն ու ծանրոցները տեղ հասցնող ֆիրմաները Աջից՝ բանվորները տեսակավորում են ծանրոցները ֆեդերալ էքսպրեսի բաժանմունքներից մեկում Մեմֆիսի միջազգային օդանավակայանում (Թենեսի)

Ներքևում՝ փոստատարը մոտավորապես 1900 թ

Նոր կատարելագործված դեղորայքի ու բուժման եղանակների լայնատարած կիրառումը Միացյալ Նահանգներում հանգեցրել է հիվանդությունների ու վնասվածքների ախտորոշման ու բուժման կգալի առաջընթացի· Վերևում՝ կինը ենթարկվել է անպգայացնող եթերի ազդեցության և պատրաստ է վիրահատման վիրահատման, մոտավորապես 1847 թ

Ձախից՝ լայերային և լուսանկարչական սարք ունեցող էնդոսկոպի օգնությամբ վիրաբույժը կենում է հիվանդի որովայնի ներսը

Նախքան համակարգիչների գյուտը գրասենյակներում տարբեր մեքենաներ էին օգտագործվում տվյալներ կուտակելու համար: Վերևում՝ աշխատողը՝ Հոլերիթի տաբուլյատորի առջև Դա մեքենա է որը տեսակավորում ու խմբավորում է տեղեկությունները պերֆոքարտերի օգնությամբ ԱՄՆ ի մարդահամարի գրասենյակ մոտավորապես 1890 թ

Միացյալ Նահանգներում ձեռնարկատիրությունը հետզհետե ավելի շատ համակարգիչներ է օգտագործում բոլոր տեսակի աշխատանքների համար բանկային գործարքների հաշվարկման հանրախանութներում հաճախորդների գնումների արձանագրման գործարաններում մեքենաների վերահսկման հեռահաղորդակցությունների կառավարման և տնտեսական ու գիտական տվյալների վերլուծության համար Աջից՝ ԱՄՆ ի Սպրինտ գրասենյակի աշխատողը համակարգչի առջև ընկերության հեռահաղորդակցությունների գլխավոր գրասենյակում Կանզաս Սիտիում (Միսսուրի)







ԱՄԵՐԻԿՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՈՒՐՎԱԳԾԵՐԸ

ՄԱՍ ՈՒԹԵՐՈՐԴ

VIII

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՎՈՂ ԴԵՄՔԸ

Պետության ամենավաղ ժամանակներից ագարակագործությունը չափազանց կարևոր տեղ է գրավել ԱՄՆ-ի տնտեսության մեջ, և ագարակագործների առաքինությունները՝ ձեռներեցությունը, ջանադիր աշխատանքն ու ինքնավստահությունը փառաբանող պատմությունները, երկար ժամանակ կենտրոնական տեղ են կրաղեցրել Ամերիկայի մշակույթում Ամերիկյան գյուղատնտեսության վրա գցած հետաքրքիր հայացքն ապացուցում է, որ այն հերոսական փաստերի մի խառնուրդ է՝ փոքր-ինչ համեմված ցայսօր պահպանված առասպելներով Ագարակագործները հիրավի երբեք այդքան ինքնավստահ չեն եղել, ինչքան ժողովրդական պատմություններն են ենթադրում, քանզի ագարակագործները միշտ էլ մեծ չափով կախված են եղել իրենց վերահսկողությունից դուրս գտնվող գործոններից, ինչպես օրինակ՝ եղանակը, գյուղատնտեսական արտադրանքի շուկայական գինը և կառավարության քաղաքականությունը Այնուամենայնիվ, Ամերիկայի ագարակագործները դրսևորել են անհատապաշտության և անկողմնակալության ոգի, որով հիացել և որին հաճախ փորձել է նմանվել ԱՄՆ-ի հասարակության մյուս մասը Որպես հետևանք, դա նրանց առանձնահատուկ ուժ է տվել ԱՄՆ-ի քաղաքական մտքի բնագավառում, որը տակավին շարունակվում է, նույնիսկ երբ նրանց թիվը գահավեժ նվազել է

Ամերիկացի ագարակագործներն աշխարհով մեկ հայտնի են հեկտարից մեծ քանակությամբ բերք ստանալու կարողությամբ: Մասամբ դա բնության շռայլությամբ է պայմանավորված Արևմտյան Միացյալ Նահանգների համեմատաբար միայն մի փոքր շրջանում տեղումներն այնքան քիչ են, որ անապատներ գոյություն ունեն Մնացած վայրերում տեղումները տատանվում են չափավորից մինչև առատ, իսկ գետերն ու ստորգետնյա ջրերը լայնատարած ոռոգման հնարավորություն են տալիս Աշխարհի ագարակագործական ամենաբերրի տարածությունների մի մասը գտնվում է Ամերիկայի Միջին արևմուտքում

Ամերիկայի ագարակատիրոջ հաջողությունը նաև խոշոր կապիտալ ներդրումների և բարձր որակավորման աշխատուժի օրավուր աճող կիրառման արգասիքն է Սերմերը գիտականորեն աճեցրել և կրկին աճեցրել են, որպեսզի բարձր բերքատու լինեն և հնարավորին չափ դիմացկուն՝ հիվանդության և երաշտի հանդեպ Հաշվարկած առատությամբ օգտագործում են պարարտանյութերն ու ոռոգումը Մշակության և բերքահավաքի ժամանակ օգտագործվող մեքենաները նվազեցնում են մեկ միավոր արտադրանքի վրա դրված ծախսերն ու ժամանակը Արտառոց երևույթ չէ, երբ ագարակագործները վարում են տրակտորը օդաորակավորիչ կցասայլակով՝ ամրացված շատ թանկարժեք, արագընթաց, հերկող, մշակող և հավաքող սարքավորումներին

ԱՎԵԼԻ ՈՒ ԱՎԵԼԻ ԴԵՊԻ ԱԳՐՈԲԻԶՆԵՍ

Ամերիկյան գյուղատնտեսությունը գերապանցապես «ագրոբիզնես» է, մի տերմին, որը հորինել են արտացոլելու ԱՄՆ-ի ժամանակակից տնտեսության գյուղատնտեսական ձեռնարկատիրության լայնածավալ բնույթը Ագրոբիզնեսը վերաբերում է ագարակագործության հետ առնչվող ձեռնարկությունների ողջ համալիրին՝ սկսած անհատ ագարակագործից մինչև գյուղատնտեսության համար անհրաժեշտ քիմիական նյութերի բաշխվելու արտադրողը Նրա մեջ մտնում են ագարակագործական կոոպերատիվները, գյուղական բանկերը, գյուղատնտեսական արտադրանքի առաքիչները, ապրանքավաճառները, այն ֆիրմաները, որոնք գյուղատնտեսական սարքավորումներ են արտադրում, սննդի արդյունաբերությունը, նպարեղենի մանրածախ խանութների ցանցը և շատ ուրիշ ձեռնարկություններ

Ագրոբիզնեսը ստույգ կերպով բնութագրում է 20-րդ դարի վերջում ամերիկյան ագարակագործության մեջ տեղ գտած փոփոխությունները Մեկ դար առաջ աշխատուժի կեսն ընդգրկված էր ագարակագործության մեջ 1990-ական թթ այդ թիվը նվազեց մինչև 3 տոկոսից էլ ցածր Ամերիկայի վաղ շրջանում ագարակները տալիս էին այն արտադրանքի մեծ մասը, որը իրենք սպառում էին Այժմ առևտրական ագարակագործները գերապանցապես մասնագիտացել են, այնպես որ ագարակների մեծ մասում սպառվող գրեթե ողջ արտադրանքը գնում են առավելապես դրսից և ոչ թե ներսից Ընդհանրապես մեքենաները փոխարինել են վարձու աշխատուժի մեծ մասին

1940 թ 6 միլիոն ագարակներ կային, որոնցից յուրաքանչյուրն ուներ միջին հաշվով 67 հա հողատարածություն 1990 թ վիճակն այնպես փոխվեց, որ միայն 2 1 միլիոն ագարակներ կային, յուրաքանչյուրը՝ 185 հեկտար միջին հողատարածությամբ Նույն այդ ժամանակահատվածում ագարակներում վարձու աշխատողների թիվը ցնցող նվազում ապրեց՝ 1930 թ 12 5 միլիոնից 1990 թ հասնելով 2 9 միլիոնի, մինչդեռ ԱՄՆ-ի ընդհանուր բնակչությունը մոտավորապես կրկնապատկվել էր

Ճիշտ է, որ շատ ագարակներ մշտապես փոխանցվել են հորից որդուն Այսօր հողատարածության և սարքավորումների համար ներդրվող կապիտալի բարձր արժեքը դժվարացնում է անհատների մեծ մասի մուտքն ագարակագործություն Փաստորեն որոշ դիտորդներ հավաստում են, որ ընտանեկան փոքր ագարակն այլևս կենսունակ չէ Միացյալ Նահանգներում Ամերիկացի ագարակագործների մեկ երրորդը կամ ավելին իրականում միայն թերզբաղված ագարակագործներ են նրանք նաև ոչ ագարակագործական աշխատանք են կատարում՝ ավելացնելու իրենց եկամուտը 20-րդ դարի վերջին ագարակները գերապանցապես անցել են բաժնետիրական ընկերությունների ձեռքը՝ սկսած ընտանեկան կորպորացիաներից մինչև խոշոր կոնգլոմերատները

Ագարակային հողատարածության մոտ մեկ յոթերորդը կորպորացիաներինն է, որոնց մոտավորապես երկու երրորդը ընտանեկան կորպորացիաներն են ԱՄՆ-ի ագարակային հողատարածության փոքր-ինչ պակաս, քան մեկ տոկոսը ոչ քաղաքաբնակների սեփականությունն է

Որոշ մեկնաբաններ պնդում են, որ կառավարությունը պետք է կենսականորեն շահագրգռված լինի ընտանեկան ագարակների պահպանությամբ Նրանք մատնացույց են անում ընտանեկան ագարակների դերը ամերիկյան կենսափորձում և փաստարկում, որ ոչ ընտանեկան կորպորացիաները միայն շահագրգռված են շահույթով Նրանք նշում են, որ, ամենայն հավանականությամբ, այդ կորպորացիաներն ավելի, քան ընտանեկան ագարակները, օգտագործում են արտադրական այնպիսի տեխնիկա, որը կարող է վնասել միջավայրը Սակայն կորպորացիաների կողմնակիցները մատնանշում են, որ ոչ ընտանեկան կորպորացիաները սովորաբար ավելի մեծ դրամագլուխ ունեն, քան ընտանեկան ագարակները, և այդպիսով հնարավորություն ունեն կոնսերվացնող միջոցառումներ իրականացնել, որոնք փոխհատուցվում են միայն ավելի երկար ժամանակից հետո

ՎԱՂ ՇՐՋԱՆԻ ԱԳԱՐԱԿԱԳՈՐԾԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ամերիկյան գաղութների կառավարող մարմինները բարձրացրին հողերի բաշխման և օգտագործման հարցերը անկախություն նվաճելուց անմիջապես հետո 1787 թ Հյուսիս-արևմտյան հրամանագիրը միջոցներ ձեռնարկեց հետապոտելու Արևմուտքը՝ ընտանեկան ագարակների համար հողեր հայտնաբերելու միտումով Օրինակ՝ Օհայո և Միսսիսիպի գետերի միջև ընկած տարածություններին թույլ տրվեց նահանգներ դառնալ 13 սկզբնական նահանգներին հավասար հիմունքով, հենց որ նրանց բնակչությունը հասավ որոշակի մակարդակի Հողը պետք է վաճառվեր հեկտարը 2 50 դոլլարով

Նորաբնակների մեծ մասը, որոնք խիզախել էին դիմակայել արևմտյան էքսպանսիայի բպում վտանգներին, դրամ չուներ վճարելու հողի համար Հաճախ նրանք հիմնադրվել էին որպես «ապօրինի հողակալներ» (գաղթականներ)՝ առանց իրավական հիմք ունենալու իրենց ագարակների համար Հաստատվելուց հետո այդ նորաբնակները պայքար ծավալեցին փոխելու օրենքն այնպես, որ հողի մի մասն ապատ հոչակվեց, մինչ մյուս հողերը կարող էին գնել նվազագույն արժեքով և որի համար կարող էին վճարել տարիների ընթացքում

Մեկը մյուսին հաջորդող օրենքներն ավարտվեցին 1862 թ Ագարակատիրության օրենքով, անվճար հող տալով ապագա նորաբնակներին՝ պայմանով, որ նրանք համաձայնեն «ագարակատեր» դառնալ և ապրել այդ հողում որոշ ժամանակ Այդ և հաջորդ օրենքների ետևում թաքնված ստրատեգիան այն էր, որ հողը տրվի ընտանեկան ագարակագործներին 1862 թ Մորիլի օրենքով ուրիշ ֆեդերալ հողեր հատկացրին առանձին

նահանգների իշխանություններին այն նպատակով, որպեսզի նրանք գյուղատնտեսական և տեխնիկական քոլեջները մշտական եկամտով ապահովելու համակարգ մշակեն 69 այդ եղանակով ստեղծված՝ «հողամասով պարգևատրված քոլեջները», առանցքային դեր խաղացին գյուղատնտեսական հետազոտությունների առաջընթացի և ագրարակագործների գալիք սերունդների կրթության գործում

Երբ 20-րդ դարն սկսվեց, գյուղատնտեսության ղեկավարները մտահոգվեցին, որ կառավարության հետազոտություններից բխած գյուտերը չեն հասնում ագրարակագործներին Ցույց տալու համար, թե ինչպես նոր տեխնիկան կարող է օգնել ագրարակագործներին՝ բարձրացնելու բերքատվությունը, կառավարությունը սահմանափակ թվով «ցուցադրական ագրարակներ» հիմնադրեց և տեղի ձեռնարկատերերի ու ագրարակագործական խմբերի հետ միասին սահմանափակ թվով «ցուցադրական ագրարակների գործակալներ» վարձեց 1914 թ Կոնգրեսն այդ գաղափարին ազգային թափ հաղորդեց՝ հաստատելով «գյուղատնտեսության ընդարձակման նոր ծառայություն» Համատեղ ֆինանսավորվելով ֆեդերալ կառավարության և յուրաքանչյուր նահանգի հողամասով պարգևատրված քոլեջների կողմից՝ այդ ծառայությունը վարձում էր գործակալներ՝ տեղական իշխանության յուրաքանչյուր շրջանում գրասենյակներ հիմնադրելու համար, որպեսզի խորհուրդներով աջակցեր ագրարակագործներին և նրանց ընտանիքներին

1900-1930 թթ գյուղատնտեսության նախարարությունը նույնպես հիմնական հետազոտությունների առավել արդյունավետ ծրագիր ընդունեց Դա շատ առումներով օգնեց ագրարակագործներին և ընդհանրապես ժողովրդին Օրինակ՝ բրիտանական կղզիներից և Եվրոպայից ներմուծված խոզերի նոր գլխաքանակները խաչասերեցին՝ ստանալու այնպիսի խոզեր, որոնք ավելի շատ էին գիրանում ավելի պակաս հացահատիկով Հողը փորձարկում էին՝ որոշելու անհրաժեշտ պարարտանյութերի տեսակը՝ հացահատիկի արտադրությունն ավելացնելու նպատակով Փորձարկումների այլ տեսակներ ցնցող արդյունքներ տվեցին խառնածին սերմերի, բույսերի սնուցման, բույսերի և կենդանիների հիվանդությունների բուժման և վնասատուներից պաշտպանելու հարցերում

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ

Գյուղատնտեսության տարածումը 19-րդ դարում իր դերը խաղաց Միացյալ Նահանգների վաղ արդյունաբերացման գործում Չնայած վաղ շրջանի գյուղատնտեսության նպատակներն առնչվում էին ագրարակագործությամբ զբաղվելու պահպանելուն, կամ թե առանձին բնակավայրերի սահմաններում ապրանքափոխանակություն կատարելուն, այնուամենայնիվ, արդյունաբերությունն իսկապես փոքր-ինչ

կարգացավ գյուղատնտեսական ապրանքները վաճառելու շնորհիվ

19-րդ դարի կեսերին, երբ Արդյունաբերական հեղափոխությունն սկսվեց, և Արդյունաբերական հեղափոխությամբ բռնվեց ողջ Ամերիկան, գյուղատնտեսության և արդյունաբերության կապն ավելի ակնառու դարձավ Արդյունաբերության առաջխաղացումը, գլխավորապես փոխադրամիջոցների բնագավառում, ուժեղ ազդեցություն էր ունենում ագարակատիրոջ՝ ապրանքը շուկա տեղափոխելու հնարավորության վրա Զավեշտալի է, սակայն արդյունաբերության կարգացմանը նպաստող աշխատուժի մեծ մասը գալիս էր հենց գյուղական շրջաններից ագարակագործները հոծ բազմություններով քաղաքներ էին գնում՝ աշխատելու գործարաններում և ֆաբրիկաներում

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ

Դեպի Արևմուտք ընթացող շարժը բնութագրվում էր ագարակագործական ապրանքների գների բարձրացման և իջեցման ժամանակաշրջաններով Այն ագարակագործները, որոնք հողը գնում կամ ստանում էին որպես գաղթականներ գների թռիչքին հարող պահերին, ամենայն հավանականությամբ, բարգավաճում էին Նրանք կարող էին դրամ վաստակել իրենց բերքի վաճառքից, իսկ հաճախ կարողանում էին իրենց հողը վաճառել համեմատաբար բարձր գներով Սակայն այն ագարակագործները, որոնք սկսում էին այդ ցիկլի ամենաբարձր հատվածներին մոտ, սովորաբար ծանր դրության մեջ էին ընկնում Տարիներ շարունակ նրանք դեմ էին առնում իրենց արտադրանքի ցածր գներին և հաճախ կորցնում էին ագարակները, բացի այն գաղթականներից, ովքեր անվճար էին ստացել այն Նրանցից ոմանք, որոնք կորցրել էին իրենց ագարակները, դառնում էին վարձակալներ և աշխատում էին ուրիշի համար այդ մոդելը շատ տարածված էր հատկապես Հարավում, որտեղ ապատված ստրուկները հաճախ վարձակալ ագարակագործներ կամ «կիսրար» էին դառնում սպիտակների տնօրինած հողում Մյուս ագարակագործները շարժվում էին ավելի հեռուն՝ դեպի Արևմուտք, վերահաստատվելու ուրիշ ագարակներում որպես ապօրինի հողակալներ կամ գաղթականներ Այդ դարաշրջանի ագարակագործների մեծ մասը հիմնականում լավատես էր, հավատում էր ամերիկյան իդեալին, այն է՝ ամեն ոք կարող է հաջողության հասնել համառ աշխատանքով և փոքր-ինչ բախտի բերումով

1870-ական թթ շեմին ագարակագործներն ավելի խորամանկ էին դարձել ազգային քաղաքականության հանդեպ Նրանք հասկացան, որ ֆեդերալ կառավարության քաղաքականությունը կամ օգնում, կամ խոչընդոտում է իրենց ապրուստի միջոցներ վաստակելուն և սկսեցին փոխհատուցում պահանջել Մասնավորապես, ագարակագործներն սկսեցին

կառավարությունից օգնություն պահանջել՝ նոր հողերի նախնական մշակությունը դանդաղեցնելու միջոցով գները կայունացնելու համար Բացի այդ, նրանք բարեփոխություններ էին պահանջում բանկային համակարգում՝ բարենպաստ վարկային պայմաններ, որովհետև վարկի պակասը հիմնական խնդիրն էր ինչպես արևմտյան, այնպես էլ հարավային ագարակագործների համար Վերջիններս այնպիսի քաղաքականություն էին ուզում, որը նրանց ապահովեր «էժան դրամով» կամ ցածր տոկոսադրույքով՝ իրենց վարկի դիմաց

Մյուս պահանջների թվին էին պատկանում փոխադրման համակարգի բարելավումը, ներառյալ երկաթուղիների վերահսկողությունը, որն անելանելի կացության մեջ էր դնում ագարակագործներին ապրանքը հեռավոր շուկաներ փոխադրելիս Երկաթուղային ընկերությունները հաճախ անհավասար կամ անարդարացի գներ էին նշանակում Երկաթուղիների կենսական դերը բերքն ամերիկյան շուկաներն ու արտասահման առաքող նավահանգիստները փոխադրելու գործում կարևորվում էր այն փաստով, որ 1870-ական թթ նախորդած տարիներին գյուղատնտեսական մթերքների մոտավորապես մեկ հինգերորդը փչանում էր նախքան սպառողներին հասնելը Սակայն այդ տասնամյակում երկաթուղային գնացքների սառեցնող և ջեռուցող հարմարանքներն օգնեցին պահպանելու շուտ փչացող ապրանքները

Ագարակագործները ցածր սակացույց էին պահանջում ներմուծվող ապրանքների համար, այնպես որ սպառողական ապրանքները կարողանան ձեռք բերել ավելի էժան գներով Հավանաբար նրանց ամենավիճելի պահանջը վերաբերում էր ոչ թե միայն ոսկով, այլ արծաթով և ոսկով ապահովվող դրամին մի բան, որ հանգեցնելու էր դրամի արժեզրկմանը Ագարակագործները հուսով էին, որ դրամաքանակի ավելացումը կտանի դեպի գյուղատնտեսական ապրանքների գների բարձրացում

Ագարակագործների ընդվզումներն իրենց գագաթնակետին հասան 1896 թ , երբ նրանց առաջամարտիկներից մեկը՝ Ուիլյամ Ջենինգս Բրայանը նախագահության թեկնածու առաջադրվեց ժողովրդավարական կուսակցության կողմից Ընդհանուր առմամբ քաղաքաբնակներն ու արևմտյան գործարար շրջանները թերահավատությամբ էին վերաբերվում ագարակագործների պահանջներին, որը Բրայանի պարտության պատճառ հանդիսացավ հոգուտ հանրապետական թեկնածու Ուիլյամ Մակ-Քինլիի Դրանով նշանավորվեց ագարակագործների շարժման ամենավճռական փուլի ավարտը սակայն բազմաթիվ բարեփոխումներ, որոնք արդեն հավանության էին արժանացել, ներառյալ փոխադրամիջոցների վերահսկողությունը, ի վերջո օրինականացվեցին ֆեդերալ և նահանգային մակարդակներում

ՔՍԱՆԵՐՈՐԴ ԴԱՐԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համաշխարհային I պատերազմի նախօրյակին փաստորեն նոր հողեր այլևս չկային սեփականաշնորհելու Չարաշահած մշակությունից աղքատացած և երկար ժամանակ էրոզիայով բռնված հողերն իջեցրին Միացյալ Նահանգների ագարակահողերի մեծ մասի բերքատվությունը Անտառները կամ հատեցին, կամ հրկիզեցին լրացուցիչ ցանքատարածություններ հայթայթելու համար Մեծ տափաստանների խոտի տակ դրված հսկայական հողատարածություններն ամայացան որպես արոտավայր չարաշահելուց· 1930-ական թթ կեսերին իրար հաջորդող երաշտի տարիները բերքի ծայրահեղ կորուստների հանգեցրին Միջին արևմուտքում Մեծ տափաստանների քամիներն ուժեղ փոշեմրրիկներ առաջացրին ամայացած հողերում

Նոր հողերի օգտագործման ու կոնսերվացման քաղաքականությունն սկսեց վարգանալ ի պատասխան այդ մարտահրավերի. Կառավարությունը որոշեց, որ ագարակագործները աջակցության և հողօգտագործման լավագույն փորձի վրա կրթելու կարիք ունեն Անկախ մտածելակերպի տեր ագարակագործները երբեմն դժվարանում էին համակերպվել, որ իրենք ավելի շատ պետք է մտածեն երկարաժամկետ անձնական շահի, քան թե հաջորդ տարվա բերքի տեսանկյունից Կառավարությունը կոնսերվացումով զբաղվող գործակալներին վարձում էր՝ ցուցադրելու լավագույն տեխնիկան, և երբ ագարակագործները տեսնում էին, որ նոր մեթոդներ կիրառող հարևանները բարգավաճում են, սկսում էին կիրառել այդ նոր մեթոդները Բացի այդ, հողերի առողջացման համար կառավարությունն իր խրախուսանքն էր արտահայտում անվճար ծառայությամբ կամ նույնիսկ կանխիկ վճարման ձևով

1920-ական թթ ամերիկյան գյուղատնտեսության արտադրանքի պահանջարկը նվազեց, քանի որ եվրոպական երկրներն սկսեցին ապաքինվել համաշխարհային I պատերազմից հետո և խիստ տնտեսավարման ծրագրեր իրականացրին՝ նվազեցնելու ներմուծումները Դրա հետևանքը եղավ գյուղատնտեսական ապրանքների գների կտրուկ անկումը Այդ ժամանակաշրջանն ավելի աղետալի էր, քան նախկինում, որովհետև ագարակագործներն այլևս անկախ չէին Նրանք վճարում էին սարքավորումների, սերմի և պարարտանյութի համար, ինչպես նաև գնում էին սպառողական ապրանքներ Ագարակագործների ձեռք բերած ապրանքների գները մնում էին անփոփոխ, մինչդեռ նրանց տված արտադրանքի գներն ընկնում էին Այսօրինակ ընթացքն ավելի վատացավ Մեծ ճգնաժամի տարիներին, որն սկսվեց 1929-ին և ծավալվեց 1930-ականների ամբողջ ընթացքում

1929 թ նախագահ Հերբերտ Հուվերը հիմնադրեց Ագարակագործության ֆեդերալ վարչությունը Այն հաստատում էր մատակարարմանն ու պահանջարկին ուղղակի միջամտելու սկզբունքը և իրենից ներկայացնում էր ագարակագործների

համար տնտեսական ավելի մեծ կայունություն ապահովող ազգային առաջին պարտավորությունը

Նախագահ Ֆրանկլին Դ. Ռուզվելտի առաջարկած առաջին միջոցառումներից մեկը, երբ նա իշխանության գլուխ եկավ 1933 թ., Գյուղատնտեսության կարգավորման օրենքն էր, որն ավելի ուշ վավերացվեց Կոնգրեսի կողմից։ Այդ օրենքը գյուղատնտեսության նախարարությանը լիազորություն տվեց ագարակագործների հետ կամավոր համաձայնության գալու միջոցով կրճատել արտադրությունը։ Ագարակագործներին վճարում էին հողը կոնսերվացնելու համար։ Վճարումները կատարվում էին ի հաշիվ սննդարդյունաբերության ձեռնարկությունների օգտագործման հարկերի։ Դրա նպատակն էր գյուղատնտեսական ապրանքների մատակարարումը սահմանափակելու միջոցով բարձրացնել գները։ 1936 թ. այդ օրենքը ոչ սահմանադրական հռչակվեց Գերագույն դատարանի կողմից այն փաստարկումով, որ սննդարդյունաբերողների վրա դրած հարկերը չի կարելի օգտագործել արտադրությունը վերահսկելու ծրագրում։ Սակայն անմիջապես նոր օրենքներ ընդունվեցին, որոնք հանգեցրին հողերը պարապության մատնելուն և վարարումները վերահսկող միջոցառումների՝ հողի կոնսերվացման սկզբունքի հիման վրա։ Ռուզվելտի վարչակարգը հավատում էր, որ երկրի հողերի վերականգնումը բխում է ազգի շահերից և ոչ թե պարզապես մյուս քաղաքացիների հաշվին ագարակագործներին օգնելու ծրագիր է։ Հետագայում կառավարությունը ագարակագործներին վարկ տրամադրեց, որպեսզի նրանք կարողանան ագարակագործական սարքավորումներ, խաչասերված սերմեր և պարարտանյութեր գնել։

Այլ միջոցառումներ ծրագրվեցին Միացյալ Նահանգների ագարակագործ ընտանիքներին օգնելու համար։ 1935 թ. Կոնգրեսը հիմնադրեց Գյուղերի էլեկտրիֆիկացման վարչությունը (ԳԷՎ), որն էլեկտրահաղորդման գծերը տարածեց գյուղական շրջաններում։ Հիմնադրվեցին տեղական կոոպերատիվներ, որոնց ֆեդերալ կառավարությունը վարկ տրամադրեց էլեկտրահաղորդման գծերը գյուղերում անցկացնելու համար։ Ագարակագործները շուտով տեսան, որ էլեկտրականությունը տեխնոլոգիական խոշոր առաջընթացի հնարավորություն է ընձեռում։ 1960-ական թթ. շեմին բոլոր ագարակների 97 տոկոսն էլեկտրականություն ուներ։ Ագարակագործներին ցույց տրված օժանդակության մեջ կարելի է թվարկել «ագարակ-շուկա» ճանապարհների ցանցը, որի շնորհիվ մեծ ու փոքր քաղաքները հեշտությամբ կապվեցին գյուղական շրջանների հետ։

ԳՆԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՏԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1938 թ. ագարակագործական օրենսդրությունը քննարկման ներկայացրեց գների «համահավասարություն» հասկացությունը, գներ, որոնք ագարակագործներին նույն

հարաբերական գնողունակությունը կտային, ինչ որ ագարակագործական ապրանքների գները՝ ստրկատիրության բարենպաստ ժամանակներում Եթե արտադրանքն ավելի շատ է, քան այն, որը կարող է վաճառվել համահավասար գների որոշակի տոկոսով, կառավարությունը համաձայնում է գնել ավելցուկը ընդհանրապես դա արվում է ագարակագործների հետ համաձայնեցված գնումների կամ էլ անփոխանցագիր փոխառությունների ծրագրերի միջոցով Ըստ այդ ծրագրերի՝ կառավարությունը ագարակագործներին կայուն գին է վճարում որպես փոխառություն այն բերքի դիմաց, որը պահեստավոր-վում է Ագարակագործները կարող են փոխառությունն ամբողջությամբ վճարել՝ բերքը հանձնելով կառավարությանը

Մոտավորապես կես դար վիճաբանություն էր բորբոքված համահավասարության սկզբունքով ագարակագործներին օժանդակելու ողջամտության շուրջը Շատերը ընդդիմանում էին այդ օժանդակությանը բարձր արժեքի պատճառով Մյուս խնդիրն այն էր, որ պահեստավորման ամբարները պայթում էին ապրանքից համաշխարհային II պատերազմից հետո լքված նավերը 1950-ական թթ շեմին լցնում էին հացահատիկով, իսկ նրա մյուս մասը դիպչում էին գետնին, ուր այն արագ փտում էր

1980-ական թթ սկզբին կառավարության Բնամթերքով վճարելու (ԲՎ) ծրագիրը ուժեղ ազդեցություն ունեցավ հացահատիկի արտադրության վրա Այդ ծրագիրն ուղղված էր հացահատիկի, բրնձի և բամբակի առկա պաշարների նվազեց-մանը և կառավարության պահեստավորման արժեքի իջեցմանը Ըստ ԲՎ-ի, ագարակագործներին վճարում էին կառավարության տնօրինած ագարակային ապրանքներով, որպեսզի նվազեցնեն ցանքատարածությունները ԲՎ-ին հաջողվեց Ամերիկայի ցանքատարածությունների 25 տոկոսը կոնսերվացնել

1973 թ ԱՄՆ-ի ագարակագործները սկսեցին օժանդակ եկամուտ ստանալ «պակասորդի» վճարումներով Դրանք կառավարության այն վճարումներն են, որոնք ծրագրված են փոխհատուցելու ագարակագործներին այն տարբերության համար, որ գոյություն ուներ ագարակագործների ստացած բերքի շուկայական գների և ծրագրված կայուն գների միջև Այդ ծրագրին մասնակցելու համար ագարակագործները դարձյալ իրենց հողերի մի մասը պետք է կոնսերվացնեին

Գների համահավասարությունը և պակասորդի վճարումը վերաբերում են միայն որոշակի այնպիսի մթերքների, ինչպիսիք են հացահատիկը, բրինձը և բամբակը Շատ այլ մթերքների համար պետությունը լրավճար չէր տալիս Բերքի մի քանի այլ տեսակներ, ինչպիսիք են կիտրոնն ու նարինջը, շուկայական բացահայտ սահմանափակումների առարկա են Ըստ այսպես կոչված «շուկայական պատվերների», բերքի այն քանակը, որն աճեցնողը կարող է թարմ-թարմ վաճառել, սահմանվում է շաբաթ առ շաբաթ Վաճառքը սահմանափակելով՝ այդպիսի պատվերները նպատակ ունեն բարձրացնել ագարակագործների եկամուտը

ՀԱՎԵԼՅԱԼ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ

1920-ական թթ-ից մինչև 1980-ական թվականների ավարտը Ամերիկայի գյուղատնտեսության խնդիրը գերարտադրությունն էր Երկու տիպի ծրագրեր առաջացան, որպեսզի օգնեն օգտագործելու հավելյալ սննդամթերքները 1954 թ Կոնգրեսն ընդունեց Պետական օրենք 480-ը, որը կոչվեց «Մնունդ հանուն խաղաղության» Սննդամթերքի և անասնակերի արտահանությունը Միացյալ Նահանգներից օգնեց արագացնելու Եվրոպայի և Ճապոնիայի վերականգնումը այսպիսով՝ քաղաքական գործիչները եկրակացնում էին, որ այդ առաքումներն արդյունավետ կլինեն աջակցելու կարգացող երկրների տնտեսական կարգացմանը

Ագարակագործները «Մնունդ հանուն խաղաղության»» ծրագիրը դիտում էին որպես ակգային գերարտադրությունը նվազեցնելու միջոց, որն իջեցնում էր գները Տնտեսագետ քաղաքաբնակներն այն դիտում էին որպես միջոց՝ իջեցնելու գերարտադրված հացահատիկի պահեստավորման պետական արժեքը Ի վերջո, բարեգործներն այն դիտում էին որպես աշխարհի կերակրմանն օգնող միջոց Այդ սննդամթերքի մեծ մասը կարգացող երկրներում օգտագործում էին որպես խրախուսական վարձատրություն, երբ տեղական կարգացման նախագծերի վրա աշխատողներին վճարում էին ամերիկյան պարենամթերքով

Սննդամթերքի արտադրության մեջ Միացյալ Նահանգների հաջողությունը ոմանք դիտում են որպես աշխարհի ակգաբնակչությանը ապագայում սնելու համընդհանուր ջանքերի անբաժանելի մաս Տարիներ ի վեր Ամերիկայի հացահատիկի գերարտադրությունը կարևոր գործոն է հանդիսացել աշխարհի սննդամատակարարման մեջ Հաշվի առնելով աշխարհի ակգաբնակչության աճը՝ տրամաբանական է հետագա հարաբերակցություն ակնկալել Ամերիկայի և աշխարհի մնացած մասի գյուղատնտեսությունների միջև

Գերարտադրված սնունդն օգտագործում են նաև կերակրելու Միացյալ Նահանգների թերասնված բնակչությանը Ծրագրերից մեկը ձրի կամ իջեցված գներով դպրոցական նախաճաշով ապահովում է ցածր եկամուտ ունեցող ընտանիքների երեխաներին՝ դրա համար օգտագործելով գերարտադրված կաթնամթերքը և կառավարության կողմից գնված այլ ապրանքներ Մեկ այլ ծրագրով համարյա ամբողջ 1980-ական թթ ընթացքում կառավարությունը լրացուցիչ պանիր, կարագ, ոչ յուղալի կաթի փոշի է բաշխել աղքատներին Երրորդ ծրագիրը՝ Սննդամթերքի կտրոնների ֆեդերալ ծրագիրը, արագ կերպով տարածվեց 1970-ական թթ կեսերին այն ընդունելուց հետո Ըստ այդ ծրագրի՝ ցածր եկամուտ ունեցող անձինք իրավունք ունեն սննդամթերքի կտրոններ ստանալ, որոնք նպարեղենի խանութներն ընդունում են իբրև վճար սննդամթերքի դիմաց

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԱԳԱՐԱԿԱԳՈՐԾԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ

Գների, եկամուտների և ագարակագործներին աջակցելու այլ ձևեր կիրառվում են գյուղատնտեսական արտադրանք տվող գրեթե բոլոր երկրներում 1970-ական թթ վերջին և 1980-ական թթ սկզբին, երբ համաշխարհային գյուղատնտեսական շուկայի պայմաններն ավելի ու ավելի անկայուն էին դառնում, գյուղատնտեսական արտադրանք տվող երկրների մեծ մասը ծրագրեր ընդունեց՝ կայունացնելու հայրենական շուկաները Երկրներն ուժեղացրին գոյություն ունեցող ծրագրերը կամ նոր քաղաքականություն կիրառեցին՝ պաշտպանության վահանի տակ առնելով իրենց ագարակագործներին հաճախ «օտարերկրյա» համարվող քայքայումից Վերջին տարիներս այդ գործելակերպը նպաստել է գյուղատնտեսական ապրանքների օտարերկրյա շուկաների նեղացմանը, ապրանքների միջազգային գների անկմանը և բազմաթիվ արտահանող երկրների գյուղատնտեսական ապրանքների ավելացող գերարտադրությանը

1980-ական թթ Ամերիկայի ագարակագործները թևակոխեցին տնտեսական դժվարությունների մի նոր ժամանակաշրջան Գյուղատնտեսական արտադրանքի արտահանությունը վայրէջք ապրեց մասամբ ԱՄՆ-ի դոլլարի բարձր գնի պատճառով՝ ուրիշ տարադրամների համեմատությամբ (որը բարձրացնում էր ԱՄՆ-ի արտադրանքի արժեքը օտարերկրյա գնորդների համար) Բերքի գներն ընկան, տոկոսադրույքները բարձրացան, և ագարակագործները խիստ դժվարացան վճարելու այն փոխառությունների դիմաց, որոնք վերցրել էին ավելի բարձր եկամուտ ունեցած ժամանակ Սկսեցին կիրառել կառավարական և անհատական որոշ ծրագրեր՝ օգնելու տնտեսության վերականգնմանը

1985թ Կոնգրեսը հաստատեց Ագարակագործության նոր օրենքը, որը ծրագրում էր բարձրացնել ԱՄՆ-ի գյուղատնտեսական արտադրանքի միջազգային մրցունակությունը Ավելի պարզ ասած՝ այդ օրենքը նախատեսում էր ագարակագործական հիմնական ապրանքների գները պահպանել ի պատասխան շուկայական միջին գների տեղաշարժի Ավելացնենք, որ այդ օրենքը նախատեսում էր նաև 16-18 հեկտար միջավայրին կգայունակ ցանքատարածություններ 10-15 տարի թողնել անմշակ և նախատեսված գները յուրաքանչյուր հինգ տարում իջեցնել մոտավորապես 10 տոկոսով

1986 թ հուլիսին Միացյալ Նահանգները հանդես եկավ միջազգային գյուղատնտեսական առևտրի համընդհանուր բարեփոխության առաջարկով դա հայտնի էր որպես բազմակողմանի առևտրական բանակցությունների Ուրուգվայյան փուլ Միացյալ Նահանգները դիմեց աշխարհի առաջին միջազգային համաձայնագրի՝ Սակացույցների և առևտրի ընդհանուր համաձայնագրի (ՍԱԸՀ) անդամ 90-ից ավելի երկրների՝ բանակցելու առևտրական բարեփոխումների ավելի ծավալուն փաթեթի հարցերի մի մասի շուրջը, այն է՝ ագարակագործների բոլոր լրավճարների աստիճանական

վերացումը և այլ գործընթացներ, որոնցով պայմանավորված են գները, արտադրությունը, առևտուրը կամ գյուղատնտեսական շուկայի այլ աղավաղումներ Հետևելով Միացյալ Նահանգների քննարկման ներկայացրած առաջարկությանը՝ ուրիշ երկրներ կամ երկրների խմբեր հանդես եկան մի քանի այլ նոր առաջարկություններով Չնայած դրանք միանգամայն տարբեր էին, սակայն սկզբում թվում էր, թե մասնագետների ճնշող մեծամասնությունը համաձայն է այն մտքին, որ առևտուրն աղավաղող սակացույցներից պետք է ավելի ապատ շուկա դուրս գալ Մասնավորապես, Միացյալ Նահանգները փորձում էր ի կատար ածել եվրոպական ագարակագործական սակացույցների իսպառ վերացումը և վերջ դնել Ճապոնիայի ու Հարավային Կորեայի բրնձի ներմուծման վրա դրած արգելքներին Սակայն բանակցությունները հարթ չէին ընթանում ինչպես հաճախ եղել էր ագարակագործական սակացույցները կրճատելու մասին միջազգային համաձայնագրեր ձեռք բերելու նախորդ փորձերի ժամանակ, ոչ մի համաձայնության չհանգեցին մինչև 1990 թ դեկտեմբերի 31-ին նշանակված վերջին ժամկետը Բանակցությունները քաշքշուկի վերածվեցին և հավանաբար ձախողման էին դատապարտված, սակայն 1991 թ կեսերին Արևմուտքի արդյունաբերացված երկրների ղեկավարներն իրենք նորից անդրադարձան ու հաջող ավարտի հասցրին Ուրուգվայյան փուլը, և բանակցությունները շարունակվեցին ամբողջ 1992 թ ընթացքում

Մինչ այդ, 1990 թ ԱՄՆ-ի կառավարությունը, ֆեդերալ բյուջեի պակասորդի շարունակվող բարձր մակարդակի պարագայում, նոր ջանքեր գործադրեց նվազեցնելու ագարակագործների պաշտպանության բեռը, որն ընկած էր սպառողների և հարկ վճարողների ուսերին Կոնգրեսի այդ տարին ընդունած օրենքը հնարավորություն ընձեռեց այլընտրանքային կամ այնպիսի կուլտուրաներ ցանել, որոնք տարբեր էին սովորաբար ցածր վարձատրություն բերող կուլտուրաներից՝ մինչ այդ նվազեցնելով ցածր վարձատրություն բերող բույսերի համար հատկացված ցանքատարածությունները Հույս ունեին, որ դա հինգ տարվա ընթացքում 10 միլիարդ դոլլարի խնայողություն կբերի խթանելով այն կուլտուրաների ցանքը, որոնք չեն որակվում որպես ցածր վարձատրվող, միաժամանակ խրախուսելով առողջ միջավայրի ցանքաշրջանառության փորձը Սակայն բարձր ու կայուն գների խրախուսանքը պահպանվեց որոշակի ապրանքների հանդեպ, և որոշ ագարակագործական ապրանքաշուկաների ըստ ամենայնի կառավարական ղեկավարումը շարունակվում է

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳԾԵՐԸ

ՄԱՍ ԻՆՆԵՐՈՐԴ

IX

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ. ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ

Ինչքան էլ կարմանալի թվա, Միացյալ Նահանգները, լինելով համեմատաբար նոր պետություն, ունի աշխարհի ամենահին, կազմակերպված արհմիութենական շարժումը Միացյալ Նահանգներում արհմիությունները գոյություն են ունեցել դեռևս 18-րդ դարի վերջերից Միացյալ Նահանգների վաղ շրջանի հասարակական երեք գործոնների ուսումնասիրությունը կօգնի դրա բացատրությանը Նախ և առաջ դա աշխատուժի պակասն էր, որը հիմք էր տալիս օգտվել այդ սակավությունից համեմատաբար հաջող գործարքների համար Երկրորդ՝ 19-րդ դարի սկզբներին տղամարդկանց ընտրական իրավունքը ընդհանրապես արդեն ընդունված էր Միացյալ Նահանգներում Եվրոպայի բանվորները պայքարում էին ձայնի այդ իրավունքը ձեռք բերելու համար, մինչդեռ Ամերիկայի աշխատավորներն այն արդեն նվաճել էին (Ստրուկներն, իհարկե, չէին կարող ընտրել, իսկ կանայք նվաճեցին այդ իրավունքը միայն 1920 թ. Հարավի սևամորթ ամերիկացիները ընտրություններում վճռական ձայնի իրավունք չունեին մինչև 1960 թ)

Եվ վերջապես՝ Միացյալ Նահանգները ըստ էության ֆեոդալիզմի պատմություն չի ունեցել, և շատ քիչ աշխատավորներ են իրենց դասակարգային պայքարի մեջ ներգրավված համարել Մեծ մասամբ նրանք իրենց հավասար են համարել ամերիկյան հասարակության մնացած տարրերին՝ հաջողության նույն հնարավորություններից օգտվելու իրավունքով

Ամերիկայի բանվորական շարժման փիլիսոփայական հիմքը խիստ տարբեր է մյուս երկրներից ԱՄՆ-ի բանվորական շարժումը հատուկ նշանակություն էր տալիս աշխատանք ունենալու նրանց ընդհանուր իրավունքին, մի բան, որը դիտվում էր որպես ավանդական սեփականատիրական իրավունքի տրամաբանական շարունակություն, ինչը ինքնին պահպանողական համոզմունք էր Ամերիկյան արհմիություններն աշխատանքային այդ վիճելի հարցերի վրա ուշադրությունը կենտրոնացրին, որպեսզի օգուտ քաղեն ապատ ձեռներեցության հենց գոյություն ունեցող համակարգում Ամենավաղ շրջանում ստեղծված արհմիությունները Միացյալ Նահանգներում շատ առանձնահատուկ նպատակներ ունեին այդ թվում՝ աշխատավարձի, ժամերի ու աշխատանքային պայմանների բարելավումը և անվճար տարրական կրթության իրավունքը

Աշխատանքի ամերիկյան ֆեդերացիան (ԱԱՖ), որը հիմնադրվել էր 1880-ին, երկրի գլխավոր արհմիութենական կազմակերպությունն է եղել մինչև 1955 թ , երբ այն միավորվեց Արդյունաբերական կազմակերպությունների համաժողովի (ԱԿՀ) հետ միավորված ԱԱՖ-ԱԿՀ-ն երկրի ամենախոշոր արհմիութենական կազմակերպությունն է այդ ժամանակից ի վեր ԱԱՖ-ի և ԱԱՖ-ԱԿՀ-ի ղեկավարները սոցիալիստներից հուսախաբվածներն էին Նրանցից յուրաքանչյուրը շեշտում էր Ամերիկայի արհմիութենական շարժման գործնական բնույթը

Այդ ղեկավարները ձգտել են բարձրացնել Ամերիկայի աշխատավորների իրական կենսամակարդակը և ոչ թե քաղաքական իշխանությունը և հասել են որոշ հաջողությունների

Քանի որ մեծ մասամբ Ամերիկայի աշխատավորներն իրենց էապես տարբեր չեն զգացել մյուս շերտային խմբերից, հետևաբար քիչ են մտահոգվել Ամերիկայի աշխատավորական կուսակցություն ստեղծելու համար Սակայն սխալ կլիներ ենթադրել, թե ԱՄՆ-ի բանվորական շարժումը խույս է տվել քաղաքական գործողություններից Թե՛ նահանգային, թե՛ տեղական քաղաքականության հարցերում բանվորական շարժումը միշտ էլ շատ գործուն է եղել թեկնածուներին հաստատելիս և նպաստավոր օրենսդրության ձգտելիս Սակայն համազգային մակարդակով ամերիկյան բանվորական շարժումը, որպես ավանդույթ, միշտ շատ զգույշ է եղել բացահայտելու իր ձեռագիրը Նա լոելյայն պաշտպանում էր Վուդրո Վիլսոնին նրա նախագահության ժամանակաշրջանի ընթացքում (1913 1921), այնուհետև բացահայտորեն պաշտպանում էր նախագահ Ֆրանկլին Դ Ռուզվելտին (1932- 1945) և նախագահ Հարի Ս Տրումենին (1945-1953) 1950-ական թթ շեմին Ամերիկայի բանվորական շարժումը ակնհայտորեն խոր կերպով ներգրավվեց ժողովրդավարական կուսակցության ներքին քաղաքականության մեջ Որոշ դեպքերում կուսակցության ղեկավարությունը եռանդուն աջակցություն էր ցույց տալիս շարժմանը, ուրիշ դեպքերում գործերը լավ չէին գնում

Դեռևս Ֆրանկլին Ռուզվելտի նախագահության ժամանակներից Միացյալ Նահանգները հարաբերականորեն հանդուրժողական վերաբերմունք է ունեցել աշխատավորական կազմակերպությունների հանդեպ Միշտ չէ, որ այդպես է եղել Մինչև 1933 թ արհմիութենական շարժմանը դիմակայում էր ձեռնարկատերերի ուժեղ, իսկ երբեմն կատաղի ընդդիմությունը բացառությամբ պատերազմի ժամանակաշրջանի 1920-ական թթ գիտական կառավարման տենդենցը՝ մարդկային ռեսուրսների կառավարման, բարձրացող իրական աշխատավարձի հետ միասին, Ամերիկայի աշխատավորներին առաջարկեց այն, ինչը հոչակվում էր որպես արհմիութենական շարժման արդյունավետ այլընտրանք Սակայն 1929-1940 թթ Մեծ ճգնաժամը խոշոր արհմիությունների աճի խթան հանդիսացավ

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԾՆՈՒՆԴԸ

Զնայած Ամերիկայի բանվորական շարժումը վաղ սկսվեց երկրի պատմության մեջ և թեև բնույթով առավելապես արդյունաբերական էր, սակայն նրա զարգացումն արագ ու հարթ չընթացավ 1839 թ արդյունաբերության մեջ ընդգրկված էր աշխատուժի միայն 17 տոկոսը, իսկ 1859 թ՝ միայն 32 տոկոսը Միացյալ Նահանգները տակավին գերապանցապես գյուղատնտեսական երկիր էր Դա իրականում չփոխվեց մինչև 19 րդ դարի վերջին տասնամյակները

Ոչ որակյալ բանվորները համեմատաբար աղքատ կյանք էին վարում նոր երկրում Աշխատողների 40 տոկոսը քաղաքներում սնագործ բանվոր ու դերձակուհի էին հագուստի ֆաբրիկաներում Այդ խումբը ցածր աշխատավարձ էր ստանում և հաճախ ապրում էր ծանր պայմաններում Որակյալ բանվորները, ինչպես օրինակ՝ արհեստավորները, վարպետները ու մեխանիկները, ստանում էին ոչ որակյալ բանվորների վարձատրության կրկնակին Նրանք մտադիր էին սեփական տուն ձեռք բերել և համարվում էին իրենց համայնքի պատկառելի քաղաքացիները Ոչ ուշ, քան 1830-ական թթ-ը, ատաղձագործները, տպագրիչները, կոշկակարները և ուրիշներ սկսել էին միավորվել օրավարձու բանվորների միություններում կամ բարեգործական ընկերություններում Թեև նրանք արհմիությունների մեջ իրենց միավորված չէին համարում, այնուամենայնիվ իսկապես գործում էին միասնաբար Նրանք պահանջում էին նվազագույն աշխատավարձ և ավելի կարճ աշխատաժամանակ աշխատանքային օրը ձգվում էր առավոտ ծեգից մինչև մթնշաղ դա նշանակում էր, որ այն ամռանն ավելի երկար էր, քան ձմռանը

Գործարանների երևան գալու հետ մեկտեղ կարևոր փոփոխություններ տեղի ունեցան աշխատուժի մեջ մեքենաներն աշխատեցնելու համար երեխաներին, կանանց և աղքատ նորաբնակներին օգտագործելը սովորական բան դարձավ Նոր Անգլիայում 1820-ական և 1830-ական թթ 16-ից ցածր տարիքի երեխաները կազմում էին որոշ գործարանների, հատկապես մանածագործական գործարանների, աշխատուժի մեկ երրորդից մինչև կեսը Հարավի բոլոր ստրուկ բնակիչների 5 տոկոսն աշխատում էր գործարաններում 1850 թ շեմին Ստրուկների մոտավորապես չորս հինգերորդը շահագործվում էր հենց նրա՛նց կողմից, ում պատկանում էր, իսկ մյուսներին տերերը վարձով տալիս էին գործարանատերերին

Արդյունաբերության աճը այլ փոփոխություններ նույնպես բերեց Նորամուծությունները տեխնոլոգիայի և ձեռնարկատիրության մեջ հանգեցրին և՛ աշխատուժի, և՛ կառավարման մասնագիտացմանը Այս հանգամանքը՝ աշխատանքում ընդգրկված բանվորների թվի աճի հետ մեկտեղ, նրանցից շատերին բերեց այն համոզման, որ իրենք ձայն չունեն սեփական տնտեսական ճակատագրի տնօրինման մեջ Նրանք օտարացում ապրեցին՝ աշխատանքից կտրված լինելու զգացում, և սկսեցին իրենց պատկերացնել որպես արդյունաբերական մեքենայի անվատամ Ոմանք դիմեցին արհմիություններին՝ բարելավելու իրենց վիճակը

Առաջին կարևոր ազգային բանվորական շարժումը կոչվեց «Աշխատանքի ասպետների» շարժում Հիմնադրվելով 1869 թ Քաղաքացիական պատերազմից հետո՝ այն սկսվեց Ֆիլադելֆիայում (Փենսիլվանիա)՝ հագուստի ձևարարների շրջանում Ասպետներն իրենց նվիրեցին բոլոր բանվորների վիճակի ընդհանուր բարելավման կազմակերպման գործին

Սկզբում «Աշխատանքի ասպետները» գաղտնի կազմակերպություն էր Այն լայն ընդգրկում ուներ ողջունում էին բոլորին՝ սևամորթներին, կանանց, ազարակագործներին և վաճառականներին, ինչպես նաև ծառայողներին Բացառվում էին միայն «իրավաբանները, բանկիրները, խաղամոլներն ու բաժնետերերը» Ասպետներն իրենց բարձրակետին հասան 1880-ական թթ կեսերին, երբ շահեցին ամերիկացի միլիոնատեր Ջեյ Գուլդի երկաթուղիների դեմ ուղղված գործադուլը 1886 թ շեմին այդ կազմակերպությունը 700 000 անդամ ուներ՝ և՛ որակյալ արհեստավորներ, և՛ գործարանների ոչ որակյալ բանվորներ

Սակայն «Ասպետների» ներսում կանապան խմբերի շահերը բախվում էին միմյանց Այսպիսով՝ անդամներն իրենց չէին նույնացնում շարժման հետ «Ասպետները» տանուլ տվեցին Գուլդի երկաթուղիների դեմ ուղղված երկրորդ գործադուլը 1886-ին, և նրա անդամների թիվը արագ նվազեց 1880-ական թթ վերջերին

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՖԵԴԵՐԱՑԻԱՆ

1881 թ հոլանդացի ներգաղթող Սեմյուել Գոմպերս անունով սիգարագործը և ուրիշ առաջատար արհեստավորներ կազմակերպեցին Միացյալ Նահանգների և Կանադայի Արհեստների և աշխատանքի միությունը՝ Աշխատանքի ամերիկյան ֆեդերացիայի նախահայրը Ի տարբերություն «Աշխատանքի ասպետների»՝ այն ընդգրկում էր միայն ծառայողներին 1886 թ այն վերակազմավորվեց և անվանափոխվեց «Աշխատանքի ամերիկյան ֆեդերացիայի» Գոմպերսը դարձավ ԱԱՖ-ի առաջին նախագահը

Գոմպերսի երեք կետից բաղկացած արհմիութենական ծրագիրն ուղեցույց է հանդիսացել ԱԱՖ-ի շարժման ամբողջ ընթացքում Նախ և առաջ նա պնդում էր, որ մարդիկ աշխատեն գործնական օգուտի համար, հանուն բարձր աշխատավարձի և ավելի լավ աշխատանքային պայմանների և ոչ թե ընդգրկվեն փիլիսոփայական բնույթի դասակարգային պայքարի մեջ Երկրորդ՝ ԱԱՖ-ի շարժման հիմքում դրեց դաշնակցային սկզբունքը՝ շոշափելի ներքին ազատություն տալով առանձին արհմիություններին՝ կազմակերպվելու և գործելու սեփական ոճով Երրորդ՝ նա ամեն ինչ արեց, որպեսզի կառավարությանը հեռու պահի ձեռնարկատերերի և արհմիությունների միջև համաձայնության գալու համար տարվող բանակցություններից, մինչ իրենք քաջալերում էին քաղաքական բարեկամների պարգևները և Կոնգրեսի այն անդամների պարտությունը, որոնք ընդդիմանում էին բանվորների դիրքորոշմանը Գոմպերսը նույնպես պնդում էր, որ ոչ ավելի, քան մեկ արհմիություն պետք է փորձի նույն բանվորներին կազմակերպել այդ նույն պահին

Չնայած ԱԱՖ-ն հաջող սկիզբ ունեցավ, սակայն բանվորական կազմակերպիչները մի շարք դժվարությունների հանդիպեցին Մեծ մասամբ ձեռնարկատերերը երբեք լիովին

չէին ընդունում արհմիությունների օրինականությունը, առավել ևս գործադուլների կամ խաղաղ բանակցելու նրանց իրավունքը Ղեկավարությունը, որը գերադասում էր վիճելի հարցերը բանվորների հետ առանձին-առանձին քննարկել, հաճախ փորձում էր խաբել արհմիությանը՝ աշխատանքից հեռացնել կամ «սև ցուցակի մեջ առնել» (ուրիշ ընկերությունների հետ համաձայնության գալով նրանց չվարձել) այն բանվորներին, որոնք արհմիությունների կողմն էին, կամ էլ նրանց ստիպում էր «դեղին պարտավորություն» համաձայնագիրը ստորագրել, որը նրանց արգելում էր արհմիությունների մեջ մտնել

Ձեռնարկատերերը նույնպես որոնում էին դատարանների աջակցությունը արհմիությունների դեմ՝ գործադուլներից հետ պահելու համար 1880 և 1932 թթ միջև ընկած ժամանակամիջոցի մեծ մասում կառավարությունն ու դատարաններն ընդհանրապես համակրական, իսկ լավագույն դեպքում չեզոք վերաբերմունք ունեին ղեկավարության դիրքի հանդեպ Իրականում, կառավարությունն ինքն էր հաճախ հասարակական կարգի անունից անհրաժեշտ ուժ մատակարարում գործադուլը ճնշելու համար Օրինակ՝ երբ «Պուլման փալիս քար» ընկերության աշխատողները 1894 թ բողոքի գործադուլ սկսեցին աշխատավարձերի կրճատման դեմ, նրանց համերաշխության գործադուլով միացավ Ամերիկայի երկաթուղայինների արհմիությունը ԱՄՆ- ի կառավարությունը պետական զորք ուղարկեց վերջ դնելու գործադուլին՝ հայտարարելով, որ այն խանգարում է փոստային գնացքների երթևեկությանը Ուրիշ ուժեղ գործադուլներ են եղել այս դարաշրջանում, որոնց մի մասն ավարտվել է բավմաթիվ զոհերով

Բանվորական շարժմանը խոչընդոտող մեկ այլ խոշոր գործոն հանդիսացավ 1905 թ Գերագույն դատարանի դատավարությունը՝ Լոխներն ընդդեմ Նյու Յորքի Դատարանը վճիռ կայացրեց, որ աշխատանքային ժամերի քանակը սահմանող օրենքը հակասում է սահմանադրությանը, որովհետև սահմանափակում է աշխատանքային համաձայնագիր կնքելու անհատի իրավունքը Դատարանի պատճառաբանությունը հենվում էր այն սկզբունքի վրա, որ անհատները «աշխատանքային համաձայնագիր կնքելու ազատություն» ունեն, որը բխում է սահմանադրության 14-րդ ուղղումից

Համաշխարհային 1 պատերազմի ավարտին մոտ ԱԱՖ-ն 5 միլիոն անդամ ուներ և դեռ աճում էր թե՛ թվով, թե՛ ազդեցությամբ Սակայն աճը դանդաղեց 1920-ական թթ, երբ բանվորները հանդիպեցին ձեռնարկատիրական խմբերի, ինչպես օրինակ՝ Արտադրողների ազգային ընկերության, վճռական ընդդիմությանը (ԱԱԸ) Կատաղի ճակատամարտ տեղի ունեցավ «բաց ձեռնարկության» (ձեռնարկություն, որն աշխատանքի է ընդունում արհմիությունների մեջ ընդգրկված և չընդգրկված բանվորներին) սկզբունքի շուրջը, որն աշխատողին իրավունք է վերապահում ստիպողական կարգով

արհմիության մեջ չընդգրկվել Ավելացնենք, որ բանվորները հարաբերականորեն ապահով էին կգում առանց արհմիությունների պաշտպանության, քանի որ 1920 ական թթ-ը խոստանում էին բարգավաճ լինել՝ աշխատատեղերի մեծ քանակով Գոմպերսի մահից հետո 1924 թ Ուիլիամ Գրինն ընտրվեց ԱԱՖ-ի նախագահ, ինչը փոխզիջումների արդյունք էր

ՄԵԾ ՃԳՆԱԺԱՄԸ

Չնայած Մեծ ճգնաժամը նվազեցրեց ԱԱՖ-ի անդամների թիվը մինչև 3 միլիոնից էլ պակաս, սակայն օգնեց բանվորական շարժման առաջընթացին՝ համակրանք առաջացնելով աշխատավորների վիճակի հանդեպ (խոր ճգնաժամի տարիներին Ամերիկայի աշխատուժի մեկ երրորդը գործազուրկ էր) Ֆրանկլին Դ Ռուզվելտի նախագահ ընտրվելուց հետո կառավարությունն ու դատարանն սկսեցին ավելի բարյացակամ վերաբերվել բանվորների պահանջներին 1932 թ Կոնգրեսն ընդունեց աշխատամետ առաջին օրենքներից մեկը՝ Նորիս-Լա-Գվարդիա օրենքը, որը «դեղին պարտավորություն» աշխատանքային համաձայնագրերը դարձրեց ոչ ստիպողական և սահմանափակեց ֆեդերալ դատարանի իշխանությունը՝ աշխատանքային վիճելի հարցերի շուրջ որոշումներ կայացնելիս

Ճգնաժամին վերջ տալու Ռուզվելտի ծրագրի մեջ մտնում էին որոշ օրենքներ, որոնք առաջ մղեցին աշխատավորների շահերը Դրանցից մեկը Ազգային արդյունաբերության վերականգնման 1933 թ օրենքն էր, որը բանվորներին երաշխավորում էր նվազագույն աշխատավարձ, չափավոր աշխատաժամանակ, կոլեկտիվ համաձայնագիր կազմելու նպատակով ձեռնարկատերերի հետ արհմիությունների բանակցելու և արհմիությունների մեջ մտնելու իրավունք Սակայն 1935 թ Գերագույն դատարանն այդ օրենքն անօրինական հայտարարեց Ֆեդերալ կառավարությունը դրան պատասխանեց՝ 1935 թ գործողության մեջ դնելով Աշխատանքային փոխհարաբերությունների ազգային օրենքը, որն ավելի շատ հայտնի է որպես Վագների օրենք այն ասում է «Աշխատավորները պետք է իրավունք ունենան անկախ կազմակերպություններ ստեղծել, հարել կամ օգնել բանվորական կազմակերպություններին, ձեռնարկատերերի և արհմիությունների բանակցությունների միջոցով կոլեկտիվ համաձայնագիր կազմել իրենց ընտրած ներկայացուցիչների միջոցով և ընդգրկվել միասնական գործողությունների մեջ ընդհանուր համաձայնության, փոխօգնության կամ պաշտպանության նպատակով»

Առաջին անգամ բանվորներին օրենքով իրավունք տրվեց ձեռնարկատերերի հետ բանակցելով համաձայնագիր կազմել Ավելին, այդ օրենքով հիմնադրվեց Աշխատանքային փոխհարաբերությունների ազգային վարչությունը (ԱՓԱՎ)՝ օժանդակելու նրա կիրարկմանը, պատժելու անապնիվ

աշխատանքային գործունեությունը և որոշելու, թե աշխատավորները որ արհմիությունն են ներկայացնում ԱՓԱՎ-ն պարտավոր էր գնալ գործարաններ և այնտեղ ընտրություններ անցկացնել, երբ բանվորները ցանկանում էին առանձին արհմիություն կազմել կամ ընդգրկվել որևէ արհմիության մեջ Նրան լիազորեցին պարտադրել ձեռնարկատերերին ետ վճարելու աշխատողի հասանելիքը, երբ նա արհմիութենական գործունեության պատճառով անարդարացի կերպով վտարվել է աշխատանքից Օրենսդրական այդպիսի պաշտպանության շնորհիվ արհմիությունների անդամների թիվը 1940 թ սրընթաց աճեց և հասավ մոտավորապես 9 միլիոնի

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

1935 թ ութ արհմիություններ ԱԱՄ-ի կազմում ստեղծեցին Արդյունաբերական կազմակերպության հանձնաժողով (ԱԿՀ), որպեսզի բանվորներին միավորեն արդյունաբերության կանգվածային արտադրության այնպիսի ճյուղերում, ինչպիսիք են ավտոմոբիլայինը և պողպատաձուլականը Սակայն արհեստակցական այն միությունները, որոնք վերահսկում էին ԱԱՄ-ն, ընդդիմացան ոչ որակյալ և մասնակի որակավորում ունեցող բանվորներին ընդհանրապես արհմիություններում միավորելու ջանքերին Չնայած այդ ընդդիմությանը, Համաժողովի միավորման ջերմեռանդ կողմնակիցները հաջողեցին նախկինում անկազմակերպ բազմաթիվ գործարաններ միավորել արհմիությունների մեջ

Սակայն արդյունաբերական արհմիություններում միավորվելու շուրջ ընթացող բանավեճը չմեղմացավ 1938 թ ԱԱՄ-ի ղեկավարությունը վտարեց այն արհմիությունները, որոնք կազմում էին ԱԿՀ-ն, և վերջինս հիմնադրեց իր սեփական ֆեդերացիան նոր անվանումով՝ Արդյունաբերական կազմակերպությունների համաժողով ԱԿՀ-ն արագ զարգացավ և ԱԱՄ-ի լիիրավ մրցակիցը դարձավ

ՀԵՏՊԱՏԵՐԶՄՅԱՆ ՇՐՋԱՆ

Համաշխարհային II պատերազմի մեջ մտնելուց քիչ անց Միացյալ Նահանգների բանվորական շարժման ազգային հիմնական ղեկավարները նախագահ Ռուզվելտին խոստացան պատերազմի ժամանակ խույս տալ գործադուլներից, որպեսզի չխափանեն երկրի պաշտպանական արտադրությունը Այդ ժամանակաշրջանում արհմիությունները բազմաթիվ կարևոր արտոնություններ ձեռք բերեցին, և նրանց անդամների թիվը շեշտակի աճեց Երբ 1945 թ պատերազմն ավարտվեց, գործադուլները նորից սկսվեցին, և աշխատանքային պարապուրդները գագաթնակետին հասան 1946 թ

Շուտով սուր ռեակցիա սկսվեց ընդդեմ արհմիությունների չլիազորված իշխանության, ինչպես շատերն էին այն համարում Շատերը հավատացած էին, որ Վագների օրենքը

ելնում էր աշխատավորների շահերից և նոր օրենք էին պահանջում՝ շտկելու այդ անհավասարակշռությունը Դրան ի հետևանք՝ 1947 թ Կոնգրեսը հրաման արձակեց Աշխատավորների և ղեկավարության հարաբերությունների մասին՝ հակառակ նախագահ Տրումենի վետոյի

Աշխատանքային փոխհարաբերությունների կարգավորման օրենքը, որն ավելի շատ հայտնի է որպես Տաֆտ-Հարտլիի օրենք, վարքի չափանիշներ էր սահմանում ինչպես արհմիությունների, այնպես էլ ձեռնարկատերերի համար Այն արգելում էր փակ ձեռնարկությունները (ձեռնարկություն, որն աշխատանքի է ընդունում միայն արհմիությունների անդամներին) և մասնակի բոյկոտը, թույլատրում էր ձեռնարկատերերին դատական գործ հարուցել արհմիությունների դեմ ընդհատված աշխատանքային համաձայնագրերի, գործադուլների ընթացքում հասցված վնասների համար, արհմիություններից պահանջել ապահովելու մինչգործադուլային շրջանի 60-օրյա «սառեցումը» և էլի ուրիշ օրենքներ՝ սանձելու գործադուլները, որոնք վտանգի էին ենթարկում երկրի բախտը կամ անվտանգությունը Օրենքը նաև պարտադրում էր արհմիություններին հրապարակել իրենց ֆինանսական հաշվետվությունը Չնայած այդ օրենքը չեղյալ հայտարարելու շարունակվող ջանքերին, ֆեդերալ դատարանները պաշտպանում էին նրա հիմնական դրույթները

Բանվորների հանդեպ ընդդիմության վերակենդանացման լույսով ԱԱՖ-ն և ԱԿՀ-ն սկսեցին խորհել համատեղ գործելակերպի մասին Բայց բանվորական այդ երկու ղեկավար խմբերը պետք է հաղթահարեին փիլիսոփայական և այլ տարաձայնություններ 1952 թ խոչընդոտներից մեկը վերացավ, երբ ԱԱՖ-ի և ԱԿՀ-ի երկու ղեկավարներն էլ՝ Ուիլյամ Գրինը և Ֆիլիպ Մյուրեյը, մեռան Նրանք որոշակի դեր էին խաղում երկու կազմակերպությունների պառակտման մեջ 1955 թ ԱԱՖ-ն ու ԱԿՀ-ն ձուլվեցին և դարձան ԱԱՖ ԱԿՀ՝ երկրի խոշորագույն բանվորական կազմակերպությունը জորջ Մինին, որը ԱԱՖ-ի նախագահն էր Ուիլյամ Գրինից հետո, ստանձնեց նոր ձևավորված բանվորական կազմակերպության նախագահությունը

1962 թ նախագահ জոն Ֆ Քենեդին հրաման արձակեց, որը պետական ծառայողներին իրավունք էր տալիս կազմակերպվել և ձեռնարկատերերի հետ բանակցություններ վարել համաձայնության գալու նպատակով, բայց ոչ թե գործադուլ անելու Համանման օրենքներ ընդունվեցին շատ նահանգներում, իսկ նրանցից մի քանիսը նույնիսկ թույլ էին տալիս նահանգի կառավարության աշխատողներին գործադուլ անել· Պետական ծառայողների արհմիություններն արագ աճեցին, և ուսուցիչները, ուսուցիչներն ու կառավարության այլ աշխատողներ գործադուլներ կազմակերպեցին շատ նահանգներում և քաղաքներում 1970-ական թթ ընթացքում

Այդ ժամանակաշրջանում արհմիությունների անդամների թիվը նույնպես աճեց՝ ի դեմս ազգային փոքրամասնությունների և կանանց Շարժման ղեկավարներն օգնում էին կանանց, սևամորթներին, մեքսիկացի ամերիկացիներին և այլոց, որոնք հաճախ կատարում էին ամենախղճուկ վարձատրվող աշխատանքները, որոշակի իրավունքներ ձեռք բերել, ինչպես օրինակ՝ հավասար վարձատրության 1960-ական թթ ընթացքում Սեզար Է Չավեզը՝ աշխատավորական շարժման մեքսիկա-ամերիկացի ղեկավարը, սկսեց կազմակերպել Կալիֆորնիայի գաղթական և այլ ագարակագործների շարժումը, որոնցից շատերը մեքսիկացի ամերիկացիներ էին Չավեզը հիմնադրեց այն, ինչը այժմ ներկայացնում է Ամերիկայի ագարակագործ բանվորների արհմիությունը

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԸՆԹԱՑԻԿ ՎԻՃԵԼԻ ՀԱՐՑԵՐԸ

20-րդ դարի վերջերին Ամերիկայի բանվորական շարժմանը նետած գլխավոր մարտահրավերը Ամերիկայի ծանր արդյունաբերության անկումն է, հատկապես արդյունաբերության այնպիսի ավանդական ճյուղերի անկումը, ինչպիսիք են պողպատաձուլությունը և ծանր մեքենաշինությունը Որոշ դեպքերում աշխատուժի ավելի ցածր արժեքը օգնում է օտարերկրյա ընկերություններին այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են ավտոմեքենաշինությունը և էլեկտրոնիկան, Ամերիկայի շուկայում ավելի խոշոր բաժին ձեռք բերելու ԱՄՆ ի շատ խոշոր գործարաններ փակվել են, և արհմիությունների մեծ թվով անդամներ կորցրել են աշխատանքը

Ավտոմատացումը շարունակվող մարտահրավեր է Շատ հին գործարաններ ներմուծում են ավտոմատ մեքենաներ՝ կատարելու այն աշխատանքը, որը նախկինում բանվորներն էին կատարում Դա արվում է գլխավորապես արտադրողականությունը բարձրացնելու նպատակով՝ ի պատասխան արտասահմանյան մրցակցության Սակայն որոշ դեպքերում դա կրճատում է աշխատատեղերը Դրան ի պատասխան՝ արհմիությունները բազմապան միջոցներ են աշխատում գտնել՝ պահպանելու աշխատատեղերն ու եկամուտները, ներառյալ անվճար վերապատրաստումը և ավելի կարճ աշխատանքային շաբաթը, որպեսզի առկա աշխատանքը բաշխվի բանվորների միջև Այնուամենայնիվ, Ամերիկայի ծանր արդյունաբերության ավանդական ճյուղերի կրճատումը ուժեղ հարված է, որից բանվորական շարժումը դեռ պետք է ամբողջությամբ ապաքինվի

Միաժամանակ արհմիությունների անդամ բանվորների տոկոսը նույնպես նվազեց Չնայած 1945 թ աշխատավորների ավելի քան մեկ երրորդը արհմիությունների անդամ էր, 1980-ական թթ վերջերին մոտավորապես միայն 16 տոկոսն էր անդամ Տնտեսագետները, բանվորական շարժման ղեկավարները և ուրիշներ մի քանի բացատրություն են տալիս

դրան Ոմանք ասում են, թե դա արտացոլում է այն տենդենցը, որ ամերիկյան հասարակությունը հեռանում է արդյունաբերության արտադրող ճյուղերից, որոնք ավանդաբար եղել են արհմիությունների միջնաբերդը, դեպի սպասարկման ոլորտը, որտեղ արհմիութենական կազմակերպությունն ավելի թույլ է Մյուսները մատնանշում են, որ կանանց, երիտասարդներին և կրճատ աշխատաժամանակով ծառայող բանվորներին չափազանց մեծ բաժին է ընկնում վերջին տարիներին աշխատատեղերի աճի մեջ Երրորդները բացատրում են, որ Ամերիկայի արդյունաբերության զգալի մասը տեղափոխվել է դեպի Միացյալ Նահանգների հարավային և արևմտյան շրջաններ, որոնցում արհմիութենական ավանդույթներն ավելի թույլ են, քան Հյուսիսում կամ Արևելքում

Բանվորական շարժումը հիմնականում քննադատում են այն բանի համար, որ ավելի բարձր աշխատավարձի և բարենպաստ աշխատանքային պայմանների նրանց պահանջը, նույնիսկ դրամի արժեզրկման ժամանակ, է՛լ ավելի է խորացնում հետագա արժեզրկումը և վնասում Ամերիկայի արդյունաբերության արտադրողականությանը Սակայն 1980-ական թթ սկզբին, արժեզրկման խորացման շրջանում ավելի ու ավելի շատ օրինակներ էին առկա, երբ արհմիությունները համաձայնում էին հրաժարվել աշխատավարձի բարձրացումից՝ հանուն աշխատատեղերի պահպանման և ընկերության մրցունակության աճի Ավելացնենք, որ բանվորական շարժման կողմնակիցները փաստարկում են, որ աշխատավարձի վերջին ժամանակների բարձրացումները նախատեսվում են միայն ապրուստի արժեքին համաքայլ շարժվելու և ոչ թե կենսամակարդակի էական բարձրացման համար

Բանվորական շարժման ղեկավարության բանավեճերի կիզակետում նաև հետևյալ հարցն է ինչ որոշակի օգուտներ իրավունք ունեն ստանալ բանվորները Պաշտոնաթողության նպաստների, անաշխատունակության վարձատրության և բժշկական ապահովագրության հետ առնչվող տարաձայնությունները, ինչպես նաև ամբողջ կյանքի ընթացքում աշխատանքով ապահովելու մասին որոշ խոշոր արհմիությունների վերջերս ներկայացրած պահանջը բանակցությունների առաջին գծում են 20-րդ դարի վերջին հատվածում Երևան եկած նման հարցերի թվին են պատկանում հղիության ժամանակ մայրերին հասանելիք արձակուրդի և հիվանդ երեխային խնամելու համար հայրերին տրվող արձակուրդի, ինչպես նաև երեխաների խնամքի հարցերը

Ձեռնարկատերերն իրենց հերթին հարմար չեն գտնում ձեռքերը ծալած սպասել, որ բանվորական շարժումը հարցերը լուծի իր ուզած ձևով Ղեկավարությունը բանվորներից բարձր արտադրողականություն է պահանջում և պատրաստակամություն դրսևորում պայքարել այն կանոնների և

արտոնությունների դեմ, որոնք վնասահարույց են դրան հասնելու համար

Արհմիութենական շարժումը ԱՄՆ-ի տնտեսության կարևոր բաղկացուցիչ մասն է, որովհետև այն բանվորների շահերն ու կարիքները ներկայացնում է ղեկավարությանն ու կառավարությանը Չնայած արհմիությունները բարձր աշխատավարձի հասնելու համար հիմնականում կարևորություն են տալիս ղեկավարության հետ վարած բանակցություններին, սակայն տնտեսագետները տարակարծիք են, թե արդյո՞ք արհմիություններն են ներգործել բանվորների աշխատավարձի վրա՝ մատնացույց անելով արտադրողականության աճը՝ որպես աշխատավարձի ավելացման գլխավոր գործոն Սակայն վերլուծողների մեծ մասը նույնպես այն կարծիքին է, որ արհմիությունները չափից ավելի մեծ ազդեցություն են գործում այնպիսի հարցերում, ինչպիսիք են աշխատանքի անվտանգությունը, բողոքների կարգավորումը և աշխատանքային այլ պայմանների վերահսկողությունը Արհմիության միջոցով բանվորը կարող է ձայն ստանալ իր աշխատանքին վերաբերող գրեթե բոլոր հարցերի շուրջ Ավելացնենք, որ որոշ փորձագետներ պնդում են, որ արհմիությունները կարևոր սոցիալական և հոգեբանական դեր են կատարում՝ ծառայելով որպես եղբայրական կազմակերպություններ, և որ ավելի կարևոր է, բանվորների հպարտության աղբյուրն են և արժանապատվության զգացում են հաղորդում նրանց

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Միացյալ Նահանգների բանվորների իրավունքների պաշտպանությունը բաշխվում է ֆեդերալ կառավարության և 50 առանձին նահանգների միջև Ֆեդերալ կառավարությունը կարող է գործել կարգավորելու առևտուրը առանձին նահանգների միջև, մինչդեռ նահանգները կարող են իրենց սահմանների ներսում առևտրի համար ընդունելի պայմաններ դնել Շատ նահանգներ օրենքներ են ընդունել, որոնք աշխատանքային չափանիշներ են սահմանում Ամենակարևոր ֆեդերալ օրենքներից են

1938 թ Սկզիվ աշխատանքի չափանիշների օրենքը (ուղղումով) սահմանում է պետական նվազագույն աշխատավարձը, հավելյալ ժամանակի վարձատրությունը, հավասար վարձատրությունն ու երեխաների աշխատանքը չարաշահումներից պաշտպանելու նորմատիվները Կոնգրեսը որոշում է նվազագույն աշխատավարձը, իսկ աշխատանքի նախարարությունը կենսագործում է այն 1991 թ նվազագույն աշխատավարձը բարձրացրին 4 25 դոլլարի՝ մեկ ժամվա համար, բայց կար նաև ավելի ցածր՝ ուսուցման շրջանի աշխատավարձ այն դեռահասների համար, որոնք նոր էին համալրում աշխատուժը

1967 թ Աշխատանքային տարիքի և խտրականության մասին

հրամանը պաշտպանում է տարեց բանվորների աշխատատեղերը մինչև 70 տարեկան հասակը

1970 թ Աշխատանքի անվտանգության ու սանիտարական վիճակի մասին օրենքը ձեռնարկատերերից պահանջում է ապահովել աշխատանքի անվտանգ և նորմալ սանիտարական պայմաններ Աշխատանքի անվտանգության և առողջապահության վարչությունը մշակում է աշխատանքի անվտանգության և սանիտարական վիճակի չափանիշները, մշակում և սահմանում կանոններ, հետազոտություններ և ստուգումներ կատարում, որպեսզի որոշի չափանիշների և կանոնների համապատասխանությունը իրական վիճակին, վկայակոչում դրանք և տուգանք նշանակում դրանց անհամապատասխանության դեպքում

1974 թ Արհեստակցական օրենքը (ուղղումով) վերականգնող օգնություն է նախատեսում այն աշխատողների, ընկերությունների և համայնքների համար, որոնք տուժել են արտասահմանյան մրցակցության պատճառով Արհեստակցական վերականգնող օգնության վարչությունն իրականացնում է այդ օրենքի վրա հիմնված ծրագիրը՝ առանձին նահանգների հետ համաձայնագրեր կնքելու միջոցով Այդ ծրագիրն ապահովում է նոր աշխատանքով բավարարելու ծառայությունները, ինչպես օրինակ՝ վերաորակավորումը, աշխատանքի որոնման և վերատեղավորման ծախսերը և շաբաթական դրամական վարձատրություն տալը ԱՄՆ-ի այն բանվորներին, որոնք աշխատանքը կորցրել են արտասահմանյան ներմուծումների պատճառով

ԿԵՆՍԱԹՈՇԱԿ

Միացյալ Նահանգներում մասնավոր ծառայության մեջ գտնվող մարդկանց մոտավորապես կեսը և պետական աշխատողների մեծ մասը մտնում են որևէ կարգի կենսաթոշակով ապահովելու ծրագրի մեջ Կենսաթոշակը եկամտի մի ձև է, որն աշխատողներն ստանում են պաշտոնաթող լինելու կամ անաշխատունակ դառնալու դեպքում, կամ էլ խնամքի տակ գտնվողներն են ստանում նրանց մեռնելուց հետո Ձեռնարկատերերի հետ արհմիությունների կնքած աշխատանքային համաձայնագրերի մեծ մասը բովանդակում է կենսաթոշակի անցնելու արտոնություն

Կենսաթոշակների մասնավոր ծրագրերի մեծ մասը ծառայությունից հեռացողներին արտոնություն են տալիս, ելնելով այն բանաձևից, որը հիմնված է աշխատողի տարիքի, ծառայության ստաժի և տարեկան աշխատավարձի վրա Ֆեդերալ օրենքի համաձայն կենսաթոշակի բոլոր ծրագրերը «կենսաթոշակի իրավունքով» ապահովում են այն աշխատողներին, որոնք լրացրել են ծառայության որոշակի ժամկետ Այդ ծառայողներին երաշխավորում են, որ նրանք կենսաթոշակային վարձատրություն կստանան աշխատանքը

թողնելուց հետո, նույնիսկ եթե ֆիրմայից հեռանում են մինչ կենսաթոշակի տարիքը

1974 թ Կոնգրեսն օրենք ընդունեց Աշխատավորների պաշտոնաթողության եկամտի ապահովագրության մասին, որը չափանիշներ սահմանեց անհատական կենսաթոշակների ծրագրերում ֆեդերալ գործակալությունը՝ Կենսաթոշակների արտոնությունները երաշխավորող կորպորացիան, օգնում է իրականացնելու այն Մասնավոր կենսաթոշակների ծրագրերը պետք է ապահովագրական գումարները ստանան կորպորացիայից, և եթե որևէ ընկերություն չի կարող վճարել կենսաթոշակները, կորպորացիան պետք է դրանք վճարի

Միացյալ Նահանգների կառավարությունը կենսաթոշակների մի քանի տիպի ծրագրեր է իրականացնում, որոնցից ամենակարևորը Սոցիալական ապահովագրությունն է՝ երկրի կենսաթոշակային եկամուտների ամենախոշոր ծրագիրը Սոցիալական ապահովագրության ծրագիրը ստեղծվել է 1935 թ, երբ նախագահ Ֆրանկլին Դ Ռուզվելտն ստորագրեց այն, ինչը այժմ հայտնի է որպես Սոցիալական ապահովագրության օրենք Այդ ծրագիրը լրիվ դրույքային կենսաթոշակով ապահովում է նրանց, ովքեր աշխատանքից ազատվում են 65 տարեկան հասակում և իջեցված դրույքով՝ նրանց, ովքեր ազատվում են 62-ից մինչև 65 տարեկանը Չնայած ծրագիրն իրականացվում է ֆեդերալ գործակալության՝ Սոցիալական ապահովագրության վարչության կողմից, սակայն այն չի օգտագործում ֆեդերալ ֆոնդերը Աշխատողների կենսաթոշակի ծրագրի իրականացման համար նրանց աշխատավարձից որոշակի տոկոս գանձվում է հարկի ձևով ձեռնարկատերերը մուծում են հավասար չափով Մենատնտեսները նույնպես իրենց վաստակի մի մասը մուծում են այդ ծրագրին

Ֆեդերալ կառավարությունը ավանդաբար կենսաթոշակով ապահովում է զինվորականներին, ինչպես նաև պետական ծառայողների մեծ մասին 1980-ական թթ ընդունած օրենքը մեծ թվով նոր պետական ծառայողների նույնպես ընդգրկեց Սոցիալական ապահովագրության ծրագրի մեջ Դեռևս 1775-1783 թթ հեղափոխությունից հաշմանդամ դարձած վետերանները որևէ կարգի կենսաթոշակ էին ստանում Ի հակադրություն՝ քաղաքացիական կենսաթոշակների ամենախոշոր ֆեդերալ համակարգը՝ ԱՄՆ-ի Պետական ծառայողների թոշակավորման համակարգը, ֆինանսավորվում է պետական ծառայողների և կառավարության կողմից համատեղ

Ավելացնենք, որ շատերը, հիմնականում նրանք, ովքեր մենատնտես են, նրանք, ում ձեռնարկատերերը կենսաթոշակ չեն վճարում, և նրանք, ովքեր հավատացած են, որ իրենց կենսաթոշակի ծրագիրը անհամապատասխան է, իրենց եկամտի մի մասը ներդնում են անհատական կենսաթոշակի հատուկ ծրագրի մեջ Այդ երկու հիմնական ծրագրերն են՝ Անհատական կենսաթոշակային հաշիվները (ԱԿՀ-ներ) և Քեոյի ծրագրերը

Այդ երկու տիպի հաշիվները վարում են ֆինանսական կազմակերպությունները, ինչպես օրինակ՝ բանկերը, խնայողությունների և փոխառությունների ընկերությունները, վարկային միությունները և ապահովագրական ընկերությունները Ֆեդերալ կառավարությունը երկու ծրագիրն էլ պաշտպանում է՝ եկամտահարկի արտոնություններ տրամադրելով այն անհատներին, որոնք օգտվում են դրանցից

ԱԿՀ-ում ներդրված դրամը տոկոս է բերում, որն ավտոմատ կերպով ավելանում է հաշվի վրա այդ տոկոսից հարկ չեն գանձում մինչև հաշվից հանելը Ավելացնենք, որ նրանք, ովքեր մասնավոր կենսաթոշակ չունեն, կամ նրանք, ովքեր որոշակի գումարից պակաս են վաստակում, կարող են ամեն տարի ավանդ դնել ԱԿՀ-ում՝ առանց եկամտահարկ վճարելու մինչև այն հանելը Ի տարբերություն ԱԿՀ-ի, Քեոյի հաշիվ կարող են բացել միայն մենատնտեսները կամ նրանք, ովքեր որպես կորպորացիա չգրանցված ձեռնարկությունների լիիրավ կամ մասնակի տնօրեններ են Այդ անհատները կարող են տարեկան իրենց եկամտի 25 տոկոսը ներդնել Քեոյի ծրագրում Այդ հաշվի բերած տոկոսից հարկ չի գանձվում մինչև հանելը

ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ի տարբերություն Սոցիալական ապահովագրության, որն ամբողջությամբ ի կատար է ածվում ֆեդերալ կառավարության կողմից, գործազրկության ապահովագրությունը կազմակերպում է ֆեդերալ-նահանգային համակարգը Գործազուրկների փոխհատուցման ֆեդերալ-նահանգային ծրագիրը հիմնադրվել է 1935 թ Սոցիալական ապահովագրության օրենքի հիման վրա և ԱՄՆ-ի գործազուրկների եկամտի պաշտպանության հիմնական ծրագիրն է Այն ապահովագրված ծառայողներին մասնակի փոխհատուցում է տալիս նրանց ակամա գործազրկության ժամանակաշրջանում Ընդհանրապես աշխատողը պետք է ի վիճակի լինի աշխատել, չպետք է այն թողնի առանց հիմնավոր պատճառի և կամ հեռացվի սխալ վարքագծի համար, չպետք է ընդգրկվի աշխատանքային վիճաբանություններում և պետք է ջանադիր լինի աշխատանքում

Ամեն մի նահանգ գործում է իր սեփական ծրագրով, սեփական օրենքների հիման վրա՝ միայն սահմանափակ ֆեդերալ միջամտությամբ Յուրաքանչյուրը սահմանում է գործազուրկներին տրվող շաբաթական նպաստի չափն ու տևողությունը՝ հիմնվելով նախկինում ստացած աշխատավարձի և ծառայության ստաժի վրա Նահանգները պետք է երկարաձգեն վարձատրության ժամկետը, երբ գործազրկությունն աճում է և մնում նահանգի սահմանած մակարդակից բարձր ֆեդերալ կառավարությունը նահանգների հետ կիսում է երկարաձգված վճարումների ծախսերը

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՈՒՐՎԱԳԾԵՐԸ

ՄԱՍ ՏԱՍՆԵՐՈՐԴ

X

ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ ԵՎ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒ-ԹՅՈՒՆԸ





Միացյալ Նահանգների արտաքին առևտուրը և համընդհանուր տնտեսական քաղաքականությունը կարմանալի կերպով փոխել են իրենց ուղղությունը երկրի ամենավաղ ժամանակներից, երբ Միացյալ Նահանգները մեծ մասամբ հետամուտ էր սեփական տնտեսության կարգացմանը, անկախ այն բանից, թե ինչ էր տեղի ունենում արտասահմանում Համաշխարհային II պատերազմից հետո Միացյալ Նահանգներն ընդհանրապես ձգտել է միջազգային առևտրի ազատականացմանը և համաշխարհային տնտեսական համակարգի ներդաշնակությանը

Հետպատերազմյան գրեթե ամբողջ ժամանակաշրջանում Միացյալ Նահանգները տիրապետում էր արտահանման շատ շուկաների՝ պատերազմի վտանգներից չտուժած արդյունաբերական մեքենայի, ինչպես նաև տեխնոլոգիայի առաջընթացի և արտադրողական տեխնիկայի շնորհիվ Սակայն 1970 և 1980-ական թթ ԱՄՆ-ի և այլ երկրների արտահանության մրցակցության միջև գոյություն ունեցող ճեղքվածքը նեղացավ, և որոշ ապրանքատեսակների գծով ուրիշ երկրների արտահանությունն ավելացավ ավելի արագ, քան Միացյալ Նահանգներինը

1970-ական թթ նավթամթերքների ցնցող գները, տնտեսության դրան հաջորդած անկումը աշխարհով մեկ, դոլլարի արտաքին փոխանակային արժեքի վերելքը վնասակար ազդեցություն ունեցան ԱՄՆ-ի առևտրի հաշվեկշռի վրա, և 1980-ական թթ առևտրի ազատականացման պաշտպանությունը թուլացավ երկրի ներսում

Դրա հետևանքով 1980-ական թթ հովանավորական հարյուրավոր օրինագծեր առաջ քաշվեցին Կոնգրեսում Չնայած այդ միջոցառումների մի մասը հաստատվեց, սակայն ԱՄՆ-ի ղեկավարները մեծ մասամբ հաջողեցին շեղել ամենահետադիմական առաջարկությունները Փաստորեն Միացյալ Նահանգները դրդեց սկսել բազմակողմ առևտրական բանակցությունների շարքը, որը հայտնի է որպես Ուրուգվայան փուլ (փուլն սկսելու համաձայնությունը կայացրին Ուրուգվայի Պունտա դել Էստե քաղաքի քննարկումներում), որն սկսվեց 1986 թ սեպտեմբերին՝ որպես միջոց առևտրի առավել մեծ ազատականացման հասնելու համար

ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԵՊԻ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՌԵՎՏՈՒՐ

Այնուամենայնիվ, պատմականորեն Միացյալ Նահանգները ժամանակ առ ժամանակ տնտեսությունը հովանավորելու ուժեղ հակում է ունեցել՝ սակացույցների և քվոտաների միջոցով սահմանափակելու արտասահմանյան ապրանքների ներմուծումը, հովանավորելու ազգային արդյունաբերությունը: Հանրապետության առաջին տարիներին պետական գործիչ Ալեքսանդր Համիլտոնը պաշտպանեց հովանավորող

սակացույցը՝ խրախուսելու Ամերիկայի արդյունաբերական կարգացումը Ընդհանուր առմամբ նրա խորհուրդն ընդունվեց 1800-ական թթ ամբողջ ընթացքում ներքին քաղաքական նկատառումները, ներառյալ այնպիսի կարևոր ապրանքների արտահանումն ընդլայնելու բաղձանքը, ինչպիսին բամբակն է, որոշեցին Միացյալ Նահանգների առևտրական քաղաքականությունը

Միացյալ Նահանգների հովանավորության քաղաքականությունը գագաթնակետին հասավ, երբ վավերացվեց Սմութ-Հոլիի օրենքը սակացույցների մասին, որը սաստկացրեց Մեծ ճգնաժամի հետևանքները Այդ օրենքը կտրուկ բարձրացրեց ԱՄՆ-ի սակացույցները և արագ բախվեց արտասահմանի պատասխան միջոցառումներին Օրենքը նպաստեց համաշխարհային տնտեսական ճգնաժամին

ԱՄՆ-ի մոտեցումը առևտրական քաղաքականության բնագավառում 1934 թ-ից ի վեր այդ փորձի անմիջական արգասիքն է, իսկ համաշխարհային II պատերազմից հետո Միացյալ Նահանգները որդեգրեց առևտրի ազատականացման քաղաքականությունը Միացյալ Նահանգների շատ ղեկավարներ փաստարկում էին, որ ներքին կայունությունը և ԱՄՆ-ի դաշնակիցների հավատարմությունը պայմանավորված էին տնտեսության վերականգնումով Դրանում կարևոր էր ԱՄՆ-ի օգնությունը, սակայն այդ երկրները արտահանման շուկաների կարիք ունեին, մասնավորապես ԱՄՆ-ի խոշոր շուկայի կարիքը, որպեսզի տնտեսական անկախություն վերստանան և հասնեն տնտեսական աճի

Պետական քարտուղար Կորդել Հալը հասկացավ այդ կապը համաշխարհային II պատերազմից շատ առաջ Նա հանդես եկավ ի պաշտպանություն 1934 թ սակացույցների մասին Առևտրական համաձայնագրերի օրենքի, որը ԱՄՆ-ի սակացույցները կրճատելու հիմնական իրավական հրահանգն էր

«Երկրները չեն կարող արտադրել այն մակարդակով, որ նեցուկ կանգնեն իրենց ժողովրդին և նրա բարեկեցությանը, քանի դեռ միմյանց հետ առևտուր անելու պատեհ հնարավորություն չունեն Այդ իսկ պատճառով Առևտրական համաձայնագրերի ծրագրի հիմքում ընկած սկզբունքները խաղաղության քաղաքականության պարտադիր անկյունաքարն են»

1934 թ փոխադարձ փոխզիջումների վերաբերյալ առևտրական համաձայնագրերի օրենքը նախագահին լիազորություն տվեց առանձին երկրների հետ առևտրական համաձայնագրեր կնքելու համար բանակցություններ վարել և զգալի չափով նվազեցրեց հարկերը Միացյալ Նահանգներ ներմուծվող ապրանքների վրա, փոխադարձաբար նման զիջումներ արվեցին Միացյալ Նահանգներից այլ երկրներ արտահանվող ապրանքների նկատմամբ

Առևտրի ապատականացման պաշտպանությունը Միացյալ Նահանգների կողմից նպաստեց Սակացույցների և առևտրի ընդհանուր համաձայնագրի (ՍԱԸՀ) ստեղծմանը՝ սակացույցների և առևտրի կանոնների միջազգային օրենսգիրք, որը 1947 թ ստորագրեցին 23 երկրներ և 1980-ական թթ վերջերին՝ 90 երկրներ Միջազգային առևտրական վարքագծի ընդունված օրենսգրքից բացի, ՍԱԸՀ-ն օժանդակել է բազմակողմ առևտրական բանակցությունների մի քանի փուլերի անցկացմանը իսկ Միացյալ Նահանգները գործուն կերպով մասնակցեց դրանցից յուրաքանչյուրին՝ հաճախ ստանձնելով ղեկավարի դերը

ԱՌԵՎՏՐԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ամերիկայում պաշտոնական քաղաքականությունը միշտ էլ որոշակի սկզբունքներ է կիրառել առևտրական համաձայնագրերում այդ սկզբունքները նաև ՍԱԸՀ-ի անկյունաքարն են Առաջինը խտրականության բացառումն է Ըստ այդ սկզբունքի, որը հայտնի է նաև որպես «ամենաբարենպաստ երկրի» (ԱԲԵ) ռեժիմ, առևտրին մասնակցող բոլոր կողմերին պետք է ներկայացվեն նույն մաքսատուրքը և սակացույցների նույն ռեժիմը, ինչ որ «ամենաբարենպաստ երկրին» Միացյալ Նահանգներն այժմ այդ քաղաքականությունը կիրառում է առևտրում բոլոր գործընկերների հանդեպ՝ բացառությամբ նրանց, որոնք արտաքին քաղաքական նկատառումներով մերժված են օրենքով

Խտրականությունը բացառող ռեժիմի ընդլայնումն ու սահմանափակումը երբեմն իրականացվում են արտաքին քաղաքականության ավելի հեռահար նպատակներով Օրինակ՝ Միացյալ Նահանգները ԱԲՀ-ի կարգավիճակ շնորհեց Չինաստանին՝ որպես այդ երկրի հետ հարաբերությունները բարելավելու ջանքերի մի մաս Միացյալ Նահանգները նաև մերժեց ԱԲՀ-ի կարգավիճակ տալ որոշ երկրների, որոնք ոտնահարում են մարդու իրավունքների պաշտպանությունը Կոնգրեսի և ֆեդերալ գործակալությունների ներսում շարունակ վիճաբանություններ են գնում արտաքին քաղաքականության հեռահար նպատակների վրա արտաքին առևտրի ներգործության շուրջը

Երկրորդ սկզբունքը, որը Միացյալ Նահանգները կիրառում է առևտրում, փոխշահավետությունն է Ըստ էության այն ասում է, որ առևտրական համաձայնագրերն ի կատար ածելիս ոչ մի երկիր չպետք է այն ավելի մեծ չափով հարմարեցնի իր ներքին շահերին, քան մյուսը· 1980-ական թթ այդ գաղափարն օգտագործեցին՝ նեցուկ կանգնելու որոշ, այսպես կոչված, ճյուղային փոխշահավետ առաջարկությունների Այդ առաջարկությունները պետք է պահանջեին ԱՄՆ-ի

կառավարությունից սահմանափակել ցանկացած հիմնական առևտրական մասնակցի մուտքը ԱՄՆ-ի շուկա ճյուղ-առ-ճյուղ հիմքի վրա, եթե այդ մասնակիցը մերժում է համապատասխան շուկայական հնարավորություններ ընձեռել ԱՄՆ-ի արտահանությանը Չնայած վերլուծողների մեծ մասն ընդունում է, որ ճյուղային փոխշահավետության սպառնալիքը կարող է օգտակար լինել բանակցելիս, սակայն ընդհանրապես հավատում է, որ այդպիսի օրենքը կճնշի բանակցությունները և կնվազեցնի միջազգայնաբերական լայն փոխզիջումների միջոցով առևտրի ազատականացման հասնելու հնարավորությունը

Միացյալ Նահանգները մեծ մասամբ հետևել է նաև բազմակողմանիության սկզբունքին, ինչպես նախատեսված է 1962 թ Առևտրի ընդլայնման օրենքում Այդ օրենքը լիազորում է նախագահին բանակցել բազմակողմանի առևտրի ազատականացման շուրջը առևտրական բանակցությունների այսպես կոչված «Քենեդիի փուլում», որը նպատակ ուներ իջեցնել սակացույցները Միացյալ Նահանգների և նրա առևտրական գործընկերների միջև Բանակցությունների այդ փուլում 53 երկրներ, որոնք ներկայացնում էին միջազգային առևտրի 80 տոկոսը, համաձայնեցին սակացույցներն իջեցնել միջին հաշվով 35 տոկոսով

Բազմակողմանիության սկզբունքը շատ տարիներ հիմք հանդիսացավ, որ Միացյալ Նահանգները մասնակցի և ղեկավարի միջազգային առևտրական բանակցությունները հաջորդ փուլերում 1979 թ Տոկիոյի փուլի արդյունավետ ավարտից հետո Միացյալ Նահանգները և շուրջ 100 այլ երկրներ համաձայնեցին սակացույցների հետագա իջեցմանը, ինչպես նաև առևտրի ոչ սակացուցային խոչընդոտների նվազեցմանը, ինչպիսիք են քվոտան և արտոնագրելու պահանջները

1980-ական թթ Միացյալ Նահանգները գլխավորեց բազմակողմանի առևտրական բանակցությունների նոր շարք սկսելու պահանջը, որն ավարտվեց 1986 թ Ուրուգվայան փուլով Այդ բանակցություններում Միացյալ Նահանգները ստիպեց կանոնները մշակել, որպեսզի վերացնեն գյուղատնտեսական լրավճարների օգտագործումը և ՍԱԸՀ-ի օրենսգիրքը տարածեն նաև առևտրի սպասարկման ոլորտի վրա

Չնայած Միացյալ Նահանգներն ընդհանուր առմամբ համաձայն էր խտրականության բացառման սկզբունքին, սակայն միաժամանակ մասնակից էր որոշ արտոնյալ առևտրական համաձայնությունների Դրանց թվին են պատկանում ԱՄՆ-ի Արտոնությունների ընդհանրացված համակարգի ծրագիրը, Կարիբյան ավազանի նախաձեռնությունը, ԱՄՆ-ԱՄՆ-Իսրայել՝ ազատ առևտրի գոտու

և ԱՄՆ-Կանադա՝ ապատ առևտրի համաձայնագրերը 1990-ական թթ ակզբին ջանքեր էին գործադրում մեկ ուրիշ երկկողմ համաձայնության համար, այս մեկը՝ Միացյալ Նահանգների և Մեքսիկայի միջև Եվ 1990 թ նախագահ Ջորջ Բուշը հրապարակեց Ամերիկաների նախաձեռնության իր ծրագիրը, որը, ի թիվս այլ բաների, պետք է ապատ առևտրի ճանապարհ հարթեր Արևմտյան կիսագնդով մեկ

Արտոնությունների ընդհանրացված համակարգի ծրագիրը նպատակ ունի նպաստել առավել աղքատ երկրների տնտեսական զարգացմանը՝ ապահովելով հարկերից ապատ ռեժիմ այդ երկրներից Միացյալ Նահանգներ ներմուծումներ կատարելիս Ըստ այդ ծրագրի, արտոնությունը տրվում է որոշակի ապրանքներ արտահանող երկրին արտոնությունը հանվում է, երբ ապրանք արտադրողներն այլևս օգնության կարիք չունեն՝ մրցելու ԱՄՆ-ի շուկայում, ինչը երևում է առևտրի իրական ցուցանիշից ՍԱԸՀ-ն ընդհանրապես մերժում է խտրականության բացառման սկզբունքը հանուն Արտոնությունների ընդհանրացված համակարգի ծրագրի

Կարիբյան ավազանի նախաձեռնությունը 1980-ական թթ ստեղծված մի ծրագիր էր, որպեսզի օգնություն ցույց տան մի տարածքի, որը տնտեսական մաքառումների մեջ էր և քաղաքական առումով կարևոր էր Միացյալ Նահանգների համար Այդ ծրագիրը, որը նախատեսված էր շարունակել մինչև 1995 թ վերջը, վարկերից ապատ ռեժիմ է տրամադրում Կարիբյան տարածքից Միացյալ Նահանգներ ներմուծվող բոլոր ապրանքների համար, բացառությամբ մանածագործական, որոշ կաշվե ապրանքների, շաքարի և նավթամթերքների

Երկկողմ ապատ առևտրի համաձայնությունները թույլատրվում են այն պայմաններով, որոնք նշված են ՍԱԸՀ-ի հոդվածներում ԱՄՆ-ի կնքած ապատ առևտրի առաջին համաձայնագիրը՝ ԱՄՆ-Իսրայել ապատ առևտրի գոտու համաձայնագիրը, սկսեց գործել 1985 թ սեպտեմբերի 1-ից, իսկ երկրորդը՝ ԱՄՆ-Կանադա ապատ առևտրի համաձայնագիրը՝ 1989 թ հունվարի 1-ից Պատմականորեն աշխարհագրական մերձավորությունը նպաստել էր Միացյալ Նահանգների աշխույժ առևտրին իր երկու հարևանների՝ Կանադայի և Մեքսիկայի հետ 1992 թ օգոստոսին ավելի քան մեկ տարի տևած բանակցություններից հետո այդ երեք երկրներն այն ավարտեցին բազմակողմանի ապատ առևտրի համաձայնագրով, որը նպատակ ուներ վերացնել նրանց միջև կատարվող առևտրի բոլոր սակացույցները՝ նվազեցնելով խոչընդոտները առևտրի սպասարկման ոլորտում ու ներդրումներում և ապահովելով մտավոր սեփականության համապատասխան պաշտպանությունը (ներառյալ հեղինակային իրավունքը, արտոնագրերը և մակնիշները) Ուժի մեջ մտնելուց առաջ համաձայնագիրը պետք է հաստատվի

յուրաքանչյուր երկրի ազգային օրենսդրությամբ ԱՄՆ-ի որոշ արհմիություններ ընդդիմացան համաձայնագրին այն մտավախությամբ, թե ԱՄՆ-ի բանվորները կկորցնեն աշխատանքը Մեքսիկայի էժան աշխատուժով արտադրված ապրանքների հեղեղի պատճառով Նախագահ Քլինտոնը պաշտպանում է Ազատ առևտրի հյուսիս-ամերիկյան համաձայնագիրը, բայց շահագրգռված է միջավայրի պաշտպանության վիճահարույց հարցերի և աշխատանքային չափանիշների լրացուցիչ համաձայնագրերի շուրջ բանակցելու հարցում

ԱՄՆ-Ի ԱՌԵՎՏՐԻ ՊԱԿԱՍՈՐԴԸ

Նավթի գների 1973-1974 թթ և 1979-1980 թթ կրկնվող ցնցումները ցայտուն կերպով ցուցադրեցին Միացյալ Նահանգների և ամբողջ աշխարհի տնտեսության փոխադարձ կախումը ԱՄՆ-ի ընդհանուր արտադրանքի մի մասը հանդիսացող արտահանությունը խիստ աճել է համաշխարհային II պատերազմից ի վեր, և շատ ավելի ամերիկացի աշխատավորներ են մատնվել միջազգային շուկայի քմահաճույքներին

Նավթի գների աճի երկրորդ ցնցումին հաջորդած համընդհանուր ճգնաժամը միջազգային առևտրի լճացման պատճառ հանդիսացավ այն իսկապես անկում ապրեց 1982 և 1983 թթ Միացյալ Նահանգներն ու շատ այլ երկրներ պայքարում էին հաղթահարելու դրամի արժեզրկումն ու ճգնաժամը և հասնելու տնտեսության վերականգնման ու կարգացման

Միաժամանակ սկսեցին զգացվել միջազգային մրցունակության տեղաշարժերը 1970-ական թթ վերջերին շատ երկրներ, մասնավորապես նոր արդյունաբերացվող երկրները, սկսեցին ցույց տալ համընդհանուր հիմքի վրա մրցակցելու իրենց աճող ընդունակությունը Հարավային Կորեան, Հոնկոնգը, Մեքսիկան և Բրազիլիան միայն մի քանիսն են այն երկրներից, որոնք դարձել են պողպատի, տեքստիլի, կոշկեղենի, ավտոպահեստամասերի և շատ այլ սպառողական ապրանքների միջազգային հիմնական արտադրողները Այդ նոր պայմանները փոխեցին համաշխարհային առևտրական միջավայրը և Միացյալ Նահանգների գերիշխող դիրքը նրանում

Երբ մյուս երկրներն ավելի հաջողակ դարձան, առևտրի ազատականացման պաշտպանությունը ԱՄՆ-ի կողմից սկսեց նվազել Արտահանության ապրանք արտադրող արդյունաբերությունում զբաղված բանվորներն անհանգստացան, որ մյուս երկրներն անազնիվ ձևով են նվաճում երրորդ երկրների շուկաները արդյունաբերության արտահանող ճյուղերի նպատակաուղղվածության (օտարերկրյա

կառավարությունների աջակցությունը արդյունաբերության ընտրովի ճյուղերին ինչպես, օրինակ, պողպատին) և առևտրական այնպիսի քաղաքականության շնորհիվ, որը որոշակիորեն նպաստում է արտահանման գերակշռությանը ներմուծման նկատմամբ

Այդ ընթացքում ԱՄՆ-ում հիմնադրված շատ բազմազգ ֆիրմաներ սկսեցին արտասահման տեղափոխել արտադրությունը Տեխնոլոգիական առաջընթացն ավելի շահավետ դարձրեց այդ տեղափոխությունը Գործավայրի տեղափոխությունը հաճախ հնարավորություն էր տալիս տվյալ ֆիրմային օգտվել ավելի ցածր վարձատրության, ավելի պակաս վերահսկող պատնեշների ու այլ պայմանների առավելությունից, որոնք կարող էին իջեցնել արտադրանքի ինքնարժեքը Շատ ապրանքներ, որոնք նախկինում Միացյալ Նահանգներն արտահանում էին, սկսեցին արտադրվել օվկիանոսից այն կողմ

Սակայն մի հանգամանք, որն ամենաանբարենպաստ ազդեցությունն ունեցավ ԱՄՆ-ի առևտրի հաշվեկշռի՝ ներմուծման և արտահանման հարաբերակցության վրա, դոլլարի արտաքին փոխանակային արժեքի անակնկալ թռիչքն էր 1980-1985 թթ դոլլարի արժեքը մոտավորապես 40 տոկոսով բարձրացավ ԱՄՆ-ի առևտրական հիմնական գործընկերների տարադրամի համեմատությամբ Թվում էր, թե ԱՄՆ-ի արտահանության ապրանքների վրա հարկ է դրված, մինչդեռ ներմուծվողները լրավճար են ստանում

1972 թ արտասահմանյան ներդրումները գերազանցեցին ԱՄՆ-ի արտահանությունը 57 միլիարդ դոլլարով 1985 թ շեմին ներմուծվող ապրանքների ընդհանուր արժեքը արտահանվողի համեմատությամբ շեշտակի աճեց և անցավ 100 միլիարդ դոլլարից, իսկ առևտրի պակասորդն ավելացավ և 1987 թ հասավ 152 միլիարդ դոլլարի Սակայն, երբ արժեզրկված դոլլարի հետևանքներն սկսեցին նկատելի դառնալ, առևտրի պակասորդն սկսեց նվազել 1990 թ շեմին այն արդեն հասել էր 101 միլիարդ դոլլարի Այնուամենայնիվ, ինչու՞ բարձրացավ դոլլարի գինը Պատասխանը կարելի է գտնել 1981-1982 թթ համաշխարհային ճգնաժամից ԱՄՆ-ի վերականգնվելու և ԱՄՆ-ի հսկայական բյուջեի պակասորդի մեջ, որոնք համատեղ գործոն հանդիսացան արտասահմանյան կապիտալի կարիք առաջացնելու հարցում ԱՄՆ-ն սկսեց վերականգնվել ճգնաժամից 1982 թ վերջին, ավելի վաղ, քան մյուս երկրները Վերականգնման հետ միասին ավելացավ ԱՄՆ ի ապրանքային պահանջարկը, ներառյալ ներմուծվող ապրանքներինը 1983-1984 թթ ԱՄՆ-ի ներմուծումները 24 տոկոսով ավելացան ԱՄՆ-ի ապրանքների արտաքին պահանջարկը չէր աճում նույն արագությամբ, քանզի վերականգնումը դեռ չէր սկսվել մյուս երկրներում

Միաժամանակ ԱՄՆ-ի վերականգնումը մեծացրեց ներքին ներդրումների ֆոնդերի պահանջարկը Սակայն ԱՄՆ-ի խնայողություններն այնքան մեծ չէին, որ բավարարեին ներդրումների աճող պահանջը ֆեդերալ բյուջեի ռեկորդային պակասորդի պայմաններում Բյուջեի խոշոր պակասորդը և արժեզրկումը կասեցնելու նպատակով իրականացվող դրամական կուսպ քաղաքականությունը համատեղ բարձր էին պահում ԱՄՆ-ի տոկոսադրույքները արդյունաբերական այլ երկրների դրույքների համեմատությամբ Բարձր տոկոսադրույքները ստիպում էին օտարերկրացիներին ներդրումներ կատարել Միացյալ Նահանգներում Այդպիսով, դոլլարի արտաքին պահանջարկը սահմանում էր նրա գինը

Կարճ ժամանակամիջոցում կայուն դոլլարը մեծ օգուտ բերեց ԱՄՆ-ի տնտեսությանը Ներմուծումներն էժանացնելու միջոցով այն կասեցրեց արժեզրկումը՝ միաժամանակ հնարավորություն ընձեռելով Միացյալ Նահանգներին ֆինանսավորելու և՛ բյուջետային հսկայական պակասորդը, և՛ մասնավոր ներդրումների աճը Սակայն ԱՄՆ-ի արտահանության գների հարաբերական աճի հետևանքով կայուն դոլլարը խոշոր պակասորդ առաջացրեց ԱՄՆ-ի առևտրում

Դոլլարի արժեքի բարձրացումը ԱՄՆ-ի առևտրի պակասորդի միակ պատճառը չէր, սակայն քաղաքական գործիչների և տնտեսագետների մեծ մասը 50 տոկոսով այն վերագրում է դոլլարի աճին Որոշեցին, որ այդ պակասորդը մեծ չափով կնվազի, եթե ֆեդերալ պակասորդը և դրա հետևանքով միջազգային փոխառությունների կարիքը նվազեն

1985 թ Կոնգրեսը դրան պատասխանեց՝ գործի դնելով Գրամ-Ռուդման- Հոլինգսի պակասորդը կրճատելու օրենքը, որը ծրագրում էր ծախսերի պարտադիր կրճատումների միջոցով նվազեցնել տարեկան պակասորդը (Գերագույն դատարանը վերանայեց այդ օրենքը նրա սահմանադրական լինելու տեսանկյունից և մեղմացրեց այն նրա սկզբնական ժամկետները ստիպված էին վերացնել 1990-ական թթ ավելացող պակասորդի հետևանքով) Գործադիր իշխանությունը նույնպես միջոցներ էր ձեռք առնում նպաստելու դոլլարի գնի կանոնավոր իջեցմանը 1985 թ ԱՄՆ ի ֆինանսների նախարարը հանդիպում ունեցավ Ֆրանսիայի, Գերմանիայի, Ճապոնիայի և Միացյալ Թագավորության ֆինանսների նախարարների հետ՝ քննարկելու այն գործողությունները, որոնք նրանցից յուրաքանչյուրը պետք է ձեռնարկեր՝ նպաստելու դոլլարի արժեքի կանոնավոր իջեցմանը առևտրական հիմնական գործընկերների տարադրամի համեմատությամբ Արտասահմանյան բորսաներում կենտրոնական բանկի միջամտության շնորհիվ դոլլարի գինը աստիճանաբար ընկավ 1985 թ սեպտեմբերից

մինչև 1988 թ հունվարը՝ կորցնելով իր արժեքի գրեթե կեսը 1988 թ շեմին դոլլարի արժեզրկումը նպաստեց ԱՄՆ-ի առևտրի պակասորդի կրճատմանը

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴՈԼԼԱՐԸ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

1980-ական թթ ամերիկացիները բախվեցին գերագնահատված դոլլարի խնդրին, որն ԱՄՆ-ի շատ ապրանքներ բարձր գների հետևանքով դուրս մղեց միջազգային կամ ներքին շուկաներից և մեծացրեց ԱՄՆ-ի առևտրի պակասորդը

Սակայն թերագնահատված դոլլարը նույնպես ծանր էր նստել ԱՄՆ-ի տնտեսության վրա Դա ակնհայտ դարձավ 1960-ական թթ վերջերին Վիետնամի պատերազմի ընթացքում, երբ արտասահմանյան համեմատաբար ոչ թանկարժեք ապրանքների գնումը, ինչպես նաև օտարերկրյա և ռազմական օգնությունը մեծ քանակությամբ դոլլարի արտահոսք առաջացրին երկրից Քանի որ դոլլարը պատրաստակամորեն առկա էր, նրա արժեքը նշանակալից կերպով ընկավ արտասահմանյան բորսաներում ԱՄՆ-ի տնտեսագետները դատապարտելի համարեցին դոլլարի գնողունակության անկումը, քանզի այն արժեզրկումը սաստկացնելու միտում ուներ

Արժեզրկումը հաղթահարելու խնդիրը և դոլլարի արժեքի փոփոխությունները, ինչպես նաև համաշխարհային տնտեսության անկայուն բնույթը շատ դիտորդների մղեցին այն մտքին, որ պետք է համաշխարհային դրամական և ֆինանսական համակարգի ճշգրտում կամ վերափոխություն պահանջել Վերափոխելու իրական ջանքերն սկսեցին ոչ ուշ, քան 1944 թ, երբ աշխարհի առաջատար երկրների մեծ մասը ներկայացուցիչներ ուղարկեց Բրետոն Վուդս (Նյու Հեմպշիր) Հիմնադրվեց Տարադրամի միջազգային հիմնադրամը (ՏՄՀ)՝ ազգային տարադրամները կայունացնելու նպատակով Այն ստեղծվեց 8 8 միլիարդ դոլլար դրամագլխով, որի մոտավորապես 25 տոկոսը նվիրաբերեց Միացյալ Նահանգները

ՏՄՀ-ն կարճաժամկետ վարկ է տրամադրում այն երկրներին, որոնք ի վիճակի չեն մարել վճարման հաշվեկշռի պարտքը սովորական միջոցներով, սովորաբար՝ ավելացող արտահանությամբ և երկարաժամկետ փոխառություններով ՏՄՀ-ն ակնկալում է, որ իրեն ետ վերադարձնեն պարտքը, և կարող է խորհրդակցություններ սկսել քրոնիկական պարտապանությամբ տառապող երկրների հետ՝ խորհուրդ տալու, թե ինչպես կարելի է լավագույն ձևով վերադարձնել պարտքը

Բրետոն Վուդսի համաժողովը նույնպես ավարտվեց համաձայնագրով՝ պահպանելու տարադրամի կայուն կուրսը

տարբեր երկրների միջև, սակայն դրանից արդեն հրաժարվել են 1971 թ առևտրի պակասորդի շարունակվող աճի պայմաններում Միացյալ Նահանգներն առաջարկեց, որ Գերմանիան և Ճապոնիան, երկուսն էլ վճարման բարենպաստ հաշվեկշիռներով, բարձրացնեն իրենց տարադրամների կուրսը Սակայն նույնիսկ երբ նրանք գործի անցան, արդեն շատ ուշ էր Դոլլարի կայուն գինը բարձիթողի էր արված և «լողում էր», այլ կերպ ասած, փոփոխվում էր մյուս տարադրամներին համապատասխան, երբ առաջարկն ու պահանջարկն են որոշում գինը Միացյալ Նահանգներում գներն ու աշխատավարձը որոշ ժամանակով սառեցվեցին և 10 տոկոսի լրացուցիչ վճար դրվեց ներմուծվող ապրանքների վրա Նպատակն այն էր, որ Եվրոպան և Ճապոնիան համոզվեն նվազեցնել առևտրական արգելքները ամերիկյան արտադրանքի նկատմամբ

Համաշխարհային համաժողով գումարվեց Վաշինգտոնի (Շ Կ) Սմիթսոնյան հաստատությունում, որպեսզի փորձեն վերականգնել հին համակարգը Դոլլարի արժեքն իջեցրին, իսկ ճապոնական իենի և գերմանական մարկի արժեքը բարձրացրին երբ 1972 թ ԱՄՆ-ի առևտրական դիրքը տակավին բավականաչափ չբարելավվեց, դոլլարի կուրսի իջեցումը դարձրեցին պաշտոնական, և աշխարհը վերադարձավ «լողացող» տարադրամային կուրսին

Որոշ տնտեսագետներ պնդում են, որ ավելի կորեղ մեթոդներ պետք է կիրառել՝ շտկելու առևտրի երկարաժամկետ և արմատացած անհավասարակշռությունը Երկու առավել հանրամատչելի գաղափարներն էին տարադրամի ճկուն կուրսի և փոխառության հատուկ իրավունքի (ՓՀԻ) կիրառությունը Տարադրամի փոքր-ինչ ճկուն կուրսն իրենից ներկայացնում է փոխկիջում տարադրամի խիստ (և սովորաբար հնացած) կուրսի ժամանակների և հետ-սմիթսոնյան «լողացող» վիճակի միջև, որտեղ առաջարկն ու պահանջարկը կարող են տարադրամի արժեքի ծայրահեղ տատանումներ առաջացնել Տարադրամի կուրսի փոքր-ինչ ճկուն համակարգի մի առաջարկություն նախատեսում է հիմնադրել «թիրախ գոտիներ», որտեղ յուրաքանչյուր տարադրամ կարող է տատանվել որոշակի առավելագույն, հավանաբար տարեկան 1 կամ 2 տոկոսի չափով

Փոխառության հատուկ իրավունքը (ՓՀԻ) հայտնի է «թղթե ոսկի» անունով Դրամի համաշխարհային պաշարների համեմատությամբ ոսկու սահմանափակ պաշարները, դոլլարի արժեքի անկման հետ մեկտեղ (որը որպես աշխարհի ամենակայուն տարադրամ օգտագործվում էր ոսկու փոխարեն միջազգային գործարքների համար վճարելիս), հանգեցրին այլընտրանքի անհրաժեշտության ՏՄՀ-ն (Տարադրամի միջազգային հիմնադրամ) դրան արձագանքեց՝ համաձայնելով

ստեղծել թղթե ոսկի և այն բաժանել անդամ երկրներին նրանց անդամավճարին համապատասխան Ավելի աղքատ որոշ երկրներ հույս ունեն, որ ՏՄՀ-ն իրենց թույլ կտա անհրաժեշտությունից դրդված օգտվել ՓՀԻ-ից՝ անկախ իրենց տնտեսական կարևորությունից

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՁԱՐԳԱՑՄԱՆԸ

Բրետոն Վուդսի համաժողովը նույնպես ավարտվեց Համաշխարհային բանկի հիմնադրումով՝ բպվմակողմանի մի հաստատություն, որը նախատեսում է նպաստել համաշխարհային առևտրին և տնտեսական կարգացմանը՝ վարկ տալով այն երկրներին, որոնք այլ կերպ ի վիճակի չեն համաշխարհային շուկային մասնակցելու համար անհրաժեշտ դրամագլուխ կուտակել Համաշխարհային բանկն իր կապիտալը ստանում է անդամ երկրներից, որոնք անդամավճար են մուծում ըստ իրենց տնտեսական կարևորության Միացյալ Նահանգները ներդրել է Համաշխարհային բանկի 9 1 միլիարդ դոլլար սկզբնական կապիտալի մոտավորապես 35 տոկոսը Համաշխարհային բանկի անդամները հույս ունեն, որ իրենք լրիվ չափով ետ կստանան իրենց տրամադրած փոխառությունները այն երկրներից, որոնք դրանք օգտագործում են հզորացնելու իրենց թույլ տնտեսությունները Վերջիվերջո հույս կա, որ այդ երկրները կկարգանան այն աստիճան, որ կկարողանան լիիրավ առևտրական գործընկեր դառնալ առավել կարգացած երկրներին և արտադրել սեփական ապրանքները՝ փոխանակելու դրանք այլ ապրանքների հետ

Համաշխարհային բանկի պաշտպանությունից դուրս Միացյալ Նահանգների ներգրավումը կարգացմանը նպաստող օգնության հարցում կարելի է բացատրել ետ վերադառնալով այն որոշմանը, որ Միացյալ Նահանգները կայացրել էր՝ օգնելու Եվրոպայի վերականգնմանը համաշխարհային II պատերազմից հետո Չնայած այդ օգնությունը տնտեսական ծանր վիճակում գտնվող երկրներին դանդաղ էր ընթանում, սակայն ամերիկյան ժողովուրդը որպես նվաճում ընկալեց, երբ պարզ դարձավ, որ 1948 թ ապրիլին գործողության մեջ դրված Մարշալի պլանը հաջող կատալիզատոր է հանդիսացել Եվրոպայի վերականգնման գործում Նախագահ Հարի Ս Տրումենը որոշեց հիմնվել այդ հաջողության վրա և օգնել առաջադիմող երկրներին՝ կարգանալու արևմտյան ժողովրդավարության օրինակով Մյուսներն այդ օգնությունը պաշտպանեցին պարզապես մարդասիրական նկատառումներով Որոշ օտարերկրյա քաղաքական փորձագետներ անհանգստացան «դոլլարի պակասության» առիթով պատերազմից քայքայված և թերզարգացած երկրներում և համոզմունք արտահայտեցին, որ երբ այդ

երկրներն ուժեղանան, հոժար կլինեն և կկարողանան հավասար չափով մասնակից լինել միջազգային տնտեսությանը Նախագահ Տրումենը 1949 թ պաշտոնում հաստատվելու իր հանդիսավոր ճառում շարադրեց այդ ծրագրի ուրվագծերը և կարծես թե շարժեց ապգի երևակայությունը, երբ այն հայտարարեց Ամերիկայի արտաքին քաղաքականության գլխավոր մասը

Ծրագիրը փոփոխվեց 1961 թ և համապատասխան աջակցություն ստացավ ԱՄՆ- ի միջազգային կարգացման գործակալության (ՄՆՄԶԳ) կողմից 1980-ական թթ ՄՆՄԶԳ-ն տակավին տարբեր չափի օգնություն էր ցույց տալիս 56 երկրների Վերջին տարիներս ՄՆՄԶԳ-ի ծրագրերը հեռացել են կարգացման մեծ պլաններից, ինչպիսին է խոշոր ամբարտակների, մայրուղիների համակարգի կամ ծանր արդյունաբերության ճյուղերի կառուցումը ՄՆՄԶԳ-ն ավելի ու ավելի մեծ նշանակություն է տալիս սննդին ու կերակրելուն, բնակչության աճի վերահսկողությանն ու առողջապահությանը, կրթությանն ու մարդկային ռեսուրսներին, տնտեսության կարգացման առանձին խնդիրների, քաղցից փրկելուն ու աղետից վերականգնելուն և խաղաղության համար նախատեսված սննդին՝ ծրագիր, որը նախատեսում է սննդամթերք և անասնակեր վաճառել նպաստավոր վարկային ժամկետներով տարեկան 1 միլիարդ դոլլարի չափով և ուղղակի նվիրատվություններ անել ամենաաղքատ երկրներին

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Միացյալ Նահանգների և այլ երկրների համընդհանուր տնտեսական փոխադարձ կախումը համաշխարհային II պատերազմից ի վեր աճել է երկրաչափական պրոգրեսիայով Դրա վկայությունն են ռեսուրսների օգտագործումը արտադրության շուրջ կայացրած որոշումները, հումքի առևտուրը և սպառողի պահանջը Դա ակներև է միջազգային տնտեսական համագործակցությունում կարգ ու կանոն ստեղծելու այնպիսի ջանքերում, ինչպիսիք են Տարադրամի միջազգային հիմնադրամը, Համաշխարհային բանկը և Սակացույցների ու առևտրի ընդհանուր համաձայնագիրը Դրա ապացույցը հանդիսացան նաև դրամատիկմով լի այնպիսի առանձին իրադարձությունների հեռուն գնացող հետևանքները, ինչպիսին էր 1970 ական թթ նավթի գների բարձրացման հետ առնչվող ցնցումներից յուրաքանչյուրը

Փոխադարձ կախվածության մեծացման մեկ այլ ցուցանիշ է օտարերկրյա ներդրումների աճը 1989 թ Միացյալ Նահանգների ուղղակի ներդրումները այլ երկրներում հասան 373 4 միլիարդ դոլլարի՝ 1982 թ 207 8 միլիարդի դիմաց (ձեռք-բերման գներով) Արտասահմանյան ուղղակի ներդրումները

Միացյալ Նահանգներում նույնիսկ ավելի արագ աճեցին 1989 թ՝ հասնելով 400 8 միլիարդ դոլլարի՝ 1982 թ ընդամենը 124 7 միլիարդի դիմաց (նույն հաշվարկով) Օտարերկրյա ներդրումների միջոցով ԱՄՆ-ի արդյունաբերությունն օգնեց այլ երկրներում զարգացնել արդյունաբերության այնպիսի հիմնական ճյուղեր, ինչպիսին պղնձի արդյունաբերությունն էր Չիլիում՝ այդ երկրի տարադրամի հիմնական աղբյուրը Միաժամանակ ԱՄՆ-ում հիմնադրված շատ ֆիրմաներ ջանացին արտասահմանյան շուկաներն սպասարկել տեղական գործարանների արտադրանքով Օրինակ՝ Ֆորդ մոտոր ընկերությունը և Ջեներալ մոտորս կորպորացիան Բրիտանիայի ավտոմեքենաների ամենախոշոր արտադրողների թվին են պատկանում

Միացյալ Նահանգներում օտարերկրյա ներդրումների մեկ երրորդը կատարվում է արտադրության մեջ Այնպիսի առևտրական ձեռնարկություններ, հասնելով են Հոնդան Օհայոյում, Միցուբիշին Իլինոյսում և Նիսանը Թենեսիում, մեծ ուշադրության են արժանացել Այդ ձեռնարկությունները մասամբ այն նույն տենդենցն են արտահայտում, որով օտարերկրյա հաջողակ ֆիրմաները ԱՄՆ-ի իրենց նմանակների օրինակով գործարաններ են հիմնադրում այլ երկրներում, որպեսզի սպասարկեն տեղական շուկաները, ուր այդ արտադրանքների պահանջարկը մեծ է

Օտարերկրյա ներդրումների աճը նոր հարցեր է առաջադրում երկրների միջազգային տնտեսական փոխհարաբերություններին Ինչպիսի՞ ֆիրմաների գործունեությունն է խիստ որոշիչ ազգային անվտանգության համար, և չի թույլատրվում օտարերկրյա ներդրումներ կատարել. Ի՞նչ կարելի է ասել այն երկրի մասին, որը ցանկանում է ներդրումներ անել Միացյալ Նահանգներում, երբ ինքը սահմանափակում է ԱՄՆ-ի ներդրումը իր տնտեսության մեջ Միացյալ Նահանգներն առաջարկեց, որ առևտրական բանակցությունների Ուրուգվայան փուլում օտարերկրյա ներդրումները կառավարելու համար գործող մի շարք կանոններ մշակվեն

Այն ուղղությունը, որը համընդհանուր առևտրական կարգը պիտի ընդուներ 20-րդ դարի մնացած տարիներին, մնում է անհասկանալի, որովհետև 1990-ական թթ-ը արդեն սկսվել են Ուրուգվայան փուլը 1990-ական թթ ավարտվեց առանց սկզբնական նպատակների իրականացման՝ մասամբ գյուղատնտեսական լրավճարների շուրջը համաձայնության ձախողման հետևանքով, սակայն 1991 թ առաջատար արդյունաբերական երկրները վճռականություն արտահայտեցին հաջողությամբ ավարտելու այդ փուլը Սկատ առևտրի վրա հիմնված քաղաքականության ընդդիմախոս, «առևտրի ռևիզիայի» կողմնակից ամերիկացիները համոզիչ

փաստարկներ էին բերում, որ ԱՄՆ-ի շարունակվող առևտրի պակասորդը, մասնավորապես Ճապոնիայի հետ, նշանակում էր, որ Միացյալ Նահանգները պետք է հեռու մնա «կանոնների վրա հիմնված» մոտեցումից և շրջվի դեպի «հետևանքների վրա հիմնված» մոտեցումը առևտրի բնագավառում Որպես այդպիսի քայլ նրանք վկայակոչում էին 1988 թ Կոնգրեսի ընդունած Համընդհանուր առևտրի և մրցակցության մի քանի կետից բաղկացած օրենքը, որը պարունակում էր ինչպես փոխշահավետ կետեր, այնպես էլ այլ միջոցառումներ, որոնք նախատեսում էին բացել արտասահմանյան փակված շուկաները ԱՄՆ-ի արտահանության համար Ոմանք պնդում էին, որ ՍԱԸՀ-ն հնացել է որպես առևտրական խոչընդոտները նվազեցնելու միջոց

Այնուամենայնիվ, ԱՄՆ-ի քաղաքականությունը կերտողները Բուշի վարչակարգում համաձայնեցին, որ առևտրական բանակցությունների Ուրուգվայան փուլի հաջող ավարտի իրականացումը պետք է մնա որպես առաջնային կարևորության հարց Մեքսիկայի հետ երկկողմ ազատ առևտրի համաձայնագրի և ի վերջո Արևմտյան կիսագնդի ազատ առևտրի համակարգի հետ միասին



ԱՄԵՐԻԿՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՈՒՐՎԱԳԾԵՐԸ

ՄԱՍ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

XI

ՎԵՐՋԱԲԱՆ



Ինչպես արդեն նշել ենք, որոշակի հակասություն կա շուկայական համակարգի պարզ նմուշի և ամերիկյան փորձի փաստացի պատմության միջև Միացյալ Նահանգները միշտ էլ ինչ-որ չափով ապավինել է կառավարությանը, որպես ստեղծագործ տնտեսական ուժի Մյուս կողմից, այն միշտ էլ որոշ չափով (երբեմն բավական զգալի չափով) թերահավատ է եղել կառավարության իրավասությունների նկատմամբ Բանվորական շարժման, ագարակագործների, փոքր ձեռնարկատերերի, խոշոր բաժնետիրական ընկերությունների, Ֆեդերալ ռեզերվային համակարգի և կառավարության փոխազդեցությամբ ստեղծվել է բազմատարր տնտեսական համակարգ

Այստեղ ներկայացվածը մեծ մասամբ պատմական զարգացման արձանագրությունն է՝ տրամաբանությամբ, տեսությամբ ու անցյալի փորձով լուսաբանված Իսկ ի՞նչ ասել ապագայի մասին Ապագայի կանխագուշակումը ցանկացած բնագավառում վտանգավոր զբաղմունք է, առավել ևս այնպիսի շարժունակ, անկայուն բնագավառում, ինչպիսին է տնտեսությունը. Անկասկած, անցյալը ազդում է ապագայի վրա, բայց անցյալն ինքը զերծ չէ հակասություններից Ավելին, ապագան պարտադիր կարգով չի հենվում անցյալի վրա Ոչ ոք չգիտի, թե ինչ նոր գաղափարներ, հայտնագործություններ ու տեխնիկական նվաճումներ են թաքնված ոչ հեռու ապագայում Նման առաջընթացը անցյալում (և արտադրողականության տեմպերի վրա նրա թողած ազդեցությունը) հեռուն գնացող հետևանքներ է ունեցել համաշխարհային տնտեսության մեջ Այդ առաջընթացում են թաքնված այնպիսի հարցերի պատասխանները, ինչպիսիք են. արդյունաբերության ո՞ր ճյուղերը պետք է բարգավաճեն, որո՞նք՝ կործանվեն ի՞նչ աշխատանքներ առկա կլինեն ինչպիսի՞ն կլինի այդ աշխատատեղերը զբաղեցնողների կենսամակարդակը Եվ եթե անիմաստ է ենթադրություններ անելը այդ փոփոխությունների մանրամասնությունների վերաբերյալ, այնուամենայնիվ, օգտակար կլինի քննարկել այն իրականությունը, որում պետք է տեղի ունենան այդ փոփոխությունները

ԴՐԱՄԻ ԱՐԺԵՔՐԿՈՒՄ, ԹԵ՞ ԴԱՆԴԱՂ ԱՃ

1980-ական թթ վերջին և 1990 թթ սկզբին դրամի արժեզրկումը չէր վերացել, այնուամենայնիվ, ամերիկացիներն ապրում էին համեմատաբար ցածր ու կայուն արժեզրկման աստիճան՝ համեմատած 1970-ական թթ. հետ Մեծ մասամբ դա դաժան տնտեսական անկումների և 1980-ական թթ ակզբի դրամական խիստ քաղաքականության հետևանքն էր Բայց շատ ամերիկացիներ լիովին համոզված չէին, որ դրամի արժեզրկման խնդիրը ընդմիշտ լուծված է

1990 թ., երբ նավթի գները համաշխարհային շուկայում սաստիկ բարձրացան նավթով հարուստ ծովածոցում բռնկված պատերազմի հետևանքով, ամերիկացիները սարսափ ապրեցին Մի քանի ամիս հետո գները նորից իջան, և պատերազմական գործողությունների դադարից հետո պարզվեց, որ միջադեպը չունեցավ արժեզրկման հետ առնչվող երկարատև հետևանքներ

Բայց միջադեպը ցույց տվեց, թե որքան զգայուն է ԱՄՆ-ի տնտեսությունը անսպասելի ցնցումների նկատմամբ Պարզվեց, որ 1991 թ տնտեսական անկումը 1990 թ նավթի գներից առաջացած ցնցման հետևանքն է Այդ ընթացքում ամերիկացիներից շատերի անհանգստությունն աստիճանաբար այլ ընթացք ստացավ նրանք այլևս չէին վախենում դրամի վերսկսվող արժեզրկումից, այլ անհանգստանում էին, թե որքա՞ն շուտ կլինի տնտեսության առողջացումը, ինչքա՞ն կտևի, և արդյո՞ք սկզբնական վերելքից հետո տնտեսությունը կարող է անսպասելի վայրէջք ապրել՝ մի երևույթ, որը հայտնի է որպես «կրկնակի անկում»

Սովորաբար բարձր տոկոսադրույքները զսպում են տնտեսական աճը, իսկ տոկոսադրույքներն արդեն բարձր էին՝ մասամբ ԱՄՆ-ի բյուջեի խոշոր պակասորդի պատճառով, մասամբ դրանց ապագայում անորոշ ժամանակով շարունակվելու հետևանքով Բացի դրանից, տնտեսագետները Արևելյան Եվրոպայի համար մեծ քանակությամբ կապիտալի պահանջարկ էին ակնկալում Արևելյան Եվրոպան աշխարհի այն մասն է, որը կատաղի ջանքեր էր թափում ազատվելու սոցիալիզմը վերահսկող շնագայլերից և վերափոխվելու շուկայական հարաբերությունների վրա հիմնված տնտեսության

Տնտեսական առողջացման կայունության համար անհանգստանալու այլ պատճառներ էլ կային 1980-ական թթ վարկային գերածախսերը, որպես արդյունք, թողել էին պարտքերով ծանրաբեռնված մի ժառանգություն և անդամալույծ ֆինանսական հաստատություններ 1990-ական թթ ԱՄՆ-ի բանկերն ու այլ վարկատու հաստատություններ անցան ավելի ժլատ վարկային չափանիշների Փաստորեն ամբողջ ֆինանսական սեկտորը խիստ լարված վիճակում էր, երբ բանկերը, խնայողությունների ու վարկերի համակարգը, ինչպես նաև որոշ ապահովագրական ընկերություններ, կաշկանդված իրենց անվճարունակությունը վկայող թղթապանակներով, պայքարում էին ջրի երեսին մնալու համար՝ կապիտալ «ներարկելու» կամ միաձուլվելու միջոցով Սակայն շատ-շատերը գլխիվայր ընկան սնանկության վիհը, իսկ մի որոշ մասն էլ դարձավ անվճարունակ

Մասամբ այս խնդիրների պատճառով էր, որ 20-րդ դարի վերջին ամերիկացիները ավելի ու ավելի շատ հարցեր էին բարձրացնում Ամերիկայի ֆինանսական համակարգի

կառուցվածքի վերաբերյալ՝ թե արդյո՞ք այն հարմար է համաշխարհային տնտեսության մեջ հաջողությամբ մրցակցելու համար Դեռևս մի քանի տասնամյակ առաջ ԱՄՆ-ի կենտրոնական բանկերը հայտնի էին աշխարհի խոշորագույն բանկերի շարքում 1991 թ շեմին խոշորագույն 20 բանկերի թվում ոչ մեկը չէր մնացել Իհարկե, մեծությունը հզորության երաշխիք չէ, սակայն պարզ էր, որ ամերիկյան բանկային կառուցվածքը հնացել է, իսկ ագարակագործներին վարկեր տրամադրելու հարցում փոքր քաղաքների բանկերի կառուցվածքում իշխում էր նախորդ դարի մտածելակերպը Նույնը վերաբերում է Մեծ ճգնաժամի տարիներին բանկերին բազմաթիվ սահմանափակումներ հարկադրելու հարցին Սակայն պարզվեց, որ բարեփոխումների փաթեթի վերաբերյալ համաձայնության գալը դժվար է

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես արդեն նշել ենք, որոշակի թեմաներ տնտեսության զարգացման պատմության մեջ հակված են կրկնվելու Տնտեսական վերակառուցումը դրանցից մեկն է Եվ գրեթե միշտ դա ցավոտ է Նախկինում շատ ամերիկացիներ են ականատես եղել փոփոխությունների ինչպես օրինակ՝ գյուղատնտեսական սեկտորի շարունակվող միավորումը ամբողջ 20-րդ դարի ընթացքում, որը շատ ագարակագործների տեղահան արեց իրենց հողերից 1970-ական ու 1980-ական թթ արդյունաբերական սեկտորի կանգվածային վերակառուցումը, որը սաստիկ կրճատեց գործարանային աշխատատեղերի թիվը, որի հետևանքով ամայացան ԱՄՆ-ի գրեթե բոլոր հնագույն արդյունաբերական համայնքները Դա «արարիչ կործանման» օրինակ է, որը, ըստ տնտեսագետ Ջոզեֆ Ա Շումպետերի, կապիտալիզմը վերակենդանացնելու միջոց է վերջին հաշվով, վերակառուցված սեկտորը կարող է ավելի փոքր կամ տարբեր լինել, բայց այն ավելի ուժեղ ու ավելի հարմար է դաժան համաշխարհային մրցակցությանը դիմակայելու համար Այդ ընթացքում արդյունաբերության ավելի ներունակ ճյուղերում վերացած աշխատատեղերը փոխարինվում են նորերով 20-րդ դարի վերջերին այդ աշխատատեղերի թիվը գնալով աճում էր արդյունաբերության այնպիսի բարձր տեխնոլոգիաների բնագավառներում, ինչպիսիք են համակարգիչների ու կենսատեխնոլոգիայի բնագավառները, սպասարկման արագ ընդարձակվող ոլորտը, ինչպես օրինակ՝ առողջապահությունը և համակարգիչների ծրագրերի մշակումը

ԻՆՉՊԻՍԻ՞ ԱՃ

20-րդ դարի վերջին Ամերիկայի հասարակության առաջ ծառացած գլխավոր խնդիրներից մեկը առնչվում է աճին Ամերիկայի հաջողության հիմքը եղել է տնտեսական աճը չնայած պարբերական ճգնաժամերին ու անկումներին, ԱՄՆ-ի տնտեսությունը ժամանակի ընթացքում շարունակել է կարգանալ Տնտեսական «կարկանդակը» միշտ էլ բավականաչափ մեծ էր, որպեսզի ներգաղթողների նոր սերունդները կարողանային իրենց բաժին հանել

Այնուամենայնիվ, գնալով ավելի բարձր են հնչում նրա՛նց ձայները, ովքեր պնդում են, որ տնտեսական աճի բարձր տեմպեր հնարավոր չէ պահպանել, կամ գուցե այն պետք է նույնիսկ հարկադրաբար կրճատել Չնայած ոչ ոք համաձայն չէ աճի կասեցման կամ դադարեցման կողմնակիցների հետ, սակայն պարզ է, որ հավատը սասանվել է, և որ չսահմանափակված կամ չկասեցված աճը ինքնըստինքյան լավ է

Օրինակ՝ հողերի յուրացումը հարցականի տակ էր դրվում, ինչպես երբեք՝ նախկինում 1990-ական թթ յուրացնողներից պահանջեցին կառավարության տարբեր մակարդակների համար հաշվետվություն ներկայացնել միջավայրը չվնասելու վերաբերյալ Պլանավորման տեղական հանձնաժողովներն ու մի շարք ֆեդերալ գործակալություններ, ինչպես օրինակ՝ Միջավայրի պաշտպանության գործակալությունը, հետազոտություններ էին անցկացնում ու ծրագրեր իրականացնում հանուն անվտանգ, ճիշտ ծրագրված տնտեսական զարգացման

Աղտոտման ո՞ր չափն է թույլատրելի Որքա՞ն բաց տարածություններ կարող են ամերիկացիները հոժարակամ զոհել նոր աշխատատեղեր ստեղծելու մղումից Որքա՞ն աշխատատեղեր պետք է զոհաբերվեն ոչնչացման եզրին գտնվող կենդանական աշխարհը փրկելու համար (Որոշ ամերիկացիներ հրճվեցին, իսկ մյուսները խիստ վայրացան, երբ 1991 թ որոշում ընդունվեց որոշ ֆեդերալ անտառների հատումը կրճատելու մասին, որպեսզի պահպանեն ոչնչացման եզրին կանգնած բուի նմուշները այդ վայրերում) Ընդհանուր առմամբ ինչպե՞ս կանդրադառնան այս կարգի որոշումները կյանքի որակի վրա Սրանք բարդ հարցեր են, որոնք նույնքան շատ կարծիքների տեղիք են տալիս, որքան շահագրգիռ կողմեր կան

Համաշխարհային կարևորության նման մտահոգությունները իրենց համար ուղի էին հարթում ու դառնում ԱՄՆ ի քաղաքական գործիչների օրակարգի կենտրոնական հարցերը (ինչպես նաև այլ ազգերի քաղաքական գործիչների) Ինչպե՞ս վերաբերվել միջավայրի նետած այն մարտահրավերներին, ինչպիսիք են, օրինակ, կլիմայական փոփոխությունները, օզոնի շերտի քայքայումը, անտառահատումն ու ծովերի աղտոտումը

Արդյո՞ք պետք է կրճատել քարածխի էներգիայով աշխատող գործարանների և բենզինով աշխատող մեքենաների թիվը՝ սահմանափակելու համար ածխածնի երկօքսիդի արտանետումները և այլ «ջերմոցային» գազերը, որոնք հավանաբար այդպես են կոչվում երկրագնդի տաքացմանը նպաստելու պատճառով Եթե երկրագունդը տաքանա, արդյո՞ք դա կհանգեցնի կործանարար հետևանքների, ինչպես, օրինակ, ամերիկյան գյուղատնտեսական կենտրոնական հարուստ հողատարածությունների քայքայումը Միացյալ Նահանգները անպատճառ վճռական դեր է խաղում նման հարցերի լուծման մեջ իր տնտեսության հսկայական չափերի պատճառով

Տնտեսության ապագա աճի վերաբերյալ այս և նման հարցերի շուրջը ծավալված վիճաբանությունները տարակուսանք են առաջացնում Ո՞րն է Միացյալ Նահանգների նման հարուստ երկրի տնտեսական անհավասարության ընդունելի չափը Արդյո՞ք դանդաղ կամ կասեցված աճի երկարաձգված ժամանակաշրջանը իրական եկամտի անկման հետ կուգորդվելու դեպքում կառաջացնի մի խումբ նոր ու գուցե պայթունավտանգ սոցիալական, քաղաքական ու տնտեսական խնդիրներ՝ խնդիրներ, որ հակիվ թե կարելի է նշմարել այսօրվա տեսանկյունից

Բյուջեի շարունակվող պակասորդի պայմաններում, և այն էլ ոչ միայն ֆեդերալ, այլև նահանգային ու տեղական մակարդակներում, պետական ֆոնդերը, թվում է, թե անպայման պետք է կրճատվեն Արդյո՞ք կառավարությունը կշարունակի կատարել պահապան շան և կարգավորիչի դերը Ի՞նչ կլինի կառավարության կողմից մատուցվող կանոնական ծառայությունների հետ Արդյո՞ք կառավարությունը հետզհետե կհանձնի դրանք մասնավոր սեկտորին Եվ արդյո՞ք պետք է շարունակել մատուցել նման ծառայություններ ընդհանրապես

Ինչպես անցյալում, ապագայում կայացվելիք որոշումները կգալի ազդեցություն կունենան ԱՄՆ-ի տնտեսության ձևի ու բնույթի վրա

Այսպիսով, երկրի ծննդից ավելի քան 200 տարի անց ամերիկացիները շարունակում են դեմ առնել բազմաթիվ մարտահրավերների Սակայն, ինչպես և 200 տարի առաջ, շարունակվում է ներգաղթողների հոսքը դեպի Միացյալ Նահանգներ 1990-ական թթ դրանք արդեն մեծ թվով եվրոպացիներ չէին, այլ ասիացիներ ու լատինաամերիկացիներ Նրանց համար Ամերիկան շարունակում էր մնալ այն, ինչ միշտ եղել էր, այսինքն՝ հնարավորությունների երկիր ◆

ՀԱՄԱՌՈՏ ԸՆԹԵՐՑԱՑԱՆԿ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

AREEDA, PHILLIP and LOUIS KAPLOW

Antitrust Analysis: Problems, Text, Cases
(Հակամենաշնորհատիրության օրենքի վերլուծությունը՝ խնդիրներ, թեմաներ, միջադեպեր)
4th ed Little, Brown, 1988

BHAGWATI, JAGDISH

The World Trading System at Risk
(Աշխարհի առևտրական համակարգը վտանգի տակ)
Princeton University Press, 1991

BROADUS, ALFRED

A Primer on the FED
(Տարրական դասագիրք Ֆեդի մասին)
Public Services Office, Federal Reserve Bank of Richmond VA , 1988

BRUCHEY, STUART

Enterprise The Dynamic Economy of A Free People
(Ձեռնարկատիրություն՝ ազատ ժողովրդի շարժունակ տնտեսությունը)
Harvard University Press, 1990

BRUYN, SEVERYN T

A Future for the American Economy The Social Market
(Ամերիկյան տնտեսության ապագան սոցիալական շուկան)
Stanford University Press, 1991

COCHRAN, THOMAS C.

Business in American Life: A History
(Գործարարությունը Ամերիկայի կյանքում պատմության էջեր)
McGraw-Hill, 1974

CYERT, RICHARD M and DAVID M. MOWERY, eds.

Technology and Employment· Innovation and Growth in the U S Economy
(Տեխնոլոգիան ու զբաղվածությունը նորարարությունն ու աճը ԱՄՆ-ի տնտեսության մեջ)
National Academy Press, 1987

DERTHICK, MARTHA and PAUL J QUIRK

The Politics of Deregulation
(Ապակարգավորման քաղաքականություն)
Brookings Institution, 1985

DERTOUZOS, MICHAEL L et al

Made in America Regaining the Productive Edge
(Պատրաստված է Ամերիկայում արտադրանքի մրցունակության վերականգնումը)
MIT Press, 1989

DOERINGER, PETER B., ed
Tubulence in the American Workplace
(Հուզումներ Ամերիկայի գործարաններում)
Oxford University Press 1991

DONAHUE, JOHN D.
The Privatization Decision Public Ends, Private Means
(Սեփականաշնորհման որոշումը հանրային նպատակներ, մասնավոր միջոցներ)
Basic Books, 1989

EBELING, WALTER
The Fruited Plain The Story of American Agriculture
(Պտղաշատ հարթավայր՝ Ամերիկայի գյուղատնտեսության պատմությունը)
University of California Press, 1979

FILIPPELLI, RONALD L., ed.
Labor Conflict in the United States An Encyclopedia
(Բանվորական պայքարը Միացյալ Նահանգներում, հանրագիտարան)
Garland, 1990

FRIEDBERGER, MARK
Farm Families and Change in Twentieth-Century America
(Ագարակագործների ընտանիքները և 20-րդ դարի Ամերիկայի փոփոխությունը)
University Press of Kentucky, 1988

GALAMBOS, LOUIS and JOSEPH PRATT
The Rise of the Corporate Commonwealth. U S Business and Public Policy in the Twentieth Century
(Ընդհանուր բարեկեցության աճը գործարարությունը և պետական քաղաքականությունը 20-րդ դարի ԱՄՆ-ում)
Basic Books, 1989

GALBRAITH, JOHN KENNETH
The New Industrial State
(Արդյունաբերական նոր պետություն)
4th ed Houghton Mifflin, 1985

GILL, WILLIAM J
Trade Wars Against America A History of the United States Trade and Monetary Policy
(Առևտրական պատերազմներ ընդդեմ Ամերիկայի Միացյալ Նահանգների առևտրի ու դրամական քաղաքականության պատմությունը)
Greenwood, 1990

HECKSCHER, CHARLES
The New Unionism Employee Involvement in the Changing Corporation
(Արհմիութենական նոր շարժում բանվորների ու ծառայողների ներգրավումը փոփոխվող կորպորացիաներում)
Basic Books, 1988

HEILBRONER, ROBERT and PETER BERNSTEIN
The Dept and the Deficit: False Alarms, Real Possibilities
(Պետական պարտքը և պակասորդը կեղծ տագնապներ իրական հնարավորություններ)
Norton, 1989

KRUGMAN, PAUL

The Age of Diminished Expectations U S Economic Policy in the 1990's
(Մանր ակնկալությունների դար ԱՄՆ-ի տնտեսական քաղաքականությունը 1990-ական թթ),
MIT Press, 1990

KUTTNER, ROBERT

The End of Laissez-Faire American Economic Policy After the Cold War
(Չմիջամտելու քաղաքականության ավարտը Ամերիկյան տնտեսական քաղաքականությունը սառը պատերազմից հետո)
Random House, 1991

LAWRENCE, ROBERT Z. and CHARLES L SCHUTZE, eds

An American Trade Strategy Options for the 1990's
(Ամերիկյան առևտրի ստրատեգիան, 1990-ական թթ հնարավոր տարբերակները)
Brookings Institution, 1990

LENZ, ALLEN J

Beyond Blue Economic Horizons U S Trade Performance and International Competitiveness in the 1990s
(Տնտեսական կապույտ հորիզոններից վեր ԱՄՆ-ի առևտրի իրականացումը և միջազգային մրցակցությունը 1990-ական թթ)
Greenwood, 1990

LITTLE, JEFFREY B and LUCIEN RHODES

Understanding Wall Street,
(Ուոլ Ստրիտի ըմբռնումը)
3rd ed , TAB Books, 1991

PORTER, GLENN

Encyclopedia of American Economic History
(Ամերիկյան տնտեսության պատմության հանրագիտարան)
3 vols , Macmillan, 1980

SCHMANDT, JURGEN and ROBERT WILSON, eds

Growth Policy in the Age of High Technology· The Role of Regions and States
(Զարգացման քաղաքականությունը բարձր տեխնոլոգիաների դարում շրջանների ու նահանգների դերը)
Unwin Hyman, 1990

SCHOTTER, ANDREW

Free Market Economics A Critical Appraisal
(Ազատ շուկայի տնտեսագիտություն քննադատական գնահատական)
2nd ed , Basil Blackwell 1990

SEXTON, JEAN D

Silicon Valley Inventing the Future
(Սիլիկոն Վելի Կերտելով ապագան)
Windsor Publications, 1991

SPULBER, NICHOLAS

Managing the American Economy, from Roosevelt to Reagan
(Ամերիկյան տնտեսության կառավարումը, Ռուզվելտից մինչև Ռեյգան)
Indiana University Press, 1989

U S OFFICE OF TECHNOLOGY ASSESSMENT

Competing Economies America, Europe, and the Pacific Rim
(Մրցակցող տնտեսություններ՝ Ամերիկան Եվրոպան և Խաղաղ օվկիանոսի եզրափը)
U S Government Printing Office 1991

WEIDENBAUM, MURRAY

Rendezvous with Reality The American Economy After Reagan
(Հանդիպումներ իրականության հետ Ամերիկյան տնտեսությունը Ռեյգանից հետո)
Basic Books 1988

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ

Առջևի կողմ՝ դիպված Դավիդ Մուր, լուսանկարը Ռոբերտ Ա. Գրոուվ էջեր 4-5՝ Անդի Լեվին, 10-11 Լին Ջոնսոն Բլակ ստար 24-25՝ Ստանդարդ օյլ, 45՝ Ինտերնեշընալ հարվեստեր Կո., Ջ Պ Դանելուկ: 46- 47 Էսկալոն բերի ֆարմզ 48՝ Ամերիկյան պատմության պայդների ժողովածու, Ինստրակշնլ ռիսորսիզ կորպորեյշն (ԻՐԿ), 49՝ Ռոբերտ Լեվելին 50՝ Ռոբերտ Վ Մաղդեն Նեշնլ ջիոգրաֆիկ սոսայետի, 51 վերևում Ստեյտն այլնդ հիստորիկլ սոսայետի ներքևում՝ Բուֆալո էնդ Էրի քաունտի հիստորիկլ սոսայետի, 52 53 Գարի Ս Չապման 54՝ Յու Ս ստիլ կորպորեյշն, 55՝ Գերդ Լուդվիգ Վուրդֆին Կէմպ 56- 57 Կրայսլեր կորպորեյշն, 58 Ֆորդ ֆաունդեյշն, 59 Ամերիկյան պատմության պայդների ժողովածու, ԻՐԿ 60-61՝ Ադամ Բարտոս, 62-63՝ Սան կոմպանի ինկ 64 և 65 Ամերիկյան պատմության պայդների ժողովածու ԻՐԿ(2) 66-67 Հարալդ Սանդ Միքայել Սալաս 69 Յունիոն օյլ կոմպանի 70-71 Դվեյն Ֆրիման, Հալապա իմիջիզ, 90-91՝ Գարի Պերգլ 104 105 Ամերիկն օտոմոբիլ ասոսիեյշն, 122-123՝ Դավիդ Ստտիե, 137՝ Բրաուն բրադերզ, 138 Ռոլտ Դիսնեյ կոմպանի 139 «Սան» ամսագիր 140-141 Ռոբերտ Սև երի 142-143 վերևում Վիլյամ Ի Մաթիս, ՀՕԿ ֆոտոգրաֆի ներքևում՝ Ամերիկյան պատմության պայդների ժողովածու, ԻՐԿ 144 145՝ Բոբ Քրիստ 146-147՝ ձախից վերև ում՝ Ամերիկն տելիֆոն ընդ տելիգրաֆ կոմպանի ձախից ներքև ում Ազգային արխիվ, աջից՝ Ջոն Մաղերե 148՝ Դիկ Հալստեդ թայմ, Սիգմա 149՝ վերևում Ամերիկյան պատմության պայդների ժողովածու ԻՐԿ ներքևում՝ Կոնգրեսի գրադարան 150-151՝ Ռոբերտ Լեվելին, 152 Ռոբ Նելսոն Բլակ ստար 153՝ Սաութվորթ Հավես Բոստոն Մասաչուսետս ջենեռալ հոսպիտալ 154-155 ձախից Կոնգրեսի գրադարան, աջից՝ 1987 Բոբ Բարետ 156-157 ԱՄՆ Գյուղատնտեսության նախարարություն, 170- 171 Վիլյամ Ֆրանկլին Մակ Մահոն 186-187՝ Դեվիդ Ֆալկոներ Ֆոլիո ինկ 202-203 Վիլյամ Ալբերտ Ալլարդ

Խմբագիր Ջիին Ս Հոլդեն

Distributed by
EMBASSY OF THE UNITED STATES OF AMERICA
UNITED STATES INFORMATION SERVICE

Produced by
USIA REGIONAL PROGRAM OFFICE, VIENNA

RPO 9401 047 ARMENIAN